

ԴԱՌԻ ՆԱԾՂԵԲԻԱ

գիշերվա ափը

վեպ

ԵՐԵՎԱՆ

«Հայաստանի գրողների միություն» հրատարակչություն
2013

ՀՏԴ 894.611.3 – 31 Նաճղերիա
ԳՄԴ 84 Աբ – 44
Ն 270

Նաճղերիա Դ.
Ն 270 Գիշերվա ափը: Վեպ/ Դ. Նաճղերիա. – Եր.:
ՀԳՄ հրատարակչություն, 2013. – 236 էջ

Ռուսերենից թարգմանեց ԿԱՐԼ ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆԸ

Խմբագիր՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՐԵՅՅԱՆ

Հրատարակվում է Աբխազիայի հայերի միության, «Համշեն» թերթի և «Սնճովյան այգաբաց» գրական միավորման պատվերով:

Ժամանակակից աբխազ գրողի «Գիշերվա ափը» վեպի թեման պատերազմն է: Բայց հեղինակին ավելի շատ մտորել է տալիս կյանքի և մահվան, կյանքի իմաստի և մահվան հավերժության մասին: Վեպի հերոսներին խորթ չեն նաև մարդկային սովորական ապրումները, որոնց միջոցով արձարձվում են ընդհանրական գաղափարներ: Վեպը գրվել է ռուսերեն, թարգմանվել է նաև վրացերեն և սերբերեն: Հայերեն թարգմանվում է առաջին անգամ:

ՀՏԴ 894.611.3 – 31 Նաճղերիա
ԳՄԴ 84 Աբ – 44

ISBN 978–9939–58–181–1

© Յալանուզյան Կ., 2013

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմը փորձություն է ինչպես ամբողջ ժողովրդի, այնպես էլ գրողի համար: Շատերի համար իրենց հայրենասիրության մասին ճշալու, գրչընկերների հետ թշնամուն սևացնելու մրցակցության բռնվելու հարմար պատրվակ է, քչերի համար՝ ազգային ու մարդկային ինքնաճանաչման առիթ: Դաուր Նաճղեբիան պատկանում է երկրորդ տեսակին, ինչի վկայությունը նրա «Գիշերվա ափը» վեպն է: Վեպի պատումը ծավալվում է պատերազմական իրավիճակում, աբխազ մարտիկի կյանքի վերջին օրերի շուրջ, բայց հեղինակը ռազմական գործողություններ ու սխառնքներ չէ, որ նկարագրում է, այլ մարդկանց հետհայտնութենական (պոստապոկալիպտիկ) շվարածությունը: Վեպի գլխավոր հերոսի օրագրի հատվածները ներկայացնում են պատերազմի առօրյան: Չուգահեռաբար ընթերցողը հետևում է նաև, թե ստեղծագործության մյուս գլխավոր հերոսը՝ «գրողը», որքան բանաստեղծական ու վեհ է տեսնում և պատկերացնում այդ առօրյան: Այստեղ կարևոր է հիշել այն հանգամանքը, որ Նաճղեբիան վրաց-աբխազական զինված հակամարտության հաղթող կողմի ներկայացուցիչ է, և պետք է ենթադրել աբխազական, որպես հետսովետական, հանրության մի զգալի հատվածը ավանդության ուժով գրողից, արվեստագետից սպասում է հաղթանակը փառաբանող ստեղծագործություններ:

Ես անձամբ ճանաչում եմ Դաուրին, և շատ ուրախ եմ, որ նա իր վեպով ոչ միայն ցույց է տալիս պատերազմը գեղեցկացնելու, վեհացնելու ավանդույթի սևանկությունը, այլև կենսակերպով է ներդաշնակ իր ստեղծագործությանը: Բավական է ասել, որ մենք ծանոթացել և հետագայում ևս մի քանի անգամ հանդիպել ենք հարավկովկասյան խաղաղասիրական նախաձեռնությունների շրջանակում: Վերջերս ուրախությամբ իմացա նաև, որ Դաուրը նշանակվել է Աբխազիայի կրթության նախարար: Դա վկայում է, որ աբխազական իշխանության ուղենիշը Նոր սերնդին խաղաղության պատրաստելն է: Պատերազմի համար նախատեսված են այլ նախարարություններ՝ սա գերապատվությունների ճիշտ բաժանում է:

Վահրամ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

I

գիշերվա ափը

վեպ

Ադգուր Ա.-ն 92-ի օգոստոսի վերջից մինչև 93-ի ամառ՝ Սուխումի մատույցներում իր զոհվելը, օրագիր էր պահում:

Մուգ-կապույտ գույնի իննսունվեց թերթանոց դպրոցական ընդհանուր մի տետր էր դա, որի առանձին մի քանի էջը պոկված էր («...ես շտապ-շտապ պոկեցի դրանք, և այժմ ավստոսում եմ: Ինչ էլ չլինի տեքստ էր՝ պարզունակ, ծուռտիկ-մուռտիկ, բայց և խնամքով դուրս բերված տեքստ: Աշակերտը քրտնում էր՝ իր սուղ, սակայն դեռ թարմ ու ծանրակշիռ բառապաշարից որսալով բառերը: Սրանք թղթի վրա դժվարությամբ էին իրենց ճանաչում, դպրոցականը շատ էլ գրագետ չէր, աղավաղում էր: Բայց այդ բառերն անհավատալիորեն և հավաստի ճշգրտությամբ ի ցույց էին դնում հեղինակին: Ինքն էլ չիմանալով կամ աղոտ, խուճապահար սարսափով գուշակելով այդ բանը, նա խեղճացած մերկանում էր, վրայից պոկում-հանում միայնությունը: Ի դեպ, տետրը քառակուսի էր... Բայց թվերը ևս տեքստ են՝ խաբուսիկ ու համր և համառորեն միանշանակ...»): Տետրը գրոտած է գնդիկավոր գրիչով և խոսքի կեսից ընդհատվում է, տառերի սևությունն ամեն մի հաջորդ բառից կամաց-կամաց գունաթափվում: Ամուր սեղմելն արդյունք չի տալիս, դատարկված միջուկի անհամբեր ու գրգռված հետքը գրեթե ծակել է թուղթը:

Տետրն անձամբ ինձ կամ ընդհանրապես որևէ մեկի հասցեագրված չէ, կտակված չէ. Ադգուր Ա.-ն չի իջնում ճակատագրի հետ հոգեցունց սիրախաղի աստիճանի («...իմ գրածի հասցեն ոչ մի տեղն է. սրանից ավելի անշահախնդիր և ճշմարտացի մարդկային գործ դժվար թե լինի: Արձագանք սպասելը թուլություն է, եթե ոչ՝ վախկոտություն և ինքնախղճահարություն»): Բայց այն տղան, ով զոհվելու օրն իր կողքին էր, մի երկու անգամ լսել էր իմ մասին, մտապահել, և երբ մենք պատահաբար հանդիպեցինք Սուխումում և ծանոթացանք, տետրը փոխանցեց ինձ: Մենք խոսքի

բռնվեցինք, և նա պատմեց, թե ինչ հանգամանքներում զոհվեց Ադգուր Ա.-ն (եթե ինքնական հեռանալը կարելի է զոհվել համարել): Բայց ամեն բան հերթով պատմենք:

Համեմատաբար հանգիստ օր էր, ոչ մի փոխհրաձգություն, մարտ չկար: Ճիշտ է, հաուրիքներն էին խփում, բայց նրանց նստած տեղից ավելի ցածր՝ ծանծաղուտի և ոչ հեռու գտնվող կախովի կամրջի ուղղությամբ: Միայն նրանցից ավելի բարձր, բացատից այն կողմ, Շրոմայի մոտերքի անտառում պահված դիպուկահարն էր անհանգստացնում, գլուխ բարձրացնել չէր թողնում: Դրան քիչ էին ուշադրություն դարձնում և սուկ ծանծարույթից յուրաքանչյուր կրակոցից հետո խաբուսիկ շարժումով վեր էին հանում ծողը՝ ծայրին համապատասխան գրգռիչ գույնի լաթ հագցրած: Բայց պատահում էր նաև, որ գնդակը սուլում էր հանկարծակի, առանց պատճառի, շրոմացի հրաձգի նյարդերն առաջին վրիպումից երևի տեղի են տվել, և նա կրակում է ամեն մի ստվերի ուղղությամբ, - ահա, հենց որ գնդակը թռչում-անցնում է, ի պատասխան ընտիր հայիոյանք է լսվում երեք լեզվով՝ արխագերեն, ռուսերեն և վրացերեն: Երբեմն էլ լռակյաց, թխադեմ Զավենն է իր հայկական համեստ լուման ներդնում: Առաջին երկու՝ արխագերեն և ռուսերեն լեզվով տրված հայիոյանքը հատկապես հյուրեղ ու բազմազան է, չնայած առաջին հայացքից մայր հայիոյելու գծով ջահել գիր ունեցող արխագերենը դժվար թե հասնի փորձառու ռուսերենի հետևից. վրացերենն էլ, թույլ իմացության պատճառով, կարճառոտ է, աղքատիկ, ծանծրալի կրկնություններով լի:

Գուշակում են, թե ով կլինի գիշատչի հայացքով իրենց հետևողը՝ համալսարանական դիպլոմով Գոգին, որը, հատկապես եթե հասարակ կախեթից կամ ռաչինցի է, ապա դժվար թե օպտիկայից գլուխ հանի, - կամ էլ թե չէ մի որևէ Ստերվե՝ «Սպիտակ զուգագուլպայի» անդամ շիկահեր ու ցնդեցնելու չափ սպիտակամորթ մի մերձբալթուի: Մեծ մասը հակվում է այն մտքին, ավելի ճիշտ՝ ցանկանում է, որ իրենց կողմը նշան բռնի և կրակի ոչ թե մի որևէ կոպիտ ու մազոտ, այլ փափուկ, նուրբ ու առաձգական էակ. բարձրաձայն երագում են, թե ինչպես վաղ թե ուշ հասնելու են գետնին պառկած երկարոտն դիպուկահարուհուն, որքան էլ նա թաքտա, պոկելու-հանելու են նրա սպիտակ զուգագուլպաները և ... Համապատասխանաբար փոխվում է նաև հայիոյանքը:

Աղգուր Ա.-ն այս ամենի վերջին մասնակիցը չէր, նույնիսկ հուշեց կամ լատվիերեն կամ էստոներեն նույնպես հայիոյական մի բառ, որը լսել էր գրականության ինստիտուտի համակուրսեցուց: Այդ հյուսիսային հայիոյանքը բոլորն էլ ըստ հնչողության փոքր-ինչ անալի համարեցին:

Դադարի պահին Աղգուր Ա.-ն հանկարծ վեր կացավ, բարձրացավ ցածրիկ թմբի վրա, որն իբրև բնական թաքստոց էր ծառայում, դեն նետեց սաղավարտը, որն առանց հանելու կրել էր ամբողջ պատերազմի ընթացքում (դրա համար նրան ձեռ էին առնում շատերը, բայց Աղգուր Ա.-ն կատակ հասկանում էր և երբեք չէր նեղանում) և ամբողջ թափով շարտեց, ավելի ճիշտ կլինի ասել՝ վեր թոցրեց: Սաղավարտը ոչ թե շեշտակի, այլ վերասլաց աղեղ գծեց, հասավ բարձրակետին և թունավոր փայլ արձակելով քիչ առաջ ծուլորեն հետմիջօրե անցած արևի ճառագայթների մեջ, նույն աներևույթ, բայց արդեն վայրընթաց հետագծով գլորվեց գետնին, աղմուկով խփվեց հողին ու փոշի հանեց:

(Տղան այլ կերպ էր ասում, սա ես եմ հետո վերհիշել: Նա պարզապես ասաց. Աղգուր Ա.-ն հանեց սաղավարտը և դեն շարտեց: Ոչ ոք չի տեսել, թե այն ինչպես է փայլատակել, ինչ ձևով-բանաձևով է օդում կոր գիծ քաշել, ինչպես է ընկնելիս փոշի հանել և հանել է արդյոք, և իրականում թոշնած խոտի մեջ է ընկել, և որևէ ձայն հանել է, թե չէ... Ձայն, իհարկե, եղել է, չէր կարող չլինել, այդ է մթնոլորտ անվանվող օդային թաղանթի՝ մեր բնակավայրի անխախտ հատկությունը:

Բայց ոչ ոքից չնկատված աղեղը և փայլը, հաստատապես հնչած, բայց ոչ ոքի չլսած, քնկոտ մուժի միջով ոչ մեկի ականջին չհասած զրնգոցն այդ ինչ իրավունքով ու անհրաժեշտությամբ են տեքստի վերածվելու: Եվ ինչո՞ւ է հարկավոր, որ այստեղ հիշատակված արևը, որն իբր դեռ առավոտից, քանի որ ամառ էր, անտանելի շոգ ամառ, ամբողջ ուժով չէր այրում, այլ միայն այժմ դուրս եկավ, որպեսզի բարեհաճի հայացք ձգել սաղավարտի վրա և հնարավորություն տալ, որպեսզի այն թունավոր փայլ արձակի իր ճաճանչների մեջ, և նույնպես տեղ գտնի տեքստում: Չգիտեմ: Իմ կարծիքով այս ամբողջ հատվածը հորինվածք է: Պատկերացնում եմ, թե ինչպես է դեմքը կնճռոտում Աղգուր Ա.-ն):

Աղգուր Ա.-ն դեն նետեց, շարտեց, վեր թոցրեց կամ ում ինչպես հարմար թվա՝ ինչ-որ կերպ ազատվեց սաղավարտից և մի քանի վայրկյան

(քիչ է մնում ասեմ՝ տանջալից) անց ընկավ. հետևեց կրակոցի՝ տարածության պատճառով խլացած հարվածը: Գնդակը գլխին կպավ և միանգամից սպանեց նրան: Երբ ընկնում էր, սաղավարտը դեռ շարունակում էր օդում գծագրել իր անպաճույճ երկրաչափությունը:

Ոչ ոք չէր կարողանում հասկանալ, թե նա ինչու այդ արեց: Գուշակում էին, տարբեր բաներ խոսում, բայց ընդհանուր եզրակացության չհանգեցին: Հետին խելքով բացատրություն գտնվում էր, հիշում էին մի բառ, որն իբր նա ասել էր օրերս, և այդ բառը մատնում էր նրա մտադրությունը, բայց այն ժամանակ խորամուխ չեղան, բաց թողեցին: Եվ ընդհանրապես վերջին ժամանակի նրա վարքագիծը՝ հանկարծակի անջատվելը, երբ մեկ էլ տեսար անշարժանում էր սառցակալածի պես, անթարթ աչքերը հառում մի կետի, երբ լրակյաց էր դառնում ու մի բառ չէր ասում, – այս բոլոր տարօրինակությունները, որոնք նախկինում կարծես չէին նկատվում, ներքին խեղման նշան էին:

Իսկ ոմանց համար Ադգուր Ա.-ն մնում էր այնպիսին, ինչպիսին նրան գիտեին ի սկզբանե. նախորդ վարկածի կողմնակիցների խորաթափանց հայացքով նկատած շեղումները նրա վարքագծում չէին տեսել: Ադգուր Ա.-ն երևի պարզապես հոգնել էր, նրան գոնե մի շաբաթ շունչ քաշելու ժամանակ էր պետք, այդ դեպքում գուցե դեպքը չլիներ: Չդիմացավ, հո երկաթե չէր:

Երրորդներն ամեն բան թմրախոտին էին վերագրում. Ադգուր Ա.-ն թմրամոլ էր և հաճախ ծխում էր զարկերակը կորցնելու չափ:

Բայց բոլորն էլ ընդունում էին, որ նա իր սեփական կամքով էր բարձրացել թումբը և գնդակին ընդառաջ նետվել:

«**Մ**եզնից ոչ հեռու՝ լեռնագոգի ստորին մասում՝ գետի ափին, գտնվում էին հազարամյա ամրոցի ավերակները. ավելի ճիշտ սրանք հինավուրց, հաստաբուն կաղնիներով պատած բլրի վրա էին սփռված: Խեղճ ավերակույտ. լոկ ահագին, – լեզվիս գալիս է «հիվանդագին», – երևակայությամբ օժտված թանգարանային հնության երկրպագուն՝ ավանդապաշտը, այս ավերակներից կարող էր հայրենասիրական-մեծաշուք մի բան կառուցել:

Այն ամենը, ինչ տապալվել է ժամանակի հարվածից, խղճահարություն

է հարուցում: Ծիծաղելի է նույնիսկ. չէ՞ որ այն հաճախ ժամանակի դեմ է կանգնեցվել՝ ամեն բան սրբող-տանող հորձանքի մեջ կանգուն մնալու հավերժական հույսով առլեցուն: Ես թափառում էի ավերակի մեջ և հիասթափությունից զատ այլ բան չէի զգում՝ հոգեկան ոչ մի թրթիռ ու վերելք, սիրտս անտարբեր էր, նրա բաբախյունը՝ կանոնավոր: Մարդու ձեռքով տաշած և հետո սեփական անձն ու վախն այդ քարով պարփակած երբեմնի պարիսպը ծածկված է խիտ տերևներով: Արևի բարակ ճառագայթը հազվադեպ է հողին հասնում, և այնժամ ակներև է դառնում, որ ավերակները դիակ են հիշեցնում: Ես քայլում էի քարե դիակի վրայով, շուրջս նրբանուրբ, գունատ, անկյանք խոտ էր բուսած...

Երազս չէր ստացվում: Ամրոցը գլուխս էր խուժում իր բոլոր սարք ու կարգով՝ ժամանակների կապ, հերոսական անցյալ, հայրերի պատվիրաններ... Ամրոցը փորձում էր հառնել մոխրից: Բայց ես թույլ չէի տալիս, հենց որ նա մի փոքր վեր էր ելնում և սկսում ակնարկել իր նախկին կասկածելի վեհությունը, ես նրան իսկույն նորից մոխրացնում էի:

Ինձ ավելի շատ հետաքրքրում էին անձեռակերտ բաները՝ գիշերը, աստղերը, անտառը. դրանց հանդեպ ես շատ ընկալունակ էի... Գիշերը գիշեր էր իր ականակիր մթությանմբ ու գիշերային խորհրդավոր ու ահալից ծայներով, որոնցից երբեմն արյունոտ սառչում է երակներումդ: Անտառն իր կյանքով էր ապրում՝ ինձ չհրավիրելով իր կյանքի մասնակիցը դառնալ: Անտառը մերժում էր ինձ. եթե չէր էլ մերժում, հաստատ վանում էր իբրև օտարածին, վտանգավոր էակի: Ես դա զգում էի ներքուստ, ամբողջ մաշկով. ես օտարական էի:

Եթե անտառը, որի գրկում ես գտնվում էի և նույնիսկ փորձում էի նրան տրվելով քնել, մերժում էր ինձ, ապա սառցե անհաս բարձունքում փայլող աստղերը՝ առավել ևս: Ես նրանց պետք չէի: Նրանց համար իմ լինել-չլինելը, մարդ կամ կակղամորթ լինելը միևնույնն էր: Աստղերի տակ իմ ներկայությունից կամ բացակայությունից նրանց սառը փայլը ոչ ավելանում, ոչ էլ պակասում էր:

(Այս չարչրկված ճշմարտությունը ես բնավ չեմ մատուցում իբրև դրա հայտնագործող, բայց և անմտորեն չեմ կրկնում կամ ուրիշի ծայնով խոսում: Աստղերի և ընդհանրապես երկնքի սառն անտարբերությունը ես զգացել եմ ավելի, քան երբևէ և գուցե ավելի, քան ինձնից առաջ

որևէ մեկը: Եվ այն, ինչ իմ առջև հառնեց, սքանչելի էր՝ հարկավոր չլինելով աստղերին ու երկնքին, ես ազատ էի ու միայնակ):

Աղջիկն այն ժամանակ ասաց. «Ինչ գիշեր է», և ասաց անկեղծորեն: Բայց իմ ականջին դա հնչեց իբրև անգիր արած ծեծված ճշմարտություն, այլ ոչ թե այս րոպեին ապրված բան: Ինձ թվաց, թե նա ընդառաջում է իմ սպասմանը: Բայց ես ոչինչ չէի սպասում, հակառակը, վախենում էի, որ նա մի նման բան դուրս կտա, և չէի ուզում, որ այդպես լինի: Գուցե ինքը՝ գիշերն էր հիացմունք պահանջում իր հանդեպ, և մի՞թե դա անշունչ ու խամրած բառով պիտի լիներ:

Բայց աղջկա «Ինչ գիշեր է»-ն այժմ իմ ականջին այլ կերպ էր հնչում, ոչ թե իբրև ծեծված ճշմարտություն և վատ ճաշակի դրսևորում: Երբևէ շունչս փչելիս ես էլ մի նման բան կասեմ՝ առանց վախվորած հայացք ձգելու գրականությանը, և վերջս կգտնեմ պատերազմի գուցե և վերջին ամռանը:

Ափեափ լցված գիշերը մեկ ուրիշ աղջկա հիշեցրեց: Այն ժամանակ մենք գետափ գնացինք: Գետն ափելի աղմկոտ էր հոսում, քան ցերեկը: Գետը փայլում էր, որովհետև լուսին էր ելել: Առկա էր անհամ վեպիկին հարիր ամբողջ հավաքածուն՝ գետը, գիշերը, լուսինը... Կարելի է և այս հերթականությամբ՝ գետը, լուսինը, գիշերը, ինչ էլ չլինի՝ գիշերն է իր գիրկն առել և գետը, և լուսինը: Թե՛ ոչ. գիշերն այստեղ է, իսկ լուսինն ահա թե ուր է՝ գիշերից դուրս...

Գետն է հոսում: Ես լսում էի ջրի ձայնը՝ փորձելով հարմարվել նրա օրորին: Այդ աղմուկը մեղմիկ քայլերով մտնում է հոգիդ և այն լցնում խոնավ խոնջանքով: Բայց քունս չէր տանում: Այդժամ ես երևակայում էի, որ նրա սառը մահճում պառկած ես էլ եմ հոսում գետի հետ: Մարդու՝ կյանք անվանվող արթմնի հեծկլտոցն աներևութանալու չափ փոքր է բլրաշարքերի արանքով, մինչպատմական գազաններ հիշեցնող, ծառս եղած գլաքարերի միջով երկար-բարակ հոսող գետի համեմատ: Գուցե հատկապես շոգ ամռանն այն ծանծաղում էր այնքան, որ նույնիսկ շունը կարող էր լակել-վերջացնել, կամ էլ թե չէ իր աղմուկով հանդերձ անհետանում էր ավազի մեջ, անձայն թաքնվում քարերի արանքում, և սպիտակաքար չոր հունը սարերից ոլորվում էր դեպի ծովը՝ համորոեն ու ժլատորեն սևեռվելով անանձրև երկինք:

Իմ կանգնած տեղից ես լսում էի միայն հոսող ջրի աղմուկը, իսկ երբ պատկերացնում էի, որ հոսում եմ նրա հետ, աղմուկն անհետանում էր, ի հայտ էին գալիս ջրի սառնությունը և հատակին փռված քարերի ամրությունը: Ես հսկայի նման պառկել էի գետի հատակով մեկ, և իմ միջով հոսում էի սրթսրթալու չափ սառած, հետո, ոտքերիս մոտ տաքացող ջուրը, հոսում ու հոսում էր, անընդհատ, անկանգ. իսկ շուրջս վեր էին հառնում բլուրները:

Այ թե մարդ այսպես անվերջ հոսի...

Քունս չէր տանում: Գլխումս խառնիխուռն իրար էին հաջորդում մի ժամանակ կարդացած, ավելի շատ՝ «Ամրայում» մի գավաթ սուրճ ըմպելիս Բ.Ն.-ից լսած մտքերի պատառիկները՝ աստղեր, գալակտիկաներ, Մեծ պայթյուն... Կանչում էր մի ինչ-որ թռչուն (գուցե ջրցմուկ էր): Կամ էլ դա ինձ անհայտ մի էակի բնական ծայնն էր, և այն հանում էր հեշտությամբ, առանց որևէ ճիգի: Տոելու պես բնական էր: Ինքնատիպ էինք տռում, Դալիի մարգարեական հավակնությունից զերծ էինք, նաև նրանք, ովքեր մեր կողքին հոգնած-պառկած էին՝ ընկղմվելով քնի անսահման ուշագնացության մեջ: (Մենք քնում ենք գրեթե բացօթյա, մեզնից շեշտակի վեր բարձրացող զառիթափի բավական ընդարձակ քարանձավանման խոռոչում: Այստեղ հինավուրց քարերի սառնությունն է իշխում. հին ժամանակ նախամարդը, որի հայացքը, ինչպես և մերը, անկամ սևեռվում էր երկնքին, իր համար օթևան է գտել): Իսկ աստղերը թարթում էին տիեզերական գազերի փայլփլող արտաժայթքումով: Այժմ նրանք սահմանված կարգով աչքով էին անում հուրախություն այնպիսի տխմարների, ինչպիսին ես եմ:

Ես շուռ եկա ձախ կողքի, ցրտի և մեռյալ անսահմանության մեջ գտնվող տաք ու կենդանի հետույքս տնկեցի համաշխարհային տարածություն և հաճույքով շոգեխաշ մսի-խտացրած կաթի-աջիկայի համով տեռ արծակեցի, այն էլ ինչ տեռ:

Չափազանցրի: Իմ չորուկ-մորուկ կազմվածքի դեպքում հացից զատ մեր սովորական կերակուրը հանդիսացող շոգեխաշ մսի, խտացրած կաթի և աջիկայի խառնուրդի հատուկ շառաչը միայն կարող էր այդքան հնչել արտահայտել իմ վերաբերմունքն աշխարհի հանդեպ: Շառաչն ականհայտորեն թույլ էր, քանզի խառնուրդին ջուր էր ավելացրած,

նման ուտելիքից հետո անհագ ծարավ ես զգում: Բայց գիշերվա լուսության մեջ իմ հոետորաբանող տեղը հույժ որոտածայն հնչեց, և ես գոհ էի:

Իսկ հեռվում, Սուխումից անդին, Կելասուրի մոտ «տեռարծակեց», ավելի լավ է ասել «տեռորոտաց» (այս բառն ավելի ճիշտ է փոխանցում իրադարձության մեծ չափը) վրացական հաուբիցը, սակայն իր անպատիվ հաստակաշիության երեսից ոչ թե դեպի համաշխարհային տարածություն, այլ մեր դիրքերը: Ավելի մեծ որոտ արծակեց մինչև իր պայթելը Ներքին էշերայի կողմերը հասած արկը:

«Տեռոտելով» և հովտային, խորը քուն մտած, և երկնային անքուն թարթող աշխարհները, փորս ճնշող գազերի արտաժայթքումով արտահայտելով իմ համառ անհամաձայնությունն աշխարհակարգի՝ աստղալից բարձունքի կախարդիչ խաբկանքի և գիշերային անտառի անպատմելի գեղեցկության նկատմամբ, ես, թեթևանալով, հանդարտվող թախիծով տրամադրվեցի քնելու: Ոչինչ այնպես չէի ուզում, ինչպես գոնե մի պահ նիրհել, մոռանալ ամեն բան և ամենքին, մոռանալ անձս, ինչպես մեռյալները միանգամից և ընդմիշտ մոռանում են այժմ արդեն անհարկավոր «ես»-ը, որի բեռնն տակ ճզմվել են այդքան երկար ժամանակ՝ ամբողջ երկրային կյանքը: Մինչև լույս պատսպարված լինելով գիշերվա որովայնում, ես գուցե առավոտյան նորովի ու անսպասելի արթնանամ քնից, և գուցե խաղաղությունը, ջղաձգորեն սլանալով ուռուցիկ ճակատով պտղի մոտով, կծախսի իր ամբողջ մահացու ավյունը, և ես նրան կտեսնեմ բացատում խաղաղ արածելիս:

Բազմատրամաչափ և բազմանպատակ որոտի ներքո ես քուն մտա... Գրում եմ ծառի տակ նստած: Առավոտը նոր է բացվել, արևը նոր է ծագել, բոլորս ոտքի վրա ենք, հերթափոխին ենք սպասում: Մենք մեր բաժին տասն օրը ծայրեծայր վիզ ենք դրել, հիմա թող մյուսները տանջվեն: Իսկ ես, հենց որ վերադառնանք դպրոց, որտեղ մեր զորամասն է, մեկ-երկու օրով թույլտվություն կվերցնեմ և կգնամ գյուղ՝ քեռուս մոտ: Հուսով եմ՝ այս ամենից հեռու լինելով, երբ կրակահերթն ու պայթյունը չեն լսվի, վախը, որն իր սառած ձեռքերով սիրտս է սեղմում, կխաղաղվի, կթուլանա, մատներն էլ կթուլացնի և հոգիս ամեն ինչին թեթև կնայի:

Ես գնացի, հոգացի մեծ ու փոքր պետքերս և հետո դարձյալ գրիչը վերցրի: Գնդիկավոր գրիչիս միջուկը սև է. սև գույնն ավելի տեսանելի, ավելի անխղճորեն է պղծում թղթի կուսական ճերմակությունը: Չգիտեմ՝ պետք է վերապահում անելով ասեմ, որ տետրը քառակուսի է, և այն արդեն ասես... չգիտեմ, մակերեսով եմ տանում-բերում գրիչս: Անդունդը ծածկված է տետրի թզենու տերևով, թղթի տակ վիհն է, ծակես ու նայես:

Մի քանի թերթ ծախսվել է ըստ կարիքի. պարզ է, թե ինչ կարիք, մյուսը թղթի կարծես թե ստորին հատկանիշն է:

Նստել եմ մի վիթխարի գլաքարի վրա և գրում եմ: Գլխավերևս անհանգիստ խշշոցով աղմկում են տերևները, երբեմն ճյուղերի արանքով թափանցում է արևի թարմ ճառագայթը, խաղում տետրի թերթի վրա, անհետանում, հետո կրկին արևաշողը դարձած անցնում կուրացնող վարձով:

Ծառն ուշադրությունս չի շեղում, չնայած մեր այստեղ եղած օրերին մեկ անգամ չէ, որ գլուխս վեր տնկած կանգնել եմ նրա տակ: Գլուխս վեր տնկած նայել եմ, թե նա ինչպես է վճռականորեն երկինք միտվում: Ես կարող էի այդպես ժամերով կանգնել, ծառի հետ միսվել երկնականարի կապույտի ու զովության մեջ: Անտառում, համենայն դեպս նրա այն մասում, որը հասցրել էի հետազոտել, այս ծառն իր ուղղածիգ, անթեք իրանով ամենահզորն էր: Մյուսներն ամեն դեպքում դավադրաբար զիջում են երկնքին: Ծառերի մեծ մասը գլուխը պահում է անվստահ, ինքնանվաստացուցիչ անկյուն կազմած, նրանց բներն անհարթ են, ակնհայտ տգեղ, և ընդհանրապես, իրենց խորդուբորդ լինելը, պակասությունը, ճակատագրից ստացած հարվածները նրանք չեն թաքցնում, այլ, ընդհակառակը, անամոթաբար, անհասկանալի չար համառությամբ ի ցույց են դնում, ասես դա կարող է նրանց օգնել խուսափելու փորձանքից: Մենք այլանդակ ենք, խնայեք մեզ:

Իսկ այս մեկն ինքն է երկինք միտվել: Մյուսներն անվերջ խշշացնում են տերևները, փսփսում են, բլբլում, խոսքը կտուրը զցում, իսկ սա լուռ է: Եթե խոսի էլ, ապա սոսկ իր նման հզոր փոթորկի կամ տարերքի մեկ այլ երևույթի ճնշմամբ: Եվ ես համոզված եմ՝ նա կխոսի մի ձայնով, որը նման չէ մեկ այլ ձայնի, և դատարկ խոսք չի արտաբերի:

Շտապելով եմ գրում, ուստի երեկ գիշերվա քուն մտնելս նկարագրում եմ սովորական ծնով, մոտավորապես: Բայց եթե նույնիսկ ավելի շատ ժամանակ ունենայի, ինչ կարող էի հավելել ասածիս: Չէ որ անբռնելի է այն պահը, երբ քուն ես մտնում և սուզվում հատակը և լույսը, որը դեռ չես տեսնում քնի մակերևույթին,- քանի որ դու դեռ ամբողջովին քնած չես,- այդ լույսը հանկարծ հանգչում է, վանդակը՝ փակվում: Չեմ կարողանում գտնել անցման այդ կետը նշելու ճշգրիտ բառը. կարող եմ երկար գրել, թե ինչպես եմ երկարությամբ, ավելի ճիշտ՝ խորությամբ ընկղմվել ուշաթափության գիրկը: Երևի հարցը խոսքը չէ, այլ այն, որ մարդն ի վիճակի չէ հիշել այդ անսահման կարճատև պահը. նա կամ քնած է, կամ քնած չէ – համարյա այն է, ինչ հինավուրց «կամ ողջ է, կամ մեռած...»-ը – իսկ մեկից մյուսին անցման ժամանակ նա կարծես չկա, դրանց արանքում մարդն անհետանում է: Ես մանուկ հասակից տանջվում էի՝ ջանալով մտապահել այն նեղ սահմանագիծը, որն անցնում էի ամեն գիշեր քնի և արթնության միջև: Դա ինձ չէր հաջողվում. ամեն գիշեր ես կորցնում էի ինձ, իսկ առավոտյան մի հրաշքով վերստին գտնում: Բանը հասավ այնտեղ, որ քնելն ինձ համար իսկական տանջանքի վերածվեց, գրեթե անհնարինության, և ես չէի հասկանում այն անհոգությունն ու թեթևամտությունը, որով այդ անում էին ավագները: Եթե քնելու պահն անորսալի է, ապա և մահվան պահը նույնքան հաջողությամբ սահում-անցնում է, իսկ ես դրան համաձայն չէի: Բայց ինձ կանչում են... Ծառը դեռ երկար կհիշեմ, այն իմ մտքից չի հեռանում»:

Բեսլանը տեսրն ուսապարկը դրեց և մոռացավ դրա գոյությունը: Ավելի ճիշտ, մոռանում էր՝ մինչև որ կարիք էր լինում մի բան փնտրել այնտեղ. այդժամ տեսնում էր հատակին թաքնված այդ մուգ-կապույտ, գրեթե Ադգուր Ա.-ի նման սպասողական-կասկածամիտ իրը: Նա անմիջապես չէր ճանաչում այն, ճանաչելով՝ առաջին անգամվա պես ամոթ էր զգում: Հրաժարվել էր կարող, չնայած հոգեկան անհարմարություն էր զգում ուրիշի գաղտնիքների ժառանգորդի անսպասելի և մի առանձին հիացմունք չհարուցող դերից, քանզի պատերազմից մեկ-մեկուկես տարի առաջ նրանք Ադգուր Ա.-ի հետ քիչ էին շփվում, տեսնվում էին ժամանակ առ ժամանակ,

բրոուսյան շարժման օրենքով, և նրանց բարեկամությունն աստիճանաբար ի չիք դարձավ: Դա, այսպես ասած, հանգամանքների բարեկամություն էր, անգործության հետևանք, ավելի շուտ ոչ թե բարեկամություն էր, այլ ընկերական մոտիկություն:

Նրանց հարաբերություններից Բեսլանի մեջ նստվածք մնացել էր, չնայած չկար որևէ երկիմաստ բան կամ թերասացություն, թաքուն խանդ կամ թաքուն վիրավորանք: Բայց մի ինչ-որ բան նրանց խիստ վանում էր միմյանցից, և սերտ, գրեթե ամենօրյա շփումից հետո դա պարզ դարձավ երկուսին էլ, և նրանք սուսուփուս բաժանվեցին: Իսկ երբ Բեսլանն իմացավ, որ Ադգուր Ա.-ն զոհվել է, իրենց չկայացած բարեկամության դառնությունն ավելացավ, ասես ինքը թաքուն հուսար, որ հնարավորությունը դեռ կորսված չէ և այն մարդը, որին այնքան նվիրական մտքեր է վստահել, վերջապես իրեն այդքան մոտ կլիներ: Եվ այժմ որոշ վախով՝ որ եթե հանկարծ մի այնպիսի բան կարդա, որը ցույց տա իրենց իրական հարաբերությունների աստառը և այդ աստառն իր հանդեպ լինի սառը, անկարեկից ու անտարբեր, կամ էլ հակառակը, պարզվի, որ իրենք բաժանվել են թյուրիմացության, մանր-մունր նկրտումների երեսից. այդ պատճառով էլ Բեսլանը վախով ձեռնամուխ եղավ տետրի ընթերցմանը:

Բայց չէ՞ որ պարտադիր չէր կարդալ այն, ոչ ոք չէր ստիպում, և ինքը՝ Ադգուր Ա.-ն, նրան չէր կտակել իր գրությունը: Պարզապես կարելի էր տետրը հանձնել նրա հարազատներից որևէ մեկին: Նրանցից ոմանց Բեսլանը ճանաչում էր, բոլորն էլ իրար նման էին անմարդամոտությամբ և անհասկանալի ծածկամտությամբ, բայց և բարի, գթասիրտ մարդկանց համբավ ունեին:

Նա որոշեց՝ քանի որ գրառումն արված էր պատերազմի ժամանակ, դրա մեջ հագիվ թե լինեն իրենց բարեկամությանը վերաբերող մտքեր, ուստի չարժե մտախոգվել, որ կբացվի որևէ ճղճիմ-ամոթալի բան: Ադգուր Ա.-ն չուներ ավելի մոտիկ մարդ, քան Բեսլանը, և վերջինս դա գիտեր:

Վերջ. եթե ամեն ինչ սթափ, առանց մանրախնդրության, առանց անցյալն աղավաղելու և այն հետին թվով գնահատելու ծանրութթև արվի, ապա եզրակացությունը մեկն էր՝ նա պետք է ընթերցեր Ադգուր Ա.-ի օրագիրը. եթե այն որևէ մեկի համար էր գրված, ապա այդ մեկն ամենից առաջ ինքն էր:

Պատերազմից առաջ Բեսլանը սենյակ էր վարձել մի տարեց «խառը» զույգից. ամուսինը 40-ականների կեսին Արևմտյան Վրաստանից տեղափոխված մեգրել էր, կինը՝ Բաբջան, աբխազուհի: Պաուլեն (այս էր ծերուկի գրեթե քվանտային և գրեթե գերմանակերպ անունը) ժամանակին զբաղեցնում էր գինեգործարանի ոչ ամենաբարձր, բայց եկամտաբեր պաշտոններից մեկը: Փրփրուն գինու «ձախ», չհաշվառված շշերի փողով նա տուն կառուցեց կայարանից ոչ հեռու գտնվող բլրակի վրա: Ավագ որդին գնաց հոր գինեգործական ոտնահետքերով՝ զբաղեցնելով հորից ցածր, բայցև առավել շահավետ մի պաշտոն փրփրուն սև գինու «ձախ» շշերի հաշվառման բաժնում, ինչի շնորհիվ սպիտակ քարով մի առանձնատուն կառուցեց Սուխումի մոտ գտնվող Աչադարայում: Դուստրը քառասունն անց մի արտակարգ գեղեցիկ կին էր, ում բնավորության մեջ զարմանալիորեն զուգակցվում էին մեգրելական ժպտերես կեղծավորությունը և աբխազական պնդաճակատ համառությունը: Նրանք արդեն ընտանիք էին կազմել և առանձին էին ապրում: Կրտսեր որդին՝ խառնակիչ, երես առած, հոր և մոր սիրասուն զավակը, դեռևս ամուսնացած չէր և ծնողների հետ էր ապրում: Նա յուրային էր համարվում Սուխումի «գողականների» շրջանում:

Բեսլանի ոչ մեծ սենյակը գտնվում էր առաջին հարկի հյուսիսային կողմում, այնպես որ արևն այնտեղ հազվադեպ էր այցելում, ամառվանից ձմեռ և հակառակն անցնելիս:

Ծերուկներն իբրև մոտ մարդու դիմավորեցին Բեսլանին, չգիտեին ինչ անեն, երկար ժամանակ չէին հավատում, որ նա նույն Բեսլանն է, որը մի քանի տարի շարունակ իրենցից սենյակ էր վարձում: Բաբջան, երևի կարոտած լինելով հարազատ լեզուն, շատախոսում էր աբխազերեն՝ ամեն մի բառից հետո ախ ու վախ անելով և անիծելով վրացիներին (նա հիմարավուն մի պառավ էր, ուներ դարավոր հնության նախապաշարմունքներ, ինչը, սակայն, նրան չէր խանգարել ամուսնանալ այլազգիի հետ):

Ծերուկների վրա ուժեղ տպավորություն գործեցին Բեսլանի ինքնաձիգը, հանդերձանքը և մազակալած դեմքը, նրանք սկսեցին միմյանց խոսքը կտրելով հավաստիացնել, որ իրենց որդիներից և ոչ մեկն աբխազների դեմ չի կռվել. «Աստված փրկի այդպիսի մեղքից», բայց բոլորն էլ Վրաստան են մեկնել՝ վախենալով, որ նրանց կարող են ոմանց հետ շփոթել:

Նրանք կվերադառնան՝ հենց որ «թյուրիմացությունը կարգավորվի, և ամեն ինչ առաջվա պես լինի»: Ասացին, որ իրենք տուժել են արխագին վարժով սենյակ տալու համար. հարևանն էր մատնել: Գվարդիականները խուզարկել են տունը, ամեն ինչ տակնուվրա արել, ծերուկին հարվածել ինքնաձիգի խզակոթով: Պատմելու ընթացքում Բաբգան շուտ-շուտ հեծկլտում էր՝ «Շան ծնունդ, շան ծնունդ»: Ծերունին նույնպես հեծկլտաց. նա զգայուն մարդ չէր, նույնիսկ կոպիտ էր, բայց հանգամանքն էր ստիպում:

Նրանք կարծում էին, թե Բեսլանն իրենց տանն է մնալու, և երբ իմացան, որ տեղափոխվելու է, անկեղծորեն տխրեցին. նրա շնորհիվ ոնց էլ լինի կողոպտիչներից կապշտպանվեին: Տեղնուտեղն առաջարկեցին զբաղեցնել... հարևանի տունը, որի տերը՝ մի «շան ծնունդ», կռվել է, և այժմ նա իր ականջները կտեսնի՝ Աբխազիան չի տեսնի:

Ծերուկները կարողացել էին փրկել նրա գրեթե ամբողջ աղքատիկ գույքը՝ հագուստը, գրքերը, նվագարկիչը, ծայնապնակները... Բեսլանն իրերը տեղափոխեց նոր կացարան՝ հեռավոր բարեկամուհու՝ մի խելառ պառավի տուն, որը մահացել էր պատերազմի ավարտին:

Մագբուլիա անունով պառավը մեռավ՝ լինելով միայնակ անզավակ այրի: Ամուսինը կորել էր ստալինյան ճամբարներում: Նա ողջ մնաց և մնաց նրան հավատարիմ, ինչպես հավատարիմ էր Ստալինին և հոգու խորքում հավատում էր, որ ինքն ու ամուսինը մեղավոր են, չնայած հալոցքի տարիներին նրանց վերականգնեցին: Այդ վերականգնումը նա անձնական վիրավորանք էր համարում: «Ես մատս անգամ չէի շարժի», - ասում էր հին բոլշևիկուհին՝ չլսված խայտառակություն համարելով այն, որ երկիրն ստորացել է մինչև ինքնախարազանում: Իսկ Խրուշչովին դժոխք էր կանխատեսում՝ վրիժառու տաքարյունությամբ մոռանալով, որ ինքը մարտակա-նորեն բացառում է Աստծուն և նրա անդրշիրիմյան դատաստանը:

Ինչպես հարիր է պառավի մնացած հարազատներին, նրանք չէին մոռանում Մագբուլիային: Բեսլանը շաբաթը մեկ տեսության էր գնում կամ զանգահարում, իսկ նրա մայրն ամեն ամիս գյուղից մթերքով լի պայուսակներ էր քարշ տալիս:

Հույժ կասկածամիտ, աշխարհում կուսակցությունից բացի ոչ ոքի չհավատացող պառավը կարծում էր, որ այս բոլոր ուշադրության նշաններն արվում են սոսկ այն նպատակով, որ իր մահից հետո բնակարանը

մնա իրենց, և բոլշևիկյան ուղղամտությամբ, առանց քաշվելու հայտնեց իր կասկածանքը: Բեսլանի մայրը, որն ամբարտավանության և կամակոր բնավորության համար առանց այն էլ չէր սիրում Մագբուլիային, բայց համբերատար կատարում էր իր ազգակցական պարտքը (այդպես անվանենք կարեկից սրտի և մշտապես հարևանների կարծիքը հաշվի առնելու ձգտման խառնուրդը), դրանից հետո դադարեցրեց այցելությունը, և պառափն զգաց, որ վրիպել է: Նա Բեսլանին խնդրեց հաղորդել մորը, որ զղջում է իր ասածի համար, բայց Բեսլանը չհասցրեց. սկսվեց պատերազմը:

Երկսենյականոց բնակարանը քաղաքի կենտրոնում էր, Բուսաբանական այգու դիմաց: Մեռնելուց առաջ պառավը հարևաններին խնդրեց, որ բանալին փոխանցեն Բեսլանին:

Հին, թրծված կոմունիստուհին ճգնավորի պես էր ապրում, անպատմելի, աննորմալ մաքրության պայմաններում. ամեն ինչ լիզած-մաքրած էր: Բեսլանի մայրը կարգի բերեց բնակարանը, չնայած նա ինքն էլ գլուխ կհաներ, մաքրելու բան չկար, միայն պետք էր սրբել եռամսյա փոշին: Դուրս բերեց պառավի բոլոր իրերը. մայրը սնահավատ էր և վախենում էր, որ ամբողջ կյանքում Մագբուլիային հետապնդած դժբախտությունը կանցնի իր որդուն: Բեսլանը կասկածում էր, որ մայրն այրել է այդ իրերը:

Սկզբում Բեսլանն անհանգիստ էր: Նրան թվում էր, թե պառավի հոգին, որն իր նման չորուկ-մորուկ ու չար պիտի լիներ, դեռևս բնակվում է տանը՝ երբեմն մարմնավորվելով աղոտ ստվերների մեջ, որոնք բոլոր անկյուններից իրեն են հետևում:

Անմարդաբնակ, ավերակ Սուխումը լցվել էր թալանչիներով, որոնք այժմ յուրային էին: Քաղաքն ազատագրած առաջավոր զորամասերի հետևից նրանք ասես թշնամու քաղաք մտան և սկսեցին թալանել: Սոսկ փոքրաթիվ ամոթխաճներն էին կամուֆլյաժ համազգեստով, մեծ մասը քաղաքացիական զգեստով էր, ինքնաձիգը վիզը գցած, որը ոտքով, որը խարխլված մեքենայով, փողոցներով հետուառաջ էին անում՝ որոնելով հեշտ ավար՝ չզբաղեցրած կացարան, թաքցրած թանկարժեք իրեր, դեռևս փակ տնակներում պահված ավտոմեքենաներ... Սրանց նախորդած կողոպտիչներն ու ավազակները, որոնք խրոխտաբար իրենց անվանում էին Վրաստանի պետխորհրդի զորք, կողոպտում ու սպանում էին հիմնա-

կանում արխագներին, կարող էին կլոր հաշվի համար թալանել նաև համակիրներին՝ մի քանի ռուսի, հայի, հույնի: Իսկ այժմ հյուսիսից քաղաքը ողողվեց մեկ այլ ալիքով, և արդեն հաշիվ էր ներկայացվում վրացիներին՝ նրանց տներին ու բնակարաններին: Սակայն հագեցման պահը չէր գալիս, պարզվեց, որ կողոպտիչների ստամոքսն անտակ է, և արդեն թալանում էին առանց խտրության:

Զինված կողոպտիչներից հետո կոճոնները հավաքելով ասպարեզ մտավ նաև խաղաղ, լոկ մասամբ զինված բնակչությունը: Շատերին էին համակել անկուշտ ագահության խելագարությունը, զավթումի և թալանի հիվանդությունը: Քարշ տալով տանում էին ձեռքն ընկած ամեն ինչը՝ սեղան, աթոռ, սեղանի լամպ, բարձ ու սավան, բարձի երես... Փողոցները լցված էին «ավարով» բեռնված բեռնասայլակների գումակներով, ոմանք թալանը շալակով էին տանում: Յանկապատերին, դարպասներին, դռներին կարելի էր կարդալ «Զբաղված է» հաղթական մակագրությունը, որը, սակայն, բնավ էլ հպարտ միայնություն չէր նշանակում: Դրա ստորին մասում մեծ մասամբ գեղեցկությամբ աչքի էր զարնում հափշտակիչի անունը և ազգանունը, հաճախ էլ՝ այն գումարտակի անվանումը, որտեղ իբր նա ծառայել է:

Բեսլանը տնից դուրս չէր գալիս, որպեսզի չտեսնի կատարվող անամոթությունը՝ երկրորդ զանգվածային խելագարությունը. առաջինը պատերազմն էր: Կատարվածը նրան ցնցել էր, նման բան նա չէր սպասում: Վախենում էր չզսպել իրեն, ինչը կարող էր դժբախտություն բերել. կամ իրեն կխփեին, կամ ինքը կգնդակահարեր կողոպտիչներից որևէ մեկին: Դրա սահմանագծին նա արդեն եղել էր, երբ գիշերվա կեսին մի քանի զինված ջարդարար մտան հարևանի տուն, ուր ապրում էր մի ռուս կին, ում ամուսինը վրացի էր և մեկնել էր Թբիլիսի:

Քանի դեռ կնոջ բերանը սրբիչ չէին խցկել և ամուր հանգույցով կապել ծոծրակին, նա հասցրեց ճչալ: Պատերազմը, ամենրոպեական վտանգը Բեսլանին սովորեցրել էին զգաստ, կիսաթթուն քնել, ականջը ծայնի, ամեն մի շրշյուն կարող էր նրան արթնացնել: (Երևի դա էր պատճառը, որ նա առավոտները երբեք իրեն լիովին հանգստացած չէր զգում): Նա իսկույն արթնացավ, վեր թռավ, վերցրեց ինքնաձիգը: Լռություն էր, բայց այն չէր կարող Բեսլանին խաբել. նա հաստատ գիտեր, որ ինչ-որ մեկն օգնության

է կանչում: Չկարողանալով պարզել, թե որտեղից են կանչում, նա որոշեց նախ ամենամոտ հարևանին տեսնել, հետո մյուսներին:

Հարևանուհու դուռը կիսաբաց էր, չնայած կեսգիշերն անց էր: Մտնելով բնակարան՝ նավթի լամպի աղոտ լույսով Բեսլանը տեսավ կնոջը, որն ամուր կապված էր աթոռին, աչքերը վախից դուրս էին պրծել և վզի երակները պրկվել: Նա շարունակում էր կանչել ներքին ծայնով: Ինչ-որ հնչյուններ տեղ հասան. դրանք Բեսլանին հիշեցրին մորթվող խոզի խոնջույնը:

Կողոպտիչները տեր ու տիրական էին դարձել սենյակներում: Նրանք ձգտում էին չաղմկել, բայց ապարդյուն: Բեսլանն ինքնաձիգը նրանց կողմը չուղղեց, հույժ «կինոական» բան կստացվեր, ու նաև կթվար, թե ինքը վախենում է նրանցից, այլ փողը դեպի ներքև, բայց համենայն դեպս մատը պահելով ձգանի վրա: Երբ նրան նկատեցին, բոլորը միանգամից ետ դարձան ու անշարժացան: «Այ տղա, ինչ ես անում, բոլորս մերոնքական ենք», - ուշքի գալով ասաց նրանցից մեկը: Ասաց այնպիսի ծայնով, որը Բեսլանը կյանքում ամենից շատ էր ատում՝ կտի-արհամարհական, ինքնավստահ, շինծու գողական-հանցագործ խոսվածքի հանգույն:

Սիրտը պահանջում էր այս տականքը վերացնել հենց այստեղ, տեղում, դրամարկդի մոտ, իսկ հետո ինչ լինելու է թող լինի:

Կամքի ուժով Բեսլանը զսպեց իրեն, չնայած ձեռքն ինքնակամ բարձրացրեց ինքնաձիգը, և այժմ փողի խորաբաց վիհը ժլատորեն նայում էր նրանց:

Նա չէր կարող այլ կերպ վարվել, չնայած գիտեր, որ եթե նրանց այժմ չսպանի, ապա նրանք վաղը որպես հատուցում իրեն անկյունից կգնդակահարեն կամ ուրիշների կուղարկեն իր բնակարան: Բայց սպանել չէր կարողանում:

Նա իջեցրեց ինքնաձիգը և ասաց. «Ես թույլ չեմ տա, որ թալանեք, ավելի լավ է հեռացեք»:- «Դե, դե, ջահել, ֆոփկ մի արա, այստեղ վրացի է ապրել, և կոնկրետ՝ վատ վրացի, մենք պարզել ենք»:- «Չեմ թողնի»: Թուլանալ չէր կարելի, այլապես կջնջեին: Նա կարող էր ասել. «այդ կինն իմ հարևանուհին է...», «իմ ազգականուհին է...», «կարող եք ինձ սպանել», բայց բոլոր այս անհամոզիչ խոսքերը նրանց համար կնշանակեին, որ Բեսլանն ընկրկում է, և այնժամ նրա բանը բուրդ էր:

Նրանց դեմքերը մազակալած էին, կռվածի տեսք ունեին, բոլորն էլ

ինքնաձիգով էին: Ոչ մի վախ կամ անհարմար զգալ, առավել ևս՝ ամաչել չկար, դա ավելի էր կատաղեցնում Բեսլանին:

Նրանք անցան հարևան սենյակ, ինչ-որ բանի մասին վիճեցին, բայց մի տիրական ծայն, որը Բեսլանին ծանոթ թվաց, ընդհատեց վեճը: Հետո նրանք դուրս եկան սենյակից, լուռ, իրենց դիրքին հարիր արժանապատվությամբ անցան նրա մոտով և բնակարանից դուրս եկան՝ ծաղրաբար կամաց փակելով դուռը:

Բեսլանը մինչև օրս էլ համոզված է, որ կողոպտիչներից մեկը ճանաչել էր իրեն, ոչ միայն ճանաչել, այլ որ իրենք մոտիկից ծանոթ են եղել: Հենց դրա շնորհիվ էլ ինքը փրկվեց:

Այդպիսի դեմքեր նա պատերազմից չէր մտաբերում, համենայն դեպս, նրանք առաջավոր գծում չէին. հապա որտեղից են այժմ լույս ընկել:

Տերեկով, իսկ ավելի հաճախ՝ գիշերը, երբ քաղաքն ընկղմվում էր անթափանց խավարի մեջ, - լույս չկար, - փոխհրաձգություն էր լսվում. կողոպտիչների առանձին խմբերի միջև մղվում էին տեղական նշանակության մարտեր: Կային վիրավորներ և սպանվածներ:

Բեսլանը մոտակա կրպակ միայն հացի ու մթերքի էր գնում, պառկած Հոքինգ էր կարդում, ժամանակ սպանում: Կողքի անկյունում արջնած պողպատե փողը կատաղի փայլեցնելով հանգիստ էր առնում ինքնաձիգը: Բեսլանն ըստ սովորության երբեմն այն իր ձեռքն էր առնում և տհաճությամբ զգում ծանոթ սառը ծանրությունը: Իր մարմնի ջերմությամբ դեռևս չտաքացած կալաշնիկովը նա դարձյալ տեղավորում էր անկյունում: Հանկարծակիի գալու վախը խորն էր նստած նրա մեջ, չնայած չգիտեր, թե ով կամ ինչն այսուհետև կարող է իրեն հանկարծակիի բերել: Ջենքը հանդարտություն էր տալիս: Բեսլանը կապված էր նրա հետ: Մեկ տարվա պատերազմի ընթացքում կալաշնիկովը նրա համար դարձավ կենդանի էակ իր կենդանի էությամբ, իր առանձնահատուկ, բայց դեռևս մինչև վերջ չգիտակցված, ուստիև վախեցնող տեսքով ու բարքով. այն աստիճանաբար իշխում էր նրան: Երբեմն Բեսլանին թվում էր, որ լսում է մի թաքուն շշունջ՝ իրեն ներշնչող, որ ինքը՝ կալաշնիկովը, ի գորու է լուծել այն ամենը, ինչ առաջին հայացքից անլուծելի է թվում, և այդ շշունջն ասես սիրո խոստովանություն լինի. այն մոտիկ է և երբեք մենակ չի թողնի Բեսլանին:

Կալաշնիկովն ու մակարովը լցրին այն դատարկությունը, որը Բեսլանի

կյանքում առաջացավ պատերազմից հետո: Որտեղ էլ լիներ՝ երբեք չէր մոռանում՝ տանն սպասում է լեցուն փամփշտակալներով, փայլիլուն կալաշնիկովը, հավատարիմ բարեկամը. էլ ինչ անախորժությունից ասես ողջ-առողջ իրեն չի հանել և ուժի, նույնիսկ հզորության ինչ զգացում է ծնում այդ րոպեներին: Եվ գոտկատեղի մակարոֆս էլ՝ նույնը: Հաճելի էր զգալ նրա հուսալի ծանրությունը, նրա օտարածին, այնկողմնային, բայցև բարեկամական հպումը:

Բայց այդ մտերմությունն սկսում էր խանգարել Բեսլանին, նրան զայրացնում էր այն, թե ինքնաձիգն ինչպես է սպասողաբար ու պահանջկոտ թաքնվել անկյունում, մահճակալի սնարին: Թաքնվել է մինչև ինչ-որ մի ժամանակ: Ո՞ր ժամանակ, ինչ տևողությամբ. չէ՞ որ պատերազմը վերջացել է:

Հոբինգը հուշեր էր արթնացնում: Երբեմն պատահում էր, որ Բեսլանը խրամատում, ձմեռային աստղերի սառցե հայացքի ներքո տղաներին պատմում էր տիեզերքի, գալակտիկաների մասին, թե ինչ կլինի մոլորակը տարիների վիթխարի սովարաշերտի ներքո: Նրան լսում էին ուշադիր, բայց և ոչ առանց ծաղրանքի, անընդհատ մի անշառ կատակ մեջ գցելով: Այդ ժամանակ բոլորը ժպտում էին: Ոչ ոք չէր ուզում ցույց տալ, թե ինչքան են ազդվում Բեսլանի պատմածից. իրենք կարևոր գործով են զբաղված, իսկ երկնականարն իր ամբողջ խրթին երկրաչափությամբ կարող է և սպասել:

Ինչո՞ւ է այնպես սահմանված, որ ոչ ոք ճիշտ չի կարող իմանալ, թե երբ է մեռնելու: Պարտադիր չէ, որ մարդ իմանար իր մահվան օրը և ժամը, բայց և հնարավոր է, չէ՞, որ ճակատագրական սահմանագծի մոտ հանկարծ մի որևէ նշան երևար: Բայց նա չկա:

Նաթելայի մայրը եռանդով աղաչում էր Աստծուն, որին նախկինում չէր հավատում, բայց հիմա՝ անտանելի ցավերից հետո և մոտալուտ ավարտի նախագգացումով հավատացել էր,– ոչ թե համենայն դեպս, այլ հանկարծ նրա մեջ ինչ-որ բան էր բացվել,– որպեսզի իմաց անի, թե երբ է իրեն տանելու: Բայց նա քնած ժամանակ մահացավ: Քնած ժամանակ: Ավելի մեծ ծաղրոծանակ երկնային վերակացուի կողմից պատկերացնելն անհնար էր. կնոջ հուսահատ խնդրանքին ի պատասխան նա գիշերը կամաց, անն-

կատ ուղարկել էր իր ոսկրոտ սպիտակագգեստ ոգիներին: Առավոտյան նա անկողնում պառկած էր արդեն մեռած, սարսափից ականափշ աչքերով. ուրեմն, հասցրել է հայացք ձգել անկոչ հյուրերին:

Նաթելան պահը բաց էր թողել. չկարողանալով հաղթահարել բազմաթիվ անքուն օր ու գիշերների հոգնությունը, փակել էր աչքերը: Քունը չուգունի նման ծանրացել էր վրան, և նա չէր տեսել, թե ինչպես էր մահացել մայրը: Վերջինս նույնիսկ չհասցրեց վերջին խոսքն ասել՝ ամենակարևոր, իմաստուն, դստեր կյանքը թեթևացնող խոսքը: Նաթելան սպասում էր, հույս տածում, որ մայրը մայրամուտին, երկար, անվերջանալիորեն երկար գիշերվանից առաջ արդեն պատրաստել է ողջերթի խոսքը, և այն մտածված է մինչև վերջին տառը և միայն սպասում է մահվան ոգեշունչ գալստյանը. մահը տեսնելով՝ նա մի որևէ նշանով, շարժումով կամ հայացքով մոտ կկանչի դստերը և մտքում բազմիցս փորձած պատեհ ծայնով կշշնջաբաղձալի խոսքը:

Բայց գուցեև մայրը չուներ այդ բառերը, գուցե դրանք ընդհանրապես գոյություն չունեն, և մահվան գալուստը նույնքան առօրեական է, ինչպես վրա հասնող լուսաբացը: Որքան է պատահել, որ արթնացել ու տեսել ենք կայտառ առավոտը: Արթոն մնաս. բայց չէ՞ որ արևն առանց այդ էլ կծագի: Եվ նա՝ Նաթելան, նույնպես կմահանա՝ առանց մի խոսքի, առանց գտնելու...

Այդ դեպքում ինչո՞ւ էր մայրն այնքան ուզում իմանալ իր մահվան ժամը:

Նա սարսափելի վախենում էր քնած անցկացնել իր մահը և հետ էր սովորել քնից, ասենք՝ ցափն էլ չէր թողնում նիրհել: Իսկ հիմարիկ Նաթելան, դեռևս երեխա լինելով, կարծում էր, թե մայրն իր համար է այդպես տանջվում:

Բայց երբ վերջապես ցափն ու տանջանքը հալից գցեցին նրան, երբ նա, ուժասպառ լինելով քնի դեմ մաքառելուց, հանձնվեց, մահն էլ եկավ... «Վրա հասավ», ասում են սովորաբար՝ նկատի առնելով այն, որ մեզնից յուրաքանչյուրի կյանքը հավերժական փախուստ է մահից: Այդ փախուստը նաև նշանակում է մտապես հետ նայել՝ մո՞տ է, թե հեռու գերանդիավորը, ծոծրակիս վրա շո՞ւտ կզգամ նրա սառցե շնչառությունը, շո՞ւտ կբռնի իմ օձիքից և քարշ կտա դեպի մթին հեռուն: Այդ վազքը մեզնից յուրաքանչյուրի մեջ մի ցնորական անօգ հույս է ծնում՝ հանկարծ ու իսկապես հնա-

րավոր կլինի գլուխն ազատել: Արդյունքում մենք տեսնում ենք այն սարսափելի պատկերը, թե ինչպես է մահը համառոտորեն հետապնդում մարդուն՝ ինչպես որսորդն իր որսը, չի հանգստանում մինչև հետևից չհասնի, և մարդը լոկ վազում է՝ ոչ մի անգամ կանգ չառնելով, հետ չհայելով: Բայց իրականում այդ վազքը ոչ թե վազք է մեկնարկից, այլ վազք՝ ընդառաջ, և մեզանից շատերը, եթե ոչ բոլորը, իրենք էլ այդ չհասկանալով, վազում են ուրախությանն ընդառաջ, տենդագին անհամբերությամբ՝ ճանապարհին հորինելով երկար սպասած ժամադրությունն արագացնելու հարյուրավոր եղանակներ:

Նաթելան ամբողջ կյանքում գլուխ էր ջարդում այդ հանելուկի վրա: Երբեմն թվում էր, թե լուծումը մոտ է, պետք է սոսկ մինչև վերջ մտածել, լարել վերջին ճիգը՝ և տգեղ կամ գեղեցիկ, գաղտնիքը կբացվի: Սիրտը հուշում էր, որ այն սարսափելի է լինելու, նրանից հետո ապրել չարժե, անհնար կլինի ապրելը, եթե սիրտդ ապխտած մսից չէ և երակներումդ ոչ թե արյուն, այլ զով ջրիկախյուս չի հոսում... Երբ մայրը մահացավ, Նաթելան դեռ երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ այն բանից, որ այդպես էլ նրանից չլսեց իրեն այնքան հարկավոր խոսքը: Նա խաբված էր, գուցե և խաբված ավելի դաժանորեն, քան մայրը, որն այնպես էր սպասում Բարձրյալի ներողամտությանը: Մի վայրկյանում կյանքը դատարկվեց, անիմաստ դարձավ, Նաթելան հանկարծ հայտնվեց սարսափելի, աներևակայելի միայնության մեջ: Նա չստացավ այն, ինչ ուզում էր. սակայն ճակատագիրը բազմահնար է, և մոր լուռությամբ, մտածում էր Նաթելան, իրեն ասվեց այն ամենը, ինչ պետք էր. այս բանը նա միայն այժմ սկսեց հասկանալ՝ մոտենալով մոր տաքիքին...

Մոր մահը Նաթելայի համար այն իրադարձությունն էր, որը կանխորոշեց նրա հոգու և մտքի համակարգը մնացած ամբողջ կյանքում: Նույնիսկ պատերազմը նրա սիրտն այդքան սառը և սուր դանակով չխոցեց: Եթե նրան մի բան էլ ալեկոծի, ապա այն, անկասկած, սեփական մահը կլինի, ավելի ճիշտ, նրա մոտենալը. չէ՞ որ ասված է, որ սեփական մահ չկա էլ. մենք չենք կարող այն իմանալ, քանզի երբ նա կա, մենք արդեն չկանք:

Շաբաթը մեկ անգամ Բեսլանը դիմավորում էր գյուղի ավտոբուսը, որով մայրն ուղարկում էր մի գլուխ պանիր, եգիպտացորենի ալյուր, տնա-

մերձից քաղած կանաչեղեն՝ մի շաբաթվա մթերք: Վարորդը՝ մի տոգած խոզ, որն ըստ լուրերի ամբողջ պատերազմը գլուխը պահել էր լեռնային խուլ գյուղում, քմծիծաղով էր նրան նայում: «Ուսում ես ստացել, բայց ի՞նչ օգուտ...»– գրված էր նրա կոշտոկոպիտ դեմքին: Բեսլանին դա քիչ էր հուզում, ավելի ճիշտ՝ բնավ չէր հուզում: Նա մարդկանց դեռևս տարբերակում էր պատերազմի սահմանած սկզբունքով՝ կռվել է – չի կռվել, և նրանց, ով չէր կռվել, վերևից էր նայում, եթե չասենք արհամարհանքի զգալի չափաբաժնով: Սակայն ամենշաբաթյա հիշեցումը, որ նա Սուխումում անգործ նստած է, իսկ ծնողներն այնտեղ յոթը քրտինք մտած բանում են օրն ի բուն, նրա մեջ հարուցում էր վիրավորանքի սարսափելի մի զգացում, և նա անիծում էր և՛ կիրակին, և՛ ավտոբուսը, և՛ հրեշավոր պայուսակը, որը նույնքան կանոնավոր կերպով նույն ավտոբուսով հետ էր ուղարկում:

Երբեմն մայրն էլ էր գալիս: Շուկայում հնդկահավ, հավ, պանիր, կաղին կծախեր, որդուն փող կթողներ և կմեկներ՝ վերջում անհամարձակ խնդրելով, որ իրենց չմոռանա, այցելության գա:

Բեսլանը չէր գնում, միշտ Սուխումում նստած էր: Նա ինքն էլ մի կարգին չգիտեր, թե ինչու քաղաքից դուրս չի գալիս, ոչնչով զբաղված չէ, չի աշխատում, կիսաքաղց է ապրում: Խիստ հազվադեպ էր այցելում հայրենի գյուղ, այն էլ երբ ազգական էր մահանում, որի հուղարկավորությունը բաց թողնելու խիզախություն չուներ: Գուցե վախենում էր վերադառնալ այնտեղ, ուր տարուց ավելի կռվել էր, տեսել էր մահ ու արյուն, վիրավորվել էր:

Բայց և սովորական, ընտել աշխարհի վերադառնալ նույնպես չէր կարող: Բեսլանն սպասում էր: Ամեն բան չափազանց կրակոտ էր եղել, որպեսզի այսպես միանգամից հովանար՝ ոչ մի էական բանի սկիզբը չդրած: Դրան նա չէր հավատում, սիրտն ասում էր, որ գլխովն անցածը չի կարող անհետ կորչել, և նա ապրում էր՝ համբերատար սպասելով, որ ահա ուր որ է մի չտեսնված, վիթխարի բան կպատահի, և ամեն բան կարգի կընկնի, բայց ոչ մինչպատերազմյան կարգով, այլ ներկայիս...

Նա չկարողացավ վերադառնալ ամայացած համալսարան, խոնավ, կիսամութ լաբորատորիան, թռչակի տարիքի սարքերի մոտ, որպեսզի դարձյալ տաքատ մաշի՝ օրը լցնելով թվացյալ գիտական աշխատանքով: Ֆիզիկայի հարցը փակված էր, այն զգվեցրել էր և այժմ դիակի պես պառկած էր նրա անցյալում:

Նախկինում Բեսլանը նման ավարտ չէր սպասում: Մեծ ֆիզիկոս դառնալու պատվախնդիր երազանքը նա արդեն թողել էր, բայց մեկ այլ տեղ, որտեղ գիտությունը լավ վիճակում էր, փոխադրվելու միտքը նրան երբեմն այցելում էր: Նա նույնիսկ գիտության դոկտոր կարող էր դառնալ. այդպիսի կարողություն Բեսլանն իր մեջ զգում էր, իսկ եթե բախտը բերեր, ապա կարող էր նշանակալի հայտնագործության հույս ունենալ:

Բայց պատերազմը, Ադգուր Ա.-ի օրագիրը նրա մեջ ինչ-որ բան փոխեցին: Ինչ-որ բան տեղաշարժվեց, նրա կյանքը բաժանվեց «մինչևի» և «հետոյի», և ինչ որ պատահել էր նրան և նրա մեջ «մինչև», անիսկական թվաց, մի բանաձև, ուր թաքուն թափանցել է հաշվի չառնված մի վրիպում՝ մի ակնթարթում շուռ տալով ամբողջ բանաձևը: Իր կոչումը նա տեսավ այլ կերպ, այլ տեսանկյունից: Մի անհայտ վայրից մարդու էության մեջ միտումնավոր ուղարկված նպատակ չկա, կարծում էր նա, այլ կան ատոմների կցորդում և նյութ, արդյունքում՝ մարդը և իր ուղեղը: Եվ ինչպես որ մինչև ծնունդը չկա ժամանակի հիշողություն, մեր «ես»-ը սանդղակի մյուս ծայրում դեմ է առնում սաղմնավորման պահին, ինչը քիչ է հուզում մեզ, չի վիատեցնում ու տխրեցնում, այդպես էլ մահվանից հետո չկա «ես»-ի շարունակություն, ինչը չի խանգարում, որ մենք թախծալիորեն վշտանանք այդ առիթով: Բայց միայն կենդանի մարդն է վշտանում, նրա զգացումների անհամաչափությունը բացատրելի է սանդղակի վրա հաշվարկային կետի՝ ծննդյան օրվա առկայությամբ: Սա գլխավոր օրն է, և լոկ մահը մի գդալ ծյուրի պես փչացնում է գոյության քաղցրությունը: Սակայն ամեն գիշեր քուն մտնելով՝ մենք ոչ մի բանից չենք վշտանում, այլ շատ էլ զգաստ ենք ընդունում հարկադրական հեռացումը: Ուրեմն, մահն իսկապես հնարավոր է և իսկապես գալու է՝ որքան էլ մենք համառորեն չհավատանք դրան և երբ նա ահեղ ու համոզիչ ձևով ներկայանա, մենք հլու-հնազանդ կենթարկվենք նրան:

Բեսլանն անցած սխալ բանաձևը ջնջեց ոչ թե այն պատճառով, որ բացահայտվեց իր նոր կոչումը. հին բանաձևը բանի պետք չէր, նրա ուղեկցությամբ անհնար կլիներ տանելի դարձնել իր կյանքը:

Իսկ ուսանող եղած ժամանակ, համալսարանի հանրակացարանում իր ունեցած ապրումը նա արդեն կասկածի էր ենթարկում, չնայած չէր էլ մոռանում հանկարծ իրեն համակած զգացումը, որ ինքն անբացատելիորեն

գոյի մի մասն է: Զգացումի, այսինքն՝ մի ինչ-որ տևական բանի մասին խոսելն այնքան էլ ճիշտ չէ: Բռնկում է եղել, տևողությամբ ավելի կարճ, քան կայծակը, և ամեն բան լուսավորվել է. պարզվել է, որ «ես»-ը հորինվածք է և ոչ ոքի չի պատկանում: Նա Ֆալտերի նման չոռնաց՝ տեսնելով այն հիմքը, որի վրա կանգնած է աշխարհը, մի խաղաղ տխրություն նրան համակեց, քանի որ շուրջը որևէ իմաստ չավելացավ:

Այնուհետև տարիներն իրենց զանգվածով խլացրին այն բռնկումը, որը հետո հազվադեպ էր հիշում, ինչ-որ տեղ հոգու խորքում այն բոցկլտում էր իբրև բոլոր հարցերի պատասխան: Այս իրադարձությունն իր կյանքի վրա կազմակերպիչ ազդեցություն չունեցավ, կյանքը հոսում էր նախկինի պես: Եթե հնդիկ լիներ, կամ հզոր ավանդույթի գրկում ծվարած մեկ այլ արևելացի, գուցե իր հետ պատահածը կներաճեցներ մի որևէ տեսության և օրերի մնացորդը կանցկացներ գուրուի դերում՝ լոտոսի դիրք բռնած:

Ինվար Թամշուգովիչը՝ լաբորատորիայի վարիչը և նրա գիտական ղեկավարը (Բեսլանը թեկնածուական թեզ էր գրում), մի ճաղատ, ցածրահասակ և հաստափոր մարդ, նրան դարձյալ հետ՝ իր մոտ էր կանչում: Բեսլանը նրան հանդիպել էր զրուցարանում՝ «Հակոբի մոտ»՝ սրճարանում կամ «Ադունեյում», որը սրճարանի, բիստրոյի և խաղատան մի խառնուրդ էր, որտեղ նա սովորաբար երկար նստում էր՝ մարտնչելով շախմատի տախտակի առջև:

Առաջին յոթ քայլը՝ նախավերջին զինվորների առաջմղումը և փղերի տեղափոխումն ազատված դաշտեր, նա անփոփոխ կատարում էր՝ ինչ գույնով էլ խաղալիս լիներ, և երևի անփոփոխ էլ կմնա մինչև նրա օրերի վերջը: Եվ այդ քայլերը նա անում էր սրընթաց, գրեթե կուրորեն՝ ուշադրություն չդարձնելով մրցակցի քայլերին: Վերջինս կարող էր անհեթեթ քայլեր անել, ձիով, ոչ թե «r», այլ պա խաղալ, բայց Ինվար Թամշուգովիչը խախտումը կարող էր նկատել միայն յոթերորդ քայլից հետո, երբ հանկարծ լրջանում էր, լռում, լարվում, ինչի պատճառով նրա որոշ չափով լմփոշ կազմվածքը թնդանոթի հոծ և կլոր ռմբագնդի ձև էր առնում. սկսվում էր իսկական պայքարը, մինչ այդ եղածը սոսկ ծանծրալի, պարտադիր առաջաբան էր և նախորդում էր կլանող մարտին:

Ավելի անհուսալի դիրք չկա, ժամանակն է իբրև պարտության նշան

արքան կողքի պառկեցնել, ինչը թե՛ խիզախ, թե՛ արժանապատիվ քայլ կլիներ, բայց Ինվար Թամշուգովիչը երբեք չէր հանձնվում, այլ համառորեն խաղում էր մինչև վերջ՝ տախտակի վրա դետուրեն տանելով դատապարտված ֆիգուրները: Երբ մատ էր ստանում, դեռ որոշ ժամանակ շփոթություն էր ապրում, կասկածանքով նայում մերթ մրցակցին՝ երևի սպասելով, թե նա երբ կխոստովանի, որ չար կատակ է անում, մերթ տախտակին, որտեղ արքան անշարժացել էր ողբալի դիրքում:

Բեսլանին զվարճացնում էր նրա անկեղծ տարակուսանքը: Նա կամ լիովին մոռանում էր նախկին պարտությունները, դրանցից չկարողանալով ոչ մի դաս քաղել, կամ էլ թե չէ իր շախմատային ուժի մասին այնքան մեծ կարծիքի էր, որ պարտությունը խարդախություն էր համարում. չէ՞ որ իր յուրաքանչյուր քայլը ճիշտ էր, եթե չասենք՝ լավագույնը: Այդ դեպքում դրանց գումարն ինչո՞ւ էր սխալ արդյունք տալիս:

Ինվար Թամշուգովիչը թույլ խաղացող էր, և ինչպես շախմատի ամբողջ դժվարությանը հասու չեղած ամեն ոք կարծում էր, թե հարկավոր է ընդամենը «չհորանջել»՝ անուշադրությամբ ֆիգուր չտալ, և ամեն ինչ լավ կլինի: Եվ նրա համառությունը կանխավ պարտված դիրքում բացատրվում էր մրցակցի «հորանջելու» վրա հույս դնելով:

Աշխատանքային օրերին Բեսլանը գնում էր քաղաքային գրադարան: Քարե երեք աստիճանները տանում են ներքև, կիսամութ արոնենտալին սրահ, որտեղ խոնավության և գրքի մզլահոտն էր տիրում: Այստեղ շարված են գրադարակները: Շարքերի միջև առաստաղից կախ են ընկել մետաղյա կեռեր, որոնցից կարելի է կախել երկար լար ունեցող լամպի վառվող տանձը: Ընթերցողները, կեռից կեռ տեղափոխելով լամպը և խցկվելով դարակների միջև ընկած նեղլիկ տարածությունը, փնտրում են հարկավոր գրքերը:

Գրքերի ստորջրյա աշխարհ և լույս արձակող օձաձուկ:

Փայտե սանդուղքն ավելի ուղղաձիգ է և տանում է վերև՝ ընթերցասրահ:

Գրադարանում նա անցկացնում էր մի երկու, երբեմն՝ երեք ժամ, ոչ ավելի, հոգնում էր: Պատահում էր, որ նույնիսկ ամենակարճ մեկնաբանությունը,– իսկ գրքում հիշատակված հայտնի և նվազ հայտնի անունների մեկնաբանությունների ընթերցմանը և նրանց ապրած տարիների գումա-

րի հաշվարկին նա հատկացնում էր իր ամբողջ ազատ ժամանակը,– նրան հոգնեցնում էր: Սա այն դեպքում էր լինում, եթե նա, ում դա նվիրված էր, ապրել էր չափազանց կարճատև, տարիների իմաստով աղքատիկ կյանք կամ էլ, հակառակը, եթե նրա կյանքը հագեցած էր նախանձելի երկարակեցությամբ: Այդ դեպքում Բեսլանի երևակայությունը գործում էր կրկնակի, եռակի ուժով. այն միանում էր ամբողջ հզորությամբ, և մի քանի ժլատ խոսքից նա կառուցում էր ուրիշի կյանքի մեծաշուք շենքը, որտեղ ամենավերջին աղյուսն անգամ իմաստ ուներ: Նրան նույնիսկ ավելի շատ գրավում էր ոչ թե հանրահայտ տհասի մեկը, ով ապրել էր մի քսանհինգ-երեսուն տարի՝ մաթեմատիկոս, բանաստեղծ կամ երաժիշտ. սրանց մեջ էլ հենց հանդիպում էին այդպիսի վաղահաս լրջմիտ մարդիկ,– նրան հրապուրում էր իր ճանաչմանը նաև տարիների երկար շարքը գումարած կամ էլ թե չէ երկար կյանքի ընթացքում փառքի տիրացած որևէ ծերուկ, հուսահատ, փնթփնթան տռանի մեկը, որը չնայած դրան պսակված է դափնիներով և տնքտնքալով հասել է վաստակած «մեզանից անժամանակ հեռացավ» մահախոսականին: Թող որ նա անթիվ մարտերում խեղանդամ դարձած գեներալ եղած լինի, թող որ նրա ամբողջ կյանքը եզրագծից անդին անցած լինի:

Բայց մի՞թե նա ծանոթ չէ զինվորի՝ տարիների ընթացքում կարգավորված հոգեկան մեխանիզմի հեղձուկ բույներին և խափանումներին, երբ նա, մեղավոր,– մեղավոր այն պատճառով, որ այդտեղ չէր կարող չլինել սեփական հոգու մոռացումը,– հայացք ձգելով իր ներսը, հանկարծ չէր կամենա այլ ուղի, այլ ճակատագիր: Թող որ գեներալ չլինի, ցանկացած մեկը, ով հազվադեպ, սակայն, այնուամենայնիվ, կասկածել է իր անցյալին, ով, չնայած պատվին ու փառքին, յուրայինների սիրուն ու ատելությանը, ինքնագոհ չի քայլել իր չընտրած ճանապարհով:

Բեսլանը նախանձում էր մեռյալներին: Նախանձը հարմար բառ չէ: Նա հազիվ թե համաձայներ ոչ միայն նրանց տեղը լինել, բայց և ապրել ուրիշի կյանքը՝ ուրիշի մարմնով և ուրիշի սրտով: Եվ ոչ թե մեռյալներին, այսինքն՝ ֆիզիկապես մահացածներին, վաղուց հող դարձածներին էր նա նախանձում: Նա նախանձում էր նրանց կյանքի ամուր հենքին, նախանձում էր, որ նրանց ճակատագիրը պատահական չէ (եթե հավատանք կենսապատումներին), այն աներկիմաստ և հստակ քայլք ունի, որը հետագայում ձուլ-

վում –դառնում է հստակ խոսք: Ապրած կյանքն իր հունն է ունեցել, և այն արժանապատվորեն, նշանակալիորեն, երբեմն՝ ոչ առանց սեթևեթանքի հոսել է: Հունը հենց նրա համար է նախատեսված եղել, այն տեսանելի էր ակունքից մինչև գետաբերան: Ավարտը Բեսլանին հաջող էր թվում, չնայած գուցեև այդ կյանքի կրողը մեռնում էր մարմնական և հոգեկան սարսափելի տանջանքով, քանզի այն ավարտվել էր. ամեն մի ավարտված բան կասկածի ենթակա չէ: Հետո նա տեղավորվեց չոր, անդեմ մի քանի տողի մեջ, որոնք Բեսլանն ամեն անգամ կարդում էր, որպեսզի տողերի արանքում որսա ուրիշի ճակատագրի իսկական հոտն ու համը:

Հոտն ու համը որսալ չէր լինում, սահում-անցնում էին, բայց կենսագրության անհստակ ուրվագծից ավելի նա չէր էլ ուզում իմանալ, այլապես կարելի էր ուրիշ գրքեր վերցնել՝ մանրամասն և բազմաբառ կենսագրություններով. «Նշանավոր այսինչը ծնվել է այսինչ տարվա այսինչ ամսաթվին, այսինչ քաղաքում-գյուղում-երկրում...»: Նրան անհրաժեշտ էր գորշ, սակավարյուն խոսքերից վերականգնել այսինչի կյանքը. որքան քիչ էին այդ կյանքը նկարագրող բառերը, այնքան եռանդով էր նա աշխատում դրանց վերականգնման վրա:

Օտար կյանքերի հետ մղած անհուսալի պայքարից հոգնած Բեսլանը գրադարանից դուրս էր գալիս և ուղղվում դեպի ծովափ՝ ստվար ամբոխի մեջ օդափոխվելու: Նա ուզում էր մարդկանց հետ շփվելու միջոցով մոռացության մատնել իրեն, այսինքն՝ հասկանալի բառեր արտասանելով ժամանակավորապես խլացնել իր անդադրում «ես»-ը: Սակայն ծովեզերքը, «Հակոբի մոտ» սրճարանը մեկ օրվա կենսական թափառումների մթնշաղային ավարտական փուլն էր, իսկ մինչ այդ նա մի քանի ժամ աննպատակ դեգերում էր քաղաքում, հասնում աներևակայելի ծակոճուկեր, որոնց գոյությանը մինչ այդ անտեղյակ էր: Աղբախոտով ծածկված այդ լքված անկյուններում, որտեղ պատուհանների դատարկ ակնախոռոչներով նայում էին անտեր և կիսաքանդ տները, իսկ մարդկային ծայնն ու մեքենաների աղմուկը հազվադեպ էին ականջին հասնում, Բեսլանի վրա հանգստություն էր իջնում, գլուխն անջատվում էր, հոգին հանդարտվում: Հոգեհարազատ էին այդ մոռացված վայրերը. հոգին ինքն էլ էր երազում, որ իրեն մոռանան և ոչ մեկի հիշողությունը նրան չկաշի՝ մեկ առ մեկ պոկելով մոռացումից:

«Գ իշերային հերթապահությունից հետո մենք պառկած ենք ով որտեղ պատահի: Կեսգիշերն անց մեզ վեր կացրին տազնապի ազդանշանով: Մենք ճանապարհ ելանք և իծաշարով ուղղվեցինք Վերին կամրջի կողմը: Ավելի հիմար բան դժվար էր մոգոնել. այն ափից ճանապարհը տեսանելի էր ինչպես ափի մեջ, փայլում էր լուսինը, հակառակորդն էլ ոչ առանց «գիշերալամպի» կարող էր նկատել ու ականներով գնդակոծել: Մենք լուռ ենք, խոսել և ծխել չի կարելի: Տեղ հասնելով հենց գետափին դիրք գրավեցինք և աչք չփակեցինք մինչև լույս: Գուցե որևէ մեկը, հատկապես Ճուտոն, դանթել է, բայց ոչ ես:

Ճուտոն մականունն է, ինչպես մեզ մոտ ընդունված է: Ալեհեր մարդիկ են, բայց բոլորն էլ՝ Մուրկա, Մուսիկ, Աստիկ, Ախրիկ... Պատերազմից առաջ, երբ հեռուստատեսությամբ հուղարկավորության հայտարարություն էր տրվում, սկզբում սովորաբար նշվում էր օրինական անձնագրային անունը, հետո, ամոթխած փակագծերում՝ փաղաքշական մականունը, որով կյանքում ճանաչում էին ննջեցյալին: Երկիրն էլ երկու անուն ունի՝ Ափսնին տեղական, բնիկների լեզվով է, Աբխազիան՝ միջազգային:

Ճուտոյի անունը Դաուր է, բայց իսկական անունը հազվադեպ են հիշում՝ Ճուտո հա Ճուտո են ասում: Մականունը նրան ակնհայտորեն չի սազում՝ իրականում եզան վզով մի իսկական հսկա է: Մեր խմբում կա նաև մի Վախլուկ. նա, իհարկե, խիզախ մարտիկ է:

Բայց Դաուրի մականունը դնելիս, կարծում եմ, սոսկ հակադրության ոգին չի գերակայել. նա թավշյա քոթոթ է հիշեցնում:

Ճուտոն եթե բան ու գործ չունի, իսկույն քնում է, ընդ որում՝ ցանկացած դիրքով՝ նստած, կանգնած, պառկած: Թե շուրջն ինչ է կատարվում, նրա համար միևնույնն է. ասում են՝ նա քնել է նույնիսկ մարտի ընթացքում, երբ վերջացել են փամփուշտները, բայց դա երևի կատակ է:

Ճուտոն գլուխ է գովում օրվա ցանկացած ժամին և ցանկացած վայրում քուն մտնելու իր տոհմական ունակությամբ: Նրա ցեղի բոլոր տղամարդիկ հենց որ մենակ էին մնում ու գործ չէին ունենում, անմիջապես քուն էին մտնում: Ժամանակների սկզբից ծայր առած և մինչև օրս դեգերող այս կարծիքը հավաստել է նաև առաջին երկարակյացներից մեկը, որը

կարողացել էր որոշ չափով պահպանել հիշողությունը և մտքի հստակությունը՝ կյանքը երազի նման է։ Այդ էր պատճառը, որ նրանք անպատշաճորեն երկար էին ապրում՝ չափից ավելի տրվելով քնին, խնայում էին ուժերը, որոնք անհրաժեշտ էին շոնդալից և այդքան հյուծիչ իրականության համար։

Ճուտոյի տված բացատրությունը մեզ չի գոհացնում։ Ավելի շուտ, պնդում ենք մենք, նրանք կոշտուկոպիտ ու հաստակաշի են եղել, ինչպես այն գոմեշները, որոնցով հերկում էին իրենց արտերը, կյանքում քիչ բան էր նրանց լրջորեն մտահոգում՝ բացի այս հերկը և եգիպտացորենի լի ամբարները, իսկ նրանց նախամարդու միտքը քնած էր անկոտրում գանգերում՝ սահմանափակվելով երկու-երեք կյանքային անհամ օրենք հիշելով։

Ճուտոն դրանից չի նեղանում, պարզապես փակում է աչքերն ու քնում։ Գիշեր է, աստղեր, գետը խոխոջում է։ Սուխումի երկինքը լուսավոր է, քաղաքը փայլում է։ Լռության մեջ տազնապ է լցված, ամեն մի հնչյուն իր նշանակությունն ունի. ականջ ենք դնում, որպեսզի իմանանք, թե ինչ է նշանակում։ Գուշակում ենք, թե այս գիշերվա կեսին ինչու են մեզ այստեղ քշել... Լուր տարածվեց, թե այս ուղղությամբ ճեղքում է սպասվում։ Բայց մյուս ափը դատարկ է. մի ընդարձակ դաշտ կա, և մինչ վրացիներն այն անցնեն, մենք կհասցնենք պատրաստվել և նրանց պորտը տեղը դնել։

Նստած ենք խրամատում, նեղվածք է, ինքնածիզը կրծքներիս սեղմած՝լում ենք հարևանի շնչառությունը։ Մենք այժմ միմյանց մոտ ենք ավելի, քան երբևէ։ Մեզ համախմբում է ընդհանուր ճակատագիրը։ Մեզնից շատերը վախենում են, բայց ոմանք հմտորեն թաքցնում են դա։ Վախը հաղթահարել պարզապես հնարավոր չէ, այն սոսկ ներս են մղում, խցկում են բերանը, որպեսզի չկանչի։ Ում դա հաջողվում է, նա քաջի անուն է հանում։ Կան այնպիսիները, ում հոգում կատարվածի ազարտն իսկական ուրախություն է արթնացնում։ Այն, ինչ ուրիշներն անեծք են համարում, նրանք խաղալով են տանում։ Մշտական լարումը, սուր զգացողությունը ոգեշնչում են նրանց։ Բայց նրանք նույնպես ի վերջո հոգնում ու վերածվում են գորշ, փնթփնթա՛ն, ամեն ինչից դժգոհ տպերի։ Եթե ողջ են մնում...

Վերջին ժամանակներս իմ սրտում գերակայում է այն զգացումը, որ այդ ամենը մտացածին է, անիրական, որ մենք զանգվածային ներշնչանքի զոհ ենք դարձել, որ ինչ-որ մեկի չար կամքը մեզ ենթարկել է իր անհասկանալի նպատակին: Գիշերվա կեսին, երբ հարկ է խաղաղ քնել անկողնում,– ավելի լավ է՝ կնոջ հետ, սուզվելով նրա քաղցր տաքության մեջ,– մի քանի տասնյակ մարդ՝ առավելապես արական սեռի, խմբվել են հողի մեջ գտնվող երկարավուն խոռոչում՝ խրամատում, ձեռքով բռնել մի հարմարանք, որով այնպիսի վերք կարելի է հասցնել կենդանի մարմնին, որից հետո նա կդադարի քայլել, խոսել, մտածել, այսինքն՝ ապրել: Ահա այն հեռվում՝ ճիշտ այսպիսի խրամատում են խմբվել նրանք, ովքեր մտադիր են մեզանից՝ որ քայլում ենք, խոսում, մտածում, սարքել անշարժ, սառը մարմիններ: Ո՞ւմ է դա պետք, և ինչո՞ւ ենք մենք այդքան ջանասիրությամբ այդ անում արդեն շատ ամիսներ՝ ծախսելով մեծ քանակությամբ արժիճ և մարդկային մարմիններ: Մենք՝ այս խրամատում նստածներս գիտենք: Եվ նրանք՝ մյուս խրամատում նստածները նույնպես գիտեն, բայց յուրովի: Բայց ինչո՞ւ են նրանք եկել մեզ սպանելու:

Եվ երբ պատկերացնես այս տեսարանը, այն դիտես կողքից, քեզ կհամակի տիեզերական անհաղթ հիմարության զգացումը:

Ծիծաղելի է և սարսափելի: Մինչև Մ.-ն այսքան սարսափելի չէր, չնայած ես ինձ չեմ դասում անմիտ քաջերի շարքը: Ոչ թե այնքան սարսափելի է, և ես մահից եմ վախենում: Մահը ես սիրում եմ, և շատ ավելի, քան երեխաներին և երաժշտությունը: Բնագրի ես չեմ ենթարկվում, համենայն դեպս ջանում եմ կուրորեն չհետևել դրան. ես դրա երդվյալ թշնամին եմ, այդ թվում և հատկապես դրանցից ամենատխմար՝ ինքնապաշտպանության բնագրին: Սակայն Մ.-ն... Գուցե ինձ այդ աղջկա կողմն է մղում անիծված բնագրը, որի թաքուն նպատակն ընդամենը մարդկային տեսակը շարունակելն է: Բայց ես արդեն չեմ ուզում որևէ մեկի մեջ շարունակություն գտնել (նախկինում էլ ես երբեք ցանկություն չեմ ունեցել ինչ-որ մեկի ընդերքը լցնել իմ սերմն այն նպատակով, որ բազմացնեմ ինքս ինձ): Սերմի նպատակն ընձյուղ տալն է, բայց ես միայն սերմ չեմ (կուզենայի հավատալ, որ այդպես է, չնայած ես այսօր գահավիժել եմ մինչև սեփական մարմինս: Իմ կյանքն արժեք չունի,

այդ արժեքը նույնիսկ բացասական է, ինչպես կասեր Ալիսաը, որին օտար չէ գողական խոսվածքը):

Ես կարոտում եմ նրան, ինչ-որ բանի պակաս եմ զգում, իմ մեջ ճեղք է առաջացել, ասես խոշոր բեկորը մի կտոր միս է պոկել, և այդ տեղն անընդհատ մոկտում ու ցավում է: Վերացել է սեփական ճակատագրիս հանդեպ ունեցածս նախկին անտարբերությունը: Ճիշտ է, լրիվ չի անցել, բայց այն մեծ, մութ, անելանելի անտարբերության թափը պակասեց, – մինչ այդ այն ինձ տանում էր արագորեն, առանց հետ նայելու: Հիմա էլ եմ ուզում Մ.-ի պատճառով փոքր-ինչ զսպել...

Չնայած վրացիների ճեղքման երկյուղին, գիշերը հանգիստ անցավ: Արևածագին մենք հետ գնացինք, բայց արդեն այլ ճանապարհով՝ անտառով: Դա ավելի շատ ժամանակ պահանջեց, և մենք հոգնեցինք: Այժմ հանգստանում ենք: Մեկը նարդի է խաղում, մեկը՝ թուղթ: Ճուտոն քնած է»:

Ծերուկը սովորական ծերուկ է, ունի կարճ, քաջարի կոմերիտական անցյալ և կուսակցական գոյության ճշտապահ, ծանծրալի տարիների երկար շարան՝ ամենամյա մուծումով և կուստոմսի «վճարված է» համապատասխան նշումով: Նման կյանքից չորացած ուղեղով նա այժմ փորձում էր փնտրել-գտնել իր կարծիքով մեծ չարագործության՝ ԽՍՀՄ-ի կործանման պատճառը: Երկրի քայքայման մասին խոսելով հոգու խորքում պահած հույսով՝ նա առանց կեղծավորության գտնում էր, որ այդ պոկված բեկորներում կարող էին այս կամ այն կերպ պահպանվել ԽՍՀՄ-ը և նրա մեծ ոգին: Կայսրության թույլ հոտը գուցե որոշ ժամանակ փչի նրա ծայրամասերում, բայց ինքն արդեն չքվել է, իսպառ չքվել: Դա իրոք որ կործանում էր, քանզի չար դիտավորություն է եղել, չսված խարդավանք է եղել: ԽՍՀՄ-ի նման հսկան ճակատային հարվածով չէր գետնվի, նրան կործանելու մտքով մոտեցել են օձի նման, ԿՀՎ-ավարի, առանց շտապելու:

Եվ «Պրավդայի» հին հավաքածուներում նա փնտրում էր հավաստումն այն բանի, որ ոսոխների դավադրությունն սպանեց ԽՍՀՄ-ը:

Հին չեկիստը, ինչը նա վստահալից կիսաշշուկով հաղորդել էր Բեսլանին, փորձով գիտեր, որ իմպերիալիզմի ցանկացած՝ և՛ ուղարկված, և՛ երկրի ներսում հավաքագրված գործակալ, եթե հնարավորություն ունե-

նա հաճախ հանդես գալ զանգվածների առջև կամ մամուլում, բերանից կթոցնի իր իսկական մտադրությունը, նպատակն ու խնդիրը, այսինքն՝ կինքնամերկացվի: Երբ շատ և երկար ես խոսում, մեկ էլ տեսար լեզվիցդ կթոցնես պարզամիտի համար սովորական և մյուս բառերի շարքում աննկատ բառը, և գիտակը կհասկանա, որ այն հատուկ է բոլոր լրտեսներին:

Երկու համակարգերի սառը դիմակայության վերջին տարիներին 20-50-ական թվականներին և նույնիսկ հետո բառ-նշանները, որոնք անսխալ մերկացնում էին ժողովրդի թշնամիներին, երկարեցին դարձան ամբողջական պարբերություններ, խրթին ճամարտակություններ, որոնց միջոցով գաղտնի գործակալը մատնում էր ինքն իրեն: Ենթագիտակցական ցանկությամբ նա ուզում էլ է եթե ոչ լիովին բացահայտվել, ապա գոնե ակնարկել անձանոթ, անվտանգ ականջներին, թե իրականում ինքն ով է, հոգում կարեկցանքի մի թաքուն հույս փայփայելով: Այդպիսի բեռն ուսին ապրելը հավասարազոր է ընդհանրապես չգոյության – ծանր է, հաճախ անտանելի:

Հաստ ապակիներով ակնոցի տակից կիսակույր աչքերով այս տեսանկյունից ընթերցելով «Պրավդայի» նախաամպրոպային թողարկումները («Իզվեստիան» ծերուկն արհամարհեց իբրև երկրորդական արտադրանք)՝ նա հանգեց ցնցող եզրակացության՝ քաղբյուրոյի որոշ անդամներ,– նրանց անունը չէր տալիս, հավանաբար, պետական գաղտնիքը պահպանելու սովորույթով,– զբաղվում էին երկիրը ներսից քայքայելով: Նրանք բուրժուազիայի վարձկան էին, թե սեփական թերամտությամբ էին գործում գիտակցության ինչ-որ մթագնման վիճակում – ծերունին չէր կարողացել իր համար պարզել: Վերջինը՝ գիտակցության մթագնումը և սրանից բխող կազմիետևությունը, այնքան էլ անհնար չէ, եթե նկատի առնենք կուսակցական վերին քրմերի մեծ մասի զառամախտը և անկարությունը:

Գլխավոր քարտուղարին, որը հազարամյակի ավարտին աշխարհի քարտեզն անսպասելի և վտանգավոր ձևով վերածնել էր, ծերուկը ձեռք չէր տալիս, քանզի նրա և ոչ մի խոսքի մեջ,– իսկ վերջինս, ինչպես հայտնի է, ճամարտակում էր չափից ավելի,– չէր գտել ոչ մի թաքուն, կործանիչ մտադրություն: «Նա ուզում էր լավ բան անել, բայց չթողեցին»,– այս էր ծերուկի եզրակացությունը: Թե ով չթողեց՝ պարզ էր՝ իշխանատենչ ծախու, այն էլ սլավոնական եռյակը, որը գաղտնի դավադրությամբ կիսախավար

թավուտում կտրտեց այն սյուները, որոնց վրա մնացյալ ապագային միտված հիմնվել էր Խորհրդային կայսրությունը:

Եռյակն հիշատակելիս (նրանք կանգնած էին գրադարանից ոչ հեռու, դեռևս այրող աշնանային արևի ճաճանչներում) ծերուկը տոեց և տոեց ամենաքնական ձևով: Նրա տեղը լիարժեք համարելը լուրջ և անտեղի չափազանցություն կլիներ, մեղանչում կյանքի ճշմարտության դեմ. այն նույնքան անգոր և շնչասպառ էր, ինչպես և ինքը՝ ծերուկը, սակայն հազիվ թե պատահականություն լիներ՝ կատարվեց հենց եռյակը հիշատակելու պահին: Այնտեղ նշմարվում էր մասամբ չարամիտ նպատակը. ծերուկն ակնարկում էր, դավադրության պտուղները հավասարեցնում սովորական մի տեղի. նույն որակն էր:

Բեսլանը չլսելու տվեց, իսկ ծերուկն առանց դույզն-ինչ կասկածի շարունակում էր,– ոչ թե տոեղ, այլ գահընկեց անել եռապետությունը:

«Ծամած-ծամծամած է այն, թե ինչ է զգում ամեն ոք գրիչ վերցնելիս, մաքուր, ինչպես կասի մի ոմն գրչակ կուսական թղթին մոտենալիս:»

Իբր ահն է տիրում, գրեթե միստիկական մի սարսափ: Իբր թե թղթի սպիտակությունը՝ անմեղությունը, ինչպես կասեն ոմանք, վախեցնում է: Աչքին երևում է, թե իբր սև տառերը, ասես անխուսափելի շարք կազմած, ճանապարհ են հարթում թղթից անդին՝ հայտնաբերելով մինչ այս անճանաչելի աշխարհը: Տառիկներն աքցանի նման կառչել են թղթից և նրա մեջ ծակ են բացում՝ սև անցք, որտեղ կորչում է իմաստը. գնում է, ընկնում, կլանվում... (Բ.Ն.-ի պատմածով լրիվ հնարավոր է, որ ժամանակի ընթացքում աշխարհը գահավիժի իրեն դարանակալած մի այդպիսի սև անցքերից մեկը, և կափարիչը չրխկալով փակվի): Իմ արտածած տառիկը խժռում է իմ մի մասը, բառը՝ պոկում-տանում հոգուս մի մեծ կտորը, էջը կուլ է տալիս ոտով-գլխով... Գրելն ունայն զբաղմունք է, նախապես ձախողման դատապարտված ձեռնարկ, վնասաբեր գործ: Պակասում է կյանքը, նվազում է ժամանակը, դրա փոխարեն տառ ու բառը շատանում է ու շատանում:

Բայց արժե տանջվել այս վախից, արժե հորինովի արգելքներով մեծացնել գրելու անհնարինությունը՝ մարդու այդ խղճուկ ճիգը՝ ամեն մի

սողանցքով իր պստիկ «ես»-ով դիպչել հավերժության եզրին և նրա քարե մարմնին հնարավորության դեպքում մի ակոս քերծել: Ցանկություն կա նստել ու մի այնպիսի բան երկնել, որը հավիտենական լինի հուշատախտակի նման: Նպատակը ոչ թե խղճուկ սնափառության մխիթարությունն է, ինչպես կարող է մտածել ունայնության մեջ լուված մեկը, և ոչ այն պատճառով, որ անփառունակ ինքնադրսևորումն է տանջում, այլ խարիսխ նետելը, որպեսզի ամրագրես՝ «Այստեղ եղել եմ ես», «Ես այստեղ եղել եմ», «Եղել եմ ես այստեղ...», «Այստեղ ես եղել եմ...», «Ես եղել եմ այստեղ», «Եղել եմ այստեղ ես...»- բոլոր ձևերով, ով ինչպես կուզենա:

Ինքնադրսևորման հարցում գուցե և չափն անցա, շտապեցի դուրս նետվել, քանի որ իմ պյունը պետք է իր տեսակով միակը լինի, անշփոթելի, այն պետք է լինի իմ փոխարկումը մի քարի պես ամուր բանի՝ խոսքի: Դարձյալ նույն ինքնադրսևորումը. ի՞նչ է «ես»-ը. ոսկոր, միս, մաշկ,- և այս բոլորի միջև՝ հոգին: Եվ ահա ես քայլում եմ, գնում է «ես»-ը՝ ոսկորի, մսի, մաշկի և առասպելական հոգու հանրագումարը, գնում է՝ սրտի խորքում պահած մի երազանք՝ ինքնադրսևորվել տառքզնիկների հանգույն, որոնք փութկոտ դեգերում են թղթի սպիտակության վրայով: Բայց ես արդեն դրսևորվել եմ իմ ամեն տեսածի և ինձ տեսնողի միջոցով, ես պատահական անցորդ չեմ, այլ անցորդ՝ հետին մտքով, անհրաժեշտաբար, հաշվարկված և հեռուն միտվող մտադրությամբ. ես հարկավոր եմ այն ամենին, ինչ շրջապատում է ինձ, ինչպես և շուրջս եղածն ինձ է պետք: Ես արդեն ուզեմ թե չուզեմ ներգրված եմ, ուստի այնուամենայնիվ սա մարդկային խղճուկ սնափառության ճիգն է, որպեսզի տեքստը շատ լինի և տառերն ավելի բարձր գրնգան:

Շրջանը փակվեց. ինքնադրսևորումը կամայականություն է, համարյա գոռոզամտություն. ես արդեն ներգրված եմ, բայց ուրիշ բան ստացվեց: Իմը քիչ է կամ համաձայն չեմ, և ես սկսում եմ փոխել, ջնջել, հավելել... Ոչ ոք ինձ չի կարող ասել, որ ես դրանով իսկ փչացնում եմ նախնական տեքստը կամ լավացնում եմ այն, ավելի ըմբռնելի դարձնում:

Գտնվեց գուցե անկյունաքարային մի բառ՝ ըմբռնելի: Ո՞ւմ համար ըմբռնելի. նույնպես անպատասխան հարցերի շարքից է: Նա, ում հասկանալի են այն բոլոր բառերը, որոնցով ես ներգրված եմ, լրացուցիչ

բացատրության կարիք չունի: Բայց ի հայտ է գալիս տենչալից, գլխապտույտ առաջացնող կասկածը՝ Նա, ում առանց այն էլ ամեն ինչ պարզ է, ներգրել է ինձ, հենց Նա էլ իսկական հեղինակն է, իսկ մնացած բոլորը խղճուկ գրագող են: Ես ուզում եմ այն տեքստը, որով ես ներգրված եմ, ինձ համար ըմբռնելի դարձնել. պետք է, չէ, իմանաս, թե ինչ է այնտեղ գրված, և իրոք իմ մասին է գրվածը, պատահաբար, գուցե դիտավորյալ չի նենգափոխված,– որպեսզի ինքս գտնեմ իմ տեքստը, ինչը մենք անվանում ենք կենսական պարտքի կատարում և ինչի հանդեպ ես ոչ մի հակում չունեմ, և, փորձելով հասկանալ, գուցե ընտրում եմ ոչ ամենալավ մոտեցումը: Կամ էլ թե չէ այս ամենն ընդամենը մատների սովորական քոր է, մեկ էլ տեսար գրիչը ձեռքդ առար, շարժեցիր թղթի վրայով – ու գնաց... Չգիտեմ: Իմ այս գրառումը ևս բանի պետք չէ. վաղուց իմաստազուրկ դարձած, նողկալի դատարկաբանություն է: Սակայն ամեն երեկո ասած հաստատ խոսքը, թե հրաժարվում է գրելուց, առավոտյան իսպառ գոլորշիանում է, և գրելացավից նորից նոր քոր են գալիս մատները. ֆիզիոլոգիայի պես բան է:

Տեսրս ավելի շուտ կկորչի. ես հագիվ թե ողջ մնամ այս պատերազմում, ասենք դրա կարիքը չկա էլ: Եվ ոչ ոք այն երբեք չի կարդա: Տեսրն ուրիշի ոտքերով կկոխկրտվի ցեխի մեջ կամ էլ կվառվի տաքանալու համար. լիովին հնարավոր է, որ ևս մի ծմեռ մենք դիմավորենք փոխադարձ սպանության ուրախ զբաղմունքով, և այդ ժամանակ տետրը պետք կգա:

Բայց կա մի հույս, որի գոյությունը ես երբեք չեմ խոստովանում, որը, կարծում եմ, առանձին-առանձին երևում է յուրաքանչյուր գիր անողի աչքին. մեկ անգամ գրվելով, տեքստերն անմիջապես հայտնի են դառնում համապատասխան ատյաններին: Իսկ թե ինչ ատյաններ են, գուշակելը դժվար չէ: Բարոյախոսության հավերժական որոնողը՝ տաղտկալի ձևամոլը, կասի՝ ուսուցողաբար բարձրացնելով ցուցամատը՝ ահա նա՝ երկնայինը: Ես չեմ ճշտելու երկնային ոչ մի բան և այն, թե ով է իր համացանցում ամեն մեկին ապահովել իր կայքը: Այս ամենը չափազանց անձնական բաներից է, որոնք ժլատորեն պահպանվելու պատճառով հաճախ մարդկանց վանում են միմյանցից, քան մերձեցնում: Ամեն մեկն իր մեջ պահում է գաղտնի իմացությունն այն վայրի, որտեղ

նա գտնելու է իր վերջին և վերջնական հանգրվանը, որտեղ սիրված ու շահած-պահած է լինելու, ուստի իրեն միայնություն է թույլատրում. ուրիշի կարիքը չի զգում: Նա գնալու տեղ ունի, ավելի ճիշտ՝ թե ակամա ուր է աքսորվելու, և նա վաղորոք չափում-ձևում է: (Աստված միայնություն է):

Կարճ ասած, այս ամբողջ իմաստակությունը թողնելով ճամփեզրին ես բռնում եմ այն ուղին, որը տանում է ինձ դեպի այն պահը, երբ գնդակն իր ամբողջ մահացու թափով կխփի գլխիս և այնտեղ արյունալի շիլա կեփի, անպատկերացնելի մի քառս, եգիպտական խավար, միանգամից ջնջելով բոլոր գրառումներս, – իսկ այն, որ գնդակն ինձ կսպանի ոչ այլ կերպ, քան գանգս ծակելով, ես ներշնչել էի ինքս ինձ պատերազմի առաջին իսկ օրից, և գումարտակում միակն եմ, որ կրում եմ երկրորդ՝ մետաղյա գանգը՝ սաղավարտը. երբ գնդակն իր գործն ավարտին հասցնի, այդժամ իմ գրածը միևնույնն է՝ կպահպանվի:

Ես գիտեմ, որ երբևէ կհանեմ սաղավարտս և հնարավորինս հեռու կշարտեմ, և դա ձևական չի լինի. պարզապես ինձ կզզվեցնի այս ծանրածանր, զավեշտալի բանը:

(Քանի դեռ չէի գրել՝ չգիտեի. սաղավարտի թեման ինքն իրեն շարունակվում էր և ինքն իրեն գլորվեց մինչև գոեհիկ թատերայնություն. մարտի թեժ պահին գլխավոր դերակատարը հանում է փրկարար սաղավարտը և հնարավորինս հեռու է շարտում: Սաղավարտն իրոք զավեշտալի էր. իբր թե այն կարող էր ինչ-որ բան խնայել, պահպանել, և գլխավոր դերակատարը երկար ժամանակ չարաշահում էր այդ ծանրածանր զավեշտը. տեսեք, երկաթե մի կիսագունդը բավարար է, որպեսզի... Յնցող հայտնագործություն է, շնչակտուր էր լինում գլխավոր դերակատարը, անիվը սրա համեմատ անհաջողակ գծագրողի հարթության ծուռումուռ պրոյեկցիան է: Կեցցե գլխապահ առարկան: Կեցցե երկաթե կիսագունդը՝ մարդու հանճարի արտադրանքը, որն ստեղծվել է ստեղծագործական չարչարանքով և երկարատև պայքարով: Կեցցե, կեցցե – մենք փրկված ենք, մեր գլուխներն անվնաս են, անվնաս է ուղեղը (չնայած մեր ինչի՞ն է պետք ուղեղը):

Բայց եթե գեթ մեկ րոպե անվերապահ հավատանք, որ ամեն բան կատարվում է հստակ ծրագրով, և ոչ մի ինքնագործունեություն անգամ

պատահաբար չի կարողանա սպրդել այդ ծրագիր, ապա թատերային աղեղով թռչող սաղավարտը տեքստ է մտել բնավ էլ ոչ իմ երևակայության քմահաճույքով, այլ նոստրադամուսաբար: Եվ ես այժմ, ինչպես մի ազնիվ մարդ, պարտավոր եմ մարտի թեժ պահին... և այլն ըստ տեքստի:

Բնականաբար, այս ամենն իմաստ կունենա, և վերջին շարժումը շատ բան կբացատրի: Այն բոլոր բազմազան շարժումները, որոնք ես հասցրել եմ կատարել կյանքիս ընթացքում՝ հետևելով նախասահմանություններ, կամրագրվեն ձեռքիս այս վերջին լարվածությամբ և թափով, և սաղավարտը կթռչի հետ պարզած ձեռքիս պատկերագծով՝ մինչև որ երկրի ձգողականությունն իր գիրկը չառնի այն և չսկսի թեքել գետնին, ավելի ու ավելի ներքև և՛ դրժխկ, դեմ չի առնի անկման կետին:

Ա՛յ թե թափով կանեմ այդ բանը»):

Ընթերցասրահի վարիչն անսովոր գեղեցիկ մատներով տխուրացյա մի աղջիկ էր: Բեսլանը չգիտես ինչու ինքն իրեն ներշնչեց, որ նա դեմ չէ խոսել իր հետ, բայց նախկին դառը փորձը հետ պահեց նրան:

Նա ենթադրում էր, որ աղջկա մարմինը նույնքան մատուշ է, որքան մատները, և բուրումնավետ է, և ինչ ասես չէր երևակայում՝ մտովի ընկղմվելով փափուկ, խոնավ, քաղցր վայելքի մեջ: Նրա բուրմունքը մասամբ օժանելիքից էր, որը նա օգտագործում էր, և Բեսլանի շունչն ամեն անգամ կտրվում էր, գլուխը պտտվում, և աչքին երևում էին դրախտային թավուտներ: Աղջկա ծայնը հոգնած, անհույս և քմահաճ չէր, նրա գեղգեղանքը փոքր-ինչ սառն էր, բայց դեռևս նկատելիորեն պահպանում էր երիտասարդությունը: Սակայն դեմքը կրում էր կենսական խոր հետքեր, որոնք հատուկ չէին Բեսլանի ճանաչած այլ աղջիկների (Նաթելան այդ թվում չէր), և ամուր բնավորության և անաղմուկ ինքնահարգման անվիճելի նշան էին, ինչը երիտասարդին զրկում էր քաջությունից, և բացի երկու-երեք բառից, որ նրանք փոխանակում էին գիրք վերցնելու ընթացքում, գործն ավելի առաջ չէր գնում:

Մինչև տեքստի մեջ ինքնամոռաց խորասուզվելը Բեսլանն զգում էր նրա տաք, հարմարավետ, հուսալի ներկայությունը, և լավ էր զգում. և միայն ընթերցանությունը, – առաջին բառերը ծուկորեն են տեղաշարժվում,

միայն հնչյունն է ուղեղը թափանցում, իմաստը հետ է մնում. մի քանի տողը, աղմուկով ու անիմաստ լավելով գորշ նյութի մեջ, կանհետանա հիշողության հորիզոնից անդին, որպեսզի հաջորդները սիգապանծ անցնեն իմաստային լիակատար հագուկապով, և դու տեքստի հետ ավելի ու ավելի հեռու ես լողում ինքդ քեզնից.– սոսկ ընթերցանությունն էր նրանց պատով տարանջատում: Աղջիկը հեռանում էր, վերանում:

Պստիկ ընթերցասրահում բացի խլավուն ծերուկից, որը մեծ ջանասիրությամբ կարդում էր վերջին յոթ-ութ տարվա «Պրավդայի» հավաքածուները, ոչ ոք չկար: Երբեմն քննաշրջանի օրերին ուսանողուհիներն էին ներս վազում, խուճապահար աճապարանքով թերթում դասագրքերը, ինչոր բան էին արագ-արագ արտագրում և նույն աղմուկով ու վազքով հեռանում: Սրահում կրկին լռություն էր տիրում. ծերուկը երբեմն այն խախտում էր իր ակամա փնթփնթոցով, երբեմն էլ չար, դժգոհ կոնչյունով, որ դուրս էր թռչում նրա ծերունական կոկորդից:

Աղջկան երբեմն ներքևից սուրճի էին կանչում, բայց նա սովորաբար հրաժարվում էր, համենայն դեպս Բեսլանի ներկայությամբ ոչ մի անգամ չէր համաձայնել և չէր իջել ծառայակիցների մոտ. նրանցից էր առատորեն գունազեղ շրթներկ քսած, թունդ բամբասկոտի և վերջերս քաղաքի բնակչուհի դարձած երկչոտ գեղջկուհու հաճող, մանր աչքերով տարեց, անճոռնի տիկինը. նրանից փչում էր էժան օճառի և հիմարության հոտը:

Առաջին օրերին, մերժումից շփոթության մատնվելով, նրանք դարձյալ քանիցս կանչում էին նրան՝ ձայնում պահած տարակուսանքի և վիրավորանքի երանգները: Բայց հետո, գլխի ընկնելով, թե ինչն ինչոց է, պատշաճությունից դրդված և որպեսզի չվիրավորեն՝ եթե հանկարծ նրա ուրացումն անարդյունք ավարտվի, առաջարկում էին միայն մեկ անգամ և, ստանալով սպասված և նրանց հետաքրքրասիրությունը և նախանձը գրգռող մերժումը, անհանգիստ խմում էին իրենց սուրճը:

Բեսլանը լուռումունջ, առանց աղջկան նայելու հանձնեց գրքերը: Վերջինս նույնպես, ինչպես տղային թվաց, ամոթխաճությամբ ներքև էր նայում՝ իր ոտքերի կողմը: Հետո նա սանդուղքով իջավ. «Ցտեսություն»– «Ցտեսություն, երիտասարդ»:

Բեսլանը հեռանում էր և միշտ այն զգացումն ուներ, որ իբր այնտեղ՝ վերևում, դատարկ ընթերցասրահում, սեղանի մոտ՝ անհարկավոր գրքերի

և ամսագրերի մեջ ինքը թողել է մի մոտիկ մարդու, ում չի ճանաչել:

«**Մ**ենք իջանք դեպի գետը: Անհամ վեպի համար անհրաժեշտ ամեն ինչն առկա էր՝ գիշերը, լուսինը, գետը: Բայց դրանք՝ իբր իրենց անհրաժեշտությամբ, աշխուժանում էին սոսկ մեր զգացմունքով. աղջիկը... չգիտեմ, թեև անընդհատ խոսում էր՝ իր զրնգուն ձայնով խլացնելով գիշերվա հնչյունները, և ես կարծես թե լսում էի, բայց բառերը տեղ չէին հասցնում նրա տրամադրությունը, և դա էր երևի պատճառը, որ ես դրանք չհիշեցի. ես լոկ աճուկիս շրջանում ուռչող ցանկությունս էի զգում: Բայց գրական կոփվածությունը չէր զիջում: Ես վերջին ռեալիստ գրողը կլինեի, եթե այդ գիշերը նկարագրեի այլ մանրամասներով. գրիչս այնքան չի հղկվել, որպեսզի նման բան վճռեի: Այդ պատկերը գրականությունից անդին է, իսկ ես առայժմ գրական անդաստանում եմ ցցվել: Գրականությունն արմատախիլ անել հնարավոր է միայն գրիչը՝ այսինքն՝ գնդիկավոր գրիչը, որով այժմ կուսությունից զրկում եմ սպիտակ թուղթը, դեն գցելով: Սա գոյության պայքար է, ամենագո օրենք. ես պայքարում եմ լուսատուի ներքո տեղ ունենալու համար:

Այս ամենն անտեղի հիմարություն էր, քանզի առաջին ու վերջին անգամը չէր, և ես դա հստակ զգում էի: Ես արդեն գիտեի, թե աղջիկն ինչ և ինչպես կասի: Գիշերը, լուսինը, գետը ձգում էին դեպի իրենց ցանցը: Մ.-ն նրանց հետ խոսքը մեկ էր արել՝ նա ինձ էր որսում: Որսում էր ոչ կանացիաբար, պարզապես որսում էր, ինքն էլ դա չգիտակցելով, ինչպես որսում է ամեն ոք՝ բառերի ու մտքերի միջոցով ուրիշին պարտադրելով իր հոգին:

Գեղեցիկ էր արդյոք Մ.-ն: Այո: Խակին նրան վերափոխել էր, նա շատ ավելի գրավիչ էր դարձել: Վստահ չեմ սրատեսությանս, ես ցանկությամբ կուրացել էի...

Չէի սպասում, որ նրան այստեղ կհանդիպեմ: Բոլորս էլ փոխվել էինք: Երկար ծանոթության սովորույթը դեռևս բթացնում է մեր զգոնությունը, և մենք շարունակում ենք առաջվա պես տեսնել: Բայց ավելի ուշադիր նայելով նույնիսկ ամենաանթափանց դեմքերին՝ անհնար է չնկատել, որ դրանք արդեն այն չեն, յուրաքանչյուրի մեջ ներխուժել է նորը, և այն

անհետ ջնջել է նախկինը: Գուցե ժամանակավոր է դա՝ խեղման հետ-
ևանք, և երբ հողն ընկնի իր սովորական տեղը կամ այդպես էլ մնա
նոր դիրքում՝ գրեթե մեղմացած ցավով,– մեծ մասը կվերադառնա իր
նախկին «ես»-ին:

Բայց նրա վերադարձին ես այնքան էլ չէի հավատում. չափազանց շատ
էր հեռացել նախկին «ես»-ից:

«Ամրայում» ես տեսել էի թեթևաոլիկ և հրապուրիչ մի աղջկա. չնայած
արդեն երեսունին մոտ էր: Թվում էր, թե,– համենայն դեպս ինձ էր
թվում,– որ նա դեռ չի կորցրել ամուսնանալու հույսը, չնայած երբ նրա
դեմքը ժպիտով էր ողողվում, աչքերը տխուր էին մնում: Սա ևս մի հաս-
տատումն է այն բանի, թե, հետևելով անհամ մեծամասնությանը, ես
որքան հիմար գնահատականներ էի տալիս:

Դեմքը ժպտում էր, իսկ քննող ու հոգնաբեկ աչքերը շուրջբոլորն էին
նայում:

Նա երբեք մենակ չէր գալիս «Ամրա», հավանաբար չամուսնացած
լռակյաց ինչ-որ տղաներ ուղեկցում էին նրան: Այդպիսի տիպեր կան.
երբ մոտիկից ես ճանաչում, ընդհանուր առմամբ վատ մարդ չեն, բայց
իրենց համառ լռակյացությամբ հույժ անտանելի են: Նստում են՝ դեմք-
ներին սովորական շվեյցարական չեզոքությունը, և հասկանալի չէ՝ քեզ
լսում են, թե՞ իրենցն են մտածում: Սովորաբար նրանք չափավոր գողա-
կանի վարքուբարք ունեն, նրանց սուղ բառերից գոնե մեկը պարտա-
դիր ճամբարային ժարգոնից է, և փոքր-ինչ կուզիկ են, նույնիսկ ցած-
րահասակ: Նրանց շարժումները չափած-ձևված է, միշտ կարևորության
գիտակցությամբ և տարբեր տոնայնությամբ խոսում են մի բան՝ մենք
մեզ հարգում ենք, մենք ոչ ոքի ձեռք չենք տալիս և թույլ չենք տա, որ
մեզ ձեռք տան: Ինչ-որ իմաստով նրանք ինձ հիացնում էին: Նրանք
գիտեին իրենց վարկը պահել, այսինքն՝ լրջությամբ էին վերաբերվում
իրենց և շրջապատողներին, ընդհանրապես կյանքին: Նրանք ամբող-
ջական բնավորություն ունեին, ինքնաբավ էին, ամուր զգում էին իրենց
«ես»-ը, այն երևակայությամբ երբեք չէր փոշեցրվում օտար կյանքի
մեջ: Եվ ես ինքս ինձ հարց էի տալիս՝ այդ աղջիկն է՞լ է այդպիսին,
մի՞թե նրանք՝ ինքն ու այդ վերամբարձ, իրենց նշանակալիության գի-
տակցությամբ համակված հնդուհավերը հարազատ հոգիներ են: Դա

նվազեցնում էր նրա այն կերպարը, որը ես կերտել էի իմ սրտում:
Եվ այնուհանդերձ նրա մեջ մի անորսալի բան կար, հեշտ չէր նրան բացահայտելը: Խոսում-քլալացնում էր նա, իսկ ուղեկիցները լռում էին: Նրա ամբողջ վարքագիծը մատնում էր մի տեսակ անսանձ օրիորդի... էլի մաշված բառեր են միտքս գալիս: Նա ոչ այդպիսին էր, ոչ էլ անսանձ: Ես փորձում եմ հիշողությանս մեջ վերականգնել այն ժամանակվա Մ.-ին, և պատրաստի բառերն իսկույն հայտնվում են և լկտիաբար տեքստ են սողոսկում: Իսկ իսկական, նրա էությանն առավելագույնս մերձ բառերը թաքնվում են, չուզենալով են ի հայտ գալիս, դրանք հարկ է լինում ուժով լույս աշխարհի հանել: Իսկ որ նման ճշգրիտ, առարկան ամուր բռնող բառեր կան՝ ես հավատում եմ: Իրենք՝ իրերը բովանդակում են իրենց անունները, պարզապես հարկավոր է դրանք կարդալ իմանալ: Դա սովորաբար անհասանելի է, և մարդկանց ամբողջ գրածը՝ մոտավոր: Դա բառերը կուրորեն իրերին դեմ անելն է. մեկ էլ տեսար պատահաբար տասնոցին խփեցիր: Տասնոցին չեն դիպչում, իրերն անընդհատ հեռանում են, և մարդը մնում է բազմաթիվ բառերի կույտի հետ, որոնց համար իրը վաղուց է մեռել:

Ես բերանիցս թոցրի առաջին իսկ պատահած բառը, և նրան սարքեցի սուխումցի մի սովորական աղջիկ, որը չափավոր հիմարավուն է, չափավոր պչոուհի, չափավոր հրապուրիչ: Բայց մեղքս ինչ թաքցնեմ՝ մտածում եմ, թե պատահական էր արդյոք առաջին բառը, սա առաջին նետման դեպքը չէ, երբ առանց նշան բռնելու ցանցազամբյուղն ես գցում: Չէ՞ որ բոլոր իրերը, այդ թվում մարդիկ կեղծանունների հետևում թաքնվելու միասակար, նողկալի սովորույթ ունեն: Կուզես՝ նրանց վրա դաջիր իրենց իսկական անունը, նրանից երես կթեքեն, կաշխատեն ամեն կերպ քողարկել: Մ.-ն անպարկեշտ էր թվում: Կարելի է նաև համանման բառ փնտրել, այն էլ չի սազի, որովհետև նա նա չէր, ում տեսքով ներկայանում էր: Եթե նույն ոգով շարունակեր, գուցեև բառը սերտաճեր նրան: Բայց պատերազմը...»:

Հաց ու պանիր, թեյ, կիտրոն, որը ես պարզապես մզում եմ բաժակի մեջ. – ահա իմ նախաճաշը, ճաշը և ընթրիքը: Ճիշտ է, ճաշին ես կարող եմ ձվածեղ էլ անել՝ եթե տրամադրություն ունենամ և չծուլանամ: Հետո դուրս եմ

գալիս: Եվ իմ առջև իր ամբողջ վիթխարիությամբ ծառանում է ամեն անգամ դողացնելու չափ սուր հարցը՝ ո՞ր գնամ: Ես կանգնում եմ՝ չիմանալով ուր շարժեմ անշարժության և հանգստի կարոտ իմ մարմինը, միաժամանակ և հոգնած հոգին, որն աննկատ ծուլվել է այս՝ դեռևս երիտասարդ, բայց բավական մաշված մարմնին: Եվ իմ այս անվճռական հապաղման ընթացքում ես մի էակ եմ, որն ամբողջովին դիպվածի գերին է: Այս սովորությունը երևի դեռ պատերազմից է պահպանվել: Ես գլխով ոչինչ չեմ ընտրում, ես ուղեղս չեմ բանեցնում, թե ուր գնամ: Տարածությունն ինքն է ինձ ներառում, ներծծում է՝ ինչպես ջրապտույտի ձագարափոսը, և որոշում իմ ապագա երթուղին: Ես ձև եմ անում, թե ընտրությունը կատարել եմ՝ մի քանի րոպե դիմադրելով անպատկառ ճնշմանը: Երեք փողոցի և մեկ հրապարակի այս քաղաքում առանձնապես տեղ չկա գնալու: Ծովափին կարելի է սուրճ խմել և շաղակրատել. ինչ է վրացիների մտքինը, ինչ կերպ կվարվեն ռուսները, կարելի է նրանց վրա հույս դնել, հերթական անգամ չեմ դավաճանի արդյոք: Այս ճլորած, տաղտկալի խոսակցության մեջ հուսալքված, բայց առույգ խոսակիցներից մեկն անպատճառ խոսք կգցի եղանակից՝ իբր, ինչ բարեբախտություն է, այսպիսի դրախտում ենք ապրում, բայց չենք գնահատում: Մնացածները՝ մեկը լուռ, մյուսը՝ բացականչությամբ, կհամաձայնեն նրա հետ:

«Կլիմայի համընդհանուր տաքացում է տեղի ունենում, մենք շուտով մերձարևադարձից արևադարձի կվերածվենք»․ – «Եվ մեզ մոտ բանա՞ն կաճի»– «Անկասկած»– ծանրումեծ կասի զրուցակիցը:

Բանանի հանդեպ մենք առանձնակի թուլություն ենք տածում: Վերջին տարիներս այն շեշտակի մտավ մեր կենցաղ, և այժմ այդ տարաշխարհիկ միրգն իր աչքի զարնող դեղնությամբ և պատկառելի չափերով զարդարում է թե՛ տոնական, թե՛ հիշատակի սեղանները: Բայց մեզ հատկապես գրավում է այն, որ բանանն, ըստ լուրերի (մենք առայժմ դա ճիշտ չգիտենք), աճում է վայրի տեսքով, հենց անտառում, ծառի վրա: Ամբողջ աշխատանքն այն է, որ պոկես, հանես յուղալի փափուկ կեղևը և խցկես բերանդ,– և դու կուշտ ես ամբողջ օրը: Անատամ ծերուկների բախտը բերել է՝ բանանի նուրբ պտուղը մերկ լնդերով էլ կարելի է ծամել:

Մշտական խնամք և մեծ քանակությամբ պարարտանյութ պահանջող ցիտրուսները քմահաճ են, հաճախ՝ թթվաշ և բանանին շատ են զիջում:

Մենք անհամբեր սպասում ենք օրինված արևադարձի գալուստին:

Այսպիսով, քայլերս միանգամից ուղղեմ «Հակոբի մոտ» սրճարան, թե՛ Պողոտայով ուղիղ գրադարան, – ահա թե ինչ ճամփաբաժանում եմ ես հայտնվում ամեն առավոտ: Ոչ, ես տեղում չեմ կանգնում և մետաղադրամը մտքումս «ծախ-աջ» գցում, մուտքի մոտ չեմ հապաղում ավելի երկար, քան ազատ կամքն ի ցույց դնելու չափ անհրաժեշտ թուպենները: Ոտքերս իրենք են տանում դեպի կենտրոն և այդ միջոցին՝ տնից մինչև կենտրոն, ապագա երթուղին իմ ամեն անվստահ ու երկչոտ քայլին զուգընթաց, դանդաղ հասունանում է իմ ուղեղում. մեծ մասամբ փողոցով եմ քայլում, ոչ թե մայթով, մեքենաներն այնքան էլ շատ չեն, իսկ մայթն աղտոտ է, սալերը տեղաշարժվել են, ոտքդ դրեցիր՝ բարակ շիթով ուղիղ ոտքիդ է ցայտում ցեխի շատրվանը: Այսպես ես հայտնվում եմ կենտրոնում՝ ավելի ճիշտ կլինի ասել՝ ժամացույցի տակ: Նախկին քաղխորհրդի, այժմյան քաղաքապետարանի աշտարակին գտնվող սովորական ժամացույցը վաղուց մեծատառով ժամացույց է դարձել: Տեղն է մեղավոր: Ես դեռ հեռվից՝ փողոցի երկայնքով աճած կամֆարայի ծառերի ճյուղերի արանքով տեսնում եմ այն և ուղեցույց ունենալով թվացույցը, դանդաղ մոտենում եմ: Ո՞ր ժամն է ցույց տալիս այս անգամ:

Բանն այն է, որ ժամացույցը մերթ կանոնավորապես ճիշտ է աշխատում, մերթ էլ չգիտես ինչ ժամանակ է ցույց տալիս: Ես կասկածում եմ, որ այն այլ ժամանակի է անցնում գիշերվա լուռության և մութի մեջ, թաքուն, բոլորից աննկատ, և առավոտյան հրամցնում մոլորված քաղաքացիներին: Մի քանի օր ժամացույցն աշխատում է նորովի-յուրովի: Քաղաքի ղեկավարությունը, երևի, իրեն համարում է նաև ժամանակի ղեկավար, մարդ է ուղարկում վերև իբրև օրինակելի պատիժ, և նա սլաքներն ուժով տեղափոխում է իբր թե ճիշտ, կարգին ժամանակի: Ժամացույցը մի քանի օր աշխատում է անհասկանալի տագնապով ու հույսով ներքևից իրեն նայող մարդկանց ուզածի պես: Ամեն ոք, վաղօրոք ապահովագրվելով նաև անձնական ժամացույցով (ինչն առանց ավելորդաբանության ապացուցում է, որ ժամանակը մարդու գյուտն է, նրա հայտնագործությունը: Եթե այլ կերպ լիներ, և եթե ժամանակն ինքնաբավ իմաստ ունենար, մարդը չէր զգա ժամանակը չափող «ձեռնաշղթայի» կարիքը), կարող էր նայել և հավաստիանալ, որ նրա անձնական ժամանակը համընկնում է գլխավոր ժամա-

նակին, որ նա էլ ամենքի հետ– օ, ճակատագրի հոգատար աջ, օ, կայունություն, օ, ուրախություն,– ներառված է այդ կարգ:

Բայց մի անսպասելի գիշեր ժամացույցը խափանվում է, և առավոտյան, ի դառնություն և ահալից դժգոհություն քաղաքացիների, սկսում է մի անհեթեթ ու հիմար բան՝ ցույց է տալիս ոչ թե այստեղի, այլ միայն իրեն հայտնի մի ժամանակ:

«Այն, ինչ տեղի է ունենում շուրջս, այն աստիճանի է խարխուլել իմ նախկին պատկերացումները, որ չեմ կարողանում գրել: Մինչև այժմ գրելս էլ նման է այն բանին, երբ գլուխը կտրել են, իսկ իրանը դեռ շարունակում է ցնցվել. կյանքի վազքը շարունակվում է, չնայած ավարտն արդեն անցել է: Նույնն էլ ինձ հետ է կատարվում:

Սկզբում թվում էր, թե բառերը դիմագրավում են քառուր, որի ջրապտույտի մեջ ենք ամենքս: Թղթի վրա ամեն բան կարգին էր, տառերը գտնվում էին սահմանված տեղերում, դրանք միավորվելով բառեր էին դառնում: Իսկ բառերն իմաստ ունեն: Եվ էլի ինձ թվում էր, թե որևէ մասը բառ է դառնում և իմ մասին ավելի է խոսում, քան բոլոր լուսանկարչական պատկերները և կենսագրականները, որոնք կյանքիս ընթացքում կարող էի ստեղծել: Ես ոչ միայն խոսք էի դառնում, այլև պահպանվում էի դրա մեջ: Ես պահպանվել էի ուզում, այլ ոչ թե պարտակվել: Եթե նույնիսկ այրվի թուղթը, որի վրա ես գրել եմ, եթե այրվեն իմ խոսքերը, որոնք գրված լինելով՝ տեքստ կազմեն,– չգիտեմ, թե ինչ տեքստ,– սակայն առանց դրան հավատալու հազիվ թե գրել հնարավոր լինի:

Որքան էլ ցանկացա՝ չկարողացա խուսափել այդ հավատ բառից: Այն արտաբերելիս ես, կարելի է ասել, ամոթից կարմրում եմ, ասես ինձ բռնել են մանր գողություն անելիս: Բայց երբ դու գտնվում ես քեզ հետ երբևէ չեղածի շեմին, երբ քեզ դեպի մթություն (ահա երագից և գիշերվանից որսված ևս մեկ թափառող բնորոշում այն վայրի, որտեղից վերադարձ, ինչպես ընդունում են բոլորը և ինչը հավաստված է անժխտելի գերեզմանոցային փորձով, չկա) տանող ճանապարհը լոկ միակողմանի է, և դու հանկարծակիի ես եկել, ապա ավելի լավը չունենալու պատճառով դիմում ես նման փոխարինման:

Այժմ ես տեսնում եմ, որ խոսքն անուժ է, նրանից կյանք չես ստեղծի, և կյանքն ինքն էլ խոսք չի դառնա: Խոսքը սոսկ ստվեր է:

Բ. Ն.-ն գրեթե հակառակն էր պնդում՝ նախնական խոսքը հենց այն ոչ նյութականն է, որից ծագել է ամբողջ տեսանելին, շոշափելին, հոտոտելին և եղծելին»:

Քաղաքն օտար էր, և ես փորձում էի անհամարձակ ու ամաչելով հարմարվել նրան, հոգուս մեջ ստեղծել նրա ամբողջական կերպարը, և այնժամ այն մոտիկ կլիներ: Դրա համար ինձ ուղեկցող էր պետք, և այդ դերն ակամա ստանձնեց Ադգուր Ա.-ն: Նա քաղաքը հինգ մատի պես գիտեր, քանի որ ծնվել ու մեծացել էր Սուխումում:

Ես մի փոքր այլ ուղեկցող կնախընտրեի: Թող նա այսքան նիհար ու ջղուտ չլիներ, այլ ավելի խոշոր, փափուկ, կլոր մարմնաձևեր ունենար և նման լիներ մի քիչ փոխած և ուղղաձիգ դիրքով անսահմանության նշանի: Եվ որպեսզի նա մի քիչ այլ կերպ կկոցեր աչքերը՝ ոչ թե կարճատեսի նման, միայն թե տեսնի, այլ դավադրաբար, խորամանկ, որոշակի իմաստով, որը միայն երկուսով կհասկանայինք:

Բայց ինձ հետ աշխատող մյուս երկու աղջիկները համանման տվյալներ ունեին և միայն ասպիրանտուրա էին երագում: Նրանք Ինվար Թամշուգովիչի հեռու ազգականներն էին: Տգեղ և գիտությանը սարսափելի նվիրված այդ էակների մեջ արագորեն հասունանում էին օրինակելի պառաված օրիորդները. այդպիսի ապագա էր գրված նրանց նեղ ճակատիկների լայնքով մեկ: Իրենք նույնպես գիտեին դա, մասամբ համակերպվել էին, չնայած թաքուն որոշ հույս էին կապում գիտության թեկնածուի աստիճանի հետ:

Մեր հասարակությունը հատուկ ստորաքարշությամբ է պատվում բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց, իսկ եթե նրանք նաև գիտական կոչում ունեն, պարզապես պատրաստ է եռացած ջուր միզել: Դա խեղճ դմփանների համար շրջանցիկ ճանապարհ էր բացում դեպի օրինական, բայց բացառապես հաշվի վրա հիմնված ամուսնությունը: Ժամանակի ընթացքում հասարակությունը կարող էր նրանց հաջողացնել մի որևէ կուլտուրուկ կերած-խմած տեղացի դոնժուանի, որը քառասունի մոտ բազ-

միցս տրիպեր էր ընկել և հարազատների պնդմամբ որոշել էր վերջ տալ ամուրիական անկարգությանը:

Միայն խիստ լարված օրերին նրանք, սովորաբար անալի լինելով, իմ մեջ ցանկություն էին արթնացնում, և երբ դա անտանելի էր դառնում, ես զուգարան էի վազում: Կատաղորեն ձեռնաշարժություն անելով և դուրս ժայթքելով ներսս կրծող անձկությունս՝ ես դատարկված, հերթական թուլության դառնալուն համը բերանումս վերադառնում էի: Իսկ դմփաններն իմ պարզած աչքերին ի տես դառնում էին այն, ինչ էին իրականում՝ անհայտ սեռի անդուր էակներ:

Ադգուր Ա.-ն հեղինակ էր մի քանի կարճ, ենթատեքստային իմաստով ծանրաբեռնված պատմվածքի, ավելի շուտ՝ առակի: Կենդանի կյանքն այնտեղ քամված էր մինչև կարճ, չոր տողերը՝ ի տարբերություն նրա ճոռոմ, շատախոս օրագրի: Նա դանդաղ ու ծանր էր աշխատում, միշտ դժգոհ էր՝ տիպական օրինակը մի գրողի, ով չէր պտղաբերում իր հանդեպ ունեցած անչափ խստապահանջության պատճառով: Պատմվածքները տպվեցին տեղական գրական ամսագրում և աննկատ մնացին, ինչն Ադգուր Ա.-ին չմտահոգեց:

Պատմվածքներից մեկի հերոսն ապրում է Ոմն մեկի հանդիպմանն սպասելով: Ոմն մեկը դեռ վաղուց հերոսին զգուշացրել է, որ այսինչ ու այնինչ տեղում սպասելու է, և նա ոչ մի դեպքում չպետք է ուշանա: Հերոսն անհանգստացած է, ջանում է կանխել հանդիպումը, գուշակում է, թե Ոմն մեկն ինչ պիտի ասի իրեն: Առանց հատուկ լարման ընթերցողը գլխի է ընկնում, որ Ոմն մեկը մահն է, և հերոսը պարզապես սպասում է իր մահվան ժամին, նրա ամբողջ կյանքն անցնում է սպասելով: Եվ ահա վրա է հասնում երկար սպասված հանդիպումը, ինչը երազել էր հերոսը ոչ լրիվ երկու էջում: Եվ ի՞նչ է նա նվաղած սրտով տեսնում. ինքն իրեն, նրա առջև կանգնում է իր նմանակը:

Մյուս պատմվածքում տղան ամեն անգամ պապին խնդրում է պատմել, թե նա երիտասարդ ժամանակ ինչպես է գայլ սպանել: Տղան խղճում է գայլին, և նա չի ուզում, որ պապն սպանի նրան: Քանի որ ամեն անգամ պապն այլ բառերով է պատմում, ապա տղան հույս ունի, որ վերապատմություններից մեկում պապը կվրիպի, և գայլը ողջ կմնա: Բայց պապի պատմվածքը միշտ ավարտվում է նույն կերպ, թե ինչպես է սպանված

գայլն իր արյամբ ներկում հալչող ձյունը: Հետո նրանք դուրս են գալիս ամաճուրթայից¹ և գնում ակուասքյա², որտեղ քնելու են: Եվ այդ ժամանակ տղան զգում է, թե ինչպես պապի ձեռքն աստիճանաբար գայլի թաթ է դառնում. այն մորթով է պատվում, եղունգները երկարում ու սրվում են, և թաթը տղայի ձեռքը բռնում է նրբորեն ու սիրով: Տղան չի համարձակվում գլուխը բարձրացնել և նայել պապին. գիտե, որ կտեսնի նրա վառվող գայլի աչքերը, որոնք իրենց փայլով խամրեցնում են աստղերը: Տղան պապին է սեղմվում:

Երրորդ պատմվածքում լեռնային մի կիրճ է: Գյուղից հեռու ապրում է անտառապահն իր կնոջ հետ: Կնոջ համառ պահանջով անտառապահը վերջապես որոշում է ալեհավաք տեղադրել վաղուց գնված իրենց ռադիոընդունիչի համար (կինը միշտ նրա ականջն էր սղոցում, թե մենավոր գայլի պես են ապրում և չգիտեն, թե ինչ է կատարվում մեծ աշխարհում): Քանի որ տնակը կիրճում էր, անտառապահն ստիպված է լինում ավելի վերև բարձրացնել ալեհավաքը: Մի քանի օրից նրանց տուն են գալիս զինված մարդիկ: Պարզվում է, որ մեծ աշխարհում վաղուց պատերազմ է ծագել: Զինվորականներն անտառապահին և իր կնոջը մեղադրում են լրտեսության համար և զնդակահարում են:

Մյուս պատմվածքները նույն ոգով էին:

Ադգուր Ա.-ն, ինչպես հնաոճ արտահայտվում էր, ծառայում էր մոտակայքում՝ հրատարակչությունում: Երկու թույլ բավական էր, որ նա «Ամբար» հասներ: Իսկ ես ստիպված էի Նոր շրջանից մի քսան թույլ քարշ գալ մշտապես լեփ-լեցուն, հեղձուցիչ, քրտնահոտ տրոլեյբուսով:

Մի ժամանակ եկավ, երբ ամենքն ամեն ինչի վրա սկսեցին թքած ունենալ, և ինչպես լաբորատորիայում, այնպես էլ նրանից դուրս, շատ հեռու, կարգապահությունն սկսեց կաղալ: Ես կարող էի օրերով բացակայել, և դա բացի դմփաններից դժվար թե որևէ մեկը նկատեր: Բայց եթե նույնիսկ պետերից որևէ մեկը նկատեր, վարչական տույժ չէր էլ լինի: Եվ հետո, մեր լաբորատորիայի աշխատանքը եռում էր: Դմփանները ոչ մի թույլ հանգիստ չէին թողնում սարքավորումները, տառացիորեն չարչարում էին դրանք՝ ստանալով տարատեսակ տվյալներ և դրանց հիման վրա գծագրե-

1. Ակուասքյա (աբխ.) – ցցագերանների վրա կառուցված փայտաշեն մեծ տուն

2. Ամաճուրթա (աբխ.) – առանձին խոհանոցային տնակ

լով աներևակայելի կորեր: Եթե բնության մեջ թեկուզ մի նյութն այդ վարքն ունենար, աշխարհը բնավ չէր էլ լինի, կամ էլ միանգամայն այլ կլիներ, և անհայտ է, թե այնտեղ տեղ կգտնվեր արդյոք խեղճ դմփանների համար:

Հետո Ադգուր Ա.-ն մեկնեց Մոսկվա գրականության ինստիտուտ ընդունվելու: Նա ընդունվեց, և մենք տեսնվեցինք միայն մեկ տարի անց՝ իմ քսանհինգամյակի հաջորդ օրը: Ես զգում էի, որ կյանքումս մի ինչ-որ անդառնալի բան է կատարվել:

« ազարից մի անգամ անդորրություն է հաստատվել: Մի շաբաթ կլինի: Վրացիներն ու մենք մունջ ենք խաղում, որը, ճիշտն ասած, միշտ չէ, որ պահպանվում է: Պատահում է, որ հանկարծ ինքնաձիգի կամ գնդացրի կրակահերթը կամ էլ հաուբիցի մոնջյունը խախտում են առատաձյուն լռությունը. այս ձմեռ սրտիդ ուզածի չափ ձյուն է տեղացել: Բայց այդ ամենի մեջ չարություն չկա, այլ քնկոտ հոգնություն: Խոսում են, որ սա հարձակմանը՝ հասկանալի է, որ մեր, – նախորդող վիճակ է: Վրացիներն ամուր նստել են Գումըսթայի ձախ ափին և ըստ երևույթին ոչ մի ճեղքման մասին էլ չեն մտածում, ուզում են մեզ ուժասպառ անելով վերցնել:

Եթե իսկապես մեր կողմից հարձակում է նախանշվում, ապա հանգստի առիթ կա ու կա, և ես հրամանատարին համոզեցի մի երկու օրով բաց թողնել. չնայած նա դիմադրում էր՝ բազմանշանակորեն ակնարկելով չնախատեսված հանգամանքները:

Ուզածիդ պես գիշեր էր: Վերահաս ձմռան երեսից մերկացած տանձի ծառի ճյուղերում լռվել էր լուսնի մի բեկոր: Ճերմակ ձյան բամբակե մարմինը խեղդել էր բոլոր խշռոցներն ու հնչյունները: Ցուրտ երկնքում պսպղում էին ասեղի պես սուր ու լվացած աստղերը: Այս ծայներն ու հոտերն ինձ մանկուց են ծանոթ:

Ինչ անհամբերությամբ էի սպասում ամռանը, երբ ավարտվում էր ձանձրալի ուսումնական տարին և հայրս երեք պայծառ ամսով տանում էր ինձ գյուղ՝ տատիս ու պապիս մոտ: Նրանք արդեն մահացել են, մնացել են հորեղբայրս և իր ընտանիքը: Հորեղբայրս, ով երեք որդի ունի (իմ «դրսի» եղբայրները. երեքն էլ մարտնչում են)՝ մի չափազանց բարի մարդ է և յուրովի է սիրում ինձ: Գուցե նա այնքան չի տազնապում

իր որդիների, որքան ինձ համար: Ինչ թաքցնեմ, դրանից ես փոքր-ինչ ճնշված եմ զգում: Բայց և մի բառով անգամ ինձ չեմ մատնում. հորեղբորս նման մարդուն վշտացնելն աններելի մեղք է: Իմ այցելությունն անսովոր ուրախություն է նրա համար: Նախ և առաջ նա հարցնում է իր եղբոր՝ հորս, իր հարսի՝ մորս մասին. նրանք մնացել են գրավված Սովետում: Նրանց ճակատագիրն ինձ անհայտ է:

Այս ծառը հաճախակի եմ հիշում, հանկարծ հեռավոր լույսը քաղցր ծափում է սիրտս. հատկապես ծմռանն է այդպես, երբ ամեն բան անհուսալի, անխմաստ է թվում, և դու միայնակ նետված ես աստղերի հորձանուտը: Վաղ մանկությունից քնելուց առաջ իմ սիրած զբաղմունքն ինչ-որ բան երևակայելն էր, ասենք, լողում եմ ծովում, թռչում եմ, բայց ավելի հաճախ՝ մեծ բարձրությունից: Ես դնովի սանդուղքով մտովի բարձրանում եմ աշտարակ, ավելի ու ավելի վեր, մինչև սիրտս կանգնում է, իսկ մեջքիս վրա արդեն մրջյուններ են վազվզում: Եվ ամեն անգամ թռչել եմ ուզում. չգիտեմ ինչու վստահ եմ, որ ոչ թե կընկնեմ, այլ կթռչեմ: Նույնիսկ ծովի անհատակ հզորության թափանցող զգացումը, որը մոռացվել է, բայց ամեն անգամ, երբ ընկղմվում ես միաժամանակ ահեղ և ներողամիտ նրա ջրերը, նրա գիրկը, չի համեմատվի թռիչքի երանության հետ: Իսկ դա ծանոթ զգացում է, ես հաճախ եմ երազում տեսել, որ թռչում եմ: Բայց դա այլ պատմություն է, ես հիմա ծառով եմ զբաղված:

Քնելուց առաջ պառկած եմ՝ մենակության և անխմաստության ահը սրտումս, և հանկարծ այն ծառն եմ հիշում: Ես առանց առանձին ջանքի վերականգնում եմ նրա մարմնականության և վիթխարիության ընկալումը, որն զգացել եմ առաջին հանդիպմանս: Բայց երևակայությունն առաջ է գնում: Ես ծառ եմ դառնում, ապրում նրա ամբողջ երկար կյանքը՝ անձրևին, ձյանը, ամռանը, աշնանը... Եվ հասկանում եմ, թե նրա անվախ կյանքի համեմատ որքան ճղճիմ, նողկալի, ամոթալի է իմ կյանքը:

Երազում տեսա վաղուց մահացած տատիս: Մենք մի ինչ-որ սքանչելի այգում էինք: Երազս սև-կարմիր էր,– այգին՝ ամբողջովին սև, իսկ այնտեղ աճող անսովոր խոշոր ծաղիկները՝ կապ-կարմիր, աննկարագրելի գեղեցիկ: Տատս ձեռքս բռնած ինձ տանում է այգով և իր փափուկ,

բարի ծայնով ասում. «Մի վախենա, նան³, Ադգուր, տեսնում ես՝ որքան լավն է մահը»:

Տասու ծեր հասակում մի փոքր ուղուց շեղվել էր և վախենում էր, որ այն աշխարհում տեղ չի ճարի, և իրեն դուրս կհրեն. նա չէր ուզում, որ այդպես լինի, հույս ուներ հանդիպել հարազատներին և սիրելիներին, ովքեր այնտեղ շատ ավելի էին, քան այստեղ մնացածները: Նրա վախի հիմքում մի պարզ դատողություն էր՝ այնքան շատ մարդիկ են հեռացել, և այն էլ միայն իր հիշելով... Այն աշխարհի անընդգրկելի չափն ապշեցրել էր թուլացած գիտակցությամբ տատիս: Նա համոզված էր, որ վաղ թե ուշ այն աշխարհը, ընդլայնվելով նոր բնակիչների մշտական գալուստով, կծածկի այս աշխարհը և կկլանի այն: Հետո արի ու պարզիր, թե ով է ողջ, ով՝ մեռած...

Ես արթնացա դյուրիջ հանգստությամբ, որպիսին վաղուց, գուցե երբեք չէի ունեցել:

Պետք է, որ քեզ հետ հրաշք պատահի: Ես դեռևս ոչ մի հրաշք չեմ տեսել, եթե չհաշվենք երազը: Այդ դեպքում ինչպե՞ս հավատամ Աստծուն. իսկ եթե երազն արդեն իսկ ապացույց է:»

Նա աղջկա անունը չի գրում, միայն «Մ.», ինչը կարող է նշանակել Մանանա, Մգիա, Մարգարիտ, Մերի, Մարինա, Մայա, Միլանա, Մադինա, Մակա, Մարիաննա, Մայանա, Միրանդա...

Միակ թելը Մ.-ն է: Դրանով ես պետք է քանդեմ ամբողջ կծիկը, գտնեմ Մ.-ին, ում հանդեպ, ամենայն հավանականությամբ, Ադգուր Ա.-ն ինչ-որ զգացմունք էր տաժում: Բայց որտե՞ղ փնտրեմ: Գուցե նա էլ, Ադգուր Ա.-ի նման զոհվել է, գուցե պատերազմից հետո մեկնել է Աբխազիայից, գուցե նա հաշմանդամ է և անոտ-անձեռ տանը նստած է՝ չկարողանալով հաշտվել ճակատագրի հետ, չարանալով ամբողջ աշխարհի դեմ, կամ էլ, ընդհակառակը, համակերպվել է՝ ճառագայթելով բարյացակամություն, ջերմություն:

Կարելի է փնտրել-գտնել նրան կամ, ծայրահեղ դեպքում, պարզել, թե որտեղ է և ինչ վիճակում է: Եթե նա բուժքույր էր, իսկ դա ավելի շուտ այդ-

3. Նան (աբխ.) – տարեց կնոջ փաղաքշական դիմումը կրտսերներին:

պես է, ապա դիմելով սանիտարական գումարտակում ծառայողներին, ես հաստատ կստանայի ինձ անհրաժեշտ տվյալներն այն բոլոր բուժքույրերի, ում անունը Մ.-ով էր սկսվում:

Բայց ես այդպես չարեցի, այլ ամեն բան թողեցի բախտին: Ինքս ինձ ասացի՝ եթե Ադգուր Ա.-ի օրագիրն ինձ հասավ ոչ միայն դիպվածաբար,– չէ՞ որ բոլոր հնարավորությունները կային, որ այն այրվեր, կորսվեր, ուրիշի ձեռքն ընկներ, բայց ահա իմ ձեռքում է,– և եթե այն կարդալուց հետո պատահաբար չէ, որ միտք հղացա, նույնիսկ ոչ թե միտք, այլ պարզ և ուժեղ մի զգացում, որ պետք է դառնամ Ադգուր Ա.-ի ոմն շարունակությունը, ավելի ճիշտ, մնալով ինչպես որ կամ, ես միևնույն ժամանակ պետք է – հենց պետք է, ոչ թե այլ բան. ես ուզում էի նրան շարունակել, բայց իմ այդ ցանկությունը նաև պարտք էր... Ճշգրիտ բառեր չեմ գտնում, որպեսզի փոխանցեմ այն ժամանակ զգացածս: Սա նույնն էր, եթե մի մուր,– երբ ոչինչ չի երևում,– սենյակում հանկարծակի լույս վառվեր, և ոչ թե սովորական 60 կամ 100 վատտանոց լամպ, այլ 500. աչքերդ ծակում է, բայց ամեն ինչն իրական ու հասկանալի է: Ես պարտավոր էի, մնալով ինքս, ինչ-որ կերպ շարունակել նրան, գտնել նրա, նրա չապրած կյանքի տեղը,– եթե այդ ամենն իզուր չէ, այլ ճակատագրի՝ ինձ անձանոթ մտահղացման արդյունք: Ուրեմն, ես հենց այնպես, առանց հատուկ ջանքի կգտնեմ Մ.-ին. սարքը գործի է գցած, մենք, միևնույնն է, կհանդիպենք: Եվ ոչ միայն կհանդիպենք, այլև կճանաչենք միմյանց, մի վեցերորդ զգայարանով գլխի կընկնենք՝ պատահել է այն, ինչը պատահելու էր, և ինչը մենք վաղօրոք գիտեինք: Ոչ, մենք միմյանց կողքով չենք անցնի, համենայն դեպս՝ ես հաստատ չեմ անցնի: Ես կճանաչեմ նրան և նրա աչքերում՝ Ադգուր Ա.-ի հիշատակը:

Նախորդ պարբերությունում մի վարկած կա, որն ի հայտ է եկել գրելու պահին. չէ՞ որ բառերն իրենց հետևից քաշում են միտքը, իրենք առջևից են վազում և, նրանց վստահելով, կարելի է պայմանավորվել, ավելի ճիշտ, սուրավով հասնել ցանկացած անմտության,– որ իբր Մ.-ն նույնպես կողքով չի անցնի, այլ մի ինչ-որ վեցերորդ զգայարանով կճանաչի ինձ, ինչն ամենևին էլ պարտադիր չէ, նույնիսկ անհնար է: Աչքիս եկավ կինոական մի տեսարան. տղամարդն ու կինը միմյանց ընդառաջ են գնում, նկատում են իրար, նայում, դանդաղեցնում քայլերը, մոտենում միմյանց, նայում

միմյանց աչքերի և ասում իրար. «Այդ դժուր եք, այդ դժուր եք»: Նա ասում է. «Դուք Բ. Ն.-ն եք, որի մասին պատմել է Ադգուր Ա.-ն»: Հետո մենք միմյանց ձեռք կրռնենք և դեռ երկար ժամանակ լուռ կնայենք միմյանց աչքերի: Բոլոր հարցերը լուծված են, որոնումն ավարտված է, կյանքը՝ կնքված:

Բայց այդպես չի լինի, չի կարող լինել: Մ.-ն երբեք չի ճանաչի ինձ՝ եթե ես իմ անունը չտամ: Այդ դեպքում էլ նա կարող է չճանաչել ինձ, եթե Ադգուր Ա.-ն նրան ոչինչ չի պատմել իմ մասին: Բացառված չէ, որ մենք նախկինում ծանոթ ենք եղել, և ես կճանաչեմ նրան: Բայց այդ դեպքում ես կճանաչեմ ոչ թե Ադգուր Ա.-ի Մ.-ին, այլ իմ հին ծանոթուհի Մ.-ին, նա կծածկի առաջին Մ.-ին, և իմ ամբողջ մտառացումը ջուրը կընկնի:

Թե հետո ինչ է լինելու՝ ես չէի մտածել: Եվ ընդհանրապես, ինչո՞ւ գլուխս մտավ այդ վայրենի միտքը,– չնայած վերևում փորձում էի բացատրել, որ այս կամ այն կերպ պարտավոր եմ շարունակել Ադգուր Ա.-ին,– չգիտեմ: Այն, ինչ վերևում բացատրեցի, ինձ դուր չի գալիս, այնտեղ անորսալի մեծություններ կան՝ ճակատագիր, գործի գցած սարք, ճանապարհներ, որոնք չգիտես ինչու անպայման կխաչվեն, այլ ոչ թե զուգահեռ կանցնեն տեսանելի հեռուն,– ոչ թե անսահմանություն. մեր աշխարհի երկրաչափությունը վաղ թե ուշ կմիացնի բոլոր ճանապարհները, հետևաբար՝ բոլոր ճակատագրերը: Բայց մի կյանքի սահմանում տեղի չեն ունենա բոլոր հանդիպումները, չասած արդեն աչքերը, որոնց մեջ է Ադգուր Ա.-ի հիշատակը: Գուցե ես խաբել եմ ինքս ինձ, գուցե այդ ամենն իսկապես իմ մեջ խորը թաքնված է եղել իբրև արձագանք երբեմնի ընթերցածի կամ տեսածի, այսինքն՝ ուրիշ ձեռքերով անցած և նախնական թարմությունը կորցրած մի բան, որն իմը չէ: Ես երկար գլուխ էի ջարդում այս մտքի վրա, ոչ թե անհարմարություն, այլ լիակատար ծախողում էի զգում և արդեն դադարում էի հավատալ, որ եղել են այն լույսն ու այն ջերմությունը: Ինքնախաբեություն չէ՞ այս ամենը:

Եվ այնուամենայնիվ մեջս մի ինչ-որ բան էր պահանջկոտ հնչում, ես վերջին ժամանակներս ինձ հետ կատարվածի հետևում նշան էի տեսնում, նույնիսկ ավելի մեղմ՝ ակնարկ, և այն հաստատ օտար կամ պարտքով վերցրած չէր, այլ իմն էր:

Ես վճռեցի գտնել Մ.-ին՝ դեռևս աղոտ չգիտակցելով, թե ինչու եմ ես նրան գտնելու, և գտնելու դեպքում ինչ եմ ասելու կամ անելու: Չկարողա-

նալով սեփական վարմունքս ինքս ինձ բացատրել հստակ և աներկմիտ՝ մաթեմատիկական բանաձևերի ոգով հստակ և աներկմիտ, ես որոշեցի լիովին հույս դնել լոկ զգացմունքի վրա, երբ խելքն անզոր է գծագրել ճակատագրի նախշը, հետևել սրտի թելադրանքին:

«**Ե**ս չեմ կարողանում գործի կաշել, հավասարաչափ քայլքը չի ստացվում: Երեխա ժամանակ երբեք չէի մոռանում, որ մենք պատերազմ խաղում ենք, և պատերազմն իսկական չէ: Այժմ հակառակն է՝ պատերազմն իսկական է, իսկ ես չեմ հավատում: Ցերեկը մենք չափազանց զբաղված ենք, որպեսզի երկար մտածենք նույն բանը: Սա իր դրական կողմն ունի. մենք ձերբազատված ենք մշտապես մեզ հիշելու ձանձրալի և ծանր անհրաժեշտությունից, մեր «ես»-ը լուծվում է մի մեծ և անդեմ ընդհանրության մեջ, և դա գրեթե երջանկության նման է: Բայց գիշերը, երբ տագնապով որոտում է հաուրիցը, ես լավ եմ հասկանում, թե ինչ անմիտ սարսափով ենք համակված մենք ամենքս: Նախկինում էլ՝ մանկությանս ավարտին, ես նման բան էի ապրում, բայց այն սարսափը կյանքի հետ էր կապված: Գիտեի, որ ողջ եմ, իսկական, և դա միաժամանակ ուրախալի և սարսափելի էր,– նույնիսկ ավելի շատ՝ սարսափելի: Դա անտանելի սև տանջանք էր՝ մանրահատիկ լույսով թեթևակի փոշոտած: Բայց թե այստեղ ընդհանրապես ինչը կարող էր լույս հիշեցնել՝ մտահոգեց ինձ: Ես գոյության առջև մեծ, ոչ մի բանի հետ չհամեմատվող ահ էի զգում: Մահն էր հենց այդտեղ: Բայց մահը, ինչպես սովորաբար լինում է այդ տարիքում, ես հեռացնում էի սարերից այն կողմ՝ որպես մի անխուսափելի, եթե մեծերին հավատանք, բայց ինձ հետ (սիրտս էր հուշում) հազիվ թե որևէ ուղղակի կապ ունեցող բան:

Այժմ ամեն բան այլ կերպ է կատարվում՝ առանց հետ նայելու և կատաղորեն, ամեն ինչ ոչ թե սարերի հետևում է, այլ կողքս. և՛ կյանքը, և՛ մահն այնքան մոտիկ են, որ դրանք չես էլ տարբերում, հասնում են մեր հետևից, շնչում մեր ծոծրակներին՝ մերթ սառը, մերթ եռման շնչով: Ճուտոն դեռ երեկ ողջ էր, իսկ այսօր սպանվեց բեկորից և ընկղմվեց իր այնքան սիրած, բայց հիմա՝ հավերժական քնի գիրկը:

Օ՛, վախկոտություն, Օ՛, մարդկային անմիտ բառեր, որոնք սկիզբ են

առել այն առաջին հոսքից. թող կորչի նա: Հավերժական քունն էվֆեմիզմ է՝ արժանի մի սրիկայի, որն աչքերը կկոցած և ականջները փակած աշխույժ անցնում է կյանքով:

Ես համոզված եմ, որ Ճուտոյին՝ որքան էլ նա տարված լիներ անբան մարդու ժամանցի կրքով, հավերժական քունը ոչ մի կերպ ձեռնտու չէր: Ձեռնտու չէր մեզ բոլորիս՝ նրա ընկերներին, նրա հորը, մորը, եղբորը և քրոջը, նրա սիրած աղջկան, որի մասին երբեք չէր խոսում, բայց մենք գիտեինք, որ նա՝ Սարիան, նրան սպասում է Գուդրուֆայում: Մենք ուզում էինք, որ վիթխարի ու հզոր Ճուտոն, ֆաֆսար մեր մոտերքում և որ մենք հաստատ իմանայինք՝ անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք նրան բոթբոթելով արթնացնել, և նա ժպտալով ծուլորեն կբացի աչքերը:

Ես հանկարծակիի եմ եկել, ուստի շատ եմ դժվարանում ամբողջ լայնքով բացել աչքերս և նայել մեզ պարուրող ճշմարտության երեսին: Եթե պատերազմում, աներևակայելի աղմուկից և մահացու ցասումից բացի կա նաև ուղեկից մի բան, որն իմաստ ունի, ապա երևի միայն այն, որը մարդուն քաշում-հանում է ձանձրալի առօրյայի տիղմից և ցույց տալիս նրան հատկացված ժամանակի կարճատևությունը: Պատերազմը սրբում-տանում է օրըստօրե ապրելու մեր ինքնագոհ սովորությունը»:

Ծերուկը կանգնեց ինձնից վստահալից հեռավորությամբ և ցայտեցնելով թուփը, որի տաք ու վրդովված կաթիլներն ընկնում էին դեմքիս, խուլ ձայնով դուրս տվեց այն անհեթեթությունը, թե ինչ պատճառով է վիրավորական ու ամոթալի ձևով փլուզվել Սովետների Երկիրը. նա այդպես էլ ասաց. «Սովետների Երկիր». այդ փլուզումը հղի էր համաշխարհային աղետով, ինչը խելքի պակասության պատճառով նեղություն չկրեցին ընկալել անդրօվկիանոսյան գիշանգղները: Մեզ մոտ լուկ կայծ առաջացավ, իսկ համաշխարհային հրդեհն առջևում է, և շուտով,– «Ավելի շուտ, քան մենք կարծում ենք, երիտասարդ»,– նա այնպես կբոցավառվի, որ մեր պակասամիտ գնդիկից սոսկ մոխիր կմնա:

Ես պատկերացրի, թե ինչպես մոլորակի երկնագույն ու կենդանի գունդը՝ ծով ու հող, քաղաք ու գյուղ, անտառ ու անապատ, մարդ ու գազան, ծուխ արձակելով ու գլուխկոնծի տալով կատաղի վազքով սուրում է տիե-

գերքով մեկ՝ նման մի մարդու, որն այրվելով դուրս է վազել բոցավառված տնից և ջանում է իր վազքով թափ տալ իրեն թամբած կրակը: Բայց վազքից կրակն ավելի է թափ առնում և լիովին կոլոլում նրան: Մի քանի մետր էլ հուսահատ բոցարձակելով նա անշունչ վայր է ընկնում: Իսկ մոլորակը չի ընկնի, այլ կշարունակի վազել, և իր ճանապարհին գունդը ժամանակի ընթացքում կկծկվի և մի սև քարի կվերածվի:

Եվ հանկարծ միտքս ընկան այլ՝ տաքուկ ու պիրկ գնդեր, բայց ոչ օդի, այլ կանացի կենդանի մարմնի պրկությամբ: Ես Նաթելային հիշեցի: Նա երևի սպասելուց հոգնել է և ինձ կդիմավորի ինչպես միշտ մոայլորեն, թարս նայելով՝ ինչպես խաբված և նեղացած երեխա: Չնայած նա վաղուց արդեն երեխա չէ, նույնիսկ աղջիկ չէ, այլ կին՝ հասունության այն սահմանագծին, որից անդին ծերությունն է սկսվում, ծերություն, որի մոտենալը Նաթելան գիտակցում է օրեցօր ահագնացող սարսափով: Կնճիոները նոր-նոր ուրվագծվում են ինչպես ժպիտի հետքեր, ժպիտ, որն ուր որ է կանհետանա, բայց սա էլ բավական է, որ Նաթելան ժամերով վրդովմունքով և հուսահատությամբ հայելուն նայելով դիտի իր դեմքը՝ ամեն րոպե այն համեմատելով հասարակ, երկնագույն շրջանակով երիզված մոր նկարի հետ: Մոր դեմքին շերտ-շերտ խորշոմներ կան:

Ես չէի հասկանում, թե Նաթելան ինչու է մոտը պահում ծեր մոր հենց այս լուսանկարը, որն արված էր հիվանդ ժամանակ, մահվան նախօրյակին, այլ ոչ թե ավելի երիտասարդ տարիքի մի պատկեր: Գուցե նա իրեն նախապատրաստում էր անուրախ ապագային:

Նա մորն է նայում, և աչքերում այնքան ցավ կա, որ ես խղճում եմ նրան: Մի քանի մխիթարական բառ եմ ասում, որոնք որպես կանոն նման պահերին հիմար տալավորություն են թողնում: Նաթելան պատրաստ է ամեն բան ներել ինձ, բայց միայն ոչ այն, որ ես գուշակում եմ նրա վշտի իրական պատճառը: Նրան ավելի ևս չվշտացնելու համար ես սկսում եմ խոսել, թե որքան դժվար բան է մայր կորցնելը: Ինչ կարող եմ ասել նրան այս ծամծամված բառերից բացի:

Նրա ամբողջ սարսափը ծերությունից անցնում է սոսկ այն ժամանակ, երբ մենք սիրում ենք իրար: Նաթելան ոչ մի բան չի զգում, բայց որ ինքը կրկին ցանկալի է, նրան հուշում է, որ ինքը դեռ երիտասարդ է և գուցեև իրեն ոչ թե մոր բախտն է սպասում, այլ մի ավելի լավ ու երկարատև բան:

Ախր մայրը ծեր չէր, քառասունը նոր էր լրացել, չնայած լուսանկարում ութսուն տարեկանի տեսք ունի: Նաթելան ասում է, որ դրա պատճառը հիվանդությունն է. երկու տարում պառավեց: Նա սոսկալի տանջանքով էր մահանում. քաղցկեղի հազվադեպ տեսակով էր հիվանդ: Նա զգում էր, որ մի օտարածին, կարծր, գիշատիչ բան է բույն դրել իր մեջ և ավելի ու ավելի է մեծանում, և մշտապես ձեռքը դնում էր փորին, կրծքին, կողերին, երբեմն՝ գլխին, որպեսզի ցույց տա իր մեջ մտած այդ հրեշի տեղը: Նա ամենուր էր:

Նաթելան հաճախ պատմում էր, թե ինչպես է խնամել մորը, ինչպես է նա տանջվել, ինչպես է իրեն թվացել, որ ինքն է մեռնում, ոչ թե մայրը: Մայրը վաղուց էր մահացել՝ Նաթելան նոր էր դպրոցն ավարտել, բայց մինչև հիմա չի կարողանում մոռանալ, թե նա ինչպես էր տանջվում: Եվ ամեն անգամ հարցնում է՝ ինչի է հենց իր մորը վիճակվել այդպիսի անմարդկային ցավ քաշել, ինչի համար է այդպես պատժվել:

Ես ասում եմ, որ խնդիրը պատիժը չէ, նա ծանր հիվանդ է եղել, դրանով էլ ամեն ինչ բացատրվում է, դրանից է նրա ամբողջ տառապանքը: Բայց Նաթելան չի ուզում լսել, նա իր գլուխը մտցրել է, որ մարդուն ամեն մի հիվանդություն ուղարկվում է նրա մեղքերի համար, նույնիսկ սովորական հարբուխը երկնային ծագում ունի: Մայրն էլ է մեղք գործել, չնայած Նաթելան այդ մասին ոչինչ չգիտեր: Դու դաժան ես նրա հանդեպ, ասում եմ ես: Ոչ ավելի, քան Աստված, պատասխանում է նա:

Խղճահարության և չգիտակցված դաժանության ահա այս խառնուրդով է համեմված նրա սերը մոր հանդեպ: Երբեմն ինձ թվում է, որ նա պարզապես ասում է նրան: Հայրերի մեղքերի համար պատժվում են նաև զավակները, բազմիցս ասել է նա ինձ՝ չբացահայտելով, թե ինչ հայրեր և ինչ մեղքեր նկատի ունի: Նա նկատի ունի, և ես հեշտությամբ եմ դա գուշակում, որ նրա կանացի սնանկության և դրանից բխող ամբողջ կյանքի դժբախտության պատճառն այն է, որ մայրը մեղանչել է Հոր առաջ: Այստեղ ես սովորաբար ծայնս կտրում եմ: Նրան տարհամոզել հնարավոր չէ, վաղուց եմ դա հասկացել:

Խուճապահար սարսափելով ծերությունից՝ Նաթելան միաժամանակ ուզում է երկար, աներևակայելի երկար ապրել: Նա պաշտում է երկարակյացներին առնչվող տարբեր պատմությունները: Հեռուստացույցով տեսնե-

լով մահից մոռացված, երկար ծխափողով մի որևէ պառավի, որը կնճռապատ դեմքով դուրս լողալով ծխի միջից, պատմում է կյանքում իր քաշած չարչարանքի մասին, Նաթելյան կլանված լսում է նախանձի և հիացմունքի փայլն աչքերում: Նրա տոհմում եղել է մի քանի այդպիսի հարյուրն անց նշանավոր երկարակյաց. նրանց անունը մտել է մինչգրային արխիվների մեջ տարածված այդ երևույթի մասին գրված հայրենական և արտասահմանյան գրքեր: Հաստատումն այն բանի, որ նրանք իրոք Մաթուսաղայի չափ երկար են ապրել, եղել է լոկ հիշողությունը: Նրանց ծննդյան ճիշտ տարեթիվը հավաստող փաստաթուղթ չունենալու պատճառով նրանք իրենք կյանքի ուղենիշները բխեցնում էին մանկական հիշողության մեջ մնացած այս կամ այն պատմական կամ բնական իրադարձությունից՝ ռուս-թուրքական պատերազմից, Թուրքիա և Մերձավոր Արևելք վերաբնակեցվածների առաջին ալիքից, 1911 թ. չտեսնված ձյունից, որն այդպես էլ կոչվել էր՝ «Մեծ ձյուն»:

Ես Նաթելային չեմ հասկանում: Երկար ապրել՝ նշանակում է անխուսափելիորեն ծերանալ, իսկ նման ժառանգականություն ունենալով՝ նաև տգեղ ծերանալ: Բայց նա, տրամաբանությանը հակառակ, ի հեճուկս նրա, ով իր մորը դատապարտեց վաղաժամ և տանջալից մահվան, ուզում է երկար, կնճռապատ կյանք ապրել: Ինչ է ուզում դրանով ապացուցել՝ պարզ չէ: Իր երկարակյաց արմատների շնորհիվ նա կարծես թե առանց այդ էլ դատապարտված է տասնամյակներ հալումաշ լինել երկնքի տակ: Բայց ինքն էլ է ջանք գործադրում այդ ուղղությամբ. չէ՞ որ կլիման, կերակուրը, կյանքն այժմ այն չեն, ինչ վայելչատես ծերունիների օրոք, և դրանք չեն նպաստում երկար, առողջ կյանքի: Ճիշտ է, այդ ջանքը հաճախ կոսմետիկ բնույթ ունի. դիմափոշին, տարբեր քսուքները և ամենամսյա, գուցես ավելի հաճախակի խուճապը հայելու առաջ: Ըստ մնացածի «առողջ կենսակերպն» անփոփոխ է. նա ծխում է՝ օրինակ բերելով մեր փստացնող պառավներին, մոռանալով, որ նրանք սովորաբար ծուխը ներս չէին քաշում, թոքերը չէին հագեցնում ծխախոտի ծխով:

Ես երբեմն հարց եմ տալիս ինձ՝ առաջվա պես սիրո՞ւմ եմ Նաթելային: Չգիտեմ: Ես գուշակելով գլուխս կորցնում եմ, փորձում վերհիշել նրա հանդեպ տաժած իմ զգացումները՝ բացի նրան տիրելու մշտական կրքոտ ցանկությունից, բայց չեմ կարողանում:

Նաթելան անկողնում բավականություն չի գգում: Նա ինքն է ինձ ասել դեռ այն ժամանակ, երբ խենթորեն սիրում էի նրան: «Ես անզգայուն եմ, ոչ մի տղամարդ չի կարողանա ինձ բորբոքել, և դու չես կարողանա»,– իմ նկրտումներին ի պատասխան վկայակոչում էր նա իր հիմնական փաստարկը: Նա ասում էր, որ ինձ չի սիրում, ինքն ընդհանրապես ընդունակ չէ սիրելու. ի՞նչ սեր, թե՞ մարմինը քարի պես սառն է: Ես չէի հավատում և շարունակում էի ձեռք գցել նրան: Ես իսկապես սիրում էի Նաթելային և չէի հասկանում, թե ինչպես կարող է այդպիսի գեղեցիկ կինն անտարբեր լինել տղամարդու հանդեպ: Մի անգամ ամբողջ օրը պոկ չէի գալիս նրանից, ուր գնար՝ գնում էի: Նա կարծեց, թե ցնդել եմ,– քաղաքն էլ ախր փոքր է, շատերը նրան են ճանաչում, ինձ գիտեն, մեկը հետաքրքրասեր, մյուսը՝ տարակուսական հայացք է գցում մեր հետևից,– բայց վախենում էր ձայնը բարձրացնել. հանկարծ ու ես մի անմիտ բան կանեմ: Ատամները սեղմած դիմանում էր: Երբ ես հետո վերհիշում էի այդ օրվա ամբողջ հիմարությունը, մինչև մագերիս ծայրը կարմրում էի և խղճում Նաթելային:

Բայց ես ցնդածի պես էի: Անապատում մեռնող մարդը մի բաժակ ջուր է երազում. ես ավելի ուժգին էի Նաթելային ցանկանում: Միայն մի հպում՝ և իմ ջերմը կիջներ, ավելի բան չէի ուզում: Բայց նա դաժան համառությամբ իրենն էր պնդում՝ «Ոչ»: Այդ «ոչ»-ով էլ մենք բաժանվեցինք: Ես հույսս լրիվ կորցրի և տուն էի գնում այնքան ծանրացած սրտով, որ մտածում էի, թե չեմ դիմանա:

«**Ի**նչքան էլ անհարմար լինի հիմա խոստովանել, ես լրջորեն կարծում էի, թե այդ երկաթե բանը կարող է ինձ լրիվ պաշտպանել: Նախ և առաջ՝ գլուխս և միջի ուղեղս, իսկ հետո, քանի որ գլխավոր օրգանը հուսալիորեն ծածկված է, նաև մաշկս և դրա՝ այդ բարակ և վարդագույն պատյանի տակ եղած ամեն ինչը՝ և՛ ոսկորներս, և՛ իրանս, և՛ արյունս, որն անկարգ վազում է իմ միջով՝ լվանալով իր կենսատու կարմրությամբ: Եվ ես գլուխս մտցրի այդ բանը, անսովոր այդ բեռը ծանրացրի վրաս և ինքս էլ զարմացա, որ ինձնից շատ ավելի առաջ հորինված նման հասարակ եղանակով ինքնապաշտպանության գործիք կա:

Բայց ես սխալվում էի: Ես նույնքան մերկ ու անպաշտպան էի, որքան

ծննդյանս պահին: Ինձ ոչ մի բան չէր կարող զերծ պահել կյանքից»:

Գլուխս մտել էր, չէ՛, որ միայն գիրքը, որում ես եմ և մնացածները՝ ժամանակի նույնպիսի սպանիչները, կարող է դառնալ իմ կյանքի և ճակատագրի այն շրջանակը, որն անհրաժեշտ էր իբրև իմ մեջ մի ինչ-որ բան հասկանալու միակ հնարավորություն և դիմանալ, դիմագրավել: Ինչի՞ն դիմանալ, ինչը դիմագրավել:

Ասելու եմ առանց ավելորդության. ես շոայլ եմ և որոշ գրչակների և կծծիների նման չեմ քողարկում իմ մտահղացումները: Այդ ժլատներից ոմանք այնքան խորը կպահեն իրենց պոչատ միտքը, այնպիսի ճոխ և մեծաշուք «նվագակցություն» կկազմակերպեն, որ «ամիս» կքաշես. իսկ իրականում դա ասեղի ծակի չափ օճառի պղպջակ է: Մի հասարակ օրինակով պարզաբանեմ, թե ինչին է պետք դիմանալ և ինչը դիմագրավել: Պետք է նկատի առնել, որ դա ոչ մի գրականությունից չի գալիս, չնայած կարդացել եմ և «Սարսափը», և «Սրտխառնոցը», դրանք ինքնատիպ են, ճշմարտացիորեն ապրված և ինձ հետ այստեղ՝ Սուխումում գրոսնում էին:

Շատ վճռական և նպատակասլաց քայլով իմ սկզբնավորած փողոցը բնավ նման չէ նախկինին: Տարուց մի փոքր ավելի տևած անընդմեջ գնդակոծությունն ու ռմբակոծությունն այն անճանաչելիության չափ աղճատել են: Երկու կողմերում բարձրանում են կիսաքանդ տները, և դրանք ինձ հիշեցնում են ծեր, տարիներով հալումաշ եղած, կիսահարբած, սիգարետն ատամների արանքն առած և լպիրշ հայացքով կնոջ... Մի խոսքով՝ հուսահատ մի բան. ահա թե ինչ է այժմ այն փողոցը, որով ես քայլում եմ: Արևը շողում է: Դա միաժամանակ է կատարվում՝ ես քայլում եմ, և վերևից արևն է շողում: Դե, այսպիսի զուգադիպություն է: Եվ գոռոզամտության պատճառով չէ, որ ես արևին հավասար, ավելի ճիշտ՝ կողքով եմ քայլում, ինչպես կարող է կարծել մի ոմն ծաղրասեր, այլ կենսական հանգամանքների բերումով:

Ես քայլ առ քայլ ջնջում եմ փողոցը, և երկնքի արևը (ի տարբերություն ինձ՝ կուրորեն) լափում է օրը: Բայց մինչ ես վերջին կհասնեմ, արևը կհասցնի այրել օրվա մի կտորը՝ այնքան փոքր, որ հասնելով նրբանցքի վերջը, ես հազիվ թե զգամ լույսի պակասելը, և արևն ինձ համար նույնքան պայծառ կլինի, որքան իմ ուղու սկզբնամասում:

Լավագույն օրինակը չէ, բայց որքան պերճախոս է: Ես՝ սույն մարդը, քայլելով անցա փողոցը,– մի ամբողջ փողոց,– և մի քանի անվերադարձ քայլ արեցի: Իսկ վերևում՝ թքած ունենան. ոչ մի բան նկատելիորեն չշարժվեց վերևում, կարեկից հայացք չերևաց, ոչ մի բարեհաճ ողջերթի շարժում: Բայց ես շեղվեցի:

Արևն է շողում: Շուրջս, ինչպես միշտ, մարդիկ են: Մարդիկ են շրջապատում ինձ: Բայց իմ ամեն քայլով ես կտրում եմ նրանց եղբայրական շղթան: Նրանք դարձյալ միացնում են, ես կրկին եմ կտրում: Իմ ամբողջ ընթացքը բաղկացած է միացումից և անջատումից, կցումից և կտրումից, սահմանից դուրս գալուց և սահմանված վայր վերադառնալուց: Ես ուզում եմ դուրս գալ կասկածելի փակագծերից, որոնցով ինձ պարփակում են մարդիկ: Բայց սա էլ չէ գլխավորը, որովհետև սա միշտ է պատահում, իսկ այն, ինչ ես եմ ուզում պատմել, հազվադեպ է և կործանարար ելք ունի:

Ուղեղումս ոչ մի մրրիկ չկա, գլուխս կուրացուցիչ պայծառ է գործում, աշխարհը տեսնում եմ բոլոր գույներով ու մանրամասներով. ահա սուրաց-անցավ Մորուքը՝ քթի տակ քրթմնջալով. «Գիշեր, ես քո ափին եմ...», կամ վերհիշելով վերջերս տարված նարդու խաղը. թունդ և սարսափելի անհաջողակ խաղացող է. ահա Մանչոն՝ թղթապանակը թևատակին և սոմբրերոն գլխին, միայնակ ու տխուր կանգնած է միջքաղաքային հեռախոսակայանի առջև. ահա անցավ խոշորաչա գեղեցկուհի հեռախոսավարուհին՝ թեթևաբարո կնոջ համարում ունեցող պառաված օրիորդը կամ պառաված օրիորդի համարում ունեցող թեթևաբարո կինը, ճիշտ չգիտեմ. ահա և նոփ-նոր, հնաճ հագնված, կուսակցական գույնի կոստյումով և փողկապով վաստակավոր աշխատողը. ահա և մեկ ուրիշը՝ արդեն հետպատերազմյան հագուկապով, նորածն, այսինքն՝ «նախագահական» բաց գույնի կոստյումով, մետաղե ակնոցով... Մի խոսքով, ես շրջակա աշխարհը տեսնում եմ իր պայծառությամբ, մանրամասներով, ինչը մեկ անգամ ևս խոսում է այն բանի օգտին, որ իմ ուղեղը սարքին-կարգին է, այն հուսալիորեն պաշտպանված է ոսկրե պատյանով և մթության մեջ աշխատում է ժամացույցի նման: Բայց ես ավելի ու ավելի վատ եմ զգում: Փողոցն աչքից լողում է, մարդիկ լողում են, օդակը սեղմվում է: Եվ ես կանգ եմ առնում: Աշխարհը վերադառնում է իր սահմաններ, բայց հարցը, թե ինչու եմ ես այստեղ և ուր եմ գնում, գնալու տեղ ունեմ՝ պատասխան չունի: Շուրջս

հրմշտվում են երկոտն, երկձեռ և ամենաապշեցուցիչն ու անտանելին՝ երկաջքանի մարդիկ: Եթե նրանք աչքեր չունենային՝ ձվաձև այդ շրջանակները, ավելի հեշտ կլինեին: Բայց նրանք աչքեր ունեն՝ սև, շագանակագույն, երկնագույն, կապույտ, կանաչ. էլ ինչ գույնի են լինում,– և դրանք նայում են քեզ, չնայած դու այդ բանը չես խնդրել: Աչքերը չոել են՝ ու վերջ: Ոչ մի կերպ փողոցով աննկատ չես անցնի, ինչ-որ մեկի այդ ապակենման գնդիկը քեզ կնկատի և ձայն կտա, ինչ-որ մեկի հիշողության մեջ քեզ համար էլ տեղ կգտնվի: Եթե նույնիսկ հետո ոչ ոք երբեք քեզ չհիշի, ինչ-որ խորքերում, որոնց գոյությունն ինքը՝ տերն էլ չգիտե, դու էլ պահ տրված կլինես, և դա լոկ այն պատճառով, որ ամռան մի միջօրեի անցել են Սուխումի փողոցով, և օտարականը նույնպես այդ փողոցում է եղել, և նա ունեցել է հենց այն ապակենման գնդիկը, որը պտտվում է գանգի գնդում՝ շրջակայքից բռնելով ու յուրացնելով շատ բան:

Ինչհի շատ, աչքին ընկած ամե՛ն ինչը. և կրպակում ամենաբազմազան ապրանք՝ սկսած կարմրադեղին «Բրուք Բոնդ»-ից և վերջացրած գորշաթերթ և հավատարիմ հպատակ «Ափսնիի Հանրապետություն» վաճառող թխահեր կարճիկ կինը, և կոսմետիկայի բազմագույն՝ ամեն տեսակի «Ռեքսոնայով», «Կիկիով» ծանրաբեռն շարժական սեղանիկները՝ գումարած Երկնամերձ երկրից բերված մանր-մունր իրերը՝ ծամկալ, արծաթագույն մեծաթև թիթեռի տեսքով հերակալ, թաշկինակ, եղունգի լաք, նույնպես և հումանիտար օճառի վիթխարի սպիտակ կտորներ, որոնք ծանոթով բերում է մի պառավ,– և ինքը՝ տիրուհին՝ բաց մանուշակագույն ռետուշ արած լկտի, գոեհկական հայացքով աղջիկը. և պզզած մի խումբ երիտասարդ բարակ, փխրուն տղաները՝ թմրախոտից ապուշ կտրած հայացքով. և ճարպոտ, կարմրած մի հոպար, որը հագել է սև մետաքսե տաբատ և կարճ թևքերով ձյունասպիտակ վերնաշապիկ, և որն անփութորեն շրիկացրեց արտասահմանյան ավտոմեքենայի դուռը. նա իր ամբողջ կերպարանքով հիշեցնում է տարօրինակ մի կենդանու արուի. և բժշկական ուսումնարանի մինի հագած, ծուռոտն ու բարակոտն, պլատֆորմով բոկոտիկ հագած, քրքրված գրքերը թևի տակ պահած ուսանողուհիների թեթևամիտ երամը. և պառավը... մի խոսքով, այն ամենը, ինչ հանդիպում է ճամփիդ:

Եվ քանի որ ես այսպես «փողոցային և հիշվող» եմ, ինչն անիմաստ

ապակենման գնդիկներով արտացոլվել և խցկվել է ինչ-որ մեկի հիշողության ներսը, սարսափի եմ մատնվում. ես մերկ կտրում եմ Սուխումի՝ բազմաթիվ աչքերով խորդուբորդ դարձած փողոցը:

Այդժամ ես հիշում եմ նրան և քիչ մնաց՝ վազեմ: Եվ այժմ ոչ թե փողոցի քառսն է ինձ ընդառաջ լողում, այլ մի փափուկ, դյուրաթեք բան, և այդ փափուկն ու դյուրաթեքն ինձ ամբողջովին ներառում է իր մեջ: Կարճ ժամանակով աշխարհում կարգուկանոն է հաստատվում, իրերը ճանաչելի շարք են կազմում, այլ ոչ թե միաձուլվում իբրև մի համատարած անելանելի բիծ: Նաթելան է:

«Այսօր անձրև տեղաց: Երկինքը մի ակնթարթում մթնեց, մեր գլխավերևում հսկայական սև հնամաշ նավերի նման դանդաղ լողացին ամպերը, սուր դաշույնի նման պսպղաց կայծակը, և երկնքից ջուր ցայտեց:

Անձրևը միշտ էլ տագնապահար է արել ինձ: Նրա վիատ աղմուկի մեջ տխրություն ու անձկություն է պահված: Երբեմն ամպրոպը, կուրացուցիչ փայլ արձակող կայծակը, մի փոքր բազմազանություն են մտցնում այդ երկնային հերակլիտյան հոսքի մեջ, երբ ամեն բան գլխիվայր է շուռ տված, և մեզ վրա է թափվում նույն ջուրը, որը մի քիչ առաջ գոլորշու տեսքով վեր է բարձրացել ջրամբարներից, գետերից, ծովերից: Հույն Հերակլիտը ձևով իրավացի է, բայց ըստ էության վրիպել է. ինչ շքեղ ու տարաբնույթ հագուստ էլ հագցնես պառավ կյանքին, դրա տակ նա նույնն է՝ անատամ, կիսակույր, կնճռոտ, ոսկրոտ, մի խոսքով սրտխառնոցի չափ տգեղ մի բան: Հերակլիտն ուղղակի պետք է ավելի երկար կանգներ գետում, այլ ոչ թե վախվորած ափ թռչեր՝ թրջելով լոկ ներբանները:

Ես ոտքով-գլխով այդ հոսքի մեջ եմ և խոստովանության պես կարող եմ ասել՝ այնքան էլ վատ չէ, պարզապես հիանալի է, երբ Հերակլիտի հոսքը վերևից է թափվում: Հնչերանգով պարտադիր բացականչական նշանը՝ ես չեմ դնում. դրա ճկուն, ինքնասիրահարված գալարումը չի փոխանցում իմ խոսքի ամբողջ դառնությունը:

Այս մի քանի ամսվա ընթացքում ես ծերացա: Սպիտակեցնելու չափ ինձ լվանալու, երեսիս վարագի կոշտ մազը սափրելու դեպքում գուցե

ես նման լինեմ անձնագրի իմ նկարին: Բայց հաստատ գիտեմ, որ իմ մեջ վաղուց բնակություն է հաստատել անուժ մի ծերուկ, գրեթե մեռյալ: Այդ ծերունին՝ կնճռապատ ճաղատ գազաթից մինչև կոշտուկավոր կոտորտվող եղունգները, զուտ կենդանական էություն է՝ կեր, քնիր, արտաթորիր...

Անձրևը կտրվեց, և երկնականարի կեսը բռնեց ծիածանը. սա արդեն չափազանց է: Եվ մենք քաշեցինք ինքնաձիգի փակադալկները՝ փամփուշտը մղելով փամփշտանոց, փողերն ուղղեցինք ծիածանի կամարին և սկսեցինք գնդակոծել ամեն մի որսորդի, ով կցանկանար իմանալ, թե որտեղ է նստած փասիանը:

Ես նույնպես տրվեցի համընդհանուր վրդովմունքին և կես պահուռակ կրակեցի: Չգիտեմ մյուսներն ինչպես, բայց ես նշան էի բռնել առաջին՝ արնավառ աղեղին: Այ թե կարողանայի դուրս գցել այն ընդհանուր շարքից:

Բայց հետո վատ եղավ, շատ ավելի վատ: Ծիածանից հետո պարզված, մաքրված, կապույտ կապույտ երկինքը բռնեցին լեռների հետևից դուրս լողացող ամպերը: Երկնային անտեսանելի խողովակը դրանք դեպի մեզ էր արձակում այնքան անխնա, որ աչքերիցս արցունք եկավ գեղեցկությունից և ինքնախղճահարությունից:

Ծիածանի վրա կրակելը ես հորինեցի, երբ մենք գլխահակ, հոգնած ու թրջված քայլում էինք ճանապարհով և ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, թե ինչ է կատարվում երկնքում: Ծիածանի գլուխ չունեինք, ասենք՝ ոչ ոք փամփուշտը չէր էլ ծախսի անիմաստ գործի համար. դա ոչ ոքի մտքով... Նորմալ, բանական մտքով չէր անցնի: Բայց ես տեսա, և հոգիս քաղցր նվաճ, և ես պատկերացրի, թե տղաներն ինչպես են տասնյակ փողերը երկինք ուղղում և սկսում են գնդակի տարափ տեղալ մարդկային ճակատագրի վրա: Սքանչելի բան է: Աշխարհի յոթ բաղկացուցիչները ճկվել են մի քանի գինված մարդկանց վրա, մարդիկ համաձայն չեն, որ բնությունը հավերժական է, և աշխարհի բաժանումը յոթ տարրի ոչ թե վերջնական քայքայում է, այլ սոսկ ժամանակավոր և գեղեցկության նպատակ ունի, իսկ նրանք՝ մարդիկ, կբաժանվեն վերջնականապես, և բնությունն այդպես լկտիաբար, անամոթաբար ցուցադրում է իր հզորությունը և անտարբերությունը նրանց հանդեպ:

Եվ մարդիկ չեն կարողանում հորինել ավելի լավ բան, քան իրենց անու-
ժությունը հաստատել մոծակի խայթոցով»:

Ծովն անլուելի շշուկով մարդու ականջին վաղուց արդեն անհասկանալի
ինչ-որ բան էր ասում, և մենք Ադգուր Ա.-ի հետ սահում էինք այդ ձայնի
մակերևույթով: Մենք, ինչպես և ես՝ մարդս ականջի անհասկացողության
վերաբերյալ մերձակա արտահայտությունն անելիս, գերին էինք անհաշիվ
անգամ խոսված, խունացած, նախնական փայլը կորցրած մտքերի: Մենք
խոսում էինք հայրենիքի մասին: Գուցե Ադգուր Ա.-ի համար ամեն բան
տաք ու վառվռում էր: Հաստատ այդպես էր. նա ասում էր ուրիշի խոսքեր,
բայց դրանք դուրս էին հորդում սեփականի՝ իր իսկ տառապանքով ձեռք
բերածի նման: Ես մի քիչ հոգնել էի այդ ամենից, և քանի որ «Ամրայում»
էինք, գերադասում էի ծովի աղմուկն ու սարերի լռությունը: Ադգուր Ա.-ի
համար ծովը և լեռները խորհրդանշում էին մեր ոգու երկու բաղադրիչնե-
րը՝ փոփոխականությունն ու ամրությունը:

Ափսնին միաժամանակ և՛ ծովափնյա, և՛ լեռնային երկիր է: Նրան ծո-
վով մոտեցողի համար նա հստակ լեռնային է. լեռներն ավելի ու ավելի
են վեր բարձրանում հորիզոնի աղեղի հետևից, և ծովափին նա գրեթե
հայտնվում է նրանց ստորոտին: Լեռներն սկսվում են հենց ծովից և կտ-
րուկ թափով վեր խոյանում: Բայց երբ այդ անդադրում ճանապարհորդը
խորանա, ավելի ճիշտ՝ բարձրանա մեր երկիր, այնտեղից կտեսնի լուկ ծո-
վը, նրա հեզ հարթությունը: Մեր մեջ ճիշտ այդ ձևով միավորվել է երկու
անհաշտ տարերք, և այդպիսի միավորման հարստությունը, բազմերան-
գությունը մենք հաճախ չենք հանդուրժում, դրանք ստեղծում են հոգեկան
ուժերի ուժեղագույն լարում, ինչը ելք է գտնում հուսահատ ինքնակործան
արարքների ձևով: Իսկ մեր երկրի գեղեցկությունը նույն ինքը հարուստ
բազմագույն միավորումն է, և դա միշտ էլ գրավել է օտար թշնամական
աչքերի նայվածքը: Աբխազի ամբողջ կյանքն անցել է թշնամական այդ
աչքերի տեր օտարերկրացիների դեմ պայքարում, իսկ երբ այդ աչքերը
վերադարձել են իրենց սովորական, ծանծրալի, գորշ բնապատկերին, աբ-
խազն արդեն ինքն իր հետ է պայքարել: Նրա ներսի ամենալավը ծախսվել
է օտարերկրյա գիշատիչ աչքերին հակահարված տալու նպատակին, իսկ
ճղճիմը, նախանձը, չարությունն առժամանակ հոգու հատակն են իջել, որ-

պեսզի մթազնեն վտանգի օրերին պարզված գիտակցությունը:

– Բայց այս պատերազմից հետո այլ կերպ կլինի,– շարունակում էր Ադգուր Ա.-ն:– Մենք չենք կարող սայթաքել նույն քարին դիպչելով: Այժմ արդեն մենք կկառուցենք մեր պետությունը: Մենք ազատ կլինենք:

Այդպիսի օրերին նա հաճախ համակվում էր ճամպուրկային տրամադրությամբ. նա ուզում էր մեկնել Աբխազիայից: Իսկ թե ուր, ինչու՝ ինքն էլ չգիտեր, բայց ամեն մի հանդիպմանը վճռաբար ասում էր. «Վիճակը զգված է: Ես մոտ օրերս մեկնում եմ»: «Մոտ օրերը» հաջորդում էին միմյանց, բայց Ադգուր Ա.-ն նույն կերպ քարշ էր գալիս Սուխումում կամ օրերով նստում էր «Ամրայում»: Բնավ զբաղված չլինելով,– ոչ մի տեղ չէր աշխատում, թողել էր հրատարակչությունը՝ «հեռու պետք է մնալ իրենց անտաղանդ, հաստափոր գրքերով մտահոգված անկարներից», իրեն դասում էր ազատ գեղագետների շարքը,– երբեմն կատաղի եռանդ էր դրսևորում: Նրան կարելի էր տեսնել Սուխումի, նաև Աբխազիայի, ամենաանսպասելի վայրերում, ամենաանսպասելի մարդկանց ընկերակցությամբ, սկսած համալսարանի պրոֆեսորից և վերջացրած նախկին քրեականով: Եվ ամենուր նա միջինից ոչ ցածր «քաշ» ուներ. և պրոֆեսորն էր նրան հարգանքով լսում, և քրեականն էր իր յուրայինը համարում:

– Հայրենիքը նախ և առաջ մամլիչ է,– ասում էր նա:– Հայրենիքը մայր չէ, այլ խորթ մայր՝ այնքան շատ բան է պահանջում մեզնից: Լավ, է... Ես ազատություն եմ ուզում, դրա համար էլ մեկնում եմ. հենց այս մի քանի օրը:

Ադգուր Ա.-ն ամեն բան դնում էր երկաթե տրամաբանության սառը, փայլուն ռելսերի վրա, և ամեն բան լավ էր ստացվում, կոկ ու անթերի: Նա հանգում էր այնպիսի անհեթեթության, թե համընդհանուր շահի համար հայրենիքը ոչ թե սիրել է պետք, այլ ատել:

Ես հիմա արդեն չեմ հիշում, թե իր հրեշավոր տրամաբանության ինչ գալարներով էր նա հասել այդ հակասությանը, բայց այն ժամանակ դա միանգամայն համոզիչ էր հնչում:

Ադգուր Ա.-ն մշտապես հագնվում էր ոչ այնպես, ինչպես ամենքը: Կարծես թե հագածը նույնն էր, ինչ մյուսներինը, բայց նրա հագին ամեն բան յուրահատուկ էր դիտվում՝ տոհմիկ կնիքով: Զինսը ջինս է, իսկ երբ ուշադիր նայեիր, կտեսներիր, որ մաշվածքն ուրիշ է՝ մարդու մարմնի հա-

մար չնախատեսված տեղերում, և դա գեղեցիկ է, և ֆիրման էլ այն չէ, որի անունն ամենուրեք և լկտիորեն աչք է ծակում. նորաձև նախշ ունեցող վերնաշապիկը նրա վրա գերազանց է նստում. և կոշիկները...– մի խոսքով ուրիշներին չնմանվելը փոխանցվում էր նրա հագուստին: Իր մատն էլ էր դրան խառը: Խնամքով էր իր «փալաս-փուլուն» ընտրում, ինչը ոչ պակաս խնամքով թաքցվում էր ծանոթներից, աբխազական հասկացությամբ տղամարդուն հարիր չէ ավելորդ ուշադրությունն իր անձի, առավել ևս՝ իր հագուստի հանդեպ: Իր այդ «արատը» Ադգուր Ա.-ն կոծկում էր դիտավորյալ թափափվածությամբ, անփութությամբ. մեկ վերնաշապիկն է մի թեթև, գրեթե դիտավորյալ ճմրթած, մեկ կոշիկներն են կեղծավորաբար փոշով պատած, մեկ թիկնոցի թևքն է փոքր-ինչ ձևված, և նա որոշ ժամանակ, ասես չնկատելով, քայլում է՝ պչրանքով թափ տալով դուրս թափված թելերը... Բայց դա չէր կարող թողարկել նրա հագուկապի թանկությունն ու բժախնդիր ընտրությունը:

Չնայած որոշ դատողությունների լկտիությանը՝ Ադգուր Ա.-ն օրինավոր տղա էր և մեր սովորոյթներին հետևում էր անշեղորեն, նույնիսկ որոշ հիմարավուն համառությամբ:

Մեր բոլոր սովորոյթներն ինչ-որ կերպ կապված են կամ հոգեհացի, կամ հարսանիքի, կամ խնջոյքի հետ: Ադգուր Ա.-ն նախանձելի ամբողջականությամբ գիտեր, թե այդ ամենն ինչով է ուղեկցվում: Որոշ ծերունիներ, տարիների հեռվում մոռացած լինելով ինչ-որ բաներ, հետաքրքրությամբ գլուխներն էին բարձրացնում, երբ նա լույս աշխարհ էր բերում մի ինչ-որ հինավուրց բան՝ լիներ խոսք, կենաց կամ որևէ ծես: Հարսանիքներում նա հաճախ ազապ կամ հարսնեղբայր էր լինում. սա պատվավոր ու պատասխանատու բան է: Անգիր պետք է իմանալ ամբողջ բարդ և ծանծրալի արարողակարգը, կենացների խիստ հաջորդականությունը, որովհետև շուրջը տասնյակ և ոչ միշտ բարյացակամ ականջներ են, փոքրագույն թերացումն անգամ մի ականթարթում կարժեզրկի առաքելությունը: Պետք է կարողանաս արժանապատվորեն խմել և չհարբել: Պետք է իմանաս հարգանքով լսել մեծերին, նրանց ընդգծված հարգանքով պատասխանել և, վերջապես, պետք է խոսել կարողանաս, իսկ դա ամենադժվարն է: Տասնյակ ականջներ կան, և տրորված ճանապարհն ու ծանծրալի դարձվածքը ոչ ոք չի ների, վառ, հիշվող խոսք է պետք միայն: Բազմաթիվ են հարսի ու

փեսայի հարազատները, և նրանցից գլխավորներին պետք է բնութագրել հակիրճ և ճշգրիտ՝ նկարագրելով նրանց կյանքի ուղին: Չի կարելի մոռանալ նաև նրանց հզոր տոհմի կրտսեր ճյուղը, առանց ընտանեվար գիշողամտության պետք է նրան կանխատեսել հայրերի գործի արժանապատիվ շարունակություն: Եվ շերտընդմեջ հիշել փառապանծ նախնիներին: Ահա այսպիսի կծիկ էր հաջողությամբ քանդում Ադգուր Ա.-ն:

Գործով լինելով ավանդույթի այսպիսի հետևորդ ու հպատակ՝ Ադգուր Ա.-ն խոսքով այդ ամենը ծաղրում էր ամենաանխնա կերպով: Մեր սովորույթները նա անվանում էր ժամանակի հոգնեցուցիչ և անմիտ վատնում: Հարսանիքից ու հոգեհացից չես հրաժարվի, բայց դրանց շքեղությունից ու թափից պետք է թողնել գրեթե ասկետիկ հենքը՝ լոկ այն, ինչը դեռևս շնչում է թարմ ու անբռնազբոսիկ զգացմունքով: Բայց նույն Ադգուր Ա.-ին կարելի էր տեսնել հեռավոր, ավելի հեռու չի էլ լինում, ազգական մի ծերունու հուղարկավորությամբ, լեռնային ամայացած մի գյուղակում՝ անսփոփ վշտի մեջ թաղված: Նույնիսկ նրանք, ովքեր դա ձևականություն էին համարում, հաճելիորեն զարմանում էին, իսկ ազգային «մտախախտում» ունեցողներն ասում էին. «Ա՛յ թե ամուր է մեր հիմքը, թվում է, թե ժխտողաբար է տրամադրված, բայց՝ խնդրեմ»: Զարմանալի չէ, որ հարգել է հանգուցյալի հիշատակը. զարմանալին այլ բան է՝ ազգակցական այդպիսի հեռավոր ճյուղավորման համար կարելի է նաև նեղություն չկրել: Բայց այս թվացյալ մանրուքն է պարունակում սովորույթի ամբողջ աղը, նրա կենսունակությունը: Դեռ քո հայրն է լքել գյուղը, հիմնվել քաղաքում: Այժմ ընդունված չէ վշտի բանքեր ուղարկել, ամեն բան իմացվում է թերթից կամ հեռուստացույցից: Եվ ահա նախկին հայրենի գյուղում մեկը մահացել է. ազգական չէ, ոչ էլ հարևան, բայց նույն գյուղից է: Սովորույթը միանշանակ պահանջում է սգալ հանգուցյալի մահը: Երբ իմացել ես նրա մահվան լուրը, քո մեջ ոչինչ չի շարժվել, առանց այդ էլ մինչև կոկորդ խրված ես գործի մեջ, շեղվելու ժամանակ չկա: Բայց ինչ կասեն նրանք, ովքեր գիտեն, որ դու այդ գյուղից ես, քեզ համերկրացի են համարում: Դու թողնում ես բոլոր գործերդ ու գնում: Կարելի է, իհարկե, չգնալ, պարզապես խույս տալ: Ադգուր Ա.-ն երբեք չէր խույս տալիս, նա մեր սովորույթների նման շիտակ մարդ էր:

- Մեր՝ արխագներիս ամբողջ ուժը գնացել է կամ ազահ ու արյունարբու

թշնամուն դիմագրավելուն, կամ էլ անվերջանալի խնջույքների ու հոգեհացի վրա: Ահա այն արատավոր շրջանը, որի սահմանում հնուց ի վեր գոյություն է ունեցել ժողովուրդը՝ պատերազմ, հոգեհաց, խնջույք: Սա է մեր խաչը, մեր ճակատագիրը,– սովորաբար այսպես էր սկսում Ադգուր Ա.-ն:

- Իսկ էլ ի՞նչ կարող էինք անել,– ծայնակցում էի ես, և սկսվում էր մեր խաղը:– Ամեն անգամ ինչ-որ մեկն աչք է դրել մեր հողին, և արխազն աչք չի փակել ոչ ցերեկը, ոչ գիշերը, հանգիստ կյանք չի ունեցել, միշտ պետք էր պատրաստ լինել, միշտ՝ զգույշ: Եվ երբ դադար էր լինում, նա զվարճանում էր երկարատև խնջույքներում:

- Որկրամոլություն է դա, զուտ գեղեցիկ ու վերամբարձ շրջանակի մեջ առնված որկրամոլություն:

Ադգուր Ա.-ն ինչպես միշտ կատակում էր, և նրա խոսքում ոչ մի սեփական, սրտից բխած բան չկար, ընդամենը, ինչպես ինքն էր անվանում, մտավոր կուլքիտ էր: Բայց խոսակցության մի կրիտիկական խորացման պահի մենք խաղը մոռանում էինք, դիմակները դաջվում էին մեր դեմքերին, ստանձնած դերերը լրջորեն մահ էին տենչում:

- Իսկ դու շարունակում ես առասպելների հավատալ, – շինծու ափսոսանքով շարունակում էր Ադգուր Ա.-ն:– Չէ՛ որ առասպելը սուտ է, մարդիկ տեսնում են իրենց անկատարությունը, անպետքությունը, իրենց գոյության չարդարացվածությունը և հորինում գեղեցիկ մի երազանք՝ ուրիշի ամբողջական և անհրաժեշտ կյանքը: Ժամանակ է անցնում, նույնպիսի անպետք ու թերարժեք նոր սերունդները փոխարինում են նրանց, և մենք արդեն ասում ենք՝ «Փառապանծ նախնիները»: Մենք դատում ենք ժողովրդի երևակայությամբ ծեփված մի քանի հերոսներով: Նրանք չեն եղել և չէին կարող լինել: Մարդիկ չեն փոխվում, նրանք սոսկ նոր բառեր են հորինում:

- Դու հիմար բան ես ասում: Դու չափազանցնում ես, դիտավորյալ ամեն ինչ հանգեցնում ես մեր ժողովրդի կյանքի կենցաղային, առօրեական կողմին, կարծես թե դա է ամբողջ էությունը: Սովորույթը քեզ համար ընդամենը ծիսակատարություն է, իսկ թե ինչ է կանգնած նրա հետևում, նրա իմաստը, նպատակը դու չես նկատում:

- Հավատա ինձ, ոչ մի բան չի կանգնած: Քեզ նմանները, ովքեր մտավոր մարմաջ ունեն և ամեն ինչի մեջ հատուկ իմաստ են փնտրում, պարզապես մոռացել են սեփական աչքերով տեսնել: Մարդուն անհրաժեշտ

է ազնվացնել իր կենդանական էությունը, և նա սովորել է գեղեցիկ ճարպակալել: Նայիր մեր հարսանիքներին, մեր հոգեհացերին: Կողքը դիակն է նեխում, իսկ մենք լափում ու խմում ենք: Եվ մեր միջի այդ ստորը դու ուզում ես կտրել-զատել, ասես նա ոչ մի կերպ չի ազդում մեր վեհի վրա: Ոչ, բարեկամս, ստորն ու վեհը, ինչպես ասում են, անքակտելի թելերով են կապված: Իմ կարծիքով վեհ բան ընդհանրապես չկա:

- Ինչպե՞ս չկա: Իսկ հերոսությունը, ինքնազոհությունը, ազնվությունն ու մեծահոգությունը:

- Դատարկ բան է: Ամեն ինչ բանահյուսությունից է վերցրած: Սովորույթը ոչ մի ոգի էլ չի պարունակում, մարդիկ այն հորինել են, որպեսզի հանդուրժեն միմյանց: Իսկ դու նրանց՝ այդ խեղճերի վրա ես գցում այդպիսի ծանրածանր մի բեռ՝ ոգին:

«**Մ**ենք զառիվերով բարձրանում էինք, երբ հանկարծ գագաթին ճարճատեց գնդացիրը: Նրա հիստերիկ, ռիսակալ հաչոցը բուրբիս ստիպեց գետնին նետվել: Պառկած ենք, չենք շարժվում, մի կողմ թեքվելու ամեն մի սանտիմետրը կարող է կյանք արժենալ: Գնդակները սուլում են: Մեզանից ոմանք «բռնել» են դրանք. հառաչանք ու ճիչ է լսվում: Ես մի ծանծաղ խռոչում հայտնվեցի. այստեղ կարծես փոքրինչ անվտանգ է: Վիրավորվեցին աջ և ահյակի հարևաններս, իսկ ես առայժմ դիմանում եմ: Հանկարծ մեկը թափով հրեց կողս՝ ուզենալով տեղից հանել ինձ: Նայեցի՝ դեռևս մի տղեկ է, երեսին կաթիլ արյուն չկա, չռած աչքեր ունի, հրում է ինձ: Ինչ անեի՝ մի կողմ քաշվեցի, գիջեցի: Եվ այդ պահին գնդակը նրան կպավ, նա զարմացած ճչաց, գլուխը հետ գցեց, ցնցվեց ու մեռավ: Ակնթարթ առաջ այն տեղում, որտեղ հիմա իր գլուխն էր, իմն էր գտնվում: Մի քիչ երկար որ մնայի, գնդակն ինձ կկաչեր, թե՛ կողքով կանցներ: Չե՛ որ այն հաստատ արձակվել էր այն բանից հետո, երբ նա պառկեց իմ տեղը, չնայած դա ինչ է փոխում, եթե գնդակն արդեն թռչում էր: Երկու դեպքում էլ եղածն աներևակայելի միահյուսում էր: Մենք տեղաշարժվեցինք, գնդացրորդը տեղաշարժվեց, ստեղծվեց փոքր տեղաշարժերի աներևակայելի մի հյուսվածք, և գնդակը, թռչելով անխուսափելի հետագծով, կպավ ձախորդ տղայի գլխին:

Ճակատագիրը հետին խելքով ամուր բան է. երբ եղածը եղած է, և ոչ մի բան չես փոխի, հեշտից հեշտ է հաշվարկել ավարտը, նախադանը տեսնել նման ավարտի նշանը»:

Նրա կյանքն անցյալից էր գործած՝ հեռացած, անհետացած, անդարձ անցյալից: Գրադարանում էլ էր նա անցյալով զբաղված: Նա վերցնում էր պատահական մի գիրք և բացում վերջին էջը, որտեղ մեկնաբանություններն ու ծանոթագրություններն են, և կարդում էր այդ գրքում հայտնվելու պատվին արժանացած տարբեր մարդկանց կյանքի ու գործի հակիրճ տվյալները:

Չնայած ասում են, որ կյանքի միջին տևողությունը նախկինում շատ ավելի փոքր է եղել, քան այժմ, նախորդ սերնդից շատերն, այնուամենայնիվ, փառքի ու պատվի լուսապսակով ապրում էին մինչև զառամյալ տարիքը, հատկապես մարշալներն ու գեներալները՝ չնայած իրենց մահաբեր մասնագիտությանը: Նրանք, կառչելով կյանքին, իսկապես որ բուլդոզի բռնելաձև էին ցուցաբերում: Բեսլանը պատկերացնում էր այդպիսի քաջարի գեներալի, ով շփոթում էր անուններն ու իրադարձությունները, իսկ մի ժամանակ առանց որևէ կասկածի նշույլի, ոչ մի անգամ չչարժեցվելով վճռական հոնքը, մահվան էր ուղարկում իր զինվորներին և այժմ պարծենում է դրանով: Պարծենում է ջախջախումով ու հաղթանակով, սեփական կենդանի ուժի և տեխնիկայի նվազագույն կորստով ու թշնամուն հասցրած վիթխարի վսասով, ինչը և կանխորոշել է ճակատամարտի ելքը: Բայց նա նախանձում էր այդ կիսակույր և տակն անող սուղաֆոնին, ում մարմինն ամբողջովին սպիապատ էր: Նրա անարժան (իսկ գուցե արժանավոր, ո՞վ գիտե) կյանքը պարփակված էր մի քանի ժլատ խոսքով, նա պատմություն էր մտել, դարձել դրա պատիվը, իսկ Բեսլանը կարող էր անանուն չքվել, ապագան ոչ մի անեղծ բառ չէր խոստանում նրան: Նույնիսկ ինչ-որ մեկի աշխատության ծանոթագրության մեջ նրա համար ոչ թե մի թաքուն տեղ, այլ ակնարկ անգամ չկար: Բայց ակնարկ չկար նաև այն բանի, որ նա կարող է տիրապետել իր կյանքը, ինչպես այդ քաջարի զինվորն էր տիրապետել իրենը: Վստահաբար, նա ամեն գիշեր անկողին էր մտնում կատարած պարտքի գիտակցությամբ և քնում էր անվրդով, նորածնի նման: Առավոտյան աշխույժ վեր էր կենում, որպեսզի գոյության պայքարի նետ-

վի և կատարի իր բարձր պարտականությունները: (Իսկ Բեսլանի համար ամեն առավոտը նորից նոր ծնվելու պես էր): Եվ ահա իր պարգևը՝ այս մի քանի տողը:

«**Ձ**մեռն անցավ: Ես դեռ ողջ եմ, ինչը զարմացնում է ինձ: Իսկ թե հաճելի է դա, թե ոչ՝ չեմ կարող ասել: Ավելի ճիշտ՝ չէի կարողանում մինչև ծաղկից հոտ քաշելս: Բաց-մանուշակագույն մի պստիկ բան էր, ի տարբերություն փարթամ, ընտանիացած եղբայրակիցների՝ փխրուն: Վայրի ծաղիկ էր և կյանքի պայքար էր մղում վայրի անտառում: Նրա ամեն ինչն էր փոքր, հատկապես բույրը: Միայն կիպ մոտեցնելով քթիս, գրեթե ռունգս խցկելով կարողանում էի զգալ նրա իրանում թաքնված բույրը: Ես հիշում էի հեռավոր, ինձ հետ կամ ոչ ինձ հետ պատահած երջանկությունը: Ես զգացի մի ուրախություն, որն ինձ թվում է այնտեղ չէր, ուր շարտել էր ինձ այդ բույրը: Այն օրվա վերհուշը, երբ ես առաջին անգամ առա ծաղկի բույրը, վաղուց անցածը ներկա էր դարձնում, ասես խաղաղության արբեցնող հոտն ըմբռնանելու երջանկությունը ես այս բոլոր տարիներին ինձ հետ էի տանում, մոռացել էի, և ծաղիկը հիշեցրեց:

Ծաղիկը պոկվեց, դրան ավելացավ իմ ռունգների «հարձակումը», և նա աչքիս առաջ սկսեց խունանալ: Հյութագրկվեց, շունչը կտրվեց, և պարզամտորեն բացված թերթերի վեցնյակը, սփռելով իր բուրմունքը, թռչնեց:

Ծաղիկը մեռավ:

Ես երկար էի հիշում նրա թափանցող բույրը, որը գուցեև առել է մայրս, երբ կրծքի տակ ինձ էր կրում, և որն արդեն այն ժամանակ ինձ էլ է հասել, դրա համար էլ ես այժմ նրան հիշում եմ կորուսյալ դրախտի նման: Ձմեռն անցավ, ես դեռ ողջ եմ: Մինչև ծաղիկը տեսնելս մտքովս չէր անցել, թե դա հաճելի է, թե ոչ: Բայց ահա ծաղկից հետո ինձ սոսկալի հաճելի թվաց մաիը»:

Նստած եմ գրադարանում՝ մի կողմ թողած սեփական կյանքս և զբաղվելով ուրիշի կյանքով: Ես սովորում եմ, թե իմ գործով ու ճակատագրով ինչպես դառնամ Ադգուր Ա., նրա շարունակությունը: Բայց երբեմն միտքս

կարդացած գրքից թռչում է դեպի հարևան ծերունին: Նա իր առջև շարել է «Պրավդայի» տրցակները, քթին դրել հաստ, նորմալ աչքի համար անհեթեթ ու տարօրինակ կերպով աշխարհին աղճատող ապակիներով ակնոցը և բարակ, անարյուն շրթունքներն անշշուկ շարժելով, համարձակ նավում է կուսակցական հրամանագրերի և որոշումների հարազատ ալիքների միջով: Երբեմն հանում է ակնոցը, թաշկինակով սրբում լարվածությունից արցունքակալած աչքերը, հետո նրանց վաստակած հանգիստ տալով որոշ ժամանակ նայում է առաստաղին, և ես վիզս կկտրեմ, բայց նայում է երազանքով: Թե՛ դա ինձ է թվում: Գուցե նա ուղղակի հոգնե՛լ է: Սովորաբար մարդը երազում է, երբ կյանքից հոգնում է, երբ նա ուժ ունի՝ վճռական է ու կոպիտ: Ծերուկն իսկապես հոգնե՛լ է: Ուրեմն՝ նա մի ինչ-որ անհասանելի բան է երազում:

Շատ բան կտայի, որպեսզի մի պահ վերաբնակվե՛ի նրա մեջ, դառնայի նա, նրա զառամյալ մարմինը, զառամյալ հոգին դառնայի: Չե՛ որ ես ևս, եթե բախտս բերի, չեմ խուսափի այդ համատարած զառամախտից: Եթե բախտ ունենամ, ապա այս ծերուկի նման լիովին կհասունանամ մահվան համար: Որքան ավելի թույլ լինեն նրա ծնկները, որքան անհաստատ՝ քայլվածքը, այնքան արագ նա դեպի վերջ կգնա, ուղղակի կվազի, կվազի աշխույժ, գլխապատառ: Նա արագացնում է քայլքն անդունդ նետված քարի նման: Երևի կա նաև մահվան ձգողականության համաշխարհային օրենք:

Գրադարանից դուրս գալիս ծերունին խոսեց ինձ հետ: Ես վաղուց էի այդ սպասում, չէ որ ծերերը մարդամոտ ժողովուրդ են, միայն թե ուզածի չափ խոսեն: Նրանք կարող են նույն բանը տարիներով կրկնել, եթե հիշեցնես՝ մեղավոր կերպով ծերունական մոռացկոտությունը կվկայակոչեն, բայց հավատալ չարժե, խորամանկում են: Նրանք մոռացկոտ չեն այնքան, որքան ընդունված է համարել կամ իրենք են հարկ եղած դեպքում ասում: Նրանք ուղղակի իրենց կյանքից գլուխ չեն հանել և ժամանակ առ ժամանակ վերադառնում են նրա՝ իրենց կարծիքով գլխավոր իրադարձություններին: Չնայած մշտական տաղտկալի վերապատմելուց որևէ բան չի փոխվի: Այդ բառաժայթքումից հետո ծերուկները փոքր-ինչ հանգստանում են, աչքի առաջ բթանում: Հետո նրանք կամաց-կամաց ուժ են առնում, իրենց մեջ հիշողություն կուտակում, որպեսզի լիցքաթափվեն առաջին իսկ ազատ ականջը գտնելու դեպքում:

Պարզվեց՝ ծերուկը նաև խլավուն է: Ձարմանալի չէ, չնայած իմ արտահայտության մեջ լսվում է զարմանքի նրբերանգը, ըստ որի պարտադիր չէ, որ ծերերը ծանր լսեն: Ծերը նրա համար է ծեր, որպեսզի մահից առաջ իրեն իրականությունից կտրող ավելի շատ արատ ունենա: Այս աշխարհի հնչյուններից, բույրերից, գույներից աստիճանաբար զրկվելուն զուգընթաց նա այլ աշխարհի հետ է հաղորդակցվում: Սակայն թույլ լսողությունը մի դրական հատկանիշ ունի՝ հարկադրում է ավելի մերձ լինել զրուցակցին, որպեսզի հասկանա, թե նա այդպիսի հիացմունքով ինչ է բլբլացնում: Մեկ էլ տեսար խլավուն մարդկությունը, իրար լսելու ձգտումով, մի միասնական ամբողջություն դարձավ: Ահա և եղբայրություն-հավասարությունը:

Վերը նշված պատճառով ծերուկն այնքան մոտ կանգնեց ինձ, որ ես հոգուս ու մարմնիս բոլոր ծակոտիներով զգում էի նրա զառամյալությունը, զգում էի, թե վիրավորանքի ինչ աստիճանի էր նրան խժռել կյանքը: Եվ նրանից աննկարագրելի հոտ էր փչում՝ քայքայման և քրտնքի հոտերը մեջընդմեջ: Նա քրտնել էր լարումից, որպեսզի գոնե մի քիչ պահի իր միջով կատաղորեն վազող ժամանակը: Այդ ճիգից ժամանակը քրտնքի կաթիլների ձևով պատում էր նրա մարմինը:

Ծերուկն իր մաշկով թորում էր ժամանակը: (Եթե որևէ մեկը սա անճաշակություն համարի, ապա ես թքած ունենամ այդ կեղծ բարեպաշտի ճաշակի վրա, բարեպաշտ, որը «միջին մեծություն» է, միշտ ոտքի մատների ծայրերին քայլող վայելչության ծառա և նման այլանդակության գերի: Պատերազմի պես կղկղանքը կուշտ լափելուց հետո կարիք չկա քիթը կյանքից մի կողմ շրջել: Իմ ամեն մի բառը մերժում և բողոք է ամեն մի կարծրացած և անմտորեն հավատալով ընդունած բանի դեմ: Բայց իմ ամենաչար թշնամին գրականությունն է, կամ այն, ինչ հասկացվում է այդ ասելով: Ամեն մի հարմար, բարեհույս, բարեհնչյուն և վախվորած բան, որը սովորաբար «լավ ճաշակ» է անվանվում, սրտխառնուքի չափ նողկանք է պատճառում ինձ):

Նրա ոսկորների վրա ուղղակի գցած էր խորշոմապատ մաշկը, որի վրա առատորեն սփռված էին բոլոր նրբերանգների գորտնուկավոր քաշալ խալեր, գունատ-շագանակագույն բծեր: Երեք մատի ինչ հզոր կոմբինացիա կստանան սպասողական վիճակում հայտնված որդերը: Բռնազավթված Սուլխումում անցկացրած մեկ տարին նրանից խլեց մի երկու

տասնյակ կիլոգրամ քաշ, և այժմ նա գոյությունը պաշտպանում էր Կարմիր Խաչի ամեն օր տրվող անհամ վոփկի շնորհիվ: Ես մի անգամ նրա գրպանը խցկեցի մի քանի հատ հազարանոց, բայց նա հետո մի ամբողջ ամիս ամեն հանդիպման ժամանակ շնորհակալություն էր հայտնում ինձ: Ես ամաչում էի. նրանից գլուխս ազատելու համար հույժ շտապողի տեսք էի առնում, բայց նա երկար ժամանակ բաց չէր թողնում ձեռքս՝ բռնելով այն իր երախտապարտ և քրտնոտ ձեռքով:

Բայց դա հետո եղավ, իսկ այժմ նա հեռվից սկսեց ընդհանուր հարցերով՝ հող տնտղելով. ինչ է ազգանունս, անունս, ինչով եմ զբաղվում, այսինչ այնինչի կամ այնինչ այսինչի ազգականը չեմ արդյոք... Ես, ինչպես և վայել է երիտասարդ արխագին, հակիրճ և հարգանքով էի պատասխանում և այլ բան էի մտածում. Նաթելայի անընդգրկելի և հարթ հետույքը, որի ձյունաճերմակ առածգականությունը, այրվելով կրքից, մի կուշտ կպաչպչեմ ու կկծոտեմ:

Ծերուկն ինձ բաց չէր թողնում, որպեսզի ցանկությունն ի կատար ածեմ: Եվ դա ոչ թե դիտավորություն էր, այլ իր շատախոսության հետևանք, որը բխում էր իր ծանծրալի և միայնակ կյանքից: Նա ինձ հեռացնում էր Նաթելայի աննկարագրելի հմայքը հայտնագործած Կոլումբոսի իմ դերը կատարելուց, հմայք, որից կշտանալ ինձ վիճակված չէր: Ծերուկը (նրան կոչում էին Միխայիլ Ստեպանովիչ, չնայած իսկական, հարազատ արխագական անունն էր Սաթբեյի որդի Մանչա: Այսպիսի աղավաղում֊փոխադրումը ռուսական ձևի սովորական բան էր: Պետք էր ստանդարտին համապատասխանել և «ավագ եղբորը» նեղություն չտալ վայրենի բնիկների անունների արտաբերմամբ) շրջահոս բառերով գնահատական տվեց երկրի և ժողովրդի դրությանը: «Ժողովուրդը» նա արտասանում էր մեծատառ՝ «Ժողովուրդ», իսկ «երկիրը», որքան էլ տարօրինակ լինի, փոքրատառ՝ «երկիր»: Բայց երբ այն փոխարինում էր, ոչ թե դիտավորյալ, այլ հանուն բազմազանության, «հայրենիքով», ապա անպայման մեծատառ՝ «Հայրենիք»: Հետո նա իշխանության «վրայով անցավ»՝ «ի»-ի փոխնիփոխ մեծությամբ. եթե նախկին իշխանությունն է, ապա «Ի», եթե ներկան՝ «ի», նույնիսկ ավելի փոքր...

«**Ք**անգի մեկ կյանքն անխուսափելի է, իսկ երկուսը՝ անհնար, ուստի ես գրում եմ»:

Ես իմ տարեդարձի օրը չեմ սիրում, կգերադասեի քնած անցկացնել այն: Առանձնապես ուրախանալու բան չկա. հոգիս ավելի շատ վշտահար է և գարշանք է զգում: Կուզենայի, որ ծննդյանս օրն աննկատ անցներ: Բայց մի՞թե մեզանում դա հնարավոր է:

Հազիվ էի հասցրել ծնվել, երբ ինձ սկսեցին տենդագին գրանցել հաստ ու բարակ մատյաններ, զանազան փաստաթղթեր և թղթեր, ասես վախենում էին, որ ես կարող եմ ծլկել հետ՝ մորս արգանդը, և գրանցումն ինձ պահելու միակ եղանակն էր: Ինձ թղթով ձևակերպեցին, խցկեցին մի տեքստ, որը գուցե ավելի նշանակալի է, քան «Պատերազմ և խաղաղությունը»:

Գրաճանաչ դառնալով՝ ես ինքս սկսեցի ոչ պակաս եռանդով լրացնել անհամար հարցաթերթիկները, որոնք իմ ձեռքն էր խցկում հոգատար հասարակությունը, և որտեղ պարտադիր նշվում էր այն հավերժական օրը, երբ ես արժանի դարձա կյանք մտնելու:

Առավոտյան տասի կողմերն աշխատանքի եմ գալիս, մեկ էլ տեսնեմ այդ տխմար կանայք իմ հոբելյանն են շնորհավորում՝ քսանհինգ տարին: Ահագին ջուր ծեծեցին, անհուսալիորեն փչացրին օրը. հետո գիրք նվիրեցին ինձ՝ դատելով ամեն ինչից՝ առաջին պատահաճը, որ եղել էր կրպակում. «Համաշխարհային անապատները»: Ի դեպ, հաստափոր գիրք էր՝ բազմերանգ ձևավորմամբ: Ես նույնպես որոշեցի ամոթով չմնալ. հաշվապահությունից ապագա աշխատավարձի հաշվին պարտքով փող վերցրի և նրանց ռեստորան տարա:

Քեֆ անելու ցանկություն ունեցա: Հոբելյանի երեկոյին ես սիրտս անհասկանալի ցնծությամբ լցնող գինու գոլորշու մշուշում հրաժեշտ տվեցի երիտասարդությանս: Աշխարհն անհաստատ, երերուն, մշուշապատ տեսնելն, ինչպես հներն էին ասում, իր հմայքն ունի: Մեր դմփաններից մեկին, որի աղոտ դիմագծերը (աշխարհը շուրջս լող էր տալիս) ես իմ գերակտիվ երևակայությամբ դարձրի արևելյան թխամաշկ գեղեցկուհի, նորահայտ Շեհերազադե՝ կաթնահամ մարմնով, վիրթարի հետույքով և իշամեղվի բարակ մեջքով, և որին խոստովանեցի տևական և թաքուն սերս՝ տանջա-

լից գիշերներով և անհագուրդ կրքով հանդերձ: «Միթե դու երբեք չես նկատել, թե ես սարքերի հետևից ինչպես եմ գաղտագողի բաղձալի հայացք գցում քեզ վրա»,– փսփսում էի ես նրա ականջին պարի ժամանակ: Նա չէր նկատել: Նրա ամեն ինչն իմ մեջ քնքշանքի այրող ալիք էր հարուցում, նույնիսկ այն, որ նա աջ աչքը հաճախակի ծածկող անհնազանդ խոպուպը ճակատից հետ էր փչում, էլ չասած նրա փոքրիկ ամուր կրծքերի հպումը:

Կարծեմ ես մյուսին նույնպես երկար և թաքուն սեր խոստովանեցի, սարքերի հետևից նայելը՝ ևս, բայց հաստատ չեմ հիշում:

Մենք ռեստորանից վերջինն էինք հեռանում, նույնիսկ հաստաքսակներից հետո, որոնք այսպիսի հիմնարկներում երկար են նստում՝ բուլդոզի դեմքներին խորհրդավորության քող քաշած: Երեք սեղան այն կողմ միջին երիտասարդական մի ընկերախումբ էր նստած բնածին ստահակի լկտի, անտաշ դեմքով վաթսուին մոտ մի երկայնաբաշ տղամարդու գլխավորությամբ: Ես այնքան էլ չէի աղմկում, բայց նրանց բավական մոտ լինելով նույնիսկ անվայելուչ բարձր էի խոսում: Նրանք հաճախ էին տարակուսած նայում ինձ: Ես այնքան լկտիացա,– խմիչքը պղտորել էր ուղեղս,– նրանց պատվին կենաց ասացի: Նրանք քաղաքավարությամբ շնորհակալություն հայտնեցին, բայց պատասխան կենաց այդպես էլ չասացին, այլ վեր կացան և հեռացան: Մեր սեղանի մոտով անցնելու ժամանակ երիտասարդներից մեկը,– սեղանի գլխավորը երեկոյի ընթացքում ոչ մի անգամ իմ կողմ չնայեց, ես նրա համար գոյություն չունեի,– լսելի ասաց. «Հայրենիքում էլ չես կարող կարգին հանգստանալ»: Ոչնչություն, մտածեցի, հայրենիքը քեզ համար լոկ հանգստավայր է, ինքդ երևի թե մոսկվաներում մի տեղ փող ես շինում, և ձայնեցի. «Հեյ, դուք...»: Գլխավորը նրանց ինչ-որ բան ասաց, նրանք չարձագանքեցին իմ կանչին, նույն բարեպատշաճ քայլով դուրս եկան և մատուցողուհիների և տնօրենի ստորաքարշ ուղեկցությամբ մոտեցան «Վոլգային», որը վրա հասած գիշերվա մեջ սպիտակին էր տալիս մուտքի մոտ: Նույն մատուցողուհիներն իրենց լկտի և կուշտ մոռոններից իսկույն ջնջեցին քծնանքը և քթի տակ դժգոհ փնթփնթալով մի քանի անգամ աղմուկով անցան մեր սեղանի մոտով՝ հասկացնելով, որ մեր կորչելու ժամանակն է:

Դմփաններս հաճելիորեն զարմացրին. մի քիչ խմեցին և նույնիսկ շատ ուրախ ու ազատ վարքագիծ դրսևորեցին:

Ես թունդ հարբած էի, շուրջս ամեն բան սուզվում էր մշուշի մեջ, փրկում էր միայն կատարվածի անիրական լինելու ընկալումը: Գլխիս մեջ հնչող անտանելի դժժոցի հետ ես անսովոր հոգեկան անդորր էի զգում:

Առավոտյան արթնացա ոչ թե խումհարային թմբիրով, ոչ. գիշերվա ընթացքում սթափվեցի, երեկվա հարբածության որևէ հետք չմնաց: Բայց այն զգացումը, որ անուղղելիորեն ինչ-որ սահման է խախտվել, ես ունեի: Եվ ամբողջ առավոտ սիրտս մղկտում էր: Սանձը բաց էր թողնված, և ժամանակը սուրում էր ամբողջ արագությամբ. ես քսանհինգ տարվա սահմանագիծը հատել էի:

Աշխատանքի եկա ուշացումով: Ինվար Թամշուգովիչը խիստ նայեց ինձ, դիտողություն արեց: Ես հազիվ զսպեցի ինձ: Դմփանները եռանդով սարքերն էին գործի զգում: Նրանք Ինվար Թամշուգովիչի ներկայությամբ հատկապես ջանադիր էին: Հանկարծ հայտնվեց Ադգուր Ա.-ն՝ դեմքին կենտրոնացածության և տագնապի իր սովորական արտահայտությունը, որն սկսում էր ինձ գրգռել: Երեկվանից հետո ես մոայլ էի, ամաչում էի աղջիկներին նայել: Ադգուր Ա.-ն հասկացավ, որ ես անտրամադիր եմ: Կարծեմ նա մտածեց, թե ես այնքան էլ ուրախ չեմ իրեն տեսնելուս, բայց ես մի առանձին ցանկություն չունեի նրան տարհամոզելու, պատմելու իմ դրաման, որն ապրում էի երիտասարդությունս անցնելու առիթով: (Դա միակ անգամն էր, որ ես թուլություն ապրեցի իմ տարիքի պատճառով: Թե ինչ եղավ ինձ, ինչո՞ւ հանկարծ սկսեցի նվաճվալ. նման դեպքերի սովորական պատասխանն է՝ ամեն բան պատահում է: Հետո՝ Նաթելային հանդիպելուց հետո, ես հասկացա, թե ինչի հետևանք էր իմ ընկճված դրությունը. ես սիրել էի ուզում, և սիրո կարոտն իմ մեջ արթնացրեց հենց այն թմբլիկը, որի ականջին ես անհեթեթություն էի շշնջում իմ թվացյալ տառապանքի մասին:

Մենք գրեթե խոսելու բան չունեինք: «Ամրա» գնացինք ավելի շուտ սովորության ուժով և գուցե այն գաղտնի հույսով, որ դեռևս հնարավոր է մի բան փրկել: Բայց այլևս ոչինչ փրկել հնարավոր չէր:

(Մեր բաժանումը նկարագրված է որպես պատահականություն, իբրև իմ վաղանցիկ տրամադրության արգասիք: Բայց այդպես չէ: Մարդիկ սովորաբար բաժանվում են առանց բուռն տեսարանի և հարաբերություն պարզելու, խաղաղ, երբեմն աչքերը փախցնելով միմյանցից: Մեզ ոչինչ

չէր կապում, բացի զանազան թեմաներով խելքին զոռ տալուց, իսկ դա չի կարող ընդմիջող շարունակվել, ժամանակի ընթացքում ձանձրալի է դառնում, բոլոր թեմաները վաղ թե ուշ իրենց վախճանին են հասնում, սկսում են կրկնվել, մի խոսքով, ամեն ինչ անհամանում է)։

«**Ս**ուերն էին ոմբակոծում։ Բլրի հետևից հանկարծակի հայտնվեցին՝ արծաթե փայլ տալով արևի տակ։ Երկինքը կապոյտ, կապոյտ էր, հատկապես գլխավերևում։ Երկնակամարի եզրերին կապույտը գունաթափվում է, չնայած կարծես թե նրա փեշերին՝ թեքության վրա, գույնը պետք է որ թանձրանա։ Հիմա հակառակն էր, խիտ էր միայն մեր գլխավերևում՝ ինչպես վիթխարի կաթսայի հատակին։

Լոռւթյուն էր, քնեած թմբիրով պարուրված՝ մենք ծուլորեն խոսքեր էինք փոխանակում՝ հասնելով անհնարին հակիրճության. ծայնարկությունից էինք միմյանց հասկանում։ Տեղավորվեցինք գետափի կիսակառույց տանը, որը գետնին՝ ներքնակ փռելով, որը փայտե տախտակամածների վրա... Ավելի ներքևում՝ գետի վրա, կախովի կամուրջ է գցած. զրահատեխնիկան չի կարող անցնել, միայն մարդատար մեքենաները։ Բայց մեր կողքը՝ մի քանի մետր հեռու, ծանծաղուտն է։ Հենց այդ ուղղությամբ էլ չկառավարվող հրթիռային արկեր արձակեցին, իսկ հետո չորս ումբ գցեցին։ Բլրի հետևից դուրս թռան այնքան հանկարծակի, որ ոչ ոք չհասցրեց ոչ հասկանալ, թե ինչ է կատարվում, ոչ էլ արձագանքել. եթե մեր տան վրա ումբ ընկներ, կամ նույնիսկ հրթիռային արկ, բոլորիս վերջը կտար։ Կամրջակը կտոր-կտոր էր եղել։

Երբ «օդ» կանչեցին, շատերը գետնին նետվեցին և գլուխները ձեռքերի մեջ առան։ Ձախորդի մեկը հանգած կրով լի հորը նետվեց, երբ դուրս էր գալիս՝ ծիծաղից մեռանք։

Պայթյունին սպասելիս վստահ ես, որ վտանգը կշրջանցի քեզ, բայց հոգիդ, այնուամենայնիվ, հանգիստ չէ. իսկ եթե չանցնի՞, հանկարծ ու կողքդ ընկնի, կամ ուղիղ վրադ։ Եվ դու պառկում ես առանց գլուխդ բարձրացնելու, իսկ մեջքիդ վրայով կատաղորեն վազվզող մրջյունների սառնությունն ես զգում, կարծես վրադ սառցաջուր են լցրել։ Այդ սպասման մեջ կա ամայության, լիակատար անջատման մի պահ։ Քո մեջ և քեզնից դուրս ոչինչ չկա, նույնիսկ վերահաս պայթյունը քեզ չի կպչում,

այն գոյություն չունի, ինչպես և շուրջը ոչ մի բան: Երանության պահ է՝ դու չկաս:

Բայց մեզ չէին ռմբակոծում, չնայած մինչև ծանծաղուտն ու կամուրջը մի քայլ է, և Սու-երի ճշգրտության վրա հույս դնել չարժեր. այս անգամ նրանք չորս ռումբն էլ գցեցին գետահունի երկայնքով՝ ընդգրկելով և՛ կամուրջը, և՛ ծանծաղուտը: Կամրջից միայն ճոպանները մնացին, ծանծաղուտն էլ վերացավ:

Ծուխ արձակող բեկորը շրմփաց կողքիս: Հետո ես այն ձեռքս առա: Դեռևս տաք, ծանր առարկան ափիս մեջ էր, քիչ-քիչ սառչում էր: Մինչ մենք ուշքի էինք գալիս, Սու-երն անցան բլրի հետևը, հռնդյունը՝ նրանց հետևից. այն մի պահ բարակ, երկար լարի ծայն արձակեց, և լուծություն տիրեց:

Օրը դանդաղ էր անցնում: Ամառն այդպես է՝ գիշերը հավի հորանջի չափ է տևում, իսկ ցերեկը եզան նման հազիվ է շարժվում: Ի դեպ, առանց այն էլ բոլորը գիտեն, որ ամռանը գիշերը շատ ավելի կարճ է, քան ցերեկը: Հայտնին հայտնի է, բայց ի՞նչ է խորհել այդ մասին, և ի՞նչ է դա զգացել թարմությամբ, առաջին անգամվա պես, երբ մարդու նախնադարյան ուղեղը խավարի գնդանից հանկարծ լուսավորվեց, որ ամռանը ցերեկը շատ ավելի երկար է գիշերվանից, որ ամռանը լույսը շատ-շատ է և երկարատև: Սա մանկության զարմանք ու հայտնագործություն էր:

Արևն անշտապ ավելի ու ավելի վերև էր մագլցում, հետո նույն կերպ անշտապ անցնելով միջօրեն՝ իջնում էր ծովի վրա: Գիշերն էր վրա հասնում: Ահա և վերջ... Կարծես թե պարզ բան է, բայց ի՞նչ է թաքնված այս ամենի հետևում: Եվ բոլորովին էլ տաղտկալի չէ, ես սխալվեցի: Ինձ այդպես էր թվում ցերեկը: Եվ ահա անբավականության մնացորդները հանկարծակիի բերեցին ինձ՝ հենց որ գրիչը ձեռքս առա: Գիշեր է, և անցած ցերեկն ինձ այդքան երկար չի թվում: Ընդհակառակը, այն ցավալիորեն կարճատև էր, ապրված լինելով՝ այն ինձ սքանչելի է թվում, անվերադարձ է, ուստի՛ն՝ սքանչելի: Գիշերն էլ, որը չնայած հավի հորանջի չափ է, այժմ ինձ երկարատև է թվում: Ես շտապում եմ, որ արևը ծագի, իսկ առավոտյան պիտի ափսոսամ անցած գիշերը:

Սու-երը թռան-գնացին, մենք մեզ թափ տվեցինք, վրդովվեցինք, մայր

հայիոյելու վարպետը հյութեղ մի հիշոց արձակեց նրանց հետևից:
Մենք զվարթացանք և հիշեցինք, որ ճաշի ժամ է...»:

Այն ամենը, ինչ որ ես գրում եմ, փորձ է գրավոր շարունակել Ադգուր Ա.-ին: Նա ինձ՝ իմ բանաձևերի և տեսությունների ծանծրալի բեռով (ընդունված է այդպես համարել, և այդպես էլ կա՝ բանաձևերն ու տեսությունները տաղտկալի են, որովհետև դրանք հորինված չեն, այլ արդեն իսկ պարունակվում են տիեզերքի նյութի մեջ, միայն թե որսալ է պետք: Գետից, լճակից կամ ծովից մի ձկնիկ որսալու համար մեծ խելք պետք չէ, ով էլ ասես կարթով կանի այդ գործը: Այլ հմտությամբ և այլ պիտույքներով տիեզերքի նյութից որսում են տեսություններ և բանաձևեր, և դա, հավաստիացնում եմ ձեզ, խիստ ծանծրալի զբաղմունք է՝ չնայած ճարպիկների ցկյանս և հետմահու փառքը), այդպիսի միջակ, ավելի ճիշտ տխուր ժառանգությամբ հաղորդակից դարձրեց գրական աշխատանքին: Իմ գրելաձևը նման է նրա ոճին. դա գրվածքի մեջ աշակերտական տարիների մանրակրկիտ ուշիմությամբ խորամուկս լինելու և գաղտնիքին վերահասու լինելու ոճն է: Ես նրան կարող եմ շարունակել՝ նրան ճանաչելով միայն:

Կյանքում ես նրան չըմբռնեցի: Նա գրեթե անծանոթի պես անցավ իմ կողքով: Իսկ նրանից մնացած տեքստերում նա ավելին էր, քան ինձ հետ շփվելիս, ավելին, քան գուցե էր կյանքում՝ նույնիսկ ամբողջ ասածի, խորհածի և զգացածի գումարով, բոլոր հարազատների ու ծանոթների գումարով, ովքեր գեթ մեկ անգամ տեսել են նրան, մտածել նրա մասին կամ հիշել նրան: Այս ամենի գումարով նա այնքան ակնհայտ և իսկական չէր և այնքան ինքը չէր, որքան գրածով:

Ես հաճախ վախենում էի, եթե չէի էլ վախենում՝ միջովս սարսուռ էր անցնում, թե ինչպես է հնարավոր այդպես մերկանալ և սեփական եսն ի ցույց դնել գրածի մեջ, ամեն մի արտահայտության մեջ, ամեն մի բառում և բառերի հարակցության մեջ: Ես գերադասում էի անանուն մնալ, անհայտ մնալ: Ես գերադասում էի կյանքով անցնել հնարավորինս աննկատ, նրա չնչին, սովորային ծայրամասով, նրա մթնշաղի ժամանակ: Ես անմահության ծարավի չէի՝ ոչ տպագիր, ոչ մարմնական, ոչ այլ: Իմ այս պահանջմունքը բավարարում էր ֆիզիկան, որտեղ իմ ջանքն աշխարհում ոչ մի բան չէր փոխում, այլ լույս ի հայտ էր բերում այն, որ աշխարհն իր մեջ

կրում էր,– մինչև ինձ, ինձնից հետո և առանց ինձ,– խաղի իր կանոնները:

Ադգուր Ա.-ն այլ բան էր պահանջում, որպեսզի ինքը հորիներ խաղի կանոններ, որպեսզի դրանց համեմատ ինքը ձևեր աշխարհը և որպեսզի այդ աշխարհը,– սա ամենաապշեցուցիչն է, եթե հաշվի առնենք, որ այդ կանոնները չնայած քո կողմից, բայց ավր հորինովի են,– մեկին մեկ քեզ է նման:

Այս ամենը գուցե այնքան էլ ապշեցուցիչ չէ, այնքան էլ անսպասելի չէ, եթե ենթադրենք, որ աշխարհը նույնպես այն զրոյական կետում է, որի խեղդող նեղվածքը ճեղքելով սկսել է թափ առնել, իր համար կանոններ է հնարել, այսինքն՝ իր ամբողջ ապագա երթուղին մինչև ամենավերջին ատոմը, մինչև ամենաաղքատիկ կիսակայարանը, որի մոտով նա, մտքովս անգամ չանցկացնելով կանգ առնել, կսուրա հողմի նման: Գրոտեց-գծագրեց և մինչև այժմ չշեղվելով, գնում է ընտրած երթուղով, և ամեն անգամ չի կարող չհամընկնել ինքն իր հետ՝ ժամանակի ինչ հատված էլ վերցնենք:

Նկատվել եմ ես արդյոք այդ երթուղում թե ոչ՝ դժվար հարց է, այս խնդրում բանաձևն ու տեսությունն անուժ են և ամոթխած լռում են: Բայց կասկածում եմ, և իմ կասկածանքը մասն է այն բանի, ինչ ես մի անգամ տեսա համալսարանի հանրակացարանում, երեկոյան, երբ կիսամութ, ցուրտը և մայրամուտը լուռ թախիժով պարուրում էին սիրտս,– մարտի վեցն էր, և այդ թիվն ընդմիշտ դաջվեց հիշողությանս մեջ,– որ ես էլ ինչ-որ չափով մտահղացվել եմ, իսկ ի հավելումս՝ աշխարհի կենտրոնացած և զգույշ ընթացքն իր հաստատուն մեծությամբ այն պատճառն ունի, որ ես անզգուշաբար դուրս չընկնեմ այդ երթուղուց՝ ինչպես անխելահաս թռչնի ձագն իր բնից:

Ես ավելի ու ավելի էի սառչում ֆիզիկայից, ամեն մի գիտական բանից: Ադգուր Ա.-ն ամեն օր ցուցադրում էր դեպի լեզուն, դեպի գիշերային արթնությունը միտվելու, գոյության քաղցր երազն իրենից թոթափելու օրինակ: Կարթը ձեռքին տեղավորվելով ջրի մոտ՝ նա պատրաստվում էր որսալ, բայց ոչ թե ձուկ, այլ ուրիշ բան, ավելի ճիշտ՝ այլ բան, ինչը ջրամբարում բնավ չէր էլ ապրում: «Աշխարհի քո ճանաչողությամբ դու ծածկոց ես գործում, և քո աչքի հատը մեծանում է»,– երբեմն ասում էր նա՝ ինձ դասելով մարդկանց այն անհուսալի ցեղին, որոնք կյանքի իմաստը հանգեցրել են գիտականության տխմար կուտակմանը: Ֆիզիկների և լիրիկների բանա-

վեճն արծազանք տալով հասել էր մեզ և քիչ բան էր նշանակում մեր բախումներում:

Ադգուր Ա.-ին պետք է շարունակել տեքստով:

Ես ուշադիր կարդում եմ նրա գրածը և փորձում եմ ոչ պատահաբար միտքն ընկած կամ տանջալից որոնումից հետո գտնված բառերի հետևում տեսնել նրան: Կամ էլ թե չէ ընդօրինակել նրա գրելածը, որպեսզի, նրան ընտելանալով, ինձ նա՛ զգամ:

«Ես ավելի ու ավելի հաճախ եմ ձեռքս առնում տետրը, որը հանկարծ այսքան տարողունակ ստացվեց. դեռ կեսն էլ չեմ գրել: Համ էլ մանր եմ գրում, այլ ոչ թե սովորականի պես խոշոր ու լայն-լայն. թերթերն եմ խնայում, չնայած ոչ ոք չգիտե՝ վիճակված է ինձ ամբողջ տետրը գրոտել, թե ոչ: Հարցի թափը միտվում է մինչև «Լինել թե չլինել»-ը, բայց այլ կոորդինատներով, ավելի հստակ և արդարացված, քան կարմրաթուշ, լիքը-լիքը և հևասպառ թերուս-թագաժառանգի դեպքում: Եվ ի՞նչ է սա հարկավոր, ի՞նչ եմ հասցեագրում այս տողերը՝ չգիտեմ: Երևակայությանս մեջ երևում է ինչ-որ մեկը,– ապագա ժառանգս,– ում ձեռքը հանկարծ կընկնի այս օրագիրը՝ ամենագոր դիպվածի կամքով, դիպված, որն ինքնակամ գործում է ճակատագրի անվերջանալի նախշը: Եվ ով չի ծովանա ոչ թե լոկ հետաքրքրությունից դրդված պարզապես ու անփույթ թերթել այն, այլ էջ առ էջ ուշադիր, հասու լինելով ու երևակայելով կարդալ: Եվ մաքուր ընկալման տեսակետից ցանկալի է, որ այդ մեկը չիմանա ինձ, երբեք դեմքս տեսած չլինի, ականջի ծայրով անունս լսած չլինի, ոչ ոք նրան պատահաբար անտարբեր խոսքով իմ մասին պատմած չլինի: Այդժամ ես ավելի ամբողջական, ինքս ինձ ավելի մոտ լինելով, կհասնեմ նրան. իմ արտաքինը, կյանքիս փաստերն ուշադրությունը շեղող խոչընդոտ չեն լինի: Գիտեմ, որ ավելի լավ կլիներ մնայի ընկերներիս հետ, ազահաբար լսեի նրանց, հիշեի նրանց աչքերն ու ձայները, նույնիսկ ոչ թե հիշեի,– չէ՛ որ հայտնի չէ, թե ով ումից երկար կապրի, հայտնի չէ, թե արժե՞ արդյոք հիշել,– ավելի կարևոր է, թե ինչն է մեզ կապում, իսկ դա այնքան ուժեղ ու նոր բան է ինձ համար, որ ես այլ անվանում, քան ուրախությունն է, չեմ գտնում»:

Քանի անգամ է նա դեռ երեխա ժամանակից երևակայել, թե ինչպես կմեռնի մայրը և դառն արտասովել է՝ խղճալով նրան, որ գնաց անդառնալի մի գիշեր, խղճալով իրեն, որ այդ պահից ընդմիշտ մենակ է դատարկված աշխարհում: Բայց ամեն բան այլ կերպ եղավ. նա չէր կարողանում իրենից ճզմել-հանել արտասուքի գեթ մեկ կաթիլ, քարացել կանգնել էր դագաղի մոտ՝ ոտից գլուխ սև հագած. այդ սևը նրան հագցրել էին հոգատար մորաքույրները: Նրանց վրդովեցրել էր Նաթելայի վարմունքը, և հրահրում էին նրան. «Լաց եղիր, լաց եղիր, ամոթ է, մարդիկ ինչ կմտածեն: Դու արդեն փոքր չես...»: Նրանցից մեկը նույնիսկ կսմթեց անհնազանդին, որպեսզի դուրս բերի ամոթալի անզգայությունից, կսմթեց շատ ցավոտ, հոգատարությունը գերազանցող չափով, և Նաթելան, որ չէր հասկանում իր մեղքը և ընդհանրապես քիչ բան էր հասկանում տեղի ունեցածից, փութաջան մորաքրոջը շամփրեց այնպիսի ատելությամբ լի հայացքով, որ նա զայրացած հեռացավ:

Նաթելայի հոգին ասես պապանձվել էր, նույնիսկ ոչ թե պապանձվել, այլ գոլորշիացել էր իր միջից՝ սրտի պատերին թողնելով անընթեռնելի փրփուր: Նա իր մեջ դատարկություն էր զգում, և մորը նայում էր՝ իբրև օտար, իր հետ ոչ մի թելով չկապված մարդու: Մայրը դագաղում այնպես էր պառկել, ասես գտել էր այն հանգստավետ տեղը, որը միշտ որոնել էր:

Նաթելան միայն զարմացել էր, թե որքան հանգիստ ու անվրդով էր երբեմնի կենդանի դեմքը: Մահը նույնիսկ հարթել էր կնճիռները, և Նաթելան մտածեց. գուցե կնճիռներն առաջացել էին այն մշտական ջանքից, որ մայրը գործադրում էր փնտրել-գտնելու համար այն, ինչն ասելու էր նրան ամենավերջում, բայց այդպես էլ չէր ասել:

Ես մտադիր չէի լողափ գնալ. ինձ միշտ տհաճություն էր պատճառում մերկ մարմինների պառկելատեղին, մերկանդամ մարդկանց ինքնագոհությունը:

Ես մտադիր չէի ծով գնալ, բայց ամեն մի հանդիպող ծանոթը կամ անծանոթը գլուխ էր տանում կարևոր տեղեկությամբ՝ ծովը, պատկերացնում եք, այսօր անսովոր տաք է, վերջին ժամանակներս նման բան չի դիտվել. համընդհանուր տաքացում է:

Կարծես թե պայմանավորված լինեին. ցանցը գործեցին և ստրկամտորեն, բարեկամաբար, լկտիությամբ հրապուրեցին:

Ես չկարողացա դիմադրել: Լողափ գնացի և տեսա բազմիցս տեսած սրտխառնուք առաջացնող տեսարանը՝ ավազոտ ափի նեղ շերտը, որն աղքատ ազգականի պես սեղմվել էր ջրին, ծածկել էին մերկ մարմինները: Լրիվ մերկ չէին, այսպես կոչված անպարկեշտ տեղերը թաքնված էին վարտիքների, լողազգեստների հետևում, ուստի լիակատար, աներեսապաշտ մերկություն չկար, որպեսզի պատկերն ավարտուն լիներ: Թող թե՛ երիտասարդները, թե՛ ծերերը (ծերերն ավելի շատ էին, ծովը նրանց օգտակար է, իսկ տարիների ընթացքում ահագնացող կյանքի ծարավով նրանք երբեք իրենց չեն զրկի դույզն-ինչ օգտակար բանից, եթե այն նույնիսկ այնպես անվայելուչ է, ինչպես մերկ մարմնով ավազին պառկելը) ի ցույց կհանեն իրենց խայտառակությունը:

Աշխարհը ծեր է և զառամյալ: Մինչև իր վախճանը նա մի կերպ կաղալով կգնա, միայն դրա համար է ուժ մնացել. ինչպես ահա այն ծերունին, ի դեպ՝ Մանչա Սաթբեևիչն է, որը ոտքերը քարշ է տալիս դեպի ջուրը: Ձեռքերն առաջ է պարզել. նա ուզում է նախ դիպչել ջրին, շոշափել այն, բայց ոտքերն այդ անում են շատ ավելի շուտ: Երբ ջուրը մոտենում է նրա անուժ և դատարկ գոտկատեղին ու ազդրերին, որոնք տխուր ուրվագծվում են մինչև ծնկները հասնող վարտիքի տակից, ծերունին, ավելի ջուրը, ողողում է կուրծքը, վիզը, երեսը: Նախնական ծանոթությունից, միմյանց հոտոտելուց հետո ընթացքը դեպի ծովի խորքը շարունակվում է: Ջուրը հասնում է մինչև մեջքը, կախված կուրծքը: Այդժամ ծերունին կանգ է առնում, որոշ ժամանակ ինչ-որ բան մտածելով տրտում նայում է դեպի առաջ, հետո հանկարծ շեշտակի ծալում է ծնկները, կքանստում և մի երկու անգամ գլխով ջուրը մտնում: Գոհունակությամբ փնչացնելով, ամբողջովին ծածկված նիհար, ոսկրոտ իրանի վրայով հոսող կաթիլներով, նա հոգնած հետ է քարշ գալիս: Մի ժամանակ նախաստեղծ ջրից նա դեպի լույս էր գալիս, և ոչ թե ուժասպառություն, այլ ցնծություն էր լինում նրա դեմքին: Այժմ նա այլ ջրից էր դուրս գալիս, դարձյալ դեպի լույս, որը ծովի մակերևույթից բարձր էր: Եվ նա մի քանի անգամ անհամարձակ ընկղմվեց ջուրը, որի խեղդող գրկից ստիպվեց շտապ դուրս լողալ. նրան սպասում էր ոչ թե մի ժամանակվա ցնձագին լույսը, այլ մթնշաղի աղոտ ուղեկցումը դեպի վերջ-

նական խավար:

Շուրջս ամենուրեք ծերուկներ են: Ուր նայես՝ալեհեր, բրդոտ հոնքերի տակ խամրած, կասկածոտ ու չար աչքեր կտեսնես, ուր նայես՝ զառանցող ստվերներ են, որոնք իրենց ամբողջ զառանցանքի ուժով ատում են աշխարհը, որը նրանց երկար տարիների ընթացքում կենդանական վիճակի է հասցրել, երեսի խորշոմներով և հողերում կուտակված աղի ճարճատյունով մոտեցնում ու մոտեցնում է անդունդի եզրին: «Անդ»-ն էր սարսափելի, անիմաստ «անդը», որը կյանքից «անդին» է:

Ամենուր ցանցեր են, և ես միամտորեն ընկնում եմ դրանց մեջ: Բոլոր նրանց, ովքեր ժպտադեմ ու եռանդով ինձ ծովափ են կանչում, ես ժպտալով գլխով եմ անում, շնորհակալություն եմ հայտնում ժամանակին տրված և այդքան կարևոր տեղեկության համար, ես ընդունում եմ նրանց խարդավանքը: Պոչավոր ու շարժուն, արգանդի անթափանց հեղուկ մթության մեջ կուրորեն, բայց և ծայր աստիճան նպատակասլաց դետուդեն գնացող սերմի մեջ հենց որ ջերմացավ իմ հոգին, կոպտորեն ու կյանքիս երկար ուղու ժամկետով ես բռնվեցի աշխարհի կողմից: Բայց իմ բռնված ու գերի լինելու հանգամանքի մեջ շրջապատի մարդիկ, որոնք նույնպես գերի էին, իրենց բարյացակամ ավանդն էին ներդնում. նրանք զգոն վերստասյուններով նշում և կանոնավորում էին իմ ուղին, որպեսզի վերջում ես ընկղմվեմ տաքավուն և նողկալի մի ջրամբար, որի անունը ծով է:

Ես ափ ելա, ոտքերիս տակ խշշում էր ավազը՝ գուցե կարոտած լինելով հեռավոր, եղբայրակից անապատը, որը չորանում ու դեղնում էր այրող արևի տակ: Ծովը, ինչպես պտուղը մայրական ջրում, անբավական պտտվում էր իր մահճում: Այնքան էլ չէր աղմկում, զուսպ ծփում էր ոտքերիս մոտ, բայց ես զգում էի, թե ինչ զգուշավոր, թշնամական աչքով է նա հետևում ինձ:

Ես հանվեցի և մոտեցա ջրին՝ շրթունքներիս վրա կանխազգալով նրա աղահամը:

Մանչա Սաթբեկիչն ինձ չնկատեց: Ես էլ չեմ այրվում նրան մոտենալու մղումից: Ցանկություն չկա ծանոթ մարդուն մերկանդամ տեսնել լողափին:

Քայլում եմ ամռան տապից տաքացած քաղաքում: Վերնաշապիկս մոտեմաբար մեջքիս է կպչում, չար արևը կուրացնում է աչքերս, քաղաքը դան-

դաղ և դատապարտված խեղդվում է հալած օդում՝ աստիճանաբար ուրվական դառնալով: Տաղտկալի կրկնությամբ ստեպ-ստեպ առկայծող ծանոթ դեմքերին գունատ փայլում և իսկույն հանգչում է ողջույնի ժպիտի նման մի բան, և դեմքերը վերստանում են նախկին հոգնած և անտարբեր արտահայտությունը:

Ես ինչպե՞ս նկարագրեմ այն օրը, որի միջով կիսաքուն քայլում եմ: Այն հեռանում ու հեռանում է ինձանից, ոչ մի բան ի զորու չէ գոնե մի փոքր դանդաղեցնել նրա շոգ ընթացքը դեպի անէություն:

Գիշերը, պառկելով անկողնում, ես հետադարձ հայացք կզցեմ՝ ընդգրկելով անցած կյանքս և կգարմանամ, թե ինչպես է, որ չեմ խեղդվել այս դատարկ և օտար հատակում: Ու դեռևս որոշ ժամանակ, մինչև մոռացության կմատնվեմ տագնապալի և քրտնաթոր քնի մեջ, ինձ հետապնդելու է անօդ անկյունը, որտեղ ինձ կտեղավորեն և որտեղ երկար ու դաժանորեն պետք է մահանամ:

Բայց աստիճանաբար անցած օրվան սկսում եմ այլ զգեստ հագցնել, և որքան նա հեռանում է դեպի անցյալ, այնքան սիրելի է իմ սրտին:

Այստեղից ես անխուսափելիորեն անում եմ հետևյալ եզրակացությունը. իմ կյանքը գործված է անցյալից: Ներկա՝ որպես այդպիսին, ես չունեմ, ես ունեմ անչափ ուռած անցյալ, որը լողում է դեպի իմ ներկան և այն անմնացորդ կլանում: Իսկ ապագան: Այն աստառը շրջած անցյալն է, որտեղ սպասվում են նույն ուրախությունները, որոնք իրականում չեն եղել անցյալում, բայց կայուն, հուսալի, հիմնավոր բան որոնող իմ երևակայությամբ վերագրվում են նրան: Կամ ես այսպես կաղալով հետ եմ մնում իրադարձություններից, անհուսալիորեն ուշանում դրանք ընկալելուց, որ դրանց հեռանալուց հետո առաջացած դատարկությունն զգեստավորում եմ վառ գույներով: Գուցե ես իսկապե՞ս... երջանիկ չեմ եղել. այս բառն սկզբից ևեթ վերջին կետի իմաստով անհուսություն է ներշնչում, դրանից հետո դեմ ես առնում հոժ պատին և շփոթված լռում ես, – ահա, ոչ թե երջանիկ եմ եղել, այլ հանգիստ և վստահ իքս, իգրեկ և զեթ կողողինատներով կազմված անհայտ անցյալում: Գուցե դա՛ է անցյալի կարոտի և այնտեղ վերադառնալու, այն վերադարձնելու ցանկության պատճառը:

Ես քաղաքով քայլում եմ անմարմին ոգու նման: Այն ամենը, ինչ տեսնում են աչքերս, իմ մեջ ավելի շատ զգացմունք չի առաջացնում, քան

դրանք արտացոլող հայելին: Այս անտանելի շոգին իմ հոգին սառն է: Մինչդեռ ես տեսնում եմ մարդկանց, նրանց վերևում կամ հետևում՝ երկնքի անողոք կապույտը, տները, փողոցների խաչաձևումը և նրբանցքների արանքի նրանց մենավոր կյանքը, որոշ մանր կենդանիներ՝ շուն, կատու, թռչնակներ... Եվ այս ամենն անտարբեր ապակու կտորի միջով մտնում է իմ մեջ և նստվածք տալիս իմ խորքում՝ սկզբում փոքր-ինչ շփոթահար, վախվորած, բայց ես գիտեմ, որ շուտով այն բուռն և խստապահանջ կճեղքի-կհասնի մակերևույթ, և ես զբաղված կլինեմ միայն նրանով՝ այդ կարծես թե կորած անցյալով, որի եզրով, ինչպես ինձ է թվում, ես անտարբեր քայլել եմ՝ լոկ հայացքս սահեցնելով վրայով: Բայց ան քեզ: Բիբս սահում և անկուշտ լափում է տարածությունը, և ականջս,– ինչ նենգություն,– ագահորեն կլանում է ծայնը, հնչյունը, աղմուկը, և քիթս – Աստված իմ...

«Եվ այս աշխարհը ես կլքեմ ցավով, որ այդպես էլ չկարողացա ծառ դառնալ, այն ծառը, որը ներածել էր իմ երազներին: Ինձ տրված էր սոսկ մարդ լինել, այլ ոչ թե ծառ: Սկզբնաղբյուրին դառնալու ուրախությունից ես զրկված էի: Եվ, այնուամենայնիվ, երբեմն-երբեմն իմ մեջ ծառի հոգի, գետի հոգի էի զգում:

(Քաղցրանուշ, մեղվաբույր վերամբարձ խոսքեր, լոկ այսկողմնային կողորդինատներ են: «Աշխարհը կլքեմ»,– որտեղից է այս գիտելիքը: Արժանահավատ ոչ մի բան չկա, իսկ ես անվերջ թխում եմ: Կիսածշմարտություն է, ինքնախաբեություն, կեղծ հույս: Բայց սույն տողերը չեմ ջնջում, դրանց հետևում կանգնած է «ես»-ը՝ թուլության և «դատարկ տարածության» պահին)»:

Ես փորձում եմ գրել-վերջացնել Ադգուր Ա.-ի սկսած տողը, բայց չի ստացվում: Չեմ կարողանում հասկանալ, թե նա ինչ էր ուզում ասել: Տողն այս է. «Իրերի տարբերությունը և կայացումը, դրանց թափավազքը սեփական անունների փարախում և միայնության մեջ...» Անհեթեթություն է, այն էլ անմոռանալի: Ադգուր Ա.-ն սիրում էր Սուխումի ծովեզերքի մշտական հաճախորդների անհավակնոտ միտքը զուգել այնպիսի ճոռոմ բառերով, որ այդ միտքը մեռնում-ընկնում էր. պարզվում էր, որ զգեստն անտանելի ծանր է: Մենք մի խաղ ունեինք՝ զցում-բռնում էինք, թե ինչ է մտածում

առաջին իսկ հանդիպածը:

Երբեմն նրան հաջողվում էր կենդանացնել ասես անհուսալիորեն հնացած միտքը, և այն հանկարծ մեր առջև հառնում էր ջահել ու թարմ: Նա դա անվանում էր «բառերի աճյունից աշխարհ կառուցել», «բառերին վերադարձնել իրենց նախնականությունը» և այլն, ինչն իմ՝ ֆիզիկոսի ականջին որոշ չափով վայրի ու ծիծաղելի էր հնչում: Խոսքերն ավելորդ էին, աշխարհը նրանց վրա չէր կանգնած: Իսկ միտքը կարելի էր արտահայտել ավարտուն, աներկիմաստ բանաձևերով: Խոսքերը հեռացնում էին էությունից, դրանցով ծածկոց էին գործում ու գործում. նման վատնողությունը, մասամբ էլ անհամարձակությունը, զարմացնում էին ինձ:

Բայց սա հազվադեպ էր պատահում. սուփումցիների մտքերը միմյանց նման էին ինչպես երկու հանգուցյալը: Նրանք պտտվում էին հարավային հավերժական թեմաների շուրջ՝ կանանց ծավալները՝ ինչպես մեջքից վերև, այնպես էլ ներքև... առավելապես ներքև, և տեղացի չինոֆիկների թոփչքն ու անկումը: Եվ Ադգուր Ա.-ի բախտը հաճախ չէր բերում, չնայած բառային և մտավոր հնարամիտ ճիգերը: Սուփումցիների թթված ուղեղներից մի ինչ-որ արժեքավոր բան որսալը նաև նրա ուժերից վեր էր:

Թողնելով, իր իսկ խոսքով, ցանցառների հոտից մի որևէ մարդանման բան ծեփելու փորձերը, նա «Ամրայի» բարձունքից տխուր նայում էր ծովեզրին, որով անցուդարձ էր անում բազմագույն ու բազմազգ հասարակությունը: Իսկ մեր ներքևում, սև խեցիներով պատած ժանգոտած հենասյուներին էր կամաց զարկվում կանաչ ծովը, և ճողփյունի ձայնը փաղաքշանքով հոգի էր թափանցում՝ երգելով հեռավոր անհուն օվկիանոսի և արևադարձային անմարդաբնակ կղզիների երգերը: Սուփումն ամուր շրջապատող մերձակա բլուրներից ծորում էր խիտ կանաչը, բլուրների հետևում՝ բարձրում, պսպղում էր վշտահար Չումկուգբայի ձյունը:

Դա սովորական իմաստակում էր: Բայց այն ժամանակ մեզ թվում էր, որ մեր ինքնամոռացությունն ու ավյունն ամեն ինչի արդարացում են՝ և շատ հարցերի մեր չիմացությունը, և այն լկտիությունը, որով մենք ցած էինք բերում թե սնամեջ, թե լիովին վաստակած հեղինակությունները: Եվ ականջներից ձգած և լույս աշխարհի հանած չնչին մտքերը, որոնք խայտաբղետ էին խառնարյունության պատճառով, քացի էին տալիս՝ չցանկանալով գնալ իրենց մտուրը...

Իմ բացակայության ընթացքում Սուխումը, որն առանց այն էլ հարազատ չէր, ավելի էր հեռացել և ինձ անտարբեր դիմավորեց, եթե չասենք՝ թշնամաբար: Ինձ աշխատանքի տեղավորեցին տեղի համալսարանում. պետք է նվազագույնը երկու տարի աշխատեի: Բայց առաջին իսկ օրը ես կովեցի իմ աշխատավայրի՝ լաբորատորիայի վարիչի հետ: Ինվար Թամշուգովիչը մտքին դրեց ստուգել ինձ, պարզել՝ պիտանի՞ եմ, թե ոչ– և դա այն բանից հետո, երբ ձեռքիս ունեի թբիլիսյան դիպլոմ և վկայական՝ առանց մեկ հատիկ բավարարի: Բացի այդ, իմ նշանակման հրամանը, որն ստորագրել էր ռեկտորը՝ մի հետաքրքիր, քեֆչի և ինտելեկտուալ ծերուկ, արդեն տրվել էր:

Ես, իհարկե, նրա հավակնությունը սվինով դիմավորեցի, վիրավորվեցի, կոպտեցի: Ինչ թաքցնեմ, Ինվար Թամշուգովիչն այդպիսի կոպիտ հակահարված չէր սպասում, ապուշ կտրեց և դուրս փախավ: Նա ուզում էր ցույց տալ աշխատակիցների ընտրության հանդեպ իր խիստ և պատասխանատու վերաբերմունքը՝ թող փչելով իր լաբորատորիայում տիրող այլանդակ վիճակի վրա:

Նա սովորություն ուներ ցնդածի պես վազ տալ համալսարանի միջանցքներով՝ միշտ մտահոգ, խիստ մտազբաղ դեմքով, ինչն իսկույն անհետանում էր, երբ նա բացում էր բերանը: Նա մի այնպիսի բարբաջանք էր դուրս տալիս, որ մարդու ականջները չորանում էին: Նրա անհեթեթ մտքերին չէր դիմանում նույնիսկ Ինվար Թամշուգովիչի կերպարափոխվելու վիթխարի ունակությունը. առաջին իսկ բառից նրա դեմքը հանկարծակի և թեթևացած (մինչ այդ գիտական միտք արտահայտելու ջանք էր թափել) ընդունում էր հասարակ, գիտությունից շատ հեռու մարդու հարազատ արտահայտությունը: Նա իր գործով չէր զբաղվում, և պահանջներին համապատասխանելու, հետ չմնալու ճգտումն ամենատխմար ձևով աղավաղում էր նրան թե՛ ներսից, թե՛ դրսից:

Ահա նա վազ է տալիս կեղտավուն, խոնավություն բուրող մռայլ միջանցքով: Լաբորատորիայի մոտով վազելիս հանկարծ կհիշի, որ ինքը պետ է և, ուզենալով մեզ հանկարծակիի բերել, կքաշի դռան բռնակը, և այնպես ուժեղ, որ այն հազիվ չի պոկվում ծխնիններից, գլուխը կմտցնի դռան արանքը, բութ հայացքը կհառի մեզ և մի երկու րոպե՝ ոչ պակաս,

կնայի: Մենք նույնպես լիակատար միահամուռ լռությամբ և կասկած ունենա՞նք ոչ պակաս բթությամբ,– ընդօրինակման օրենքն է, որը գործի է ընկնում անսպասելիությունից և ավելի մեծ էֆեկտով,– նայում ենք նրան: Այնուհետև համոզվելով, որ ոչ մի անկանոնություն չկա, ամեն ինչ կարգին սարքին է, աներևակայելի աղմուկով կփակի դուռը և կշարունակի վազել:

Նաթելյան մենակ է ապրում: Ամուսին երբեք չի ունեցել, սրտակից բարեկամ՝ նույնպես. ընկեր-ընկերուհի, պարզապես ծանոթներ՝ որքան ուզես: Երբեմն նա հիշում է Ասիդային՝ իր մերձավոր ընկերուհուն, ով պատերազմից անմիջապես հետո մեկնել է Աբխազիայից: Կամ դպրոցական, կամ ուսանողական ընկերուհին է եղել, որը, Նաթելայի ասելով, պառաված օրիորդ դառնալով դանդաղ խելքը թռցնում է. սա շատ աբխազուիների հարկադրական խաչն է:

Ամբողջ օրը նա կանգնում է շուկայի երկրորդ հարկում՝ վաճառելով ուրիշի ապրանքը. դրանով էլ վաստակում է օրվա հացը: Կրթություն ստացած կին է, պատերազմից առաջ եղել է մշակույթի տան փոխտնօրեն, զանգվածներին է լուսավորել:

Ես երբեք փող չեմ ունենում, բայց երբ հանկարծ նա հայտնվում է, մայրս կամ հազվագյուտ ընկերներս, որոնք հիմնականում նույնքան գջլոտ են որքան և ես, մի քանի կոպեկ են տված լինում՝ ես փոխանցում եմ նրան: Ես պարտավորված եմ զգում այդ անել, և ոչ մի ցուցամոլություն չկա. մտքովս էլ չի անցնում նրան սիրուհի համարել, ասենք՝ ինքն էլ երբեք թույլ չի տա: Հանգիստ, առանց վիրավորվելու վերցնելու է փողը, բայց ինքը երբեք չի խնդրի: Չնայած նրան պետք է որ բավականացնի ուրիշի ապրանքը ծախելով ստացածը. միջակ, բայց ճաշակով է հագնվում, օժանելիքը չափավոր է օգտագործում, վաղուց գիրք չի առնում: Ինձնից երբեք փող չէր վերցնի, բայց երևի այլ ելք չունի: Ենթադրում եմ, որ փող է հավաքում մի կարևոր բանի՝ ավելի շուտ մեկնելու համար. մի անգամ ակնարկեց, բայց ես չլսելու տվեցի: Ես նրան այցելում եմ շաբաթը երկու անգամ, ոչ ավելի հաճախ, ավելի ու ավելի քիչ եմ ցանկություն ունենում հանդիպելու: Նա զգում է, բայց ոչինչ չի ասում: Երևի կարծում է, որ խնդիրն իր տարիքն է, և իմ սառչելը բնական է համարում: Ծերության հանդեպ ունեցած վախը, ինչպես կանանց մեծ մասը, նա չի կապում իր հանդեպ տղամարդկանց

վերաբերմունքի հետ: Նրա համար ծերության վախը համապարփակ է, մի իսկական անեծք:

Ժամը երկուսից հետո շուկան փակվում է, երեքին մոտ Նաթելան ավարտում է իր գործերը, որոնցից գլխավորն ապրանքը պահեստ տանելն ու անդորրագիր ստանալն է, և հետո նա ազատ է: Մինչև հաջորդ օրվա ժամը վեցը ժամանակը նրա համար տանջալիորեն դանդաղ է անցնում, նա չգիտե, թե ինչ անի: Փրկում են հեռուստացույցը, սիգարետը և ես: Իմ գալով նա ուրախանում է, չնայած ցույց չի տալիս: Նաթելան պարզապես իր գլուխն է մտցրել այն, որ քանի որ ինքը զրկված է գլխավոր զգացումից, որը կնոջը կին է դարձնում, ապա առանձնապես չպետք է մյուսներն էլ ունենա: Եվ եթե դրանք հանկարծ նրա մեջ հայտնվում են իր կամքից անկախ, ուրեմն իսկական չեն. կամ նմանակում են, կամ կեղծավորություն, կամ երկուսը միասին, այսինքն՝ սովորություն: Դա է պատճառը, որ նա երբեք չի ասում, թե սիրում է ինձ, ես էլ ոչ մի անգամ չեմ հարցրել՝ սիրո՞ւմ է արդյոք, թե ոչ: Առանց այն էլ գիտեմ, որ նա ինձ սիրում է, բայց վախենում է խոստովանել:

Նաթելան աղքատ պայմաններում է ապրում: Երկու ոչ մեծ սենյակ ունի, սեղան, չորս աթոռ, զսպանակավոր երկու մահճակալ (դրանցից մեկի վրա նրա մայրն է մահացել, մուգ, գրեթե սգո ծածկոցով ծածկված այդ մահճակալին Նաթելան երբեք չի նստում), բազմոց, երկու բազկաթոռ, սեղանիկ, տրյումֆ, զգեստապահարան, սպասքապահարան, հեռուստացույց: Ամենաանհրաժեշտ բաներն են, ոչ մի ավելորդ իր, և բոլորն էլ իրենց դարձնում են ապրած, հին, բայց ոչ խաբիսով հնությամբ, այլ ամուր, արժեքավոր և վեհատես: Գրքի մի քանի պահարան կա: Սթիվենսոն, Դյումա. նրանց Նաթելան պաշտում է և պատմում, թե իր համար ամենաերջանիկն էր այն օրը, երբ ձեռքի վրայից Դյումա է ճարել՝ տասը կարմիր մեծադիր հատոր: Կան նաև Տոլստոյ, «Կարամազով եղբայրներ», Շինկուբա, Իսքանդեր, Գոգուա, Հեմինգուեյ, Սելինջեր... Երկար ժամանակ Չեխով է սիրել, բայց մի օր էլ նրան ծանձրալի ու անողորք է համարել, և ոչ թե առանց ավստասների, այլ նույնիսկ որոշ թեթևացածությամբ ազատվել է նրանից:

Զուգարանը միջանցքի ծայրին է, սալօջախը, որի վրա ճաշ է եփում, ճիշտ դռան հետևում:

Նաթելան մաքրություն սիրում է, բայց նրա սենյակներում միշտ էլ թույ-

լատրելի խառնաշփոթ է տիրում. վարդագույն խալաթը զցած է աթոռի թիկնակին, Դյումայի բաց հատորը՝ էջանիշով, որի վրա պատկերված է հաստակտուց գունագեղ մի թութակ, մահճակալին է, կողքը մոխրամանն է կիսատ սիգարետով. մոխրի փոքր-ինչ ծոված գորշ գլանը վտանգավոր չափի է հասել, բայց դեռ չի թափվել: Կարող է լինել նաև ուրիշ թույլատրելի անկանոնություն, բայց ամեն անգամ Նաթելայի ձեռագիրը ճանաչելի է, և այդ մանրություններով նա ամուր մտել է իմ կյանք: Նրա կենցաղը ոչ միայն իր, այլև իմ մասն է դարձել և անբաժանելի է երկուսիցս էլ:

Եթե տանը որևէ բան է ունենում՝ հյուրասիրում է, բայց ավելի հաճախ մենք սահմանափակվում ենք մի քանի գավաթ սուրճով և կամ մի-երկու բաժակ տնական օղիով: Հետո նարդի, թուղթ, շախմատ ենք խաղում: Ես գործվանքով եմ համակվում տեսնելով, թե մանկական ինչ լրջությամբ կիտելով հոնքերը, ամուր սեղմելով շրթունքները և մտածմունքից կնճռոտելով ճակատը, խաղում է Նաթելան: Կարծես թե նրա սխալ քայլից, առավել ևս՝ Աստված մի արասցե, պարտությունից,՝ են կախված իր և ամենաքիչը ևս հարյուր հազարի առողջությունը և կյանքը: Իմ մեջ եռում է քնքշությունը, ես բռնում եմ նրա ձեռքերը: Նա շարունակում է մղվել դեպի խաղը՝ շաշկին, ֆիգուրները, իսկ ես թեթև շարժումով, որն ինձ տրվում է հրեշավոր ճիգով, նրան ձգում եմ դեպի ինձ: Նա նայում է, և ամեն անգամ ինձ թվում է, որ նրա աչքերում տարակուսանքն է ծվարել՝ ի՞նչ է նա, որն այսքան նուրբ ու քնքշորեն ինձ է քսվում, ի՞նչ է նրա մտքինը, ի՞նչ է պատրաստվում անել ինձ հետ: Բայց իմ այս զգացողությունը թռուցիկ է, նրա հայացքն ավելի շուտ հարց է բովանդակում,՝ մի՞թե ես դեռևս ցանկալի եմ, մի՞թե նա իսկապես ինձ սիրում է,՝ և հետաքրքրասիրություն՝ այս անգամ ի՞նչ է նրա մտքինը, այս անգամ ի՞նչ փաղաքշանքով է փորձելու ջերմացնել իմ սառը ծոցը, հալեցնել իմ անհուսալի սառույցը: Նրա աչքերում նաև վախ կա, որ այս ամենը կարող է երբևէ ավարտվել, խաղաղ ու սովորական ձևով մեռնել, և հետո ոչ ոք երբեք այդպես նրբորեն ու զգուշաբար, ասես երկյուղելով՝ չի վախեցնելու նրա կասկածոտ ու վշտացած սիրտը, էլ չի ձգելու դեպի ինքը, իսկ հետո գրկելու՝ ասես ուզենալով խեղդել, և առանց հոգնելու համբուրել նրան սովահար շրթունքներով, ոչ ոք երբեք չի փորձելու իր ջերմությամբ տաքացնել նրա մարմինը և հոգին, ոչ ոք երբեք թեթև շարժումով չի կտրելու նրան տաղտկալի խաղից, որի խաղադրույքը հար-

յուր հազարների առողջությունն ու կյանքն է:

Նա վեր է կենում ասես չուզենալով, ծուլորեն և նստում է ծնկներին: Եվ երբ այսպես չուզենալով, ծուլորեն փոքր-ինչ բարձրանում ու հեռացնում է բազկաթուղ... Երբ նրա ձեռքերը, ոտքերը, կրծքերը, աչքերը, բերանը՝ ինքն ամբողջությամբ, ինձանից բաժանված լինելով մի քանի անսահման սանտիմետրով, հանկարծ կիպ մոտենում են ինձ՝ փակելով պատուհանի լույսը, և ես կարող եմ ձեռք տալ նրան... ահա այդպիսի խոնջանքով բարձրացած մարմնի այդ շարժումը և նրա չուզենալով, ծուլորեն մոտենալը, և սրտի քաղցր թալկացումը, նրա փուլավոր անկումը ներքև՝ դեպի իմ տոջորված գոտկատեղն ու ազդերը... և սպասումը, և չհանդիպելու, ահա հենց հիմա և հանկարծ ընդմիջտ բաժանվելու վախը, – այդ պահին ամեն բան իմաստալից է, անմահ, ցնձագին: Ես սկսում եմ կատաղորեն համբուրել նրան՝ սուզվելով նրա խենթացնող բուրմունքի մեջ, միևնույն ժամանակ շորերն եմ հանում. հանում եմ մշտապես անհնազանդ, չար շրջագզեստը. հանում եմ մշտապես խրթին ճարմանդներով կրծկալը, որն անխղճաբար ժամանակ է խլում, հանում եմ նրբագույն ու զովասուն, զիջողաբար տեղի տվող տրուսիկը, որին դիպչելիս ամեն անգամ վեր է բարձրանում ու փքվում իմ հզոր քնքշությունը. ձեռքերս նրա պիրկ, լայն հետույքի կլորությունների վրա են... բերանիս մեջ է նրա խորդուրբորդ, ամուր պտուկը... ես միմյանցից հեռացնում եմ նրա ոտքերը, որոնք այնքան ավելորդ են, այնքան ճկուն, այնքան սպիտակ... ես դանդաղ թափանցում եմ նրա մեջ, մտնում եմ մուլթ, խոնավ, տաք ընդերքը: Եվ իմ գոտկատեղի կարոտը դանդաղ մտնում է մուլթ, խոնավ, տաք ընդերքը: Եվ մենք նրա հետ մի ամբողջություն ենք, մի մարմին ու հոգի, մենք մեզանից թոթափել ենք մեր ավելորդ «ես»-ը...

Ես սիրում եմ Նաթելային...

Նաթելայի հետ մենք քիչ ենք խոսում, և ոչ թե այն պատճառով, որ արդեն ամեն ինչ խոսել ենք՝ մեր և ուրիշների մասին, անցյալի ու ապագայի, կյանքի ու մահվան մասին... Մենք սովորել ենք գնահատել լռությունը: Մենք մեր սերն անցկացրել ենք երկար խոսակցությունների մաղի միջով, և մեզ մնացել է ամենաարժեքավորը, երբ միասին լինելու, միմյանց երբեք չմոռանալու համար խոսք հարկավոր չէ:

Բայց երբեմն նրա շատախոսությունը բռնում է, և նա սկսում է իր կյան-

քից պատմել այնպիսի մանրամասներ, որոնք ես չէի ուզենա իմանալ: Թե ինչպես ինքնամոռաց սիրահարված է եղել իր համակուրսեցուն, ինչպես է նրան տրվել գիշերը, ծովափին՝ Կելասուրի մոտ և ինչ է սխալ գործել՝ նրան խոստովանելով, որ ոչ մի բան չի զգում իրենց մերձեցումից: Դա նրա համար մեծ հարված էր, որից այդպես էլ չի կարողացել ուշքի գալ: Նրա բոլոր ջանքերը ոչ մի արդյունք չտվեցին: Նաթելան չափազանց ուշ էր հասկացել, որ նրան չկորցնելու համար ինքը պետք է կեղծ զգացմունք ցուցադրեր: Բայց այն ժամանակ դա խաբեություն կնշանակեր, իսկ խաբել նա չէր ուզում, չէր կարող: Տղան աստիճանաբար սառեց նրանից և վերջում, ինչպես ընդունված է նման դեպքերում, ամուսնացավ նրա ընկերուհիներից մեկի հետ:

Այսպես ավարտվեց Նաթելայի առաջին սերը: Նա արդեն ոչ մի սիրո չի հավատում, եթե այն հանգեցնում են միայն անկողնուն:

Սա ոչինչ չզգացող մի գեղեցիկ կնոջ տխուր պատմությունն է:

Բայց ամենից շատ նա պատմում է իր մոր մասին: Դա անվերջանալի թեմա է: Հորը նա ոչ մի անգամ չէր հիշում, ես չգիտեմ նույնիսկ՝ հայր ունեցե՞լ է, թե՞ ոչ: Եթե նույնիսկ եղել է, ապա նա անհետ կորել էր Նաթելայի՝ դեռ համեմատաբար երիտասարդ մահացած խեղճ մորը նվիրված մշտական խորհրդածությունների մեջ:

Նրա անունը Մադինա է: Ես դա իմացա Մանչա Սաթբեկիչից: Նրանք հին, գրեթե մինչեղափոխական ժամանակների ազգակցություն ունեն. կամ Սաթբեկիչի նախնախատատը և Մադինայի նախնախնախնապապը քույր ու եղբայր են եղել, կամ մի այլ կերպ են միանում նրանց տոհմերը, որոնք սկիզբ են առնում նույն արմատից: Ընկերուհիները նրան սուրճի հրավիրելիս այլ կերպ էին կանչում՝ Չինչա, այսինքն՝ թռչնակ, չնայած Մադինան և լավ հասակ ունի, և չես ասի, թե նիհար է. մարմինն իսկն է: Երևի մականունը կպել է մանկությունից: «Լավ աղջիկ է. և՛ տոհմը, և՛ ծնողները – ամեն բան նորմալ է, – ասաց Մանչա Սաթբեկիչը: – Միայն թե երջանկությունից է զրկված խեղճը: Եվ դ՛ուր են նայում երիտասարդները»:

Պատերազմում Մադինան բուժքույր է եղել: Պճնված տարեց կինը և Մադինայի գեշո ընկերուհին, որոնք կերբերի նման տեղավորվել էին գրադարանի մուտքի մոտ, դա ինձ չգիտես ինչու պատմեցին շշուկով:

Հանկարծ ու՛ նա այն Մ.-ն է, որի մասին գրել է Ադգուր Ա.-ն: Շատ բան է համընկնում. անունն սկսվում է նույն տառով, նա բուժքույր է, տարիքն էլ կարծես թե համապատասխան է...

Մանչա Սաթեկիչն ըստ սովորության շուրջը շարել է «Պրավդայի» շեղջերը: Կթոթի կնճռապատ ցուցամատը, կթերթի մի էջ: Կիսակույր աչքերով կնայի՝ փնտրելով ԽՍՀՄ շուտափույթ փլուզումն ակնարկող ծածկագիր տեքստը: Իր կարծիքով գտնելով այդպիսին՝ ուշադիր կկարդա, կվերընթերցի, որից հետո միայն դուրս կգրի, ինչպես ինքն է ասում՝ հենակետային խոսքերը: Նրա ծոցատետրն, անշուշտ, կարմիր գույնի է՝ «Փառք կոմունիստական աշխատանքին» ոսկեգույն մակագրությամբ. երևի ավար է կուսակցական խորհրդակցությունից կամ ճյուղային համաժողովից, որոնցից շատ-շատերին էր մասնակցել իր կյանքի ընթացքում:

Այդպիսի գրառումներ նա շատ ուներ: Մի անգամ թաքուն թույլ տվեց աչք գցել սեղմ ձեռագրով խնամքով գրոտած իր ծոցատետրին: Ամեն մի բաժինը, սովորաբար դրույթը, նշված էր հռոմեական թվանշանով, ենթաբաժինը՝ արաբական, ենթաբաժնի ենթաբաժինը՝ ռուսերեն տառերով, այբբենական կարգով: Ինչպես ես կարողացա հասկանալ, դրույթի հավաստումն անցնում է բաժնից դեպի ենթաբաժին և հետո՝ նվազող թվերով. մի որևէ ռուսերեն «շշ»-ի մեջ կարելի է գտնել LXI բաժնի 79 ենթաբաժնի հավաստման անհերքելի ապացույցները:

Ես բարևեցի, անցա անկյունի իմ սովորական տեղը: Ութերիս մոտ է ստորին հարկի պատուհանի վերևի մասը. սիրում եմ երբեմն կտրվել կարդացածիցս և ներքև նայել մարդաշատ Պողոտայով անցուղարձ անող մարդկանց: Հատկապես լավ է, երբ անձրև է գալիս, և անցորդները քիչ են: Անձրևին մեր քաղաքը գեղեցիկ ու թախծոտ տեսք է ստանում, չնայած նա վայելում է հարավային արևոտ առողջարանի փառքը:

Շատ ծանոթներ են անցնում՝ չկասկածելով, որ ես երկու քայլ եմ հեռու և հետևում եմ իրենց: Հետաքրքիր է, ահա այժմ որևէ մեկը մտածում է արդյոք իմ մասին: Չէ՞ որ ես մեկ էլ տեսար վերհիշում եմ բոլորովին օտար մարդու, որին գուցե միայն մի անգամ եմ տեսել, բայց որը չգիտես ինչու մնացել է հիշողությանս մեջ: Նա որևէ բան զգում է, որևէ մի ազդանշան ստանում է ինձնից: Չէ՞ որ նրան հիշելով ես նրա հետ կապ եմ հաստատում, նա որոշակի տեղ է գրավում իմ մտքում, սրտում: Ահա այսպես, ան-

տեսանելի թելերով մենք կապված ենք շատերի հետ: Միթե այդ թելերը ոչինչ չեն նշանակում, կամ էլ թե չէ ինչ-որ բան են նշանակում, ազդում են մեր ճակատագրի վրա:

Մադինան խորասուզված մի ամսագիր էր կարդում, դատելով գույնզ-գույն շապկից՝ կանացի: Մի երկու անգամ աչքերը բարձրացրեց և կարճատեսի նման կկոցելով ինձ նայեց, հետո հայացքն իջեցրեց:

«Շատերի նման, եթե ոչ բոլորի, ես էլ փորձեցի մորուք աճեցնել: Բայց հենց որ դեմքս սկսում է կորսվել շիկավուն մազածածկույթի տակ, – իմ մազերը սև են, բայց մորուքս որոշակի երկարության հասնելով հանկարծ շիկավուն է դառնում՝ հատուկենտ սպիտակ թելերով, ինչն ինձ որոշ իմաստով երկդիմի է դարձնում, – աճապարանքով, գրեթե սնահավատ վախով սափրում եմ այն: Որոշ ժամանակ անց էլի է ցանկություն առաջանում, որպեսզի հայելու խորքից ինձ նայի օտար, անհարազատ մի արտահայտություն, և ես կրկին մորուք եմ աճեցնում»:

- Ահա դուք ասում եք՝ բնության օրենքով է եղել, գերհասունացած է եղել, նաև՝ որդնած: Նրան մնում էր լոկ ընկնել, ինչն արել է հուրախություն շատերի: Ես չեմ հավակնում Նյուտոնի դերին, ում ճոխ, կեղծամածածկ գլուխն էլ սույն պտուղն արժանացրեց պայծառացնող հարվածի: Ինձ շփոթեցրեց գործընթացի արագությունը: Եթե պտուղը գերհասունացած էր, ապա նրա անկումն սպասելի էր, իսկ իրականում ամեն բան հանկարծակի է պատահել:

- Ուրեմն պոկել են:

- Այո, պոկել են, չեն թողել, որ հասունանա:

- Վաղ թե ուշ նա կհասունանար:

- Հազար տարի հետո, երբ կոմունիզմը հաղթականորեն մոլորակն ընդգրկեր համընդհանուր երջանկության և բարօրության օղակով: Նույնիսկ Երկրագունդն այնժամ որևէ ճյուղի կարիքը չէր ունենա, – Արեգակն ընդամենը լուծ կդառնար, – չասած նաև մեր պտուղը. այն նոր-նոր էր հյութով լցվում, դեռևս կանաչ էր, մեծ նախագծերից և ոչ մեկը դեռևս իրականացված չէր, նոր էին ձեռնամուխ լինում. ժողովուրդները միավորվում էին իբրև նոր ընդհանրություն, շուտով պետք է անցնեին «յուրաքանչյուր-

րին ըստ պահանջմունքի»։ Բայց թշնամական և նախանձոտ շրջապատը, յոթանասուն տարի շարունակ մարդկանց գլխին փոթորիկ ու ամպրոպ տեղավով, այսօր վրան քաշելով ժողովրդավարական վիշապ-սատանայի մաշկը, մեր իսկ պատվարների, ավելի ճիշտ՝ տխմարների ձեռքով պոկեց այն, որը բոլոր մրրիկներից ու ամպրոպներից հետո իրեն պահել էր մարդկանց եղբայրության մեծ գաղափարի հարազատ ճյուղին կառչած։

- Շրջապատը կապ չունի, ինքներս ենք մեղավոր։

- Զգոնությունը կորցրինք, թերագնահատեցինք թշնամու ուժը, հաջողությունից գլխապտույտ ունեցանք։ Մոռացանք ակունքում կանգնածների պատվիրանները։

- Գուցե, այնուամենայնիվ, նրանք այն չեն կտակել և այն ակունքում կանգնած չեն եղել։

- Աստվածանարգ և սրբապիղծ բաներ եք ասում, բարեկամս։ Իմ փորձին հավատ ընծայեք՝ մարդը պետք է կոլեկտիվում ապրի, արմունկ-արմունկի, ուս-ուսի...

- Եվ քայլի միասնաբար՝ ծախով...

- Բարեկամաբար, եղբայրաբար։ Հարց եմ տալիս ձեզ՝ մարդկությունը ողջ կմնա՞ր, եթե քարանձավներից այս ու այն կողմ ցրվեր անհատաբար։ Ոչ, մարդիկ կմեռնեին սովից, ցրտից, մյուս աղետներից, որոնք հնարավոր է հաղթահարել միայն միասնաբար։ Նախ երեխաների ու ծերերի վերջը կգար, հետո՝ մյուսների. երկրագունդը կդատարկվեր։ Չէին լինի ոչ քաղաքակրթություն, ոչ մշակույթ։ Առանց կոմունիզմի մարդկությունը դատապարտված է։

Բոլոր կյանքերը, ճակատագրերը բոլորի, ում մասին Նաթելան երկար ու հիմնավորապես պատմում էր, մոայլ էին, անհույս։ Ոչ երկար բարենպաստ փուլից հետո նրանք հանկարծ ավարտվում էին կործանմամբ՝ հերոսների անձնական արատների և նրանց հետապնդող բախտի զարհուրելի խառնուրդի պատճառով։ Ես նրա տնից դուրս էի գալիս վախեցած, ընկճված՝ շրջապատում եղած ամեն ինչում՝ սկսած ամպերի ձևից և վերջացրած անցորդի պատահական կանչով, որոնելով ճակատագրի նշանները։ Շուրջս ամեն բան ակնարկում էր, նախազգուշացնում, շուրջս ինչ-որ բան էր հասունանում, ավելի որոշակի՝ դավադրություն։ Իմ զգոնությունից էր

կախված, թե շարունակելու եմ արդյոք թշնամական ուժերի գետում անկամ տաշեղի հանգույն լողալ, թե՛ կարողանալու եմ կանխել ինձ ուղղված հարվածները:

Ըստ Նաթելայի, մարդիկ անմոռնջ քայլում են իրենց ողբերգական ավարտի ցուցումով: Ամենահետաքրքիրն այն էր, որ նրանք ամեն ինչ կանխազգում էին, ամեն բան գիտեին, ոմանք նույնիսկ փորձ էին անում փոխել իրենց կյանքի հունը: Բայց բախտի խարդավանքը հենց այն է, որ նրա բոլոր ուղիները կապված են անկասելի վերջի պիրկ հանգույցով, բոլոր ճանապարհներն այդտեղ են տանում:

Ծանրաբեռնված լինելով այդ անմխիթար, պարզապես բանտային փիլիսոփայությամբ՝ ես անհանգիստ շուրջս էի հաժում՝ փնտրելով նշաններ, ակնարկներ կամ նախազգուշացում: Սովորաբար իմ մտադրությունից ոչ մի բան չէր ստացվում. յուրաքանչյուր նշանը բազմանշանակ էր, ես չէի կարողանում արտածել Նաթելայի պատմություններին հատուկ կուռ, անխուսափելի մի սխեմա: Ապագան անհայտ էր, այն չէր բխում ներկայից, առավել ևս՝ անցյալից: Անցյալն էլ ավելի անհայտ էր. ի՞նչ էր այն նշանակում, ի՞նչ էր բովանդակում, ի՞նչ էր այնտեղից հասակ առնում՝ այս ամենն իմանալն անհնար էր:

Ուժասպառ լինելով՝ ես դադարեցնում էի որոնումը և հնազանդորեն ասում էի ինքս ինձ՝ թող ամեն բան նույն կերպ ընթանա, ապագայում կգտնվի մեկ այլ Նաթելա, որն իմ կյանքը վերստին կդարձնի կուռ ու ոչ պատահական:

Այսօր կիրակի է, պետք է ավտոբուսը դիմավորել: Մայրս լուսումնոթին է վեր կենում, որովհետև մեր գյուղը Սուխումից հեռու է, պետք է շուտ ճանապարհ ընկնել, հասցնել շուկայի բացմանը: Եվ ահա նա առավոտ ծեգից ոտքի վրա է, դեռ երեկվանից պատրաստ պայուսակն է դնում ուտելիքը և քարշ տալիս կանգառ: Հայրս՝ օջախում կրակ վառելով փնթփնթում է՝ իբր, նրան ոչ մի բան էլ ուղարկել պետք չէ, ով իմանա, գուցե սովաճությունից հարազատ տունը հիշի: Մայրս, ճարպկորեն պայուսակում տեղավորելով պարզ ուտելիքը՝ մի երկու գլուխ պանիր, երկու լիտրանոց բանկայով մածուն, կանաչեղեն, մի երկու կիլոգրամ կաղին,– և հայիոյելով սակավ կաթ տվող կովերին, սկսում է հորս մեղադրել, որ նա անսիրտ է: Հայրս կիսա-

վառ փայտից ծխախոտը կպցնելով քմծիծաղ է տալիս՝ «Եւ եմ անսիրտը, թե քո որդին...»– «Տղան ինչ անի, շրջափակում է»։– «Ինչ է, շրջափակումն է նրան քաղաքում պահում։ Ա՛յ թե ասացիր։ Այսքան գործ կա այստեղ, իսկ նա նստել է Սուխումում...»– «Նրա համար չի ուսում առել, որ քո եգիպտացորենը քաղհանի...»– «Իմ եգիպտացորենը. հո չասացիր...»։

Մայրս երբեմն վաղ ամուսնության պատճառով ուսումը չավարտած ծերացող կնոջ իր ծուռումուռ ձեռագրով երկտող է գրում ինձ, չնայած նրա մատներն ավելի սովոր են թեյ հավաքելու կամ կով կթելու։ Ավելի հաճախ գրում է, երբ հարևաններից կամ ազգականներից որևէ մեկն է մեռնում։ Նամակի մեջ ճանապարհաճախսն է փաթաթած-դրած. հուղարկավորությունից բացակայել չի կարելի։ Երբ բաց եմ թողնում, մայրս նեղանում է։ Հայրս հանգիստ է վերաբերվում դրան, կարելի է ասել՝ փիլիսոփայորեն, չնայած ծնված օրից ոչ մի փիլիսոփայի չի կարդացել։ Հայրս հակված է ամեն բան ծանրութեթև անել առողջ բանականությամբ, իսկ դրանից Աստված բաժին է հանել նրան լիուլի, նույնիսկ չափից ավելի. երբեմն թվում էր, թե նա չափազանց կարծրասիրտ է և չի ների, եթե որևէ մեկը սովորույթի ասպարեզում թուլություն ցուցաբերի։ Բայց նրանց, ովքեր չափից ավելի խանդով էին հետևում սովորություններին, հայրս ընդամենը դատարկ մարդ էր համարում, ինչպիսին որ նրանք իրականում են։ Իսկ ինքը լոկ արտաքին ձևին էր հետևում և այնպիսի չափավորությամբ, որ ոչ ոք չէր կարողանա կասկածել, առավել ևս մեղադրել, որ նա քամահրանք է ցուցաբերել։ Եվ այն, որ զարմը, այսինքն՝ ես խնձորենուց հեռու չի ընկել, կարծում եմ, ջերմացնում էր նրա, մեր մեջ ասած, իրապես փոքր-ինչ սառնավուն սիրտը։ Դրանով էր բացատրվում նրա փափկությունն իմ ուրացողության հանդեպ, ինչն անհասկացող մորս առիթ էր տալիս մեղադրել նրան թողտվության, եթե ոչ՝ իր նկատմամբ գաղտնի դավադրություն նյութելու համար։

Հայրս անհարմար չէր զգում, որ զարմը, ընկած լինելով բնին այդքան մոտիկ, ընդհանուր առմամբ հետևում էր նույն սովորույթին, բայց ոչ թե մարդկանց սահմանած, այլ բնության։ Բայց դե ես վերևում ասացի, որ հայրս մտահայեցական հորինվածքների սիրահար չէր։

Մայրս ինքն է պայուսակը կանգառ տանում, հայրս անասուններով է զբաղվում, ասենք՝ նաև ամաչում է, որ կտեսնեն, թե ինչպես է որդուն ու-

տելիք ուղարկում:

Առավոտի լուռության մեջ ավտոբուսի ծայնը հեռվից է լսվում. թե ինչպես է այն անշտապ, շնչասպառ, հաճախակի կանգառներով շարժվում գյուղական խորդուբորդ ճանապարհով: Եվ երբ շրջադարձի հետևից դուրս է սողում, մայրս անհամարձակ ձեռք է բարձրացնում, չնայած առանց այդ էլ կկանգնեցնեն: Ավտոբուսն արգելակում է, նա բացված դռնով շտապ-շտապ փոխանցում է պայուսակը՝ իբրև իմ արդարացում անիծելով պատերազմը և վրացիներին: Եվ հետո կանգնում է՝ քանի դեռ ավտոբուսը շրջադարձ չի արել ու չի անհետացել: Ինչո՞ւ: Գուցե ամհոթ է անմիջապես տուն գնալ. չէ՞ որ ուղևորները կարող են մտածել, որ ինքն ուզում էր իսկույն ազատվել պայուսակից, դրա հոգսը բարձել ուրիշների ուսերին, իսկ ինքն շտապով անցնել առտնին գործերին: Թե պատճառն այլ է՝ նա պայուսակն է ճանապարհում. սկզբում՝ հայտնապես, քանի դեռ տեսնում է ավտոբուսը, իսկ հետո՝ մտովի, և մոտավորապես երկու ժամ հետո մի պահ կտրվելով գործից, թեթևացած ասում է ինքն իրեն. «Արդեն հաստատ ստացած կլինի»,– և դրանից հետո հանգիստ սրտով շարունակում է իր աշխատանքը:

Ամուր առողջություն և թեթև՝ օրական ոչ ավելի, քան երեք գավաթ խաղողի չեչից կրկնակի քաշած ճաճա խմելու հակում ունենալով՝ հայրս դանդաղ մոտենում էր ծերությանը, որն ըստ ամենայնի նույնքան երկարատև էր լինելու, որքան պապիս՝ իր հոր ծերությունը: Միաժամանակ ծերանում էր նաև մայրս՝ միշտ մտահոգ, հոգսաշատ, նիհարակազմ մի կին: Նրա հավերժական հոգսն էին տնտեսությունը և «ինչ կասեն մարդիկ»-ը:

Նրանք ծերանում են մեծ, սառը տանը, որը կառուցվել է վաթսունականների վերջին: Այն ժամանակ նորածն էին երկհարկանի քարաշեն տուփերը: Ստալինյան ստրկությունից հետո ձնհալի բերած թեթևացումը գյուղացիներին հնարավորություն տվեց ավելի ազատ շնչել, և նրանք, թեյ և ծխախոտ աճեցնելու, շերամապահությամբ զբաղվելու միջոցով փող կուտակեցին, քանդեցին իրենց խարխուլ ակուսաքյաները՝ հենասյուներով փայտաշեն տները՝ իբրև մութ անցյալի մնացուկներ և կառուցեցին նորերը: Մեկ տանիքի տակ երկու տուն. այս կերպ էին նրանք արդարացնում իրենց սնապարծությունը, քանզի այլ բառով հնարավոր չէ բնութագրել այդպիսի հսկայական, հաճախ ավելորդ շինությունների կառուցումը:

Ամբողջ օրը ես տանն էի, նախ անկողնում, հետո երբ ձանձրացա, կեսօրին մոտ վեր կացա, խալաթս վրաս գցեցի և տեղափոխվեցի Մագբուլիայի հին, բայց դիմացկուն բազմոցի վրա: Երեկոյան դեմ բազմոցից տեղափոխվեցի բազկաթոռի վրա, որը նույնպես հին էր, բայց որակյալ: Ընդհանրապես, Մագբուլիայի բնակարանում ամեն ինչն էր հին, բայց բարձրորակ, ամբողջատիրական ամուր տեսակի, որը եթե ոչ հավերժական, ապա հաստատ՝ հազարամյա կոմունիզմի համար էր նախատեսված:

Օրինակելի կյանքի իմ որոնումներում ես որոշեցի մի ոչ մեծ դադար առնել և այսօր գրադարան չգնացի: Գուցե վաղն էլ չգնամ, և վաղը չէ մյուս օրը, գուցե մի շաբաթ քիթս դուրս չհանեմ, ինչի հետևանքով խուճապի կմատնեմ Մանչա Սաթբեկիչին. նա այդքան օր հում պետք է ներկայացնի իր անժխտելի ապացույցները: Բայց և իմ որոնումները նույնպես սպեղանի են ծերուկի սրտին: Համոզված եմ, որ նրա թթված ուղեղում դեգերում է նոր սերնդի կողմից կորսված արժեքների վերածննդի խրոխտալի միտքը, և նա չի դադարում հրճվելուց՝ նայելով ինձ նման լուրջ երիտասարդին: Մինչդեռ ես ամեն օր ապրում եմ ուրիշի կյանքով, չեմ կամենում վերադառնալ դեպի իմը:

Իսկ Մադինան: Եթե նա նկատի իմ բացակայությունը, ուրեմն կմտածի իմ մասին: Կարևոր չէ, թե որքան է մտածելու, իսկ իմ մտքում ամբողջ ժամանակ նա է: Թե ինչու է այդպես՝ չեմ կարող բացատրել, մտածում եմ՝ ու վերջ: Այդ անողը ես չեմ, ուզում եմ ասել՝ ամենից քիչ գլուխս է խառնված այդ գործին, չնայած կարծես թե ինքն է մտածում: Բայց իրականում իմ ամբողջությունն է մտածում, և մտածելով Մադինայի մասին՝ ես միասնության եմ հասնում ինքս ինձ հետ:

Ժամանակի մեծ մասը ես կարդում էի նույն այդ Հոբինգին: Երբ աչքերս հոգնում էին, ես փակում էի և լսում դրսից հասնող ծայներն ու հնչյունները, պատահում էր՝ ննջում էի: Երբեմն ինձ ավի նետված խեցի էի երևակայում, որը պարտադրված է մնալ տարիներ, տասնամյակներ, գուցե հարյուրամյակներ, մինչև որ ինչ-որ մեկի՝ ապագա իմ, ապագա Մանչա Սաթբեկիչի ներքանը ճգմի այն և փշուր-փշուր անի, ավազ դարձնի:

Մութն ընկավ: Եվ քանի որ ես ամբողջ օրը քնում-արթնանում էի, ապա երկար ժամանակ չկարողացա քնել:

Ինքնասպան լինել պատերազմում, որտեղ առանց այն էլ մահն ամենուր է, միայն թե համբերություն ունենան նրան սպասելու, պարզապես գլխումս չի տեղավորվում: Ինչո՞ւ Ադգուր Ա.-ն վերջում նման տարիօրինակ բան սարքեց, ինչ էր ուզում ասել դրանով: «Ամեն մի շարժումը, ամեն մի բառը պետք է ինչ-որ բան ասեն»,– ասում էր նա: Եվ ինչ իմաստ էր տալիս Ադգուր Ա.-ն իր վերջին շարժմանը՝ մի կողմ շարտելով սաղավարտը:

Իսկ գուցե նա ընդօրինակում էր Թրակլին, Մունիին, հազարավոր անանունների, ով մարտի թեժ պահին հոգնաբեկ ետ գցելով իր մարմինը, դեմ էր անում գնդակներին... Ինչ կատարվեց նրա ներսում. խախտվեց ապրելու կամքը, բանականությունը գերակայեց բնազդին, ինքնապաշտպանության բնազդին, թե՛ նա հասու եղավ կյանքին անհամատեղելի ճշմարտությանը:

Պատերազմում ես ոչ մի անգամ միտք չիղացա ձգանը սեղմելով կանխել անիմաստ շարժումը, քանզի գիտեի՝ շարժումը կշարունակվեր, բայց արդեն առանց ինձ, չնայած հարց է՝ որտեղ եմ ես այս ամենի մեջ և ինչ է «ես»-ը: Պետք է ողջ մնալ, իսկ հետո ամեն բան այլ, նոր ընթացք կունենա, մտածում էի ես: Ադգուր Ա.-ն այդպես չէր մտածում, նա նույն բանի մշտական, տաղտկալի կրկնության գերին էր: Իբրև գրող ինքնատիպ լինելով, ուրիշներին չնմանվելը համարելով իր աշխատանքի իմաստն ու նպատակը, նա կյանքում էլ չէր ուզում ոչ ոքի նմանվել:

«Փչարանում» մշտական հաճախորդներն ու ավարաններն են: Կեսօրին մոտ այստեղ են գալիս նաև փողկապով ու կարծթև սպիտակ վերնաշապիկով տարբեր տրամաչափի աստիճանավորները՝ իրենց ցուցադրելու, ժողովրդի հետ շփվելու: Ժողովուրդը նրանց քիչ ուշադրություն է դարձնում, նա զբաղված է. վիթխարի կիպարիսների տակ գտնվող սեղանների մոտ է հավաքվել դոմինո խաղացողների մի քանի խումբ, հիմնականում ալեհեր, փորձված խաղացողներ են: Բայց և հերթափոխն է հասակ առնում. մեծ թվով երիտասարդներ են աղմուկով խցկվել նրանց շարքերը: Խաղացողների քառյակին հետևում է մի տասը մարդ: Հաշվիչները չխլչխլում են, «ծուկը» խփում է «այծին»: Կանգնակների մոտ՝ բարկ արևի տակ, շախմատ են խաղում: Կրքերը ծայրահեղ լարված են, խեղճից դուրս խորհրդատուներ կան, քայլերը երբեմն հետ են վերցվում՝ մեկը թույլ է տալիս, մյու-

սը՝ ոչ, վիճում են խռպոտելու աստիճան: Անհաջող քայլը նվաստացուցիչ մեկնաբանություն է հարուցում: Պարտվողն ապացուցում է, որ հաղթել է, բայց խանգարել են: Ոչ ոք նրան չի հավատում, առավել ևս՝ չի կարեկցում:

Հեռու չէ խարխուլված «Ամրան», որն այդպես էլ չկարողացավ ափից պոկվել և ազատ նավարկել համաշխարհային օվկիանոսում: Այդպես է լինում, երբ արմատներով ամուր սերտաճում ես ինչ-որ բանի: «Աբխազիա» հյուրանոցի կիսակառույց շենքից՝ այն ցանկապատած երկաթբետոնե սալերի արանքից ստեպ-ստեպ դուրս են գալիս ավելի խոշոր՝ իսկական խաղացողները, որոնք փողով են խաղում: Այնտեղ՝ ներսում, երկրորդ հարկում, ղումարխանան է՝ խաղատեղին: Իրար գլխի են հավաքվել տարբեր գույնի խաղամոլները, մի սեղան են հարմարեցրել և տաքացած սեկա են խաղում, նարդի, բեիբույթ, «վաթսունվեց»... Երբեմն հետևում եմ խաղին: Ինձ բնական են ընդունում, նույնիսկ ընկերախումբ են հրավիրում: Ես ծայն չեմ հանում, ոչ մի բանի չեմ խառնվում:

Ծովի հոտն է փչում, երբեմն խաղացողների աղմուկի միջով լսվում է ալիքների ճողփյունը:

«Այս ֆնչ տրտմություն է, և որտեղից է այս ցավը», – եթե չեմ սխալվում, արժանահիշատակ, ավելի ճիշտ՝ անհիշելի ժամանակներում հարցրել է ոմն մեկը. չէ՞ որ այդ հարցից է սկիզբ առել այն, ինչն սկսել է լինել: Նա պոետ է եղել, հանգաթուխ-ոտանավորաթուխ, բանաստեղծ, սատանան նրան տանի:

Ես քրքջում եմ, աչքերս արցունքոտվում են, աղիքներս են կտրտվում, ես հռիռում եմ... Ավելի հիմար հարց հնարել էլ հնարավոր չէ: Ի դեպ՝ ինչպես և «լինել թե՛ չլինելը»: Որտեղից է այդ թախիծը. իսկ ո՞վ գիտե: Ո՞վ կարող է ինձ ասել, թե որտեղից է այն ծագել՝ ինչպես գետը, և ինչու, լայնանալով, ծածկում է շրջապատը:

Եվ ես ստվերի նման քարշ եմ գալիս քաղաքում...

«Ես հեղինակ եմ մի քանի տպագրված պատմվածքի և բազմաթիվ չգրված վեպերի և ինձ մխիթարում եմ այն հույսով, որ դրանք՝ չգրվածները, մի բան արժեն. մի՞թե դա քիչ է:

Բ.Ն.-ն պնդում էր, որ բնության բոլոր օրենքները վաղ թե ուշ կհայտնագործվեն: Եթե նրանք կախված չեն այն անհատից, ով հայտնագործել

է, ապա հավերժական կյանքում գիտական ստեղծագործությունն անիմաստ է: Փրկությունը ձեռք է բերվում հնազանդությամբ և հետաքրքրասիրությամբ, որոնցով շարժվում է իսկական գիտնականը, այլ ոչ թե միմյանցից առաջ անցնելու պատվախնդիր ցանկությամբ:

Բ.Ն.-ն իր տեսությունն ուներ. եթե աշխարհը հավերժ է, ապա ստեղծագործությունն իբրև ինքնատիպ, անկրկնելի երկերի ստեղծում միայն քո կողմից անհնար է. վաղ թե ուշ տիեզերքի տարբեր ծագերում, միմյանցից անկախ, բոլոր գրքերը բառ առ բառ կկրկնվեն, և ոչ թե մի անգամ, այլ բազմիցս, անվերջանալի թվով անգամ: Այսպիսով, արարչի դերն Աստված խանդոտ կերպով իրեն է վերապահել: Եթե աշխարհն անցողիկ է, ապա ստեղծագործությունը հնարավոր է. աշխարհը ժամանակ չի ունենա հայտնագործել օրենք, որը կարող էիր հայտնագործել միայն դու, գրել գիրք, որը կարող էիր գրել միայն դու: Այս դրվագում Աստված մարդուն է գիջել իր արարչական ձիրքի մի մասնիկը, և ինչհի նա այդ արեց՝ սոսկ իրեն է հայտնի:

Ես հավերժության կողմնակից եմ: Այդ դեպքում իմ չգրած գրքերը միևնույնն է, երբևէ կգրվեն, եթե ոչ իմ, ապա ուրիշի կողմից: Առաջիկայում ես պետք է տաղտկալի գործ անեմ՝ դրանք թղթին հանձնեմ, և միայն հանուն այն բանի, որ ինչ-որ մեկից շուտ անվանվեմ դրանց հեղինակը: Արժե՞ կյանքը ծախսել դրա վրա:

Ես այնքան էլ չեմ ուզում ապրել: Ես դիտել եմ ուզում, անմարմին հոգով սլանալ երկրագնդով մեկ և թաքուն նայել օտար կյանքերը: Ծայրահեղ դեպքում կարելի է ունենալ նաև անշարժ դիտակետ, օրինակ՝ լինել հզոր ծառ և ցանկալի է հնարավորինս երկար ժամանակով, ավելի լավ է՝ հավերժ: Բայց Բ.Ն.-ն ասում էր, որ ժամանակի ընթացքում, հավանաբար, կանհետանա նաև տիեզերքը. կտարրալուծվի: Ինքը՝ ժամանակը նույնպես, ավելի ու ավելի դանդաղելով, ուժասպառ ձիու նման անշունչ վայր կընկնի տիեզերքի ավերակների վրա: Աշխարհն ի վերջո կմարի, վրա կհասնի մեծ գիշերը: Այժմ ընդամենը լույսն է բացվում, առջևում է հոգնեցուցիչ երկար օրը:

Այնպես որ, իսկական հավերժության մասին խոսք անգամ չկա: Տիեզերքի անհետացմամբ կանհետանան բոլոր՝ գրված, չգրված, հրատարակված, անտիպ գրքերը, կորսված և գտնված չգիտես ինչու կրակով

չայրվող ձեռագրերը:

Թող այդպես լինի, ես համաձայն եմ նաև այն տասի հարյուր աստիճանի չափ տարիներին,– ինչպես Բ.Ն.-ի պատմվածքների հրեշը,– որոնց անցնելուց հետո ամենայն տեսանելին կմասնատվի մինչև վերջին աղյուսիկը, մինչև վերջին մասնիկը: Երանի մարդ իբրև ծառ կանգներ տարիների այդ բազմության ընթացքում՝ արձանագրելով երկնքի աստղերի նվազումը...

Ես տեսնելու եմ եկել և ոչ թե ծանձրույթից հորանջելով որևէ այլ անհրաժեշտությամբ թրև գալ այստեղ: Եթե մեկ այլ նպատակ կա, ապա ցույց տվեք ինձ, ձեր կծծիական թաքստոցից լույս աշխարհի հանեք այն, ներկայացրեք քսիվն իսկական կնիքով: Չե՞ք կարող: Որովհետև այն՝ իսկականը, չկա, մյուսը՝ բոլոր բացահայտ և գաղտնի գրպաններում եղածը, կեղծ է:

Պատերազմում ես իսկական կյանքով եմ ապրում, ոչ այնպես, ինչպես մինչև օրս եմ ապրել, և կյանքին հասու եմ լինում այլ կտրվածքով, այսինքն՝ կյանքն իմ առջև հառնում է իր իսկական դեմքով, որը զուգված չէ մխիթարական խոսքերով: Ոչ մի բան հորինելու կարիք չունեմ, ամեն բան զգում եմ՝ ինչպես առաջին անգամ, ամեն ինչ թարմ է, նոր, սուր և իրական: Արբեցումը մարտի ժամանակ և վիհի եզրին ինձ ծանոթ է: Եվ ես մինչև հիմա դիմանում եմ այս ամենին,– ահա թե ինչն է ինձ զարմացնում. երբ չափազանց շատ կլինի կյանքը և ուժերիցս վեր՝ գիտեմ, թե ինչ կանեմ:

Եվ սա ես «նայել» եմ անվանում: Ես նայում եմ կողքիս տղաներին: Նրանցից ոչ մեկին ես մինչ այդ չէի ճանաչում. փոքրիկ Աբխազիայում էլ է դա հնարավոր, եթե մի քանի տարի բացակայել ես: Բայց ինձ թվում է, որ բոլոր այս դեմքերը, որոնք միմյանց նման չլինելով, հերքում են այն կարծիքը, թե պատկանում են նույն ցեղին, ես տեսել եմ նախկինում, Սուխումի փողոցներում, «Ամրայում», հուղարկավորության, հարսանիքի ժամանակ... Գիտեմ, որ նրանցից շատերը ողջ չեն մնա այս սպանդանոցում. չգիտեմ՝ ողջ կմնամ ես ինքս: Բայց այդ անվախ, բարի, ուրախ, իսկական տղաներին տեսնելը միայն արժե, որպեսզի նրանց կողքին լինես»:

Նրա լռությունն այդպիսի ռոպեներին վախեցնում էր Նաթելային, նրա գլուխը բռնում էր, դարձնում դեպի ինքը և նայելով աչքերին, հարցնում էր՝ պատրաստ ճշալու, հիստերիայի գիրկն ընկնելու, հեծկլտալու, լացելու, շան պես վնաստալու. «Ասա՛, ռոբ ես դու, ռոբ: Ո՞ր ես գնացել: Ես քեզնից ոչինչ չեմ ուզում, միայն թե լսեմ քո ձայնը, խոսիր ինձ հետ ինչ ուզում ես՝ հորդ, մորդ, պատերազմի մասին: Խոսիր: Քո գրկախառնությունից բացի ինձ քո ձայնն է հարկավոր»: Իսկ հետո, արդեն ավելի հանգիստ, տիրապետելով ինքն իրեն, ծավալում էր երկար մենախոսությունը. «Ես միշտ էլ գիտեի վաղ մանկությունից հենց որ գիտակցեցի ինքս ինձ նախազգում էի իմ և ուրիշների տարբերությունն սկսեցի ճանաչել հարազատ դեմքերը վախենալ անհարազատ օտար դեմքերից և ահա հենց այդ ժամանակից երջանկագույն անդառնալի ժամանակից ես գիտեի նախազգում էի որ ինձ հետ ահա այսպիսի վատ բան կպատահի որ իմ ամբողջ կյանքն այսպես վատ կանցնի լանջով ու թեքությամբ դեպի ներքև մինչև հատակը – որ ես երբեք երջանիկ չեմ լինի այլ միայն վազվզոց և ամբողջ կյանքումս ցավ կզգամ և ոչ ոք ինձ չի սիրի ոչ ոք և երբեք – և որքան երկար եմ ապրում այնքան ավելի եմ տեսնում որ ամեն քայլափոխիս իրականանում է իմ մանկական կանխազգացումը – և եթե ասենք երեկ ինձ համար մի քիչ լավ էր ապա վաղը կամ մյուս օրը հարկ կլինի այդ մի փոքր լավի դիմաց վճարել կրկնակի եռակի գին և ամեն բան ընկած կլինի ավերակի մեջ մոխրակույտի մեջ – և ես հիմա երբ մի քիչ լավ եմ շրջում եմ երեսս ձև անում որ հեջ էլ լավ չի այլ միջին մի բան ինչպես միշտ ոչ մի այլ բան չկա որ մինչ օրս չէր եղել – վերջ հետո իմ գլխին չկոկոռալու համար հերթական աղետը – ես այդ էլ եմ կանխազգում ես դա գիտեմ ես դրանից վախենում եմ ծնկներս դողացնելու և փորս ցավեցնելու չափ – փորձանքները երկար հերթ են կանգնել և անկուշտ սոված սպասում են – բայց իմ խորամանկությունը և գլուխս հետ շրջելը համառորեն չտեսնելը և աչքերս փակելը չեն օգնում սիրտս անընդհատ անհամաչափ է խփում և իրեն չի պահում արևի շողից անձրևից առավոտվա քամուց երբ ես աշխատանքի եմ գնում ծովափով ծովի հարթ մակերեսի լույսի խաղը կամ ժպիտն ընկերուհու դեմքին ծանոթ-անծանոթի օտար անցորդի թռչունների ձայնը և նրանց դեպի երկինք միտվելն այնպես մաքուր է հիշելով քեզ – այո այո քեզ էլ և առաջին հերթին քեզ – հիմա չլսող սիրտս ուրախ կբաբախի – ամեն առավոտը ես այսպես

եմ սկսում ամեն ինչ նոր-նոր առաջին անգամ և հույսով– և ինչպես է որ այդ հույսը չի ցամաքում որտեղից եմ ես այդքան ունենում հանելուկ է ինձ համար – բայց հետո ցերեկը քանդում է այդ ամենը իսկ երեկոն և գիշերը խցկում են անթափանց խավարը – բայց ինձ համար մի անհասկանալի հրաշքով արթնանալով ես կրկին ուզում եմ ապրել կրկին ես ընդառաջ եմ գնում դարանակալած օրվան ավելի ճիշտ կյանքին չէ որ ես ինչ անում եմ կամ չեմ անում այն ինչ տեղի է ունենում կամ տեղի չի ունենում ինձ հետ այդ ամենը կյանք է կոչվում այնպես ինչպես կոչվում էր դեռ այն ժամանակ մանուկ հասակում և միշտ կային լույսը և ցնծությունը և սպասումը թե երբ իսկական կյանք կլինի – իսկ նա չի էլ գալիս սոսկ կոճոններ են ուրիշի սեղանից– և դու դրանից հետո կարող ես ահա այդպես պառկել և լռել ես քեզ համար ոչինչ եմ մի իր որն օգտագործում ես և մինչև մյուս անգամ երբ կուզենաս կրկին խաղ անել կարելի կլինի հիշել նրան դու անսիրտ ես ձեր ամբողջ տղամարդկային ցեղն անսիրտ է ձեզ համար մարդը ոչինչ է իսկ ես սիրտ ունեմ և ուզում եմ ապրել ես ուզում եմ երջանիկ լինել – մի բան ասա մի լռիր միայն թե մի լռիր երբ դու այսպես լռում ես ես վախենում եմ սիրտս վայր է ընկնում և ներսումս դատարկություն ու սառնամանիք է – մի լռիր և մի նայիր այդպես երբ այդպես նայում ես ես սարսափում եմ – ինչքան բան գիտեն քո աչքերը և երբ այդպես լռում ես ինձ թվում է դու մի վատ բան ես խորհում բայց այդ վատ բանը քո դեմ ես խորհում այն կկործանի քեզ մի լռիր...»

Բեսլանը նրան է նայում, և Նաթելան հասկանում է, որ այժմ նա չի լսում ու չի տեսնում իրեն: Ես նրա ինչքին եմ պետք և պետք եմ արդյոք, եթե նա կարող է այսպես հանկարծակի հեռանալ՝ առանց ինձ տաքուկ, փափուկ թևի տակն առնելու, այլ մենակ թողնել սառչելու,– հարցնում էր նա ինքն իրեն: Եվ այնժամ գործի էր ընկնում սիրտը, և նա արդեն չէր կարող չլսել նրա զարկերը, նրա հարցերը, հույսերը, ցավը: Երիցս անիծյալ սիրտ: Իսկ որ ավելի լավ է սիրտն անջատել, քարել սեփական կրծքում, այլապես վատ կլինի, նա դեռ մանկուց էր հասկացել:

Ում հետ էլ խոսեմ՝ երբեք չեմ կարողանում լիովին անտեսել նրա մեջ թաքնված աղիքները: Նա, դիցուք, վեհ բաներից է խոսում, ինչպես շատերը՝ խիղճ, հայրենիք, անկախություն, իսկ իմ աչքի առաջ է նրա փորը,

որտեղ կծիկ են դարձել նրա գարշելիորեն տաք, ինքնագոհ աղիքները:

Մանկությանս սարսափելի հուշերից մեկը հետևյալն է. տանը մորթեցին ուտըը կոտրած կովը: Պապս սրիչի նման սուր դանակով ձևեց նրա փորը վերևից ներքև՝ վզից մինչև կուրծքը: Կտրվող կաշվի բարակ, սարսռեցնող ձայնն այժմ էլ եմ լսում, և փորոտիքն ամբողջությամբ ընկավ հյուսկեն կողովը: Ես հազիվ զսպեցի ինձ, որ ձեռքերս չմտցնեմ գոլորշի արձակող այդ գորշ, երակների կապույտ շերտերով ծածկված տաք կծիկի մեջ:

Նրանք ալիքաձև շարժումներ են անում՝ իրենց միջով անցկացնելով կղկղանքը, որպեսզի լցվեն նոր, թարմ ուտելիքով: Իսկ դրանց տերը, մաշկով և հետո հագուստով սքողելով այդ ամբողջ անպետքությունը, ինձ է մեղադրանք բարձում, հեջ վեջը չի: Նա բլբլում է՝ մի թեմայից մյուսը թռչելով, մինչդեռ ճիշտ կլիներ, որ բերանը ջուր առներ և լռեր, որևէ անկյուն խցկվեր ու քիթը դուրս չհաներ:

Ես չեմ կարողանում աղիքները մոռանալ: Նաև չեմ կարողանում մոռանալ, որ երբեմն այդ ամբողջ կեղտը մի այնպիսի խենթացնող գեղեցկությամբ է զգեստավորված, որ շունչդ կտրվում է: Ահա անցնում է հպարտ ու անկախ, ասես իր այդ նրբագույն սպիտակ մաշկի տակ, այդ գլխապատույտ առաջացնող անուշաբույր ծածկոցի տակ ոչ թե աղիքներ են, այլ երկնքի կեսը բռնած վերջալույսը: Բայց ինչո՞ւ եմ ես այնպես ուզում արտասվել նրա համար, նրա փայլկտացող ստվերի համար:

Բավական է մարդու մեջ խորանաս մեկ սանտիմետր, գուցեև ավելի քիչ, երբ նրա շրջուկը քո առջև հառնում է իր ամբողջ անհրապույր տեսքով: Մարդն ընդամենը մի կտոր միս է, ոչ ավելին: Ոչ, մոռացա, մեկ էլ աչքերը: Մինչև մահ մեր մեջ պահված հոգու մասին չեմ խոսում. իմ լիազորությունից վեր է: Հոգին մեծ անհայտ է, մի իսկական «x» (այսինքն՝ իքս), որը մտնում է բոլոր հավասարումների մեջ, բայց ոչ մի եղանակով դրանցից չի կորզվում: Նա դեռևս չի որսված սարքերով, չի չափված, զանգվածը, ծավալը, զարկերակը հայտնի չեն: Առանց այս տվյալների ոչ մի լուրջ հետազոտող չի ստորագրի կասկածելի ենթադրությունները:

Չե՞ք նկատել, թե ինչ սառը, անհոգի է դառնում արևի ակնոց կրող մարդը: Բացատրությունն ապշելու չափ պարզ է, նույնիսկ պարզունակ՝ մենք չենք տեսնում նրա աչքերը: Դրանք թաքցնելով անթափանց ապակիների հետևում՝ կարելի է ինչ ասես անել. ալիքին ապահովված է, ոչ մի հանցան-

շան չկա: Աչքերը,– որքան էլ սպիտակ լինի կնոջ մաշկն ու ինքն էլ նրբագեղ, որքան էլ շողում ու զգայական քայլվածք ունենա,– հենց աչքերն են նշանակետին խփում ու շշմեցնող հարված հասցնում: Այլ աչքերը, որոնք հաճում են շուրջը, ընդամենը ապակուց ու հեղուկից կազմված ագահ ու փութկոտ օրգաններ են, նայում ու չեն կշտանում: Իսկ նրա աչքերը ոչ միայն նայում ու տեսնում են, այլև լիցքավորված են, նրանք անձկության սուր և սառը դաշույնով ծակում-անցնում են մարմինը: Միայն այն, որ նա կա,– երկոտն ու երկձեռն, երկաջք,– արդեն բավական է, որպեսզի ցավից ռոնաս՝ անբացատրելի ու անտանելի ցավով, որը հանկարծ ամուր բռնում է սիրտը: Իսկ երբ նա նաև քո վրա է գցում անփույթ, սեզ հայացքը...

Աչքն ուրիշ է. ես կգերադասեի, որ արևավառ մեր քաղաքում բոլորը, մանավանդ կանայք, մուգ ակնոց կրեին: Մուգ ակնոցների քաղաք... Անտեղյակները կլիմայական բացատրություն կփնտրեին, թե որն է դրա պատճառը՝ հարավը, մերձարևադարձը, արևի սանձարժակ ցնծությունը... Ես կիմանայի իսկական պատճառը՝ սոսկ կանխարգելիչ միջոց է, որպեսզի ամեն քայլափոխի քեզ չդարանակալեն երկու անհատակ վիհերը:

Իսկ այս տխմարը, ձեռքից փախցնելով վիթխարի իրադարձությունը, իրենն է շարունակում: Մեր կողքով, բոլոր առագաստները պարզած և կոտրելով գոյության միապաղաղությունը, շքեղ փայլով լողաց-անցավ ինքը՝ Գեղեցկությունը (ախր ինչպես պաթոսից գերծ մնաս), Գեղեցկություն, որի մեջ ժամանակավորապես պահվել են աղիքները: Կգա ժամը, կգա օրը, և դրանք լույս աշխարհի կտողան՝ մի ակնթարթում այդ աներևակայելի հրաշքը հանգեցնելով իրենց գարշահոտ էությանը: Եվ այդ ժամին այնքան էլ երկար սպասելու կարիք չկա, գեղեցկությունը թռուցիկ է, բայց... վաղանցիկ չէ: Վաղանցիկ է նրա ակամա կրողը, նա, որքան էլ վշտալի լինի և որքան էլ այդ աղիթով դատարկ ափսոսանք հնչի, ծերանալու ենթակա է՝ դանդաղ, թե սրընթաց, բայց մարմնի անշեղ մահացմամբ, էլ չհաշված տարբեր աղետները՝ հիվանդությունը, դժբախտ պատահարը...

(Ես խճճվեցի, ոչ մի կերպ չեմ կարողանում միտքս հասցնել լիակատար պարզության: Ուզում էի ասել, որ աղիքները վաղ թե ուշ հաղթանակ կտանեն: Չնայած գեղեցկությունը հավերժ կմնա, բայց նրա կրողի իրական երբևէում աղիքներն անպայման կհաղթեն: Ահա թե ինչ էի ուզում ասել: Այս հակիրճ բացատրությունից հետո, կարծում եմ, կարող եմ դուրս գալ

խեղդող փակագծերից):

Գեղեցկությունը ժամանակի ամենակարճ ակնթարթն է, դրանից հետո ժամանակն անբաժանելի է: Հավերժական անբաժանելի մասնիկները, որոնցից կազմված է աշխարհը, գեղեցկության մասնիկներն են. գեղեցկությունը կարող է ի հայտ գալ սոսկ այս ակնթարթում, նրա հետագա դիտարկումը դատարկության և բժախնդրության փրփուրն է:

Ես չէի մոռանում այն որդերին, որոնք երբևիցե կխժռեն այդ գեղեցկությունը: Ահա թե ինչն է անտանելի, ահա թե ինչն է ամեն առավոտ գամում ինձ մահճակալին և չի թողնում վեր կենալ: Պատահում է, որ ես ամբողջ օրն անկողնում եմ անցկացնում: Պառկում եմ՝ աչքերս փակ կամ առաստաղին հառած: Երբեմն բակից լսում եմ մտահոգ ձայներ և իմանում, թե ինչ է կատարվում աշխարհում. ում են կողոպտել, ում՝ սպանել, ով է մեքենայով գլուխը ցիսել ճամփեզրի սյանը կամ ծառին: Պառկում եմ՝ ասես ոչ մի բան չմտածելով, իսկ իրականում ոռնալ եմ ուզում:

Իմ զրուցակիցը քառատրոփ տանում էր իր նվիրական մտքերը, որոնցով քնում ու արթնանում էր, որոնք տեսնում էր տազնապալից երազներում և որոնք երկար, սրտագին խոսակցությունների թեմա էին մի գավաթ սուրճ ըմպելիս կամ ինքն իր հետ խորհելիս: Նա՝ այդ դմբոն, լիարյուն կյանքով էր ապրում, քանզի մշտապես ինչ-որ բանով զբաղված էր: Եվ, պատկերացրեք, զբաղված էր ոչ թե ինքն իրենով, ոչ թե իր իմաստագուրկ ու ծանձրալի կյանքով, այլ բարձր, իրենից դուրս գտնվող բաներով՝ հայրենիք, Ժողովուրդ, Վրաստան, Ռուսաստան, մի խոսքով՝ բախտորոշ երևույթներով:

Ես ականջիս ծայրով էի լսում, չէի թողնում, որ գլուխս մտներ զբաղված մարդու շաղակրատանքը: Իսկ իմ ուժատ հայացքը կառչում էր ինձ հուսահատության մատնած անձանդթուի հու անկասելիորեն հալչող կերպարանքից: Միևնույն պահին իմ աչքում առկայծեց իմաստի ստվերը. և՛ քաղաքը, և՛ ամբոխը, և՛ օրը, և՛ ես, – ամեն ինչ հանկարծ կարևորություն ստացավ: Այդ ամենը դուրս լողաց քառսից, անիմաստ պտույտից, ամեն բան մեկուսացավ և արմատացավ մի ինչ-որ համընդգրկուն, համապարփակ երևույթի մեջ: Վրաս հանդարտություն իջավ, այլ կերպ չես ասի՝ որքան էլ հնամոդա հնչի ասածս:

(Ստում եմ, կարելի է այլ կերպ էլ ասել: Ծուլությունից՝ ես իմ վիճակը

հարմարեցրի հայտնի ձևակերպմանը, օգտվեցի ուրիշի փորձից և պատրաստի բառակապակցությունից, չնայած դրանց հեղինակը, ինչպես և ես, նույն երկոտանին է և ուղղաձիգ քայլվածք ունեցողը, բայց չի կարող բացատրել իմ զգացածը):

Եվ աներես շատախոսը, որի գազաթը տեսնելուն պես ես սովորաբար ծլկում էի, այժմ դուրեկան մարդ էր թվում, ճիշտ է, մի քիչ զրուցասեր, բայց խելացի և անկեղծորեն մտահոգ Ափսնիի և արխազների ճակատագրով: Նա ասում էր, որ մոտակա հարյուր տարում քիչ հավանական կամ նույնիսկ անհնար է, որպեսզի մեզ ճանաչեն իբրև ինքնուրույն պետություն: Բայց հոգ չէ, խրոխտաբար շարունակում էր հայրենասերը, մենք առանց դրսի օգնության կարող ենք ինքներս մեզ կերակրել, բանակ պահել և այն էլ այնպիսի մակարդակով, որ եթե վրացիները համարձակվեն մեկ անգամ էլ քթները խոթել այս կողմերը, դարձյալ կստանան մոլորթներին:

Իսկ ես մտածում էի, թե ինչ կերպ է հնարավոր վերացնել աղիքները, որպեսզի միայն թաղանթը մնա, որպեսզի սոսկ թաղանթով սպառվի բովանդակությունը: Ինձ թվում էր, թե գիտեմ՝ ինչպես այդ անել. Ադգուր Ա.-ն էր հուշել:

«Այժմ հոր է Մ.-ն. նա պատրաստվում էր Արևելյան ռազմաճակատի 14-ից հետո այնտեղ ուղղաթիռ չի թռչում, իսկ հասնելու այլ եղանակ չկա: Նա շատ էր հիշում այնտեղ կռվող իր կրտսեր եղբորը, անհանգստանում էր:

Այն գիշեր Գումըսթայի ափին ես գրկեցի նրան, նույնիսկ համբուրեցի: Իսկ հետո մենք սիրեցինք իրար առանց խոսք ասելու, ագահաբար, ասես շուտով մեզ մահապատժի էին տանելու:

Որոշեցինք գետում լողանալ: Հանձն չեմ առնի նկարագրել. վախենում եմ ընկնել ամենաճղճիմ գրական չափազանցության գիրկը: Մենք մերկ էինք, Մ.-ի մարմինն սպիտակ էր՝ գիշերվա մթության մեջ ոչ այնքան տեսանելի և այդ պատճառով խստապահանջ երևակայությամբ էր ավարտուն տեսք ստանում, արագահոս ջուրն էլ սառն էր:

4. 1992թ. դեկտեմբերի 14-ին Տկվարչալից երեխաներին, կանանց ու ծերերին Գուրոթթա տեղափոխող ուղղաթիռը ոչնչացվել էր հակառակորդի կողմից:

(Իմ մեծագույն սիրո, իմ սփոփիչ ջրի, ավելի ճիշտ՝ գետի մասին կասեմ հետո, երկրորդ համարով, բայց մերձակա հեռվում կիպ կանգնած է ծառը՝ նույնպես իմ սերը, նույնպես իմ մեծ մխիթարանքը, որին հատուկ եմ անդրադառնալու՝ չվախենալով ոտք դնել տրորված արահետը, մաշված ճանապարհը, լայնքով ու երկայնքով հերկած դաշտը, չխնայելով ամենացնձագին բառերը: Չեմ խնայելու ժամանակը, որն ավելի ու ավելի քիչ է ինձ մնում. չէ՞ որ այստեղ ողջ անցկացրած օրը, այսինքն՝ երբ դու քո մարմինը ողջ-առողջ, հոգին՝ փոքրիշատե ամբողջական վիճակում հասցնում ես գիշերվան, որը պարուրում է հողը արևը հորիզոնից անդին մայր մտնելու բնական հետևանքով, իսկ հետո մարմինդ և հոգիդ թաթախում կազդուրիչ քնի մեջ, այսինքն՝ որոշակի ժամկետով դրանք զատում կեցությունից. չէ՞ որ այսօրվա օրն ընդգրկում է ժամանակի մի այնպիսի վիթխարի պատառ, որը սովորական օրը երբեք չի կարող մարսել, այլ կխեղդվի՝ դուրս թափելով արյան հետ: Ես չեմ պատրաստվում խորիմաստ տրակտատ ծավալել անունների և մտքերի լրակազմով այն անձանց, ովքեր քիչ ուժ չեն տվել լուսավորությանը, բնագիտությանը և ճանաչողությանը. հակված չեմ մտավոր ամեն մի սայթաքման ժամանակ ձեռքս զգել ուրիշի հենակներին: Ես գետն եմ սիրում՝ մինչև ծնկներիս դողը, մինչև սրտիս թայտոցը, մինչև գերերկրային ցնծություն և ուրախություն: Գետի խորությունը, զառիթափ ավի տակ ծփացող գետախորշը, որտեղ նա դանդաղ է հոսում, ասես մտքերով է տարվել, ինձ համար լի են գերող և դյուրիշ գաղտնիքով, և ես ամենից ավելի կուզենայի հատակի քար լինել, և որպեսզի ջուրն անընդհատ հոսեր իմ վրայով:

Թաղեք ինձ գետի հատակին. այս կլինեի իմ կտակը, եթե այն պատերազմում որևէ իմաստ ունենար:

Բայց ես հատկապես սիրում եմ անտառի գետակները, սիրում եմ այդ սուսիկ-փուսիկ, համեստ գեղեցկուհիներին, որոնք բարեկազմ մարմիններով խոխոջում են թավուտի մեջ:

Մի հանելուկ ասեմ. ինչո՞ւ գետի աղմուկն այդքան քաղցր է հնչում իմ ականջին, և ես պատրաստ եմ այն հավերժ լսել, իսկ ահա անձրևն ինձ անասելի տագնապեցնում է և սիրտս տանջում:

Մեր մարմինը հիմնականում ջրից է բաղկացած, հավանաբար՝ հոգին

ևս:

Առանց գետի և ծառի որքան աղքատիկ կլինեին հողը և մարդու կյանքը):

Եվ մենք մի խոսակցություն ունեցանք, որն իր անկեղծությամբ և սրությամբ այլ հանգամանքներում անհնար կլինեք: Գիշեր էր, չորս քայլի վրա՝ մահը, և մենք, որ վաղուց հեռակա ճանաչում էինք միմյանց, մտածում միմյանց մասին և ճակատագրի ուժով անմիջականորեն հանդիպել էինք, մեր և կյանքի մասին աչք-աչքի այնպես էինք խոսում, ինչպես ցերեկը չես խոսի: Ասես հեռու-հեռու էինք անհնարին, խաբուսիկ մահից: Ես այդ գրույցը լրիվ և անփոփոխ գրի եմ առել առանց մաքրագրելու, միանգամից: Դրա սևագրությունն արդեն իսկ գրառված էր մեր հոգիներում, մեր անցյալում: Եվ այդ մեկ էջանոց տեքստն ավելի ծանր է կշռում, քան ամբողջ գրականությունը Հոմերոսից մինչև Ժամանակակից գրչակի երկերը, այն ավելի խորն է ու ճշմարտացի, քան երբևէ գրված որևէ բան: Ես այստեղ որևէ ծառայություն չունեմ, չունի նաև Մ.-ն: Մենք խոսում էինք այնպիսի բառերով, որոնց գոյությանը չէինք էլ կասկածում, և որոնք գալիս էին անծանոթ խորքերից, դրանք մեր մեջ էին մեր ծնունդից շատ առաջ, և ահա մենք արտաբերում էինք այդ խոսքերը: Եվ մենք ազատ էինք ու երջանիկ: (Շարունակությունն աղտոտած ու ջնջած է, նույնիսկ խոշորացույցով հնարավոր չէ կարդալ բառերը, որոնք թանձր ու խնամքով անխնա ջնջվել էին Ադգուր Ա.-ի ձեռքով):

Դրանից հետո մենք այլևս միմյանց չտեսանք: Կհանդիպեմ արդյոք նրան պատերազմից հետո: Համոզված եմ, որ մեր միջև այլևս ոչ մի բան չի լինի, խաբուսիկ օրվա լույսի միջով մենք միմյանց կողքով կանցնենք անծանոթի պես, նույնիսկ թեթևակի գլխով չենք անի որպես թաքուն հանդիպման նշան, որն ուրիշին հասու չպետք է լինի, և մեր գաղտնիքը մշտական միայնության դատապարտվածի հպարտ զգացումով այլևս չենք տանի առաջ: Այն, ինչ եղել էր մեր միջև՝ և՛ սերը, և՛ գրույցը, ավելի ճիշտ սերը և խոսքը, խոսքը և սերը, – պատկանում է միայն գիշերին, այն չի կարելի լույս աշխարհի հանել, քանզի այդ դեպքում մութն ամեն բան կծածկի, ամեն ինչ կդադարի լինել»:

Նաթելան որոշեց մեկնել: Այստեղ անելու բան չկա, ասաց նա, մենք դեռ երկար ենք շրջափակված, աշխարհից կտրված նստելու: Այն նույն ընկերուհին՝ Ասիդան, որը Նաթելայի խոսքով Մոսկվայում կամ Մերձմոսկովյան որևէ տեղ աննկատ գլորվում է խելացնորության գիրկը, վատ չի տեղավորվել և այժմ կանչում է «բախտը փորձելու»:

Նաթելան այստեղ պահող բան չունի, և ահա մեկնում է: Խնդրում է միայն, որ Բեսլանն աչքը բնակարանի վրա պահի, բանալին է տալիս:

- Դու ոչ մի, ո՛չ մի, բացարձակ ոչ մի բան չունե՞ս քեզ պահող,– հարցնում է նա՝ խոցվելով այն իրողությունից, թե ինչ թեթևությամբ է Նաթելան պատրաստ թողնել ամեն բան և մեկնել չգիտես թե ուր:

- Հաստատ հայրենիքս չէ պահողը... Իսկ դու այլևս ինձ չես սիրում:

- Ի՞նչ իմացար:

- Տեսնում եմ, նկատելը հեշտ է: Հենց միայն այն, թե դու վերջերս ինչպես ես տալիս իմ անունը, դա՛ է վկայում:

- Ինչպե՞ս եմ տալիս: Ի՞նչ ես հորինում:

- Ոչ առաջվա պես: Եվ ես ոչինչ չեմ հորինում:

- Նաթելա: Նաթելա: Նաթելա: Շարունակե՛մ:

- Պետք չէ, միևնույնն է, այն չէ:

- Չեմ հասկանում: Գուցե ծայնս կտրվել է կամ փոխվել. ինչի՞ց եզրակացրիր, որ դադարել եմ քեզ սիրել:

- Դու դեռ չգիտես դա, իսկ ես գիտեմ... Ես քեզ սիրում եմ, բայց երբեք չեմ ասել. կարծել եմ, որ իրավունք չունեմ ինձ պարտադրելու քեզ. չե՛ որ ես սովորական կին չեմ: Այժմ արդեն կարող եմ ասել: Ինչ որ եղել է մեր մեջ, ավելորդ էր, բայց դրա մեղավորը դու չես, ես եմ... Ես մեկնում եմ, դու էլ ամուսնացիր և երեխաներ ունեցիր, դրանից լավ բան կյանքում չկա:

Բեսլանը լուռ է, չգիտե՝ ինչ ասի, և չգիտե՝ ինքը սիրո՞ւմ է նրան, թե՞ ոչ: Ավելի շուտ, մի քանի օր անցնելուց հետո ինքը խենթի պես կկարոտի նրան, ինչպես կարոտում էր պատերազմի ժամանակ: Ամբողջ պատերազմի ընթացքում Նաթելան գյուղում էր՝ մորական կողմի իր ազգականների մոտ, և երբեմն չուզենալով, բայց և որևէ մեկի ներկայությամբ սիրտը թեթևացնելու ներքին մղումով, այդ տարիները համարում էր իր կյանքի ամենասարսափելի ժամանակը: Որքան երիտասարդներ սպանվեցին. մի՞թե հնարավոր էր դա տեսնելուց հետո ապրել... Նրա մեջ մի ինչ-որ

բան կոտրվեց՝ միջուկը, որը մինչև օրս չէր թողնում, որ նա ճկվի,– հենց դրա համար էլ Բեսլանը նրան ուժեղ մարդ էր համարում,– ահա այդ միջուկը պատերազմի ժամանակ կոտրվեց. սա արդեն նախկին Նաթելան չէր: «Ես մեկ տարում հինգ տարով ծերացա»,– ասում էր նա՝ իրեն զննելով հայելու մեջ և իր ասածի հավաստումը փնտրելով նոր կնճիռների խորշերում: Նրա ապրումներն արտաքնապես նկատելի չէին, Բեսլանի աչքին նա ծերացած չէր երևում, բայց նաև այն, որ նրա մեջ ինչ-որ բան է կոտրվել, տեսանելի էր:

Երբ Բեսլանի գումարտակն Ինգուր հասավ, նրանց հրամայվեց տեղավորվել Սաբերիո բնակատեղիում, լեռների ստորոտին, և պաշտպանել ՀԷԿ-ը:

Հոկտեմբերի սկիզբն էր: Այստեղի գիշերները նման չէին ափամերձ հարթավայրի գիշերներին, այլ օդը փխրուն-ապակյա էր, սարսռեցնող, երկնքից լայն բաց արած աչքերով նայում էին աստղերը: Այն ամենից հետո, ինչ եղել էր, անսովոր լռությունը նրան այլ տոնայնություն փոխանցեց, ոչ թե իր, այլ ուրիշների համար ունեցած վտանգի, տագնապի զգացողությունը հանկարծ հոգս ցնդեց, և նրան պարուրած անդորրը վերածվում էր ցանկության, որ այն այդպես, կիսաքուն վիճակում դեռ երկար, եթե ոչ՝ հավերժ, շարունակվի:

Բայց Նաթելային նա չէր կարող մոռանալ: Օր չկար, որ նրան չհիշեր: Մտածում էր ավելի հաճախ, քան պատերազմում, որովհետև այն ժամանակ ամեն մի ապագա սարսափելի հեռու էր, եթե ոչ՝ ընդհանրապես անհնար, և ցանկությունների տևողությունը սովորաբար մեկ-երկու օրից ավելի չէր լինում: Իսկ այժմ ապագան եկավ մի ակնթարթում, միանգամից լուսացավ, այն էլ երբ մարմինը ողջ-առողջ էր,– ձեռքի արմունկի ոչ լիարժեք ծալվելը կարելի էր համարել պատերազմի անխուսափելի նշանը,– և հոգին հաջողությունից սառած:

Երբեմն նա արթնանում էր գիշերվա կեսին, ընկերների խոմփոցից և անհանգիստ քնից, անսովոր խլացուցիչ լռությունից, որը հոգատար պահպանում էին նրանց վրա թեքված լեռները, և ծանր նախազգացումն սկսում էր տանջել նրա սիրտը: Լուր կար, որ Նաթելան լռվել է Սուխումում, որ նա հավանաբար սպանվել է: Բեսլանի անհամարձակ փորձերը՝ իմանալու, թե ուր է նա,– բացահայտ փնտրտուք այդ իրավիճակում նա չէր կարող իրեն

թույլ տալ,– որևէ արդյունք չտվեցին: Նա լոկ երազում էր, թե ինչպես է գրկում նրա փափուկ, տաք մարմինը, ներշնչում նրա բուրմունքը, պատկերացնում էր, թե ինչ կատաղությամբ է սիրելու նրան՝ որ ինչպես միշտ անտարբեր էր, սառը այն ամենի հանդեպ, ինչ Բեսլանն անում էր նրան: Թեկուզ և այժմ այդ բանը երբեք չի սառեցնի իրեն, նա հավերժ կսիրի Նաթելային:

Բեսլանը նրան հաճախ էր երազում տեսնում, և այնուհետև ամբողջ օրն ապրում էր նրա մոտիկության զգացողությամբ, հավատով, որ նա ողջ է: Երբեմն վայրենի մտքեր էին գալիս գլուխը: Նա երևակայում էր, որ, եթե Նաթելան մահացել է, կփորի-կհանի նրա դիակը և նրա հետ սեր կանի: Նրան չէր շփոթեցնում, որ դիակը սառած-փայտացած կլինի. դիակի հանդեպ էլ էր նույն կիրքը տածում:

Ծառայությունը բավական անիմաստ էր, բայց ընկերներին առանց պատճառի, հենց այնպես նա լքել չէր կարող, և երբ փոխարինողների պես մի բան հայտնվեց,– նրանց դեմքերից և նոր համազգեստից Բեսլանը հասկացավ, որ նրանք վառողի հոտ չեն շնչել և զբաղվելու են սովորական կողոպուտով, բայց արդեն ավելի խոշոր չափի՝ գործարան են թալանելու, ֆաբրիկա, և այդ ամենը՝ վերադասի իմացությամբ և թույլտվությամբ,– Բեսլանը Սուխում սլացավ:

Համարյա կես օր գնում էր, որովհետև բեռնատարը, որի թափքում Գալում և շրջակայքում թալանված տարբեր բարիքների՝ հիմնականում պահարանների, բազմոցների, աթոռների մեջ նստել էր նա, քաշում էր մի ամբողջ գումակ՝ յոթ կամ ութ ռազմավար մարդատար ավտոմեքենա՝ «Ժիգուլի», «Վոլգա», նույնիսկ մինչջրհեղեղյան «Ջապորոժեց» կրիան, որը փտել էր, մետաղի ջարդոն դարձել, բայց տնտեսության մեջ մի բանի պետք կգար: Վարորդը դանդաղ էր քշում՝ հաճախակի կանգ առնելով շարժիչը խափանվելու, ճոպանը կտրվելու, որոնց հետևանքով գումակը կես էր լինում, կամ ավարը կիսելու նպատակով ծանոթ որսորդի հանդիպելու պատճառով: Ծանապարհն էլ իր հերթին բռնված էր գոմեշների, կովերի, եզների անվերջանալի նախիրներով, որոնք մեզրելական Գալի շրջանից քշվում էին մնացյալ Աբխազիա: Անասնավարները գոռում էին կենդանիների վրա, որպեսզի շարքը չխախտեն, և նրանք անմոռունք են-թարկվում էին:

Մագակալած Բեսլանը, աղտոտ, քրտնքահոտ հագուստով ծանոթ, ճոճոացող սանդուղքով բարձրացավ վեր և բախեց դուռը: Պատերազմի ամենալարված օրերին նրա սիրտն այնքան կատաղի չէր բաբախում. նա վախ չէր զգում, ինչպես ոմանք ֆիզիկական ցավ չեն զգում, բայց և հուզվում էր:

Նաթելան բացեց դուռը, նրան տեսավ և քարացավ: Նիհարել էր, բայց շատ բան տեսած աչքերն աշխույժ էին: Նրանք որոշ ժամանակ լուռ կանգնած էին, հետո գրկախառնվեցին, և Նաթելան այրող շրթունքներով շշնջում էր. «Դու ողջ ես, ողջ ես...»: Նա նրան գրկում էր, բայց ոչ առաջվա պես, այլ հատուկ քնքշանքով, ինչպես գրկում է իսկական կինը, և նա քիչ էր մնում մտածեր, որ կրած տառապանքը նրա մեջ ալեկոծել է ննջող զգայականությունը: Բայց նա սխալվում էր:

Եվ հետո եղավ խելահեղ մի շաբաթ, երբ նա Նաթելային առաջվա պես էր սիրում:

Այսօր արգասաբեր օր էր՝ տասնմեկ անուն էր ստուգել: Բեսլանն ինչպես միշտ Մադինային խնդրեց, որպեսզի նա իրեն բերի այսինչ տառով սկսվող, այս դարակի առաջինից հետո այսինչ գիրքը: Գրադարան գալու առաջին օրը, երբ գրանցվեց և բարձրացավ ընթերցասրահ, Մադինան նրան չհասկացավ, մի քանի անգամ հարցրեց, իսկ երբ նա մանրամասն բացատրեց, զարմացավ, նույնիսկ տարօրինակ համարեց խնդրանքը. «Նման խնդրանքով դեռ ոչ մեկը չի դիմել»: Նա մի չեղած բան հորինեց, թե իբր ինքը բնության պատահական օրինաչափություններն է հետազոտում և ավելի համոզիչ լինելու համար թվարկեց մի քանի հայտնի անուն, որոնք զգալի ավանդ են ներդրել արդի գիտության այդ բնագավառ: «Դարակներում գրքերի տեղադրման և տեքստերի առնչությունը, ինչպես նաև այս կամ այն բառի կամ տառի տեղաբաշխումն այս կամ այն էջում օգնում են հայտնագործել աշխարհի օրինաչափությունները տիեզերքի հետնախորշի մի ատոմից, հետնախորշ, ուր օրենքի ոչ մի պահապան ոտք չի դնի, և միայնակ ատոմը կանի այն ինչ խելքին կփչի և մինչև ամենաբարդ համակարգերը ինչպիսին մարդն է եթե նույնիսկ նրան զզվեցրել է տղամարդու և կնոջ կյանքը ծերերն ու երեխաները և ինքը տիեզերքը այսինքն աստղի և գալակտիկայի հետնախորշի այն միայնակ ատոմը սև և սպիտակ

անցքերը մուգ նյութը մարդը եթե նրան զգվեցրել է տղամարդու և կնոջ կյանքը ծերերը և երեխաները – այս պահին ես դիտավորյալ չեմ խոսում վաղուց մահացած մեռյալների մասին կամ վերջերս թարմ դագաղների և թարմ գերեզմանների մեջ տեղավորվածների չեմ ուզում փչացնել ձեր կենսուրախ տրամադրությունը քանզի տեսնում եմ որ դուք կենսուրախ մարդ եք այսինքն դուք կյանքում ուրախություն եք տեսնում իսկ հիվանդության տառապանքը և մահը թյուրիմացություն եք համարում որն արագ կանցնի ում հետ էլ որ պատահած լինի – քանզի ցուցակը չափազանց երկար կլինի և ես կհոգնեցնեմ ձեզ դրա հիշատակմամբ այբից մինչև քե և քեից մինչև այբ և ցաքուցրիվ այսինքն պատահական հերթականությամբ բայց ձեզ հոգնեցնել չէի ուզենա և դա իմ խնդիրը չէ դա ձեր հարմարավետ գրադարան այցելելու նպատակը չէ գրադարան որը գրքի իմաստության և գրքի բազմամյա փոշու գանձարան է դուք առանց այն էլ մեկ օրում հասցնում եք հևասպառ լինել նույնիսկ շատ քիչ այցելուների երեսից բայց ձեր շուրջը կան գրքեր և հերոսներ և նրանց մեջ մեռյալ տառերով ու բառերով պառկած չեն՝ սպասելով ընթերցողին ով դրանց կարողացածին չափ կյանք կտա չէ որ դրանք ապրում են նաև այն ժամանակ երբ ոչ ոք չի կարդում և ձեզ վրա ներգործում են նկատելիորեն ներգրավելով իրենց էություն– և ահա վերը թվարկածը և չթվարկածը նույնպես նպատակ ունի ձեզ չհոգնեցնել և ենթարկվում է որոշակի օրինաչափության որոնք ճեղքելը մեր խնդիրն է դուք կարող եք հարցնել ինչի համար է այս ամենը և ինչպես իմանաս թե ինչով է ապրում և շնչում տիեզերքի հետնախորշի միայնակ ատոմը չէ որ նրա մոտ չես էլ հասնի ինչպես իմանաս թե ինչով է ապրում այն մարդը ում կյանքը զգվեցրել է– և եթե կյանքը նրան զգվեցրել է ապա ապրում է արդյոք նա ընդհանրապես թե ձև է անում – չէ որ նրա սառցակտոր սրտին առանց կոտրելու բախելով հասնելը և փայլիլուն բեկորների բաժանելը բարդ է մանավանդ այդ բեկորներն իսկույն կհալչեն մեր տաք կարեկցանքից– և ձեր հարցը տեղին է և ես նույնիսկ ավելի կուժեղացնեի լավ հարց է – սովորաբար այդպես են ասում քաղաքագետները երբ որ նրանք պատասխան չունեն թե ճիշտ կողով դրած հարցը կամ ճշտորեն կտրուկ դրված կողի ընկած հարցը – դուք հասկանում եք թե ես ինչպես մոլորվեցի երեք կողոսկրերի մեջ – ինչպես բոլորի կողմից ընդունված է բանական ամբողջ աշխարհում ճիշտ պատասխանի այդ կեսը... Եվ այս–

պես, ձեր առաջին հարցն է, թե ինչի է պետք այդ ամենը: Այդ պահին նա ծայնը ցածրացրեց և դադար տալով և գլուխը հակելով Մադինայի կողմը – ինչի հետևանքով և նա ականա գլուխը մոտեցրեց նրա գլխին, բայց սոսկ այն սահմանում, որը թույլատրելի է ընդօրինակելու մղումով, իսկ հետո ուշքի գալով հետ-հետ գնաց, բայց արդեն քաղաքավարության տեսակետից հնարավորինս աննկատ, և մտքում քմիծաղ տվեց և մտածեց. «Նա պարզամիտի մեկը չէ, ինչպես սկզբում թվում էր»,– մտերիմ կիսաշշուկով ասաց. «Իսկ ես չգիտեմ, տիկին, ձեր նվիրական, հռետորական, անօրինակ, սպանիչ, ջախջախիչ հարցի պատասխանը: Բայց և «լինել թե չլինել» էլ անպատասխան մնաց իր հիշատակյալ, նվիրական, հռետորական, անօրինակ, սպանիչ, ջախջախիչ պահանջի պատճառով, օդում կախված մնաց արդեն քանի դար: Եվ քանի որ մարդու խելքով այդ հարցը մինչև օրս աներկված և աներկվիտ լուծում չի ստացել, ապա ես, մեղքս ինչ թաքցնեմ, երբեմն մտածում եմ, թե արդյոք ամբողջ գործը հարցական (?) նշանը չէ, նա չէ՞ արդյոք բոլոր հարցերի պատասխանը...»

Մադինան հավատ չընծայեց նրա դատարկաբանությանը, բայց ոչինչ չասաց, այլ բարեկամաբար և ըմբռնումով նայեց Բեսլանին՝ այդ ամենը կատակ համարելով: Սկզբնական շրջանում նա ինքն իրեն հարց էր տալիս, թե խելքը չի՞ թոցրել նա: Հետո որոշ տարօրինակություն նկատեց, ինչը, ի դեպ, գրքերի տարօրինակ ընտրությունն էր, ուրիշ ոչինչ: Ընդհանուր առմամբ նա նորմալ էր:

Մադինայի բերած գիրքը բավական հաստափոր էր: Այն մի հայտնի՝ ամբողջ կյանքում չբավարարված սնապարծությամբ համակված,– ինչը դաջված էր մկնաձև մոռոպին,– ուստիև չարամիտ ու թունավոր քաղաքագետի հուշերի գիրքն էր: Բայց մեկնաբանություններն էին ստվար: Հեղինակը փոխհատուցում էր իր կյանքի անհաջողությունները, չնայած կողմնակի դիտողի աչքին նախանձելի հաջողություն ուներ, կարևոր պաշտոններ էր զբաղեցրել եվրոպական պետություններից մեկում, և ցանկացած հասարակ մահկանացուի թուքը կիոսեր առատությունից այն հայտնի անունների, ում հետ նրան վիճակվել էր հանդիպել, խոսել, ճաշել, ընթրել, քնել և անպայմանորեն լուսանկարվել:

Մանչա Սաթբենիչը տեղում չէր: Նրա ներկայությունը միշտ շեղում էր Բեսլանին, անհանգստություն էին պատճառում նրա զայրացած բացա-

կանչությունները, որոնք լռությունն ընդհատում էին թերթի մի էջի կանոնավորությամբ, նրա հաճախակի այցը զուգարան, – նրա միզապարկը թույլ էր, – նրա հոտը, որը կողքից անցնելիս խփում էր Բեսլանի քթին, հանգստի պահին Մադինային ծիծաղեցնելու նրա անշնորհք փորձերը: Բայց և խոսակցությամբ էլ էր պատրաստ աներեսաբար կպչել՝ երբ Բեսլանը մտածկոտ հայացքը հեռացնում էր գրքից:

Բեսլանը խորասուզված ընթերցում էր, և մինչև գրադարանը փակվելը հասցրեց մտորել և երևակայել վաղուց մահացած տասնմեկ մարդու կյանքը. նրանք ապրել էին 23-ից 87 տարվա երկրային կյանք:

– Երիտասարդ, ես ուզում եմ մի բան հայտնել Ձեզ:

Կնոջ դեմքն անսովոր համակրանք ու հոգացողություն էր արտահայտում: Ես անհարմար զգացի: Միևնույն ժամանակ թառամած մաշկի, խորշոմների, կրեմի և դիմափոշու միջով թափանցում էր մոլեռանդ բամբասկոտի անհամբերությունը:

Մենք անցանք փոշոտված գրադարակների հետևը, և նա կիսաշշուկ, բայց այնպես, որ իր երիտասարդ տխմար ընկերուհին, ով փայլեցնելով իր ծուռտիկ, լայն ատամները, մեզ էր նայում, լսեր, – եթե զինակից են, ապա մինչև վերջ – հայտնեց.

– Երիտասարդ, ես այնքան եմ համակրում Ձեզ, որ չեմ կարող չզգուշացնել. Մադինան պատերազմում բուժքույր էր և փորից վիրավորվել է, նա երբեք երեխա չի ունենա: Շատ մեղք է, նա այնքան լավն է, Դուք նույնիսկ չեք էլ պատկերացնում, թե որքան լավն է. սրտիցդ չես պոկի, ահա թե ինչքան լավն է...

Գեշոն նրա ասածը կրկնում էր գլուխը թափահարելով և կանխավայելող ինքնագոհ ժպիտով: Նա ինքը, փառք Աստծո, առողջ է: Նա կարող է ծնել ու ծնել, միայն թե գտնվի մեկը, ով ոտքը կապ գցի, գիրկն առնի և իրար հետևից, արդար աշխատանքի քրտինքով ու համառությամբ բեղմնավորի նրան և իր տաք սերմով սերմանի բերրի ընդերքը:

Պառափն սպասում էր, թե ես ինչ կասեմ, բայց ես համառորեն և ի հեճուկս նրա լուռ էի: Նա զարմացած հայացքն ինձ հառեց, հետո շփոթվեց, – ինչը ես, ճիշտն ասած, չէի սպասում, – բայց արագորեն տիրապետեց իրեն. աչքերը կկոցելով չարությամբ փայլեցրեց, շրջվեց և ծանրորեն տեղը

նստեց: Գեշոն զգաց, որ բան չստացվեց, ընկերուհին գործը ձախողում է. դեմքից ակնթարթորեն փախցրեց իր տխմար քմծիծաղը և ատելությամբ – ինչից նրա դեմքն ավելի տխմար արտահայտություն ստացավ, չնայած թվում էր, թե էլ տեղ չկա – նայեց ինձ:

Ես, առանց որևէ բան ասելու, շրջվեցի և բարձրացա ընթերցասրահ, որտեղ իր սեղանի մոտ հայացքը գրքին հառած նստած էր Մադինան: Եվ քանի դեռ սանդուղքով բարձրանում էի, զգում էի, որ իմ հետևում կատաղի թափով աճում է հիասթափությունը, դրա հետ նաև՝ խուլ չարությունը: Իմ անունն, իհարկե, աներկբայորեն ջնջվել է «սիրելի դուրեկան պատանիների» ցուցակից և մտցվել է «լկտի և ինքնավստահ մեծամիտների» ցուցակ: Միևնույն ժամանակ դասվել եմ տարեցի խոսքով ասած՝ «դժբախտ մորֆինիստների», ջահելի խոսքով՝ «նարկոմանների» շարքը:

Այդ օրվանից նրանք հազիվ էին ինձ բարևում: Սառնորեն գլխով էին անում, ինչպես իրենց գլխին հիմնավոր խաղ խաղացած հին ծանոթի:

Կյանքի ընթացքում մենք այնքան մարդու ձեռք ենք սեղմում՝ մերթ սառը, մերթ տաք, մերթ մաքուր, մերթ կեղտոտ, մերթ փափուկ, մերթ կոշտ ձեռքեր: Եվ մի՞թե ձեռքներս վանալուն պես այդ շփումից ոչինչ չի մնում, և մենք վանում ենք այն, ինչը մեզ կապում էր այդ կարճատև ակնթարթին:

Նաթելան մինչև հիմա հիշում է մոր չոր, ոսկրոտ ձեռքերը, որոնցով մայրն ամբողջ կյանքում ծանր աշխատանք էր անում: Երբեմն նրան թվում էր, թե առնում է դրանց հոտը, որը մինչև օրս մնում է նրա մատների վրա... Նա իր մորը կենդանի էր հիշում: Բայց ամենից ավելի հստակ հիշում էր ոչ թե նրա դեմքը, այլ հպումը, մաշկը: Նա չէր կարողանում հավատալ, որ հոգին ոչ մի առնչություն չունի մարմնի հետ: Եվ ընդհանրապես, գուցե ոչ մի հոգի էլ չկա, այլ կա լոկ մարմինը. ինքը մորը հիշում է միայն մարմնապես, առանց մարմնի նա իր համար գոյություն չունեի: Եվ մի՞թե նրան երբևէ կհանդիպի անմարմին, ստվերի նման. նա արդեն իր մայրը չի լինի...

Նրա մատները սառն էին, նրանց մեջ սառել էր կյանքի ջերմությունը, որը նա մանկուց էր հիշում: Ինչ հավատով էր նա իր ձեռքերը դնում նրա ավի մեջ: Պատահում էր՝ նրա ձեռքը բռնած ժամերով կնստեր անկողնու մոտ. նա կքներ, կարթնանար, իսկ Նաթելան դեռ նստած է առանց աչքը նրանից կտրելու: Եթե մայրը երազ տեսներ, կզգար մատների թեթև

դողից, մարմնի ցնցումից, քրթմնջալուց... Իսկ գուցե դա երազ չէր, այլ նյարդային երևույթ: Նաթելան ուզում է, որ մայրը որևէ երազ տեսնի, որ-պեսզի նրա երազը մահվանը չափազանց նման չլինի... Նա ամբողջովին իր մարմնի ամեն մի մասնիկի մեջ է, նաև մատների. նրանք ասես ինքնուրույն կյանքով են ապրում:

Վեճը շարունակվում էր, մենք «զգեստափոխվում էինք», փորձում այլ կերպ լինել, դուրս գալ սեփական «ես»-ի սահմանից: Ես Ադգուր Ա.-ին մեղադրում էի, որ նա երկիմաստ վարքագիծ է ցուցաբերում:

– Ամեն մի խելացի մարդ, գոնե արտաքուստ, պետք է հետևի հասարակության մեջ գործող կանոններին: Սպիտակ ագռավ լինելը հիմարություն է:

Մեկ այլ անգամ նա այլ կերպ էր պատասխանում. ինքը պարզապես ուզում է տեսնել, թե ինչի կիսնագեցնի մարդու ինքնակամ ենթարկումը հասարակական դիրքորոշմանը. նա ամեն անգամ մանրակրկիտ գրանցում է իր զգացողությունը, և ստացվում է զգացմունքների մի ինքնատիպ աղյուսակ: Բայց դրա կորեքում նա իմ ասած ոչ մի հոգի էլ չտեսավ, միայն ձանձրալի կրկնություն. ուր է տանում աղյուսակը՝ անհայտ է, նրա իմաստն անհասկանալի է, գուցե միայն ցույց է տալիս, որ զգացմունքն էլ է հոգնել. սովորությունները, ինչպես և մարդիկ, մաշվում են, հնանում: Նա այս կերպ էլ էր պատասխանում. որ ինքը սովորությամբ պահպանելու շատ, ամեն անգամ տարբեր պատճառ է ունեցել, բայց ոչ մի կեղծավորություն կամ իր խոսքի և վարքագծի տարբերություն չի տեսել, ոչ մի ներքին անհարմարություն երբևէ չի զգացել:

Մենք «Ամրայից» երեկոյացող քաղաք էինք իջնում: Ամենուրեք մարդիկ են ու մարդիկ, բազմագույն հովեկները փողբիկ խմբերով ակնապիշ, ասես անսպասելիորեն եղեմում են հայտնվել, նայում ու անհամարձակ քայլում են ճեմուղիով: «Ինձ ամեն ինչ անիրական, հորինովի է պատկերանում, – ասում էր Ադգուր Ա.-ն, – և այս քաղաքն իր անհատնում մթնշաղային թախիծով, և այս շուտափույթ մզացող երկինքը, և այս անըմբռնելի, Աստծուց պարզևսված երկիրը...»

Մենք հաճախ էինք այդ մասին խոսում, ոչ թե ընդհանուր «կյանքը երազ է» նշանաբանով, այլ իբրև անհաղթելի զգացման, որը վերջին ժամանակ – երբ մեր և վրացիների հարաբերությունները լարվեցին անհնա-

րինության չափ – հանկարծակի տիրեց մեզ: Ադգուր Ա.-ն դրան տալիս էր իր՝ ինչպես միշտ հակասական բացատրությունը. մենք մեր մեջ դեռևս մնացած գազանային ներքինով զգում ենք վերահաս վտանգը, ուստի մեր բոլոր զգացողությունները սրվել են, մենք սկսել ենք տեսնել, լսել և զգալ շատ ավելի, քան նախկինում: Եվ մենք տեսանք մեր երկիրը: Տեսանք, որ նա անտանելի գեղեցիկ է: Մենք մեր աչքերին չենք հավատում, չենք հավատում, որ այսպիսի գեղեցկություն հնարավոր է այս երկնքի տակ: Եթե այդպես է, ապա այս ամենը երազ է: Իրականում մենք արթնացանք: Եվ մեր տեսածը մեր ուժից վեր է, և մենք հետ ենք վազում:

Ես հակառակն էի պնդում. որ Աբխազիան երբեք այնքան իրական չի եղել, որքան հիմա՝ աղետի շեմին. եթե պատերազմ լինի, նա կհառնի մոխրից կուրացուցիչ արժանահավատությամբ: Իսկ այն, ինչը մենք նրա հետ զգում էինք, – իբր ամեն բան երազ է, – ես ինքնաներշնչում էի համարում, ընթերցած գրքերի հետևանք, մի խոսքով՝ ուղեղի պտտագոյացում: Ադգուր Ա.-ն ճարտար, բայց կեղծ փաստաբանությամբ հակառակն էր ապացուցում. որ ես էլ եմ ամեն բան երազի պես տեսնում՝ միայն թե երկար տարիներ ֆիզիկա սերտելով իմ մեջ խլացրել եմ զգացմունքի նախնական նրբությունը, մթազնել եմ իմ ջինջ բանականությունը: Չի կարող պատահել, որ ես որոշ թուպների, որոնք հազվադեպ են, բայց կիզակետի նման իրենց մեջ են հավաքում իրերի իմաստը, էությունը, չզգայի ամբողջ տեղի ունեցողի պարտադիր չլինելը: Այդ թուպները զարթոնք են հիշեցնում: Վերջնական, անդառնալի զարթոնք կլինի մահը: Մահը մեր միջից թափ կտա ամենայն օտարամոտը, այն ամենը, ինչ մեզ է կպել երկրային կյանքի օրերին: Բայց մահից առաջ էլ է այնպես լինում, որ հոսանքը հանկարծ երազի մակերևույթ է հանում այդ ամենը: Գուցե մի ակնթաթթով է հանում, բայց դա բավական է, որպեսզի ճշմարտությունը մեզ շամփրի կայծակի նման՝ ամեն բան երազ է: Միթե ոչ մի նման բան ես չեմ զգացել: Ոչ, չեմ զգացել: Ադգուր Ա.-ն նորից նոր էր սկսում. երեխաները նույնն են զգում երազում և արթմնի, իսկ ի՞նչ է նրանցից ավելի մոտ աշխարհի ակունքին ու ճշմարտությանը: Հետո՝ մեծանալով, այսինքն՝ հեռանալով ակունքից, աշխարհին բառեր հագցնելով, մենք իսպառ զրկվում ենք մանկական ընկալման անմիջականությունից: Այն, ինչն ուղղակի, առանց ավելորդության ընկալում էր ճշմարտությունը, հանկարծ ցրիվ է գալիս հինգ սխալ

զգացման վրա: Բայց և մենք ինքներս հաճախ օգնում ենք դրան գրքերից քաղած ուրիշի մտքերով:

Ես գրառեցի ինչպես հիշել եմ, սեփական բառերով: Ես մի կողմ շարտեցի անունները և տեսությունները, որոնք անխնա կիտում էր Ադգուր Ա.-ն, որպեսզի իր հորինվածքը համոզիչ հնչի: Կարծում եմ, որ նա դրա համար ինձնից չի նեղանա, եթե այնտեղ, որտեղ նա այժմ գտնվում է, հնարավոր լինի որևէ բան զգալ: Կյանքի այս ավիին, երբեմն ասում էր նա, պետք է իր մեջ անշեշ պահել սոսկ մի զգացում՝ կյանքի զգացումը. մնացած ամեն ինչը պետք է դեն շարտել, դրանք թող թշնոցով հանգչեն խաբուսիկ ծովի հորձանուտում: Նա ամեն բան, այդ թվում իրեն, մտացածին էր համարում. «Ինձ ինչ-որ մեկը հորինել է ծովորեն...», «...անշնորհք», «...հիմարաբար», «...ի հեճուկս»– մշտապես տարբեր, քանզի երկու միանման օր չի կարող լինել. կյանքի ամեն մի ժամը միակն է: Եվ մարդիկ այդ «ամեն ժամին» այլ են, հոսուն, ինչպես այն տխրահոջակ գետը: Բառերը չեն հերիքի, որպեսզի նշվեն օրերի յուրահատկությունները: Բայց բառերի զուգակցումով, միացումով ամեն մի օրն անուն կունենա: Այդպես հավերժությանն էլ կարելի է անուն տալ:

Նաթելան մեկնեց և, իհարկե, իր հետ տարավ մոր լուսանկարը:

Ես նրա հետ գնացի մինչև Փսոու: Ներսս դատարկ էր, լրիվ քամվել էի, բոլոր խոսքերը, որ նախօրյակին քնից առաջ պատրաստել էի, ինչ-որ տեղ գոլորշիացել էին: Գիշերը ես անպաշտպան եմ լինում, բաց, հոգիս՝ մերկացած, ինչ-որ բան եմ զգում և զգացմունքներս արտահայտելու խոսքեր գտնում: Ես Նաթելայի հետ հեռվից էի սիրալիր, երբ իմ միայնակի անկողնում պառկած էի – ես նրա տանը երբեք չեմ գիշերում: Անհարմար է, առանց այն էլ բոլոր հարևանները ճանաչում են. նրանց թիվը պակասել է, փոխադրվել են վրացիների լքված բնակարաններն ու տները:

Նա ապրում է կոմունալ տիպի մի հին տան, որն ունի անմաքուր ներքին բակ, և ես նրա մոտ՝ երկրորդ հարկ եմ բարձրանում փայտե ճռագող սանդուղքով, որը հին է որքան տունը, եթե ոչ ավելի հին, բոլոր հարևանները տեսնում են ինձ և լսում ոտնաձայնս: Հենց որ ոտքս դնում եմ առաջին ամենաստորին աստիճանին, որը չգիտես ինչու ամենաճռախն է, հետաքրքրասեր ականջներն ու աչքերն իսկույն դիտակետ են ընտրում

թեքված վարագույրով պատուհանը և բանալու անցքը, իսկ ավելի համարձակն իբր թե գործով դուրս է գալիս իր բնակարանից և հետուառաջ գնում առմուտքով: Նրանք բոլորը կանացի սեռի անհատներ են. հետաքրքրասեր ականջների և աչքերի այն տերերը կամ նրանց ամուսիններն ավելի հուսալիորեն են թաքնվում: «Բարյացակամները» դեռ պատերազմից առաջ էին ծնողներիս զեկուցել, որ ես «իմ երիտասարդ կյանքը կործանում եմ՝ կապվելով թեթևաբարո կնոջ հետ»: Մայրս, ինչպես և սահմանված է մոր համար, աղմուկ բարձրացրեց, նույնիսկ ուզում էր Նաթելայի հարազատների մոտ պատվիրակություն ուղարկել՝ պահանջելով «հանգիստ թողնել տղային»: Հայրս չթողեց: Մայրս վախենում է, որ ես կամուսնանամ Նաթելայի հետ, և նրան է մեղավոր համարում, որ ես մոռացել եմ իրենց: Հմայել է անառակը: Պատերազմի ժամանակ մայրս ուխտ էր արել, որ ամեն բան կների ինձ, միայն թե ես ողջ մնամ,– և ի կատարումն ուխտի մատաղ է անելու սպիտակ, մի սև մազ անգամ չունեցող այծ... Եվ այժմ ոչինչ չի ասում ոչ ամուսնության, ոչ Նաթելայի, ոչ մնացյալ ամեն ինչի մասին... Բայց դա ժամանակավոր բան է, շուտով, ես գիտեմ, կսկսի հոգիս հանել ամուսնության, տոհմի շարունակության խոսակցությամբ, ասելով, որ վաղուց ժամանակն է, որ ընտանիք կազմեմ. ավր միակ որդին եմ, որին է մնալու այս ամբողջ տնտեսությունը՝ տունը, հողամասը, այգին, ով խնամելու է գերեզմանները, որտեղ պառկած է նախնիների յոթ պորտը:

Առավոտյան ես արթնացա սովորականի պես, հոգիս ինչ-որ տեղ էր վերացել, քնքուշ խոսքերը նույնպես ինչ-որ տեղ էին անհետացել: Ես դրանք հիշում էի, բայց նրանց մեջ արդեն չկային այն կրակը, այն անկեղծությունը, որոնք ես ներդնում էի գիշերը:

Մենք ավտոբուսով էինք գնում, և ամբողջ ճանապարհին խոսք անգամ չասացինք: Վաղ առավոտ էր, ավտոբուսը լեփ-լեցուն էր հիմնականում կանանցով, որոնք Փսոու էին գնում առևտրի. մանդարինի սեզոն էր: Նրանցից շատերը սևազգեստ էին՝ կրծքներին կպցրած զոհված որդիների մեկական, ոմանք էլ՝ երկուական փոքրիկ, սգո շրջանակով լուսանկարները: Դեմքերը հոգնած էին, աչքերը՝ անմխիթար վշտով լի: Ես երբեմն նրանց վրա թաքուն հայացք էի ձգում՝ ինձ մեղավոր զգալով. ես ողջ էի, իսկ այս տղաները մեռած են, հողի մեջ պառկած:

Կանայք օրը մի քանի անգամ կանցնեն սահմանը. այն կողմում ման-

դարին գնելով, սայլակով, պայուսակով, ով ինչով կարող է, կամրջով կանցկացնեն մյուս կողմը, որպեսզի ավելի թանկ ծախեն: Ծախելուց հետո վերադառնում են, և այսպես մինչև մութն ընկնելը, մինչև սահմանի փակվելը: Հաջորդ օրվա վաղ առավոտից ամեն բան նորից է սկսվում. ստորացուցից հետ ու առաջ ցելսի միջով և մաքսավորների գոռոցի ներքո, երկար հերթեր, առևտուր. այս կողմում, որպեսզի գոնե մի փոքր զիջեն, այն կողմում, որպեսզի իրենք չզիջեն: Ինչ արած, պետք է կերակրել մնացած երեխաներին, թոռներին, գործազուրկ ամուսիններին: Պետք է հոգեհաց տալ, զոհվածների տարեդարձը նշել, որդիների ծննդյան և զոհվելու օրերին նրանց ընկերներին հավաքել: Պետք է խնամել շիրիմները, գոնե մի քար դնել: Եվ այս ամենն այն բանի համար, որպեսզի չմոռանան, որպեսզի ոչ ոք չմտածի, թե նրանք այնպես էլ անհետ կորան, որպեսզի բոլորը տեսնեն, որ նրանց հիշում են:

Աշխատանքն ավարտելով՝ մայրերը հոգնած քնում են՝ քուն մտնելուց առաջ վերջապես հնարավորություն ունենալով մտածել միայն պատերազմում զոհված որդիների մասին, և կշտամբելով իրենց, որ օրվա ընթացքում հազվադեպ են հիշել նրանց, և դրա համար թողություն խնդրելով:

Մայրերը երբեք չեն հաշտվի իրենց որդիների կորստյան հետ: Ես նույնպես:

Նաթելան երբեմն սպասումով, ներքևից վերև նայում էր ինձ՝ վիատվելով իմ լուրջությունից: Ես քարե արձանի նման կանգնած էի նրա առաջ: Բայց երբ ես որսում էի նրա հայացքը, որն այնքան պերճախոս էր, մի ակնթարթում ինչ-որ բան էր սպրդում մեր մեջ՝ մի լիցք կամ կայծ, և ես այդ պահին սիրում էի նրան, և ես սարսափում էի նրանից բաժանվելու մտքից: Նա հակում էր գլուխը, իսկ լիցքն անհետ կորչում էր իմ անտարբերության, նույնիսկ ոչ թե անտարբերության, այլ հոգեկան ընդարմության մեջ: Ինձ թվում էր, թե գործի է գցած ճակատագրի մեխանիզմը, և ես ուժ չունեմ այն կանգնեցնելու: Ավարտվում է մեկը, սկսվում է մյուսը, և վերադարձ չկա դեպի անցյալը: Չես բռնի այն, ինչը պետք է հեռանա: Եթե կաչես՝ քեզ էլ կտանի, կանջատի ներկայից, ուրեմն և՛ ապագայից:

Մենք բաժանվեցինք այնպես, ինչպես գնում էինք՝ լուռ ու մունջ, ինչպես հին ծանոթներ, ովքեր առանց խոսքի հասկանում են միմյանց:

«**Մ**եռնում են, երբ կյանքը քիչ է,
Երբ կյանքը շատ է՝ ինքնասպան են լինում»:

Ես Մադինային ուղեկցեցի մինչև իր տուն: Առաջին անգամ սպասեցի մինչև աշխատանքային օրվա վերջը, չնայած այնքան էլ հեշտ չէր գլուխն ազատել Մանչա Սաթեհնիչից, որն ավելի շուտ էր դուրս գալիս և կանչում էր ծովեզրով զբոսնելու,– ամենօրյա զբոսանքի և թարմ ասեղոսների ու բամբասանքի կուտակման սովորությունը նրա մեջ մնացել էր օրգաններում կամավոր ծառայության ժամանակից,– նույնիսկ տուն էր հրավիրում գինի խմելու. «Զարմիկներս են ուղարկել, իսկական է, առանց ջրի և շաքարի, այնպիսին, ինչպիսին խմում էին մեր հայրերն ու պապերը»: Ես խոստացա, որ օրերս անպատճառ կայցելեմ և համտես կանեմ գինին, և ծովեզրով էլ կզբոսնեմ՝ զրուցելով տեղական և համաշխարհային նշանակության գործերից՝ պարտադիր քննարկելով-դատապարտելով այդ նույն գործերի գլխին կանգնած գլխավոր անձանց: Իսկ այժմ խոնարհաբար ներումն եմ հայցում, չեմ կարող, զբաղված եմ,– ստում էի,– մի շատ հետաքրքիր անպատկառով և սրտակերով, ով այս երկու հատկանիշների շնորհիվ հասարակության ամենավերևում է հայտնվել: Նրա անունը ես իմացա մի առատահոս աղբյուրից, որին ստիպված եղա դիմել հակառակ իմ սովորության, քանզի ստահակն ու սրտակերն իմ հետաքրքրությունը շարժեց:

Ծերուկն ուշադիր է, հին իրազեկչի փորձված աչքով նկատել է, որ ես հիմնականում կենսագրություններ եմ կարդում, այն էլ կրճատ ձևով՝ ծանոթագրություններով կամ հղումներով, և հարցնում է, թե ինչ հետաքրքրություն ունեմ ուրիշների խուզած ճակատագրերի հանդեպ, ավելի լավ չե՞ վերցնել լիակատար հատորը, թեկուզ «Հիանալի մարդկանց կյանքը» շարքից: Երկար չմտածելով ես ասացի պատճառը: Սովորաբար հղումներում ապրած փառապանծ կյանքի սեղմ շարադրանքն է, էությունը: «Հղումային» կենսագրությունն ուսումնասիրելիս իմանում ես, թե ինչին սևեռում ուշադրություն դարձնես, ինչը լուսաբանես հատուկ մանրակրկտությամբ, իսկ ինչը մաքրես, լուրջան մատնես, քանզի մեծ է վտանգը, որ կխեղդվես մանրուքի, աննշան մանրամասների մեջ, որոնցով, ինչպես նավի հատակը տարատեսակ մանր-մունր կենդանիներով, ծածկվում է ամեն մի կյանք:

Իմ խոստումից և զրուցասիրությունից ծերուկը գոհ մնաց. նա դա գնա-

հատեց իբրև իր հանդեպ հատուկ վերաբերմունքի և վստահության նշան, հատկապես վստահության, որով բախտը նրան երես չէր տվել: Ընդհանրապես այսօր նա բարձր տրամադրություն ունի, մյուս օրերի չափ մնայլ չէ և աչքերում էլ կարծես կրակ առկայծեց: Հավանաբար Խորհրդային Միության դեմ իրականացված ներքին ու արտաքին դավադրության նոր ապացույցներ է գտել:

Ուղիղ սրտից խոցված և ընկճված լինելով՝ նա ձեռնամուխ եղավ պատմության ամենամեծ և ամենահզոր կայսրության կործանման ամոթալի գաղտնիքի բացահայտմանը: Եվ անընդհատ զայրության լեզու էր գալիս դավաճանների վրա. նրանք սաստիկ տենչանքով էին նայում, թե ԽՍՀՄ-ն ինչպես է աշխարհի ցամաքի մեկ վեցերորդ մասից Հանրապետությունների աստիճանական հատման միջոցով վերածվում միջին եվրոպական երկրի: Նրանք դավաճանում էին մարդկությանը, նրա ապագային, նրանց ջանքով կայսրությունը տապալվեց: Սակայն որոնումը հրապուրեց հետախույզին, ժամանակի ընթացքում սկզբնական մերկացուցիչ թափը թուլացավ, և այժմ նա ուրախանում էր իր հաստատումը գտած նույնիսկ ամենափոքր կանխատեսմամբ: «Ես իրավացի էի, իրավացի էի»,– ցնծում էր նա հոգու խորքում, բայց արտաքինից պահպանում էր դեմքի վշտալի արտահայտությունը, հատկապես երբ ինձ հետ էր խոսում:

Ես և Մադինան միասին դուրս եկանք նրա ընկերուհիների վրդովված և վիրավորված հայացքների ուղեկցությամբ: Նրանք այդպիսի լկտիություն, այդպիսի անամոթություն չէին սպասում: Մադինան փոքր-ինչ անհարմար էր զգում և հրաժեշտ տալիս խոնարհել էր աչքերը: Ես ուղիղ նայում էի նրանց, և այդ հանդգնությունից նրանք ստիպված եղան ինքները խոնարհել աչքերը: Երեխայություն էր արածս. իմ ինչին էր դա հարկավոր: Դրանով ես Մադինային չէի պաշտպանում նրանց չար լեզվից, հակառակը, կրակի վրա յուղ լցրի:

Մենք քայլում էինք Պողոտայով՝ շաղակրատելով դեսից-դենից: Փողոցում ես ավելի լավ էի զգում, քան երբևէ: Նրա տուն հասանք. ապրում էր Պողոտայի վերջում, իննհարկանիում: Հրաժեշտ տվեցինք իրար:

«Կհանդիպենք Ժամացույցի տակ»:- «Այն, որը խելագարվել է»:- «Այո» – «Մեզ կարող են ծանոթները տեսնել...»- «Թող տեսնեն...»- «Գուցե մեկ այլ տեղ. օրինակ՝ «Պինգվինում»»:- «Կհանդիպենք Ժամացույցի

տակ, իսկ հետո կգնանք «Պինգվին» սուրճ խմելու և պաղպաղակ ուտելու»:- «Լավ...»:

Երբեմն պատահում է, որ հենց պառկում եմ քնելու և սպասում, թե քունը երբ կհանգցնի ինձ, հանկարծ շան հաչոց եմ լսում: Ինչ-որ հեռվից է գալիս ձայնը. միայնակ այդ հաչոցը հատկապես տազնապալի է: Այն ասես խփում է ամբողջ մարմնիս, որի ամեն մի բջիջն արձագանք է տալիս: Ես պառկում եմ լարված, ճակատս սառը քրտինք է պատում, սիրտս խոր թաքնվում է կրծքավանդակում, նույնիսկ բաբախյունը չի լսվում: Ես սպասում եմ, թե ինչի՝ ինքս էլ չգիտեմ: Գուցե այն ամեն ինչի ավարտին և բոլորովին նոր չտեսնված բանի սկզբին, ինչը ես կանխազգում եմ անընդհատ, պատերազմը վերջանալուց հետո: Եվ շան գիշերային սովորական հաչոցն ազդարարում է աշխարհի նորացման սկիզբը:

Շանը ոհմակից ոչ ոք չի պատասխանում, և դա տարօրինակ է: Ուրեմն, ինչ-որ բան խաթարել է նրանց եղբայրությունը, և այժմ նա փորձում է բուլորին, ում հասնում է իր ձայնը, հիշեցնել երբեմնի միությունը:

Մի քանի ժամ շարունակ նա կլկլում է, վերջում ուժասպառ լինելով՝ խռպոտում:

Պատասխանը լռությունն է: Շների ցեղը չի էլ մտածում եղբայրակցին պաշտպանել, շների ցեղը դեմ է. թող ամեն բան նույնը մնա: Բայց այդ դեպքում սովորության համաձայն պետք է պատասխանել հեռավոր կանչին,– գլուխը երկարացնել, լարվել ու հաչել, և դրան պետք է ձայնակցեն բոլոր լսողները: Այդ բարեկամական երգչախմբում շնական կարոտը կսպառվի և կվերջանա:

Շան միայնակ անպատասխան հաչոցն իրոք նոր բան է: Ես քնում եմ այս մխիթարական մտքով և թաքուն հույսով՝ բա որ հանկարծ վաղն առավոտյան...

«Մեր լեռները միշտ էլ իմ մեջ լռության զգացողություն են առաջացրել: Կանգնել ու լռում են: Բանաստեղծական բոլոր փոխաբերությունները, որոնցով բանաստեղծները պարգևատրել են նրանց՝ «ալեհեր», «հպարտ», «վեհաաքանչ»,– իմ ականջին չեն առնչվել նրանց հետ, նրանք այդ բառերն ասես խաղ անելով հետ են մղել իբրև մար-

դու տխմար և կաչուն փորձ՝ անուն տալ այն անսահման լռությանը և անխոռվ պահվածքին, որոնք կան իրենց մեջ: Լեռներում ես ինձ միշտ օտար եմ զգացել: Ինձ թվացել է, թե շուրջս ամեն բան լարված քարացել է, դադարեցրել իր կյանքը և սպասում է, թե երբ եմ ես հեռանալու: Իսկ երբ անտառն աղմկում էր և երկինքը ճռնչում ամպրոպից, երբ կայծակնային անսովոր լույսը լուսավորում էր դեպի գիշերը, դեպի մութը փախչող աշխարհը, ես ինձ առավել անհաղորդ էի զգում լեռների բարձր ու գաղտնի կյանքին: Այստեղ ամեն բան այլ էր, ամեն բան իր հատու և անխուսափելի արտահայտությունն ուներ՝ նախաստեղծ գույնը, հոտը, ծայնը: Իսկ ես դրանց հեռավոր, անհստակ արձագանքն էի, անուղղելիորեն պոկված բեկորը: Սոսկ ցածրավայրում էի ես ձեռք բերում այն, ինչն անվանում են հոգեկան հավասարակշռություն, այլ խոսքով՝ աշխարհի տաք, մահաբեր շնչառությանը փոխարինում էր առօրեական հարմարավետ ջերմությունն ասված և այդ պատճառով ճանաչելի իրերի շարքում: Բայց հոգին հիշում էր փայլն ու ղողանջը, և ես, համենայն դեպս մի քանի օր, սուզվելով անուն ստացած աշխարհում, կարոտով էի մտաբերում լեռները՝ իբրև վաղուց ծանոթ, սրտամոտ, բայց, ավանդ, այժմ ընդմիշտ կորցրած բան»:

Ադգուր Ա.-ն ոչ մի տեղ չի գրում, որ այդ աղջիկը վիրավորվել է: Գուցե նա վերք է ստացել նրանց հանդիպումից կամ նրա զոհվելուց հետո : Իսկ գուցե նա չգիտեր էլ, աղջիկը նրան չէր էլ ասել, իսկ այն գիշեր նա չի զգացել, չի տեսել փորի վերքը:

Ես Մադինայի մասին եմ մտածում: Երևակայում եմ, թե այս պահին ինչով է զբաղված, ինչ է մտածում: Գուցե ինձ է հիշում, կամ պատերազմը: Նա դեռևս այդ արհավիրքից դուրս չի եկել, և հազիվ թե դուրս գա: Չէ՞ որ ես էլ դուրս չեմ եկել. չնայած կինը տղամարդուց ուժեղ է...

Նա լռակյաց է, իր ամբողջ կյանքն աչքերում է երևում: Այդպիսի աչքեր ես չեմ տեսել, գուցե պատճառն այն է, որ չեմ սիրում ուրիշի աչքերին նայել և չեմ ուզում, որ իմ աչքերին նայեն: Թե որն է առաջնայինն ու գլխավորը, ես չկարողացա պարզել: Աչքը մարդու ամենագարմանալի և ամենավտանգավոր օրգանն է: Մի շրջան գծիր և նրա վրա աչքի պես երկու կետ պատկերիր,– և ահա քեզ է նայում մի կենդանի բան, նայում է ու նայում,

ուզում է ինչ-որ բան ասել: Մյուս շրջանը շատ ավելի տանելի է՝ եթե աչքեր չունի:

Մադինայի աչքերն անհատակ են և ուղղակի կապված են նրա հոգու հետ: Բայց ամեն մի աչք, եթե երկար նայես, ապակենման մեռյալ մի առարկա կդառնա, իմաստը կկորցնի՝ բազմիցս կրկնված բառի նման: Ո՛ր է կորչում դրա մեջ մինչ այդ առկայծող, իսկ Մադինայի դեպքում՝ փայլփլող կյանքը:

Մադինա, ես երբեք քո աչքերին այդքան երկար չեմ նայելու: Ուրեմն, դու էլ չես նայի. ախր հնարավոր չէ, որ ես նայեմ, իսկ դու՝ ոչ: Մենք կապահովագրենք միմյանց: Կյանքում ամեն ինչի պետք է աչքի պոչով՝ կկոցած նայել:

«**Ե**ս փախչում էի բոլորի հետ, և ինձ թվում էր, որ մենք մի հսկայական Բանի մեջ ենք վազում: Բոլորի միաձուլության այդ զգացումն իմ մեջ ծագեց պատերազմի առաջին իսկ օրերին, և այն ոչ մի չափով չթուլացավ այս ընթացքում, այլ, հակառակը, ուժեղացավ: Ավելի ուրախալի, արբեցուցիչ զգացում ես երբեք չեմ ունեցել: Մեր մեջ հոսում էր միասնական արյունը, տրոփում էր միասնական սիրտը, մեզ միասնական կամքն էր ղեկավարում, և մենք հնազանդորեն երախտագիտությամբ կատարում էինք այդ կամքը: Եթե Աստված կա՝ սպիտակամորուս և սարսափելի բարի աչքերով բազմած երկնքում, ապա նա, համոզված եմ, իր անձն ակնարկում է հենց այն թուպներին, երբ դու բոլորի հետ վազում ես անտառում, որտեղից փոթորկալից կրակով հնձում են մեզ, ինչպես մանգաղով՝ եզիպտացորենը: Կյանքում, տիեզերքում ոչ մի բան կարևոր չէ, գլուխս անջատված է,– այն չի ճնշում մտքի անհարկավոր ծանրությամբ, դու ազատ ես: Դու դեռևս ինչ-որ բան նկատում ես. հանկարծ մի ինչ-որ տեղ վերև սլացած և չգիտես ինչու ծոված, կապույտ երկինքը, զգում ես քեզ ցրտով պարուրող քամին, ինչ-որ հեռվից լսում ես ծիգ կրակոցները և գնդակների սուլոցը շուրջդ: Բայց այս ամենն ասես անցած կյանքի իներցիան լինի, ինքդ քեզ, քո մարմինը ճանաչող մնացորդային հիշողությունը, քանզի քո մարմինն արդեն մերժել ես, համենայն դեպս, այժմ այն չէ կրողը քեզ պարուրող լուսավոր և ցնծալից բանի. այն քո նյութից անջատ է, ինքն իր մեջ,

ամենուր և ոչ մի տեղ:

Ես ողջ-առողջ տեղ հասա, բայց գիտեմ՝ եթե ինձ գնդակ կաշեր և տեղ-նուտեղը սպաներ, ես կմեռնեի այն ուրախությամբ, ինչ զգում էի մինչ այդ, բոլորի հետ միասնական թափով հասնելով անտառի փրկարար եզրը»:

Աղգուր Ա.-ի այն վերջին շարժման մեջ, երբ նա հանեց սաղավարտը և հետ գցեց, այնուամենայնիվ ինչ կար՝ հուսահատություն և դրանից բխող՝ շուրջը տիրող սարսափից փախչելու որոշում, թե՛ տեքստին հարազատ մնալու ձգտում, երբ նա հանկարծ միտք հղացավ, թե ինչպես է ավարտելու իր ուղին: «Կյանքը չափից շատ ստացվեց»,– գրում է նա: Բայց սա պատրվակ չէ՞ արդյոք: Ես դեռևս չեի կարողանում նրա մտքի ընթացքն ըմբռնել: Գուցե իրոք թմրախոտն է մեղավոր: Ծխով է տոգորվել, հայտնվել մի այլ տեղ՝ իրականությունից հեռու, չի ցանկացել վերադառնալ: Կամ, հակառակը, նա դանդաղ դուրս է լողացել թմբիրից, տեսել, որ նույն տեղն է, որտեղից նավել է, նրան հուսահատությունն է պատել, հանել է սաղավարտն ու դեն նետել: Եվ այս դեպքում կրկին հուսալքվել է. ոնց որ թե դրանից պրծում չկա, անկյունաքարային բառ է: Այդ դեպքում հետևյալ բացատրությունն է ծագում. հուսալքությունը նրա մեջ վաղուց էր կուտակվում՝ կաթիլ առ կաթիլ,– և այժմ նրա մեջ ծովն էր փոթորկվում, տեքստը ցույց տվեց, թե ինչ շարժումով տիրապետել այն: Հենց հանելով սաղավարտը, այսինքն՝ բացելով գլուխը (նա ուզում էր, որ գնդակը կաշի գլխին՝ գլխավոր մեղավոր օրգանին), չնայած բավական կլիներ որոշ ժամանակ կանգնել հասակով մեկ, և նա ամենայն հավանականությամբ մարմնի այլ մասերով «կորսար» դիպուկահարի գնդակը և կսպանվեր:

Բայց նա, գնդակի դեմ-հանդիման մերկացնելով գլուխը, ցանկացավ անսովոր վերջակետ դնել, իր վերջակետը:

Մանչա Սաթբեկիչն ինչ-որ բան է կասկածում, վերջին ժամանակ հանդիպելիս նա դավադրաբար ինձ է նայում և արտաբերում իր փոխ առած իմաստությունը. «Ամուսնացեք, բազմացեք, մենք քիչ ենք, իսկ պատերազմը տեսեք թե քանիսի կյանքը տարավ, լավագույնների...»: Ակնհայտ ակնարկ է Մադինային և նրա հանդեպ տածած իմ զգացմունքին, որը թաքուն

չմնաց թրծված չեկիստ-կամավորից: Նա պաշտոնապես օրգանում չէր ծառայում, բայց հույժ փայփայված էր իբրև արժեքավոր գաղտնի կադր: Նա երկար ժամանակ չէր համարձակվում, վարանում էր, հպարտությունն էր գլուխ բարձրացնում: Գուցե ոչ թե հպարտությունը, այլ ուղղակի ուզում էր թեթևացնել իր բեռը, թեթևացնել հոգին:

Նկատելով, որ նա ակնհայտ ցանկություն ունի ինձ հաղորդակից դարձնել իր նվիրական մտքերին, ես քիչ մնաց ենթադրեի, որ մի ընդարձակ, հոգեցունց խոստովանություն կլսեմ՝ հագեցած երկու-երեք իմաստություններով, որոնք կարմիր թելով կամրացնեին և ի մի կբերեին ծերուկի անպաճույճ կյանքի ուղին: Բայց նա խիզախորեն դիմանում էր, գաղտնիքի իմացության հանելուկային տեսք էր ստացել, և քանի դեռ ես վստահության չարժանացա, – ես եմ այդպես կարծում, չնայած գուցե և սխալվում եմ, – ոչ մի խոսք չասաց իր անցյալի մասին: Վերջում Մանչա Սաթբեկիչն, այնուամենայնիվ, հանձնվեց. վառողը չբավականացրեց, որպեսզի շարունակի անհայտ պարոն Իքս մնալ և խոստովանեց՝ այնպես նայելով ինձ, ասես սպասում էր, որ ես անսպասելիությունից կփոխեմ ասֆալտին: Ես կանգնած մնացի նույնքան սառը և զրահավորված, և դա որոշ չափով հիասթափեցրեց ծերուկին: Նրա խոստովանությունն իմ մեջ լոկ նողկանքի զգացում առաջացրեց: Նա այդ հասկացավ իմ դեմքից և արագ-արագ ավելացրեց. «Երիտասարդ, դուք չմտածեք... Ես միայն ցույց եմ տվել ակնհայտ սրիկաներին, բնածին մատնիչներին, որոնք նախանձից և չարությունից կործանում էին անմեղ մարդկանց: Ես ոչ թե ժողովրդի թշնամիներին, այլ մարդու թշնամիներին էի ջրի երես հանում...» – «Դուք ուզում էիք ասել՝ արյան երես»: – «Ոչ, նրանց արյունն ապականված է, ինչպես և հոգին»: Եվ նա սկսեց մի երկար պատմություն պատմել, թե ինչպես է այդ արել: Զվարճալի էր, բայց ես, միևնույնն է, նրան չհավատացի:

Նա ակնարկներ էր անում, այն էլ աներկիմաստ, բայց ես չէի հասկանում: Հանդիպելիս շատ անգամ, հազիվ բարևա՞ծ՝ նա իսկույն կիսաշշուկ ավելացնում էր. «Շուրջ բոլորը թշնամիներ են, ո՞ր են նայում օրգանները...»: Երբեմն Մանչա Սաթբեկիչը հանդիպած մեկին էր ցույց տալիս, ըստ երևույթին վրացու, և ասում էր. «Մոլի ազգայնական է, մեզ ամբողջ կյանքում ատել է, համագործակցել օրգանների հետ, իսկ հիմա այնպես է

քայլում, ասես ոչինչ չի պատահել: Ո՞ր են նայում օրգանները, կուզենայի իմանալ: Մեր ժամանակ այդ բանի համար...»: Նրա աչքերը դատապարտող փայլ են արձակում, բայց նա ոչ թե անցորդին է դատապարտում, այլ օրգաններին՝ զգոնության բացակայության համար, երբեմնի պահվածքը կորցնելու, ... սատանան գիտե, թե էլ ինչի համար: Օրգանների խոհանոցին ծանոթ Մանչա Սաթբեկիչը հեշտությամբ նրանց թերությունների համար պատկառելի հաշիվ էր ներկայացնում:

Զբաղված լինելով իմ ծանոթագրություններով՝ ես երբեմն հետաքրքրությամբ էի նայում ծերուկին: Ալեհեր ճաղատը հակելով մասամբ դեղնած, մասամբ կղզյակներով պահպանված նախնական սպիտակ գույն ունեցած «Պրավդայի» էջերին, անընդհատ հավաստումն էր փնտրում այն բանի, որ ԽՍՀՄ-ն ինքն իրեն, իր բնույթով չի ընկել, ինչպես հարազատ ճյուղից ընկնում է ամեն մի հասուն, առավել ևս՝ որդիտ պտուղ, այլ քաղվել է, և հայտնի է, թե ով է քաղել:

Մանչա Սաթբեկիչի պայքարը պատմության դեմ ծերունական հալված ուժերի սահմանագծին չեմ վախենա այս բառից՝ իրոք հերոսական էր և տպավորիչ: Ավելի ճիշտ կլինի ասել, որ Մանչա Սաթբեկիչը, պատմության կարճ հատվածը մերկացնելով իբրև սուտ և չտեսնված չափի՝ երկրի ցամաքի մեկ վեցերորդի չափի խարդավանք, դրանով իսկ մերկացնում էր ժամանակը, որն օգտագործում էր բոլոր եղանակները, միայն թե թափով առաջ մղվեր, այլ ոչ թե թթվեր տեղում՝ ծածկվելով բրոնզափառով, քարաքոսով, խրվելով տիղմի մեջ: Եվ ահա նա թափ առավ ու գնաց՝ դաժանորեն ու անխնա ոտքի տակ տալով ամենանվիրականը՝ մարդկանց հավատը և արդարությունը: Մի ակնթարթում ընկան բոլոր հիմնարար արժեքները, ընկավ հավատը, որը դարերով հասունանում էր ճնշվածների սրտերում: Եվ ի՞նչ է սպասում մարդկությանը. այն շարունակելու է նույն կերպ գլխապատառ սուրալ դեպի անդունդ, կամ էլ թե չէ ուշքի կգա, կանգ կառնի և բարեհաճություն կցուցաբերի հասարակ աշխատավորի՝ այս լուսնի տակ գտնվող աշխարհի ամենայն լավ բանի անանուն հեղինակի հանդեպ:

«Երիտասարդ, ես ձեզ չեմ նախանձում: Դուք ապրելու եք սարսափելի աշխարհում,– մեկ անգամ չէ, որ մարգարեանում էր ծերուկը՝ բարեկամաբար բռնելով արմունկս:– Մենք մերն ապրել ենք, և ապրել ենք, ասեմ ձեզ, ոչ այնքան վատ ձևով: Արդեն ժամանակն է...»:

Ես մտածում էի, թե ինչպես անմահացնեմ նրան, ինչ հղման մեջ մտցնեմ, ինչ բառերով արդարացնեմ նրա առկայությունը տեքստում: Միայն ես կարող եմ այդ անել: Թե՛ այդպես չէ: Մի՞թե Մանչա Սաթբենկիչը մի որևէ գրքույկի մեջ կհայտնվի, մի՞թե նրա անունն ապագայում հանկարծ դուրս կլողա որևէ մի հղման, ծանոթագրության, մեկնաբանության մեջ: Չէ՞ որ դա բացառված չէ: Ապագայի մի որևէ պատմաբան, պեղելով արխիվի փոշին, պատահաբար կգտնի նրա անունը, որը գրված կլինի բազմաթիվ փաստաթղթերում՝ սկսած ծննդականից վերջացրած մահվան վկայականով: Կներառի իր աշխատություն: Եվ որևէ մեկն այդ երկը կկարդա և գուցե մի պահ կխորհի, թե ով է եղել այդ Միխայիլ Ստեպանովիչը, ինչպես է ապրել, ինչու է ապրել, այդ ինչ մտահղացմամբ ու անհրաժեշտությամբ է իքս քանակով տարիներ մրոտել երկինքը: Եթե գրքում չլինի նրա լուսանկարը, ինչն ավելի հավանական է. Մանչա Սաթբենկին անսահման փոքր մեծություն է պատմության մեջ, չնայած՝ ով գիտե...– եթե պատկեր չլինի, ընթերցողը մտքում կնկարի նրա դիմանկարը՝ լոկ հիմնվելով ժլատ տողերի վրա, և այդ տողերից, տողերի բառերից է կախված, թե ինչ կերպար կստացվի:

Ես մի քիչ փող ունեի, մի օր նրան «Նարթա» տարա:

–Չեք հավատա, երիտասարդ, մոռացել եմ մամալիգայի և լոբու համը – հարյուր տարի է չեմ կերել,– ասում էր Մանչա Սաթբենկիչը՝ հաճույքով երկու ձեռքով լափլփելով կերակուրը:– Իմ թոշակով կյանք չես քաշի: Բայց չէ՞ որ ես վաստակած մարդ եմ, նախկինում ո՞վ կհամարձակվեր ինձ հետ այդպես... Ծերերը ոչ ոքի հարկավոր չեն...

Մի տղամարդ և կին, հավանաբար ամուսիններ, արևահարված, բաց գույնի կիսավարտիք հագած, դեմքի ոչ տեղական արտահայտությամբ՝ բաց, բարեհոգի և ժպտերես, նստած էին բակի ծածկի տակ և աջարական խաչապուրի էին ուտում: Սկսել էին առաջին հովեկները երևալ, շատերն՝ իրենց պատասխանատվությամբ:

Մենք հենց միայն նրանով ենք հետաքրքիր աշխարհին, որ երկու հարյուրից փոքր-ինչ ավելի կիլոմետր երկարությամբ ծովափ ունենք: Այդ ծովեզրին կարելի է բազում հինգաստղանի հյուրանոցներ կառուցել, հանգստյան տներ՝ չունևոր, բայց բազմաթիվ ու մորեխի նման որկրամուլ հովեկների համար, կարգի բերել լողափերը: Տեղացիներին, որպեսզի աչ-

քի առաջ չտնկվեն և իրենց վայրի տեսքով չվախեցնեն հանգստացողներին, ծովափից հեռու քշել, նվազագույնը՝ հինգ կիլոմետրանոց գոտուց այն կողմ: Առավել վայելչատեսներին և ուշիմներին կրնտրեն սպասարկման համար՝ մատուցող, մետրոդուտել, վերելակավար, էքսկուրսավար, մերկապարող և մարմնավաճառ: Բարեկազմներին չերքեզկա կհագցնեն և սուպերմարկետներում այս կամ այն ապրանքի գովազդի համար ի ցույց կդնեն: Եվ մարդկությունը հոգնեցուցիչ և արդար աշխատանքից հետո հարավային շռայլ արևի ճառագայթների տակ հաճույքով կմեկնվի ավազին:

Մեր կողմերը փող կգա, մեզ եղած-չեղածով կգնեն, եթե դեռ չեն գնել: Իսկ մեծամասնությունն սպասում է, մեծամասնությունը բաղձանքով նայում է դեպի Հյուսիս, երբեմն անհամարձակ և թաքուն հայացք է գցում նաև դեպի արգելված Արևմուտք: Դե արի և վերցրու ինձ, քիչ բան եմ ուզում, իմ ախորժակը դեռևս չի բացվել, ջակուզի-մակուզիի կարիք չունեմ, հոտած աղբահորի տակի հրելազարկը միանգամայն ձեռք է տալիս: Իսկ ահա ավտոն ինձ պետք է, միայն նա կարող է ինձ մխիթարել, ցրել իմ թախիծ-կարոտը, ազատության և ուժի, երազանքի իրականացման զգացում տալ, և ես խենթի պես կսլանամ իմ հրաշալի ափաչափ երկրի խորդուբորդ ճանապարհներով՝ քանի դեռ ամբողջ թափով չեմ խփվել ճամփեզրի սյանը կամ ծառին կամ մեկ այլ ինքնասպան-հեծվարի ավտոյին և ջնջված ուղեղս չեմ ցպնել դիմապակու վրա: Հուղարկավորության օրը՝ հարազատների, ընկերների, ծանոթների մեծ վշտի և հավաքույթի օրը, ավտոն, ավելի ճիշտ ինչ-որ մնացել է նրանից,– ծռմոված մետաղի մի կույտ,– կծածկեն սև ծածկոցով և բակում կդնեն ի տես ամենքի,– ոչ թե իբրև խրատ, թե տեսեք, իբր թե, ինչի է հանգեցնում քյալագյոզությունը, այլ իբրև նախանձելի հիշեցում այն բանի, որ վթարված ինքնասպանն իր կարճատև կյանքում կարողացել է գովական ավտոյով լայնքով ու երկայնքով քշել-անցնել իր ափաչափ երկրով մեկ:

Մեր խցիկից Մանչա Սաթբեկիչը մեկ ու մեջ հետաքրքրասերի և միևնույն ժամանակ տագնապալի հայացք էր գցում ամուսինների կողմը: Ես կարծեցի, թե ծեր անառակի հետ գործ ունեմ, մի բաժակ սև գինին նրա գլուխն է ընկել:

- Գեղեցիկ կին է,– նկատեցի ես:

- Մերոնք ավելի գեղեցիկ են, այնպիսի սպիտակ մարմին, ինչպիսին մերոնք ունեն, ոչ մեկը...

- Բայց նա ձեզ հաստատ դուր է գալիս, չեք կարողանում աչք թեքել:

- Ես ամուսնուն եմ նայում, նա էլ է չեկիստ: Նրանք բոլորն էլ առաջին հայացքից այնքան հասարակ են... Հետևեք նրան, միայն թե՛ զգուշորեն, չխրոնեցնեք. զգալով, որ հետևում են, նա իսկույն կկծկվի և բոլորին կնմանվի... Հետևեք, և դուք կհամաձայնեք ինձ հետ:

Ես ցանկություն չունեի պարզել, թե չեկիստ է, թե ոչ այդ հաղթանդամ շիկահերը, որի ծնոսներն անընդհատ վերև-ներքև էին անում՝ ծամելով կերակուրը:

- Տեսնում եք, նա էլ ինձ նայեց, հարազատ բան է զգում...

- Հույսներս միայն նրանք են, – ասացի ես, որպեսզի խոսակցությունն այլ կողմ փոխեմ:

- Մենք առանց նրանց յուրա չենք գնա, այժմ վրացիները մեզնից պոկ չեն գա...

- Ես հանգստացողներին նկատի ունեի:

- Թող գան, ծովն ու արևն ափսոս չեն, տեսնում եք՝ որքան ունենք, նույնիսկ չափազանց շատ...

- Եվ այստեղ թողնեն իրենց փողերը. մյո՛ղ եք ուզում ասել:

Մանչա Սաթբենկիչը գլխով իր համաձայնությունը հայտնեց. բերանն զբաղված էր: Նա ագահաբար էր ուտում, երկար ու մանրակրկիտ ծամում էր ուտելիքը: Ես նկատել եմ, որ ծերունիներն ունեն այդ ագահությունը կերակրի հանդեպ, և ոչ թե պարզապես ագահությունը, այլ այն բացառիկ տեղը, որ նրանք հատկացնում են կերակրին: Նրանք կենտրոնացած, նույնիսկ խորիմաստ ծամում են. ուզում են ուտելիքից առանց մնացորդի վերցնել բոլոր օգտակար բաները:

Մատուցողուհիները ծանծրանում էին. այցելուները քիչ էին՝ մեկ երկու, և պրծավ:

- Նախկինում նրանք անթիվ-անհամար էին...

- Նախկինում ամեն ինչ այլ կերպ էր, – ծերուկին փորձում եմ մղել դեպի հաճելի հիշողությունները:

Բայց շոգից ու կերածից Մանչա Սաթբենկիչի քունը տարավ, նա շշմած, բութ հայացքը հառեց մի կետի՝ առանձին ցանկություն չունենալով փորփո-

րել անցյալը:

Մենք վեր կացանք, ես վճարեցի: Նա նվաստացած շնորհակալություն հայտնեց ինձ և քայլեց դեպի «Դիոսկուրիա» ռեստորանի ավերակները, դեպի տուն. նա ապրում է փոստի մոտ, գրադարանից ոչ հեռու, որքան ինձ հայտնի է՝ մենակ, կինը, կարծեմ, վաղուց է մահացել, երեխաները ցրվել են, ծերունուն մոռացել: Թե՛ նա երբեք էլ ոչ ոք չի ունեցել՝ ոչ կին, ոչ երեխա. ես այդպես էլ չհասկացա: Նրա ազգանունը հազվադեպ է հանդիպում, ես երբևէ չէի լսել, ազգական գրեթե չունի: Մանչա Սաթբենկիչն այդ փաստը նշում է իբրև իր կյանքի ամենամեծ անհաջողությունը, համարյա ողբերգությունը: Մեկը չուներ, որ կողքը կանգներ, ուս ուսի տար, մի խոսք ասեր բարձր ղեկավարությանը: Նրա ցեղում չկար մի արժանավոր, ամեն-քից հարգված հեղինակություն, որի լոկ հիշատակությունը բավական էր, որ հարգանքով ունկնդրեին Մանչա Սաթբենկիչին՝ ձգտելով դրանով իսկ հատուցել իրենց նախկին անտարբերությունը: Մայրն էլ էր անհետացող ազգանվան տեր, նույնպիսի նախնադարյան վայրենությամբ և միայնությամբ, ինչպես հոր ազգանունը: Այլապես Մանչա Սաթբենկիչը գլխապտույտ կարիերա կաներ և այսօր հազիվ թե անվճար վոիկ ուտելու հերթ կանգներ: «Եթե կարողանայի խուսափել երեսունյոթից և հետագա տարիներից և գլուխս անժնաս պահել...» որոշ ժամանակ խորհելուց հետո ավելացնում է նա՝ ոչ առանց ափսոսանքի ծառայողական սանդուղքի երկնային բարձունքից իջնելով սարսափելի երկիր՝ իր «եռյակներով», սիբիրյան սառնամանիքով, Մագադանով:

Ես ծովափով ուղղվեցի դեպի «Հակոբի մոտ» սրճարանը: Ուշ ամառ էր, երբ մոտակա աշունն արդեն զգացվում է օդում, ծառերի գույներից, երբ դեղին և կարմիր երանգները գերակշռում են, ստվերներից. չգիտես ինչու, միայն աշնանն ես նկատում, թե որքան է երկարել սեփական ստվերդ, բույրերից, արևի լույսից, որը հանկարծ նրբացել է, նույնիսկ թախծալի դարձել՝ հատկապես մթնշաղին: Հոգիդ հանդարտ է և լուսավոր:

Կողքով սրընթաց անցավ Մորուքը. ճանաչեց, գլխով արեց, բայց կանգ չառավ, երևի խաղալու էր շտապում: Նա ղումարխանա չի մտնում, այնտեղի խաղացողներին արհամարհում է խաբեության և լկտիության համար: Նա միշտ ազնիվ է խաղում և փոքր խաղագումարով. որոշել է, որ այս ամիս այս խաղագումարն է դնելու՝ սպանեն, չի նահանջի: Նա, ինչպես

միշտ, տարվելու է, և, ինչպես միշտ, տարվելը երկար ու տաք-տաք բացատրելու է ճակատագրական ճախորդությամբ: Նարդին նա բնութագրել է կարճառոտ՝ մի նետման ողբերգություն: Ասենք, քեզ խիստ անհրաժեշտ է դու-շեշտ: Բայց խիտ կետային սևության փոխարեն,– աչքդ հազիվ է տեսել, խելքդ դեռ չի գնահատել, իսկ սիրտդ արդեն ցնծագին վեր է թռել և ընդարձակվել կրծքավանդակովդ մեկ,– զառերը վիրավորվելու, հուսահատվելու չափ «ջրառատ» են՝ իքի-բիդ-դու-եկ: Եվ իրոք, եթե նրան լսես, նրան բաժին են ընկնում ամենահազվադեպ համադրությունները, որոնք հավանականության տեսության համաձայն հեռավոր անկյուն են շարտված, ուր դիպվածը չի էլ մտածում աչք ածել, իսկ եթե աչք էլ ածի, ապա միայն այն նպատակով, որպեսզի պահպանի այն կանոնը, որը նախատեսում է և այդ բացառությունը, կամ էլ թե չէ ծիծաղի այնպիսիների վրա, ինչպիսին է Մորուքը:

Որքան հոգի է ներդնում նա ամեն մի զառ նետելիս: Ծանր դրության մեջ Մորուքն ուղղակի կախարդում է զառերը. քնքշորեն ինչ-որ բան շնջում նրանց, երկար ժամանակ չի համարձակվում նետել, հետո արիություն է ցուցաբերում և նետում, բայց հետևից ձեռնափի կողքը փոքրոգիորեն իջեցնում է տախտակի վրա՝ կտրում է: Նետումը չի հաշվվում: Նա վերցնում է զառերը և դարձյալ ձեռնամուխ լինում հմայությանը՝ իր աշխատանքային ամուր մատներով թավալելով խորանարդիկները և քնքուշ բառեր շնջալով: Նետում՝ և ծախողում. պետք եղածի փոխարեն ընկնում է ամենավատը, որը միանգամից փչացնում է տախտակի վրայի դրությունը և նրան տանում դեպի շուտափույթ պարտություն: Մրցակիցն ասում է դու, դու-սե կամ դու-ջհար. սովորաբար վերջինի հերթը չի հասնում. Մորուքն զգուշավոր է, և հետո, փողը նրան քիչ է հուզում: Մորուքը կծում է շրթունքները՝ բեղերի հետ միասին, հայիոյում: Խաղադրույքը փոքր է, խնդիրն այդ չէ: Մորուքը պայքար է մղում ճակատագրի դեմ և մեկը մյուսի հետևից պարտություն կրում:

Նա վեր է թռչում, զառերը, որոնց հետ մինչ այդ նրբորեն, քնքշանքով էր վարվում, համարյա ձեռքից զցում է, ձեռքերը թափահարում՝ բոլորին իր վրա կախված անեծքի վկա կանչելով. «Տեսա՞ք, տեսա՞ք. մայրս ասում էր՝ տղաս, մի խաղա, սա քո բանը չէ: Այս խոսքերով էլ հոգին ավանդեց: Իսկ ես՝ հիմարս, չլսեցի. էշի մեկն եմ, սա էլ ինձ տեղն է»:

Պարտության հաջորդ օրը Մորուքը լռակյաց է ու մռայլ: Խաղալու հրավերին ի պատասխան ասում է, որ վերջ է տվել: Ձեռքերը կրծքին խաչած՝ նա անտարբեր դիտում է ուրիշների խաղը, չափով շարժվելով առաջ-հետ, երբեմն՝ մատների ծայրը բարձրանալով: Ավելի հավանական է, որ նա փող չունի, երեկ լրիվ տանուլ է տվել, իսկ պարտքով երբեք չի խաղում. սա էլ է նրա սկզբունքը, ինչպես փոքր խաղագումարով խաղալը: Փող կուտակելով, – նա շուկայում բեռնակիր է աշխատում, նրան ամեն օր կարելի է տեսնել առավոտից մինչև երկուսը մինչև կրունկները հասնող գոգնոցով, որը հագնում է մերկ, մազոտ, մկանուտ, ալյուրոտ մարմնի վրա, – Մորուքը վերստին պայքարի է նետվում ճակատագրի հետ, որը նրան հետապնդում է ամբողջ կյանքում այն պատճառով, որ ժամանակին մորը չի լսել:

Մորուքը խաղալ գիտե: Նարդի խաղալիս նա ոնց որ ծուկը՝ ջրում. ճիշտ է, չափազանց ճիշտ է խաղում, դիսկը չի ընդունում, գուցե ամեն բան հաշվարկելու, դիպվածը բացառելու ցանկությունը մի խաղում, որտեղ ամեն ինչ կախված է այն բանից, թե քմահաճ խորանարդիկները որ կողմով դեպի վերև կպառկեն, նրան անհարմար վիճակի մեջ է դնում: Բայց, այնուամենայնիվ, փոքր-ինչ բախտը բերելու և երկար խաղալու դեպքում նա կհաղթի ցանկացածին: Բայց նրա բախտը սոսկալի չի բերում: Եթե նրա ամբողջ պատմածը ճիշտ է, ապա կասկած չկա, որ բախտն իրոք նրա գլխավերևում է, և նրա հետ կատարվում են աներևակայելի բաներ, որոնց չեն հավատում նույնիսկ բազմամյա ստաժով մոլի խաղացողները, ովքեր համակերպվել են դիպվածի անկանխատեսելիությանը, Մորուքի խաղացկուն-չարամիտ գլուխգովանությանը: Պատմություններից մեկն այն էր, թե ինչպես նա հինգ անգամ մեկը մյուսի հետևից դու-բեշ էր բերել և չէր կարողացել խփված քարը միակ զբաղված բնիկը դնել, և իհարկե, տարվել էր: Այդպիսի մեկը մյուսից հրաշալի պատմություններ նա շատ ուներ, պատրաստ էր դրանք պատմել առավոտից երեկո՝ հատուկ չարախնդությամբ ըմբոշխնելով իր ձախորդությունը:

Բայց Մորուքը չի դադարում ճակատագիրը կոտրելու փորձերը, նա համառ է, չէ՞ որ նրա կյանքի ամբողջ իմաստը խաղն է: Միայն խաղով նա կարող է ապացուցել իրեն և ուրիշներին, – բայց նախ և առաջ՝ իրեն և... մորը, ում դատապարտող հայացքը վերևի ինչ-որ մի տեղից և ձախից նա մշտապես զգում է, ինչպես մի անգամ հարբած ժամանակ խոստովանեց

ինձ,– որ հակառակ ամեն ինչի նա վերջնականապես չի մերժվել երկնքից, դույզն-ինչ հաջողություն, դույզն-ինչ ուրախություն պահված են նաև նրա՝ անհաջողակի համար:

Նա ինձ հիացնում է՝ ներկայիս այդ Սիզիփոսը խաղոսկրերի խորանարդիկներով, բայց որոնք ոչ պակաս ծանր են, քան հին հույնի քարը, քանզի դրանց մեջ է դրել ոչ ավելի ոչ պակաս՝ իր ամբողջ կյանքի իմաստը:

Մանչա Սաթբենիչը մութ անցյալ ունի: Նա ընթերցասրահ է մտնում կռացած, կենտրոնացած, խղճուկ, հաճկատար ժպիտը դեմքին. և նրա մութ, վանող անցյալը կուտակվում է սրահում. ամեն անգամ ես այդպիսի զգացողություն եմ ունենում, ես նույնիսկ առնում եմ նրա անցյալի հոտը, ավելի ճիշտ՝ գարշահոտը: Եվ փողոցում էլ մութ վանող անցյալը կուտակվում է նրա գլխավերևում՝ աննահանջ հետևելով նրան: Անցյալը հետապնդում է ծերուկին՝ գրկելով քուն ու դադարից, թե՛ նա հետոն ամենուր խնամքով, նվիրվածորեն, սիրով տանում է այն,– ես չգիտեի:

Իր աշխատանքի ընտրովի էության ինքնարդարացումը, երբ նա հանձնում էր նրանց, ովքեր մատնում էին մյուս՝ կանխավ անմեղներին, ես զանանցանք էի համարում: Բայց ես ոչ մի ապացույց չունեմ, որ ծերունին զբաղվում էր հարևանների, բարեկամների, հարազատների մատնությամբ: Հնարավոր է,– եթե դատենք նրա աչքերի երջանիկ, բայց ոչ վավաշոտ փայլով, երբ նա պատահաբար կարոտաբաղձ մի ռեպլիկ է արձակում իր անցյալի հասցեին,– այդ անում էր բացառապես հոգեկան տրամադրվածությամբ, բայց ոչ երբեք որևէ մեկի հարկադրանքով, ոչ վախից կամ հաճոյանալու ցանկությունից, առավել ևս՝ կենցաղային կամ ծառայողական հաշվարկով: Եթե նա չէր ստում, ապա ես, այնուամենայնիվ, չգիտեմ նրա ամբողջ վերապրածը, չգիտեմ, թե, ընտրելով իր հերթական զոհը, նա ինչ պատկերացումով էր առաջնորդվում: Գուցե նա ճշմարտապես եղել է մի յուրահատուկ ժողովրդական վրիժառու,– վայրենի ու ոչ ճշմարտանման է հնչում,– ինչպես համոզում է ինձ, և դանակի տակ է դրել միայն սրիկաներին: Մարդկանց զանգվածային ոչնչացման կշռադատված և կարգավորված նման մեխանիզմի այդպիսի խափանումը կարելի է, բայց դժվար է. արդարացի հատուցման գաղափարը, որն իբր սկզբնապես մոծված էր մեխանիզմ, հակառակ ամեն ինչի երբեմն իրագործվում էր:

Ընդունում եմ, որ նա կարող էր սխալվել հերթական գոհն ընտրելիս: Իսկ գուցե նա պարկեշտ մարդ է, լավ ընտանիք ունի, սիրող ամուսին է և գորովալից հայր, ոչնչով արատավորված չէ, չի արժանացել Կոլիմայի և Մագադանի: Կամ նույնպիսի Ռոբին Հուդ է, ինչպես ինքը՝ Մանչա Սաթբենիչը: Բայց եթե Մանչա Սաթբենիչը կամավորաբար իր պարտքի խորը գիտակցությամբ ներխուժում էր արգելված բնագավառ, ապա նա պետք է դրա համար պատասխան տա. թող անդրշիրիմյան կուժն ու կուլան թոչեն դեպի նրա խորշոմապատ ճաղատը, ես այդ հարցում նրան ոչնչով չեմ կարող օգնել: Ես լոկ տեսնում եմ խղճուկ, թուլակազմ մի ծերունու, որը, հնարավոր է, այդ ամենին գումարած իր հոգում դժոխք է կրում՝ խղճի խայթ, ուշահաս ապաշխարություն և այլն: Նա ուզում էր ողջ մնալ, ամեն գնով ողջ մնալ, կյանքի ծարավը նրա մեջ այնքան ուժգին էր, որ ոչ մի արգելանք և խոչընդոտ նրան փույթ չէր: Տեսնում եմ նրան այսօր, այս պահին, նա ջերմության կարիք ունի... պապանձվում եմ, պապանձվում եմ, այ թե զգացմունքների գիրկն ընկա, շշմածի մեկն եմ:

Պատկերացնե՛ք մեկ այլ դրվագ. Մանչա Սաթբենիչը, երբ դեռևս ընդամենը Մանչա էր՝ ոտաբորիկ ու խլնքոտ մի տղեկ, հետո նաև գյուղական կոմերիտական, հանելով գոմշի չղաբաղած կաշվե տրեխները և առաջին անգամ հագնելով իսկական ներբանով կոշիկներ, որոնք անսովոր սեղմում էին, և գոտևորվելով բանակային լայն գոտիով, որն ավագ եղբոր նվերն էր, աստվածացնում էր այժամորուս Երկաթե Ֆելիքսին և երազում էր չեկիստ դառնալ: Բայց չստացվեց, ճակատագիրը տհաճ անակնկալ մատուցեց: Կամ սերում էր ունևոր գյուղացուց, կամ հայրն անհասկանալի վարք էր ունեցել 21-ին, իսկ կոլխոզի հանդեպ սառն էր վերաբերվել, կամ ինքն էր հարթաթաթությամբ, անմիզապահությամբ, հանկարծակի փորլուծությամբ կամ այլ հիվանդությամբ տառապում: Մի խոսքով, նրա ուղին դեպի պաշտոնական մարմիններ փակ էր: Ահա նա էլ որոշեց կայանալ կիսապաշտոնապես, լրտեսության կիսամուտ և անպատիվ նեղվածքում:

Կամ էլ թե չէ դրա համար քաջությունը չի բավականացրել, և այժմ հնարում է իր ջարդված, չկայացած կյանքը. երազանքի իրականացումը բարոյականությունից դուրս է:

Ես մեծ չափով հորինեցի Մանչա Սաթբենիչի անցյալը, հորինեցի այն աղքատիկ նյութից, որ նա ինքն էր իր մասին պատմել: Եթե ես հղում-

ներում նշված հանգուցյալների հետ եմ այդ կերպ վարվում, ապա ինչո՞ւ պետք է այլ կերպ վարվեմ ողջերի հետ: Ոչ, ես մեռյալներին և ողջերին մի արշինով չեմ չափում, նրանց միջև էական տարբերություն կա, և ես գիտեմ՝ ինչ: Ես մտածել եմ դա, այդպես է կառուցված իմ անհանգիստ միտքը: Ես կարող եմ անվանել արտաքին և ներքին շատ հատկանիշներ, որոնք թույլ կտան նաև ավելի պակաս փորձ ունեցող կամ իր ուղեղին երբևէ նեղություն չտված, բայց և իր աչքին անվերապահորեն հավատ ընծայող մարդուն մի հարվածով տարբերել ողջ ու մեռածը:

Ես նաև գիտեմ, որ եթե հայացքդ մխրճես մարդու մեջ մինչև մանրագույն մեծություն, մինչև քվարկ, ապա նրանց՝ ինքնագոհ հանգուցյալին և անհանգիստ ողջին միմյանցից չես տարբերի:

Բայց ես չգիտեմ, թե ինչ անեմ իմ այս գիտելիքը: Նրանից ոչինչ տեղի չի ունենում, կամ տեղի է ունենում ոչ մի բան, և ես այս թեման ավելի չեմ զարգացնելու:

Ես չէի ուզում Մանչա Սաթբենիչին ճանաչել ավելի, քան աչքով էի տեսնում, ես չէի ուզում խորասուզվել նրա կյանքի մթության մեջ: Եվ եթե երբեմն ակնարկ էի անում լրտեսի նրա անցյալին, ապա սոսկ այն պատճառով, որ, նրա իսկ խոսքով, ինքն ուներ այդ անցյալը և միշտ տանում էր իր հետ՝ խորը թաքցնելով իր միայնակ սրտում: Նրա կյանքում այլ բան չկար:

Բեսլանն ինքն էլ զարմացավ, որ Նաթելայի մեկնումը նույնիսկ մի քանի օր անցնելուց հետո իր մեջ սպասված փոթորիկը չհարուցեց: Ճիշտ է, սկզբնական շրջանում անսովոր էր ամեն երեկո տուն վերադառնալ: Ինչ-որ բանի պակաս էր զգում, ասես կայունացած կարգուկանոնը, ծեսը խախտվել են: Հոգով չէր էլ մտածում կարոտել նրան, բայց մարմինը նրան էր տենչում ավելի ու ավելի մեծացող ուժով: Երևակայությունը պարբերաբար պատկերում էր Նաթելայի հրապույրները, նրա դյուրաթեք մարմինը, նրա զգլխիչ բույրը: Քաղցրությամբ, աճուկի անձկությամբ էր հիշում, թե ինչպես օտարի պես, ասես հոգով այստեղ չգտնվելով, նա իրեն ամբողջությամբ հանձնում էր Բեսլանի լիակատար իշխանությանը: Նա երբեմն վախենում էր. կինն իրենից տարեց է, կյանք է ապրել, վստահում է իրեն՝ երեկվա տղեկին: Պատասխանատվությունից մղկտում էին ուսերը, մեջքը, մղկտում էր մարմինը: Հավատ էր ընծայում դեռահաս աղջկա, առաջին

անգամ սիրահարված աշակերտուհու նման, և այն էլ ոչ թե ինչ-որ մեկին, այլ իր խստապահանջ ուսուցչին: Մարմնական զգացողությունների խուլու-համրությունը նրան լիովին անօգնական էին դարձնում: Նա տալիս էր իր մարմինը՝ հրաժարվում էր նրանից, Բեսլանին էր նայում մի ինչ-որ հեռու տեղից, ինչպես հոգին, ճախրելով, նայում է լքված մեռած մարմնին:

Բայց որոշ ժամանակ անց, մարմնական անձկությունից, անքուն գի-շերներից, բազմաթիվ ծխած սիգարետներից հետո կարոտը հանկարծ անհետացավ, մարմինը հաշտվեց և խաղաղվեց: Եվ Նաթելային այլևս երազում չտեսավ: Դրանից առաջ իրար հաջորդող շատ գիշերներում, երբ նա, հուշերից ու երևակայությունից հոգնած քուն էր մտնում, երազում նրան էր տեսնում. իբր իրար հետ են, և նա այնքան պարզորոշ էր երևում, որ արթնանալով դեռևս ավերում զգում էր նրա ջերմությունը, առնում նրա հոտը, և նա ավելի իրական էր և ցանկալի, քան երբևէ իրական կյանքում: Հետո ամբողջ օրը նա քաղցրորեն անձկություն էր պատճառում Բեսլա-նին: Նա սիրահարված էր երազում տեսած նրա կերպարին, որն այնքան իրական էր:

Եվ, այնուհանդերձ, սա այն փոթորիկը չէր, որը նա սպասում էր և որից թաքուն վախենում էր: Որովհետև եթե կարոտն անչափելի ու անտանելի դառնար, ինքը կգնար նրա հետևից: Բայց այդ միտքը ոչ մի անգամ նրա գլխում չծագեց – կարծես թե սիրտը մարմնական կարոտի հետ առնչույթ-յուն չուներ, չէր միանում, այն միայնակ, խուլ, անգիտակից էր մնում: Հենց այդ էլ զարմացնում էր Բեսլանին: Նա նույնիսկ չէր էլ մտածում, թե տե-ղավորվել է նա արդյոք, ամեն բան կարգին է. չէր էլ մտածում զանգահա-րել – ընկերուհու հեռախոսը, ում մոտ Նաթելան մտադիր էր սկզբնական շրջանում, մինչև բնակմակերեսի հարցը պարզվելը, ապրել, տվել էր տղա-յին «համենայն դեպս», չնայած գլխի էր ընկնում, որ այդ դեպքը հազիվ թե պատահի:

Այն, որ այս ամեն ինչին սիրտը չէր մասնակցում, Բեսլանն իրեն բա-ցատրում էր լոկ Նաթելայի հետ մարմնական շփմամբ: Սրտայինն արդեն բացակայում էր և փոխարինվել էր միմյանց հետ խոսելու սովորությամբ, և միայն այն պատճառով, որ լավ չէ, տհաճ է, նույնիսկ դուրս-ինչ սարսա-փելի, երբ կողք կողքի եք, միասին, բայց իրար հետ չեք խոսում: Լռության րոպեներին Բեսլանին թվում էր, թե կատարվածն անիրական է և անհար-

կավոր. ո՞վ եմ ես, ո՞վ է նա, ինչո՞ւ եմ ես այստեղ: Ախր նա օտար մարդ է,– ասես ոչ օտար էլ է լինում,– ինչը կարող է ինձ նրա հետ կապել,– անպատասխան հարցերը գլուխն էին խցկվում, և այնժամ նա ազատում էր այդ լուռության անհարմարությամբ դարբնված լեզուն, որպեսզի ծայնի մեջ և բառերում թաքցնի այդ հարցերի կուրացուցիչ ցատումը:

Բայց Նաթելան նրա կարիքն ուներ, միշտ նրան ինչ-որ բան էր պատմում, հաճախ՝ սակավ խոսքերով, բաց թողնելով ոչ էական կամ անհարմար մանրամասները, ինչի հետևանքով նրա պատմածը միշտ էլ տառապում էր ավելորդ հակիրճությամբ և «սպիտակ բծերով», որոնք ավարտին հասցնել Բեսլանին ոչ միշտ էր հաջողվում:

Այդ միտքն առաջին անգամ նրան այցելեց խաչմերուկում երկու փողոցների, որոնցից մեկն ավելի կամ պակաս չափով ասֆալտած էր, երկաթուղուց ձգվում էր դեպի ծով, մյուսը՝ չասֆալտապատած, խճապատ, անհարթ, վերջերս տեղացած անձրևի ջրափոսերով լի: Այստեղ էր Բեսլանին հանկարծակի համակած կարոտի խաչմերուկը. ասես նրա վրա նշան էին բռնել. շուրջը կուպրի նման այնպիսի մի թանձր անհուսություն էր լցվել, որ ինքնասպան լինելու ցանկություն էր առաջանում: Դա երկու ճանապարհների հատման փակուղու միակ ելքն էր: Միտքը, ինչպես և կարոտը հանկարծահաս էին, անսպասելի,– նրա անցյալում նա դեռ երբեք գնդակ չէր արձակել, բայց հավանաբար լիցքավորված էր և ձգանն էլ քաշած: Եվ ահա հարմար դեպք պատահեց: Կամ օդն էր առանձնահատուկ՝ կարճ ընդհատումներով երկու օրվա անձրևից հետո, երբ աշնանային ուշացած շոգը լվացվեց, և գիշերները, հատկապես լուսադեմին ցուրտ էր լինում, կամ էլ դեպի մայրամուտ գլորվող արևի լույսը հատկապես փափուկ էր, նուրբ, թախճոտ և համապատասխանաբար ներկում էր շուրջն ամեն բան, կամ էլ այն պատճառով, որ մի քանի վայրկյանով նա բոլորովին մենակ մնաց, չնայած ոչ հեռու գտնվում էր մի հինգհարկանի պատկառելի տուն և այնտեղ ամենայն հավանականությամբ մարդիկ էին բնակվում՝ թաքնված պատերի հետևում, և բոլոր չորս կողմերում տեսանելի էին ուրիշ, ավելի աշխույժ փողոցներ, որոնցով հետուառաջ էին անում մեքենաներն ու հետիոտները: Հանկարծ այդ ամենը չքացավ, և նա ասես հայտնվեց դատարկության մեջ: Դա լոկ ակնթարթ էր, բայց սոսկալի ակնթարթ: Բեսլա-

նի ձեռքն ականա մեկնվեց դեպի ռազմավար մակարովը, որը նա մշտապես կրում էր գոտկատեղին, կուրտկայի տակ: Եթե մի փոքր էլ հապաղեր, թեկուզ այնքան ժամանակ, որն անհրաժեշտ էր ատրճանակը հանելու, ձգանը քաշելու, քունքին դեմ անելու համար, ապա նրա դիակն ընկած կմնար յոթ ճանապարհի խաչուղիում,– իրականում՝ հատույթում երկու խղճուկ կիսատ-պռատ փողոցների, որոնց անվանումը չգիտեր: Դրանք այնքան կարճ էին, որ անվան էլ չէին արժանացել, և դեմ առնելով իսկական փողոցների, ավարտվում էին: Եվ նա կմնար այստեղ պառկած՝ ծակվելով բուլդոզին սազող ինը միլիմետրանոց գնդակով: Բայց Բեսլանը, ասես մտրակվելով ինչ-որ մեկի տիրական ծայնով, որը հրամայել էր չհամարձակվել, շտապով, նույնիսկ երկչոտությամբ ձեռքը գրպանը դրեց և դանդաղ (ուզում էր հավաստիանալ՝ այս ցանկությունը պարզապես պատահական պողոթկում էր, թե չէ, և չի՞ հասնի արդյոք իրեն. չհասավ) գնաց ծովի կողմը:

Երբեմն, կողքով անցնելիս, Բեսլանը միջքաղաքային էր մտնում: Նա անցնում էր խցիկների մոտով, լսում խոսակցության պատառիկները, այդ նույն «բարև», «ճիշտ ես», «ցտեսություն»–ը, որոնցով մարդը լրացնում է կյանքի դատարկությունը: Նա նույնպես ուզում էր մտնել խցիկներից մեկը, վերցնել սառը ընկալուչը, իսկ հետո, երկար խոսակցությունից հետո, այն դնել իր ափից, ականջից ու շնչից տաքացած լծակի վրա: Բայց Բեսլանը զանգահարելու տեղ չուներ, Նաթելան հեռացել էր իր կյանքից, նրան զանգել չէր համարձակվում: Եվ զգալով իր դրության ամբողջ հիմարությունը, նա հապճեպ լքում էր խոսակցակայանը:

Այնտեղ նա մի քանի անգամ տեսել էր տարօրինակ մեկին: Պատերազմից հետո հանկարծ իրենց մութ խորշերից դուրս սողացին և Սուխումը ողողեցին անսպասելի քանակությամբ հոգեկան գետնահարկի մարդիկ. սա ականհայտորեն դրանց թվին էր պատկանում: Որպես կանոն, նրանք երևում են խստորեն, որոշակի տեղերում, ասես պայմանավորվածությամբ իրար մեջ բաժանել են քաղաքի տարածքը և ինչ-որ ծառայություն են կատարում: (Նրանց ծառայությունը, երևի, այն էր, որ քաղաքացիները սեփական աչքով տեսնեն սանդղակի նշանը, որին մոտենալը, առավել ևս անցնելը, վտանգավոր է. նրանք խուսափում էին դրանից, և Սուխումն

ընդհանուր առմամբ նորմալ տեսք ուներ: Կան նաև միջանցիկ ուղևորներ, որոնք, ձեռքերը թափահարելով, եռանդով քայլում են փողոցներով կամ աշխույժ խոսակցելով աներևույթ զրուցակցի հետ, ի ցույց դնելով անհնար ծամածռություններ և անեծք ուղարկելով չգիտես թե ում, կամ հաջողացնելով սեղմել յուրաքանչյուր հանդիպողի ձեռքը:

Այս մեկը նստակյացներից էր և սովորաբար գտնվում էր միջքաղաքայինի մոտ:

Նրա հագուստն աղքատիկ է, բայց խնամքոտ, նույնիսկ պճնամոլության որոշ տարրերով և դրա հետ մեկտեղ՝ անճոռնի. անցած նորաձևության կարճ ու լայն կարմիր փողկապը, վառ գույնի հարավամերիկյան նախշով վերնաշապիկը և գլխի սոմբրերոն առիթ են տվել, որ նրան Մաչո կնքեն: Կլոր տարին հագել է ծոմոված կրունկներով դեղին կոշիկներ, շատ բան տեսած կարմիր պիջակ, մաշված սպիտակ ջինս, ծախ անանուն մատի վրա փայլում է դրոշմակտորը: Բեղը բարակ է. տուշե հավելագարդը սևին է տալիս շրթունքի վերևում, միշտ ողորկ սափրված է և էժանագին օծանելիք է բուրում: Ամռանը մուգ ակնոց է կրում: Եվ միշտ ձեռքին ունի բավական ուռուցիկ դերմատինեն պայուսակ. թե ինչ կա մեջը՝ ոչ ոք չգիտե:

Նա ինքնավստահ, ամուր քայլով մտավ միջքաղաքայինի սրահ, նույն ամուր քայլով մոտեցավ պատվերի պատուհանին, որի հետևում նստած էր եզնաչյա հեռախոսավարուհին: Վերջինս քմծիծաղով նայեց նրան, բայց ոչինչ չասաց:

«Կարելի է զանգահարել»– «Կարելի է»,– պատասխանեց եզնաչյան՝ դույզն-ինչ չզարմանալով անտեղի հարցից. հավանաբար, առաջին դեպքը չէր: «Ուր էլ ուզեմ»– «Այո»– «Ճապոնիա էլ»– «Այո»– «Իսկ Հարավային Աֆրիկա, Բարի Կամքի հրվանդան»– «Այո»– «Եվ Հորնի հրվանդան»– «Այո»– «Եվ Ավստրալիա»– «Այո»– «Եվ Վրաստան»– զարմացած հարցնում է նա: «Այո»– հետո ապշահար ավելացնում է. «Պետք է թույլտվություն ունենալ»– «Բա Դուք ասում եք՝ ամենուր – ասվում է ոչ առանց չարախնդության»– Ի դեպ, ես այնտեղ չեմ ուզում, ի տարբերություն որոշ մարդկանց, ես այնտեղ ոչ ոք չունեմ... Թույլտվություն բոլորին են տալիս»– «Դեռ ոչ ոք չի բողոքել... Հերթը մի ուշացրեք, գրեք քաղաքը և համարը»: Նրան է մոտեցնում թղթի կտորը և գրիչը:

Նա հեռանում է պատուհանից և վախեցած շուրջը նայելով, որ կարող

են թաքուն նայել, գրում է երկիրը, քաղաքը և համարը: Հետո պատուհանի մոտ է տանում քառաձալ թուղթը՝ սեղմելով այն մատներով, որպեսզի այնտեղ բովանդակվող գաղտնիքի մեծությունից այն լայն չբացվի և բռլորի սեփականությունը չդառնա: Հեռախոսավարուհին բացահայտում է «գաղտնիքը», հետո հաստափոր տեղեկատուում սկսում փնտրել երկիրը և քաղաքը: Չի գտնում: «Դուք նորից ձերն եք պնդում»– «Ինչը»– «Այդպիսի քաղաք այստեղ չկա, երկիր էլ չկա...»– «Չի կարող պատահել»– «Կարող է, կարող է»– «Ինչքան նոր բան կա շուրջը... դրանք պետք է հայտնվեն»– նա այն աստիճանի է հիասթափված, որ պատրաստ է լաց լինել: «Ոչինչ չի հայտնվել և չի հայտնվի»– անգթորեն կտրում է հեռախոսավարուհին: «Բայց ես զանգահարել եմ ուզում»– «Չանգահարեք»– «Բայց դուք ասում եք, որ այդպիսի երկիր և քաղաք չկա»– «Ուրիշ տեղ զանգահարեք»– «Բայց ես երազում եմ տեսնել այդ քաղաքը, այդ երկիրն ու այդ համարը»– «Մի անգամ էլ քնեք, գուցե ավելի մոտ և ավելի իրական բան կտեսնեք երազում»– «Խնդրում եմ մի անգամ էլ փնտրեք»– «Քաղաքացի, դուք խանգարում եք աշխատել»:

Մինչ Մաչոն պարզում էր, թե իրականում կան արդյոք երազում տեսած իր երկիրը և քաղաքը, պատուհանի մոտ խմբված մի քանի մարդ, որ սպասում էին իրենց հերթին, սկսում են դժգոհություն արտահայտել:

Մաչոն գլխահակ հեռանում է:

Այս տեսարանը Բեսլանը շատ անգամ էր տեսել և միշտ խառը զգացում էր ունենում՝ վիրավորվելով անհաջողակ Մաչոյի փոխարեն և վախենալով, թե ինչ է պահված այդ կարծես թե սովորական դեպքի հետևում:

«Առավոտյան մենք քայլեցինք գերեզմանատան մոտով: Արևը դեռ չէր ծագել, լեռների հետևում մի ինչ-որ տեղ նա հասունանում էր երկարատև շոգ օրվա համար: Նրա լույսը դեռևս թույլ էր և անհամարձակ, բայց կարողացավ երկնքի վրա նկարել լեռների հստակ ատամնավոր ռիթմը: Շուրջբոլորը մառախուղ էր նստել, ծառերը, ուրվականի նման, դուրս էին լողում նրա միջից: Այն քիչ-քիչ ցրվում էր, հալչում, բայց ոչ ամբողջը, այլ ծվեն-ծվեն, անհստակ պատառներով, և աշխարհի ծանր նյութականությունը գիշատչորեն քայլ առ քայլ շրջապատում էր մեզ՝ ասես նշան բռնելով: Կիրճում, որը տեսանելի դար-

ծավ գյուղի բարձունքից, թանձր կաթնագույն մառախուղը դեռ երկար պահպանվեց: Այստեղից գետի խշշոցը մենք չէինք լսում: Մառախուղից սկիզբ առնելով այնտեղ, որտեղ կիրճի նեղվածքն ի չիք էր դառնում, այն անշարժ ու կապարագույն օձաձև գալարվում էր ոչ լայն և ոչ երկար հարթավայրում, որպեսզի հետո կրկին սեղմվի բլուրների արանքում: Մի քանի ժամ առաջ, երբ գիշերը հենց նոր էր համի ընկել և մեզ վրա փուլ ածել իր ամբողջ խավարը, մենք անցանք սառն ու արագահոս գետը: Մեծամասնության նման ես էլ կոշիկով ու հագուստով ջուրը մտա, ինչը, պարզվեց, ավելի լավ եղավ: Հանվածների որոշ մասը չկարողացավ դիմադրել ուժեղ հոսանքին, սայթաքեց հարթ քարերի վրա և ջուրն ընկավ: Մեր պատշաճ հանդերձանքով՝ ինքնաձիգը, կուրծքը սեղմ գրկած «կրծկալի» միջի պահունակները, խաղողի ողկույզի նման գոտկատեղից կախված նռնակները, մեկ կամ նույնիսկ երկու «մուխան» այնքան ծանր էին, որ այդ բեռով ջուրն ընկնելը կարող էր վատ վերջանալ: (Նռնակները ես հեռատեսորեն գրպաններս եմ դնում, ինչը գուցե ծիծաղելի է կամ նույնիսկ հիմարություն: Իհարկե, չի բացառվում, որ օղակով լիմոնկան, երբ թեթևամտորեն տարուբերվում է գոտկատեղում, ինչ-որ բանի կկաչի և կպայթի: Բայց դա այնքան անհավանական է, որ եթե ես նույնիսկ ամբողջ կյանքս թրև գամ մեր անտառներում և նույնիսկ ավելի հեռու՝ անանցանելի թավուտներում, հազիվ թե գտնվի մի կառչուն և չարամիտ ճյուղ, որը կաչի օղակին և պոկի այն: Բայց ես ամեն դեպքում, իմանալով ճակատագրի նենգությունը, ուժերս ներած չափով բացառում էի նրա կողմից հնարավոր խարդավանքը): Բայց բախտներս բերեց, և մենք բոլորս ողջ առողջ և թաց անցանք գետը: Ես դեռ չէի չորացել, և քամին փչելուն պես վարտիքս տհաճ սառնությամբ կաչում էր ոտքերիս և ամեն անգամ հիշեցնում գետը: Մի ժամանակ,– ինձ թվում է՝ դա վաղուց էր, անցած տարվա երազի նման, ես ուզում էի նրա հետ հոսել, և երբ մտածում էի նրա մութ ջրի և խաղաղ, խորը տեղերի մասին, լավ էի զգում, գրեթե երջանիկ էի,– չնայած արդեն չգիտեմ, թե ինչ է նշանակում «երջանկություն» բառը,– և լոկ մի բան էի ուզում՝ ամբողջությամբ, իսպառ լուծվել գետում՝ ասես երբևէ գոյություն չեմ ունեցել: Մութ ջրում մահ չէի փնտրում ես, այլ գետ լինել, որպեսզի ես՝ երկոտանի և առանց փետուրի էակս չլինեի, որպեսզի ես

անդառնալիորեն պոկված լինելի հիշողության ցանկացած ձևից:
Այժմ ես անցա իմ երազած գետը և նրա ջուրը, ինձ կաշելով, մասամբ առաջ հոսեց, մասամբ մնաց իմ թաց կոշիկների և տաքատի վրա: Տաքատու ու կոշիկներս կջորանան, գետը կծուվի ծովին, և մեր մի քանի թուփերի հպումը, երբ ինքնաձիգը գլխավերևս բռնած ջուրն էի անցնում և քանի դեռ նա փրփրալով ու խոխոջալով գրկում էր ինձ, մեր այդ հպումը, – իմը՝ պարզ ու անվրդով, անկայուն հոգուն, ինչպես նաև գետի մարմնին և նրանը՝ տաք ու տառապալից իմ էությանը, – կանհետանա՝ ոչ մի տեսանելի հետք չթողնելով, այլ միայն իմ մահվան հիշողության մեջ: Գետի համար իմ մարմինը պատահական և ծիծաղելիորեն անհարատև կաթիլ է: Գուցե նա չի էլ հասցրել նկատել այն. գետը վիթխարի է և՛ տարիքով, և՛ մարմնով, իսկ ես՝ փոքր, իմ ջերմությունն էլ է փոքր, և ես գետի հետ էի ժամանակի մի ինչ-որ փշուրի տևողությամբ: Ես գետն ու նրա պատճառած ուրախությունն զգում էի նրա հետ եղած ժամանակ: Ուրքերով զգուշորեն քայլում էի քարերի վրա և շարժվում դեպի հանդիպակաց ափ, բայց ամբողջ սրտով տրվել էի գետին, ես երևակայում էի, թե նա սպասում է ինձ, այդ սպասումից կարոտել է, ուստի այդպիսի խիտ ու աղմկալից գրկախառնությամբ է դիմավորում ինձ: Նա շտապում է հիշել ինձ, որովհետև գիտե, որ ես շուտով դուրս կգամ, և մենք հավերժ կբաժանվենք: Եվ ես ցավով զգում էի, որ այն կարևորը, որը տեղի էր ունենալու, չէր կատարվել: Ես ափ ելա, ջուրն սկսեց առհոսել իմ վրայից, նրա հետ հոսեց նաև այն լավը, որը ես զգում էի: Ոչ շուրջս, ոչ մեջս ոչ մի բան չփոխվեց, ես աստիճանաբար նախկինին էի վերադառնում, գետի, նրա գաղտնիքի հետ միասնության զգացումը վերացավ: Ես արդեն այդ ամենին անվստահությամբ էի վերաբերվում, նույնիսկ մի փոքր անհարմար էի զգում, որ սիրտս այդպես արագ արշավեց:

Հետո մենք մազլցում էինք մութի մեջ ահեղորեն մեր վերևում կախված լանջով, և ինչքան բարձր էինք հասնում, այնքան աղոտ, անդուր էին դառնում աստղերը, կարծես դրանք մի պղտոր հոսքի մեջ էին ընկել: Անհետացավ Ծիր Կաթինի ալրոտ ոսկեսփյուռքը, հետո հանգան նաև մյուս՝ ավելի թույլ լուսատուները:

Մենք բարձրացանք վերև՝ գյուղի հարթ ծայրամասը, ավելի ճիշտ, գյու-

ղը դեռ բավական հեռու էր, բայց բազմաթիվ արահետները, որոնք տրորվել էին ոչ այնքան վայրի գազաններից, որքան համբերատար տնային կենդանիներից, վկայում էին, որ մարդու բնակատեղին մոտ է: Դա մեզ քաջալերեց՝ մինչև նպատակակետ ձեռքդ կհասնի, բայց միևնույն ժամանակ զգուշացանք, քանզի վտանգն ընդհուպ մոտեցավ մեզ: Երկնքում նոսր աստղեր էին մնացել. արևմուտքում դրանք ավելի շատ էին, բայց կախված էին վիատ ու անհույս, թվում էր, թե երկնքի այս ծայրը նրանց քշել է ծագող արևի լույսը:

Առաջ ուղարկված խումբը վերադարձավ մեզ զարմացնող տեղեկությամբ՝ գյուղը դատարկ էր: Գտնվելով նեղ և երկար սարահարթի վրա, որը ձգվում էր գետի երկայնքով, այս գյուղը Սուխումից դեպի հյուսիս ընկած գյուղերից ամենահեռուն է, որին հաջորդում են միայն լեռները: Այստեղ պաշտպանություն կազմակերպելն անմտություն էր, տեղանքը չէր թույլ տալիս, ուստի բնակիչները վաղորդք լքել էին գյուղը:

Լռություն էր: Մեր քայլերը հնչելուն պես սուզվում էին նրա մեջ: Գիշերը խեցգետնի նման հետ-հետ քաշվելով, աչքերը կկոցած, ավելի ու ավելի հեռու է գնում: Եվ լուսադեմի այդ ժամին, երբ կյանքն անհնարինության չափ նոր է և տարօրինակ ու անկատար երազ է թվում, մենք դուրս գինք-անցանք գերեզմանոցը՝ հազիվ վրդովվելով ծանր, խոնավ փոշին, որը դեռևս պահում էր ցողաշատ գիշերը:

Ճանապարհը վերընթաց էր, և երբ այն մեզ հետ հոգնած հասավ բլրի գագաթ, աջից մառախուղի միջից հայտնվեցին խաչերն ու գերեզմանոցի մետաղյա ցանկապատերը: Գերեզմանների քարե սնարքներին դաջված նկարների անձանց անքուն հայացքի ներքո մենք քարշ եկանք դեպի առաջ:

Ինձ թվում էր, թե նրանց աչքերը մեզ ուղեկցում են մի ինչ-որ չարախնդությամբ, մի ինքնավստահ անպատկառությամբ, սնապարծությամբ, ոչ մի կերպ գլխումս չտեղավորվող այն զգացումով, որ մեռյալները՝ վաղուց հող ու մոխիր, ոչնչություն դարձած լինելով, մեզ ինչ-որ բանով գերազանցում են: Դա գրված էր նրանց երեսներին, որոնցում քարացել էր ոչ թե լուսանկարվելու պահի արտահայտություն, ինչպես մեզնից յուրաքանչյուրը մտածում է, այլ այժմյանը, որը հարուցել է մեր կամուֆլաժային և զինված քայլերը նրանց կողքով: Նկարների դեմքերը սեփա-

կան կյանքով էին ապրում, և դրանց տերերը, նեխելով հողի տակ, ինչ-որ կերպ շարունակվում էին դրանց միջոցով: Հանգուցյալներն ասես ասում էին՝ մենք հավերժությունից խլել-թոցրել ենք մի համեղ պատառ՝ մեր կյանքը. ահա այն՝ մեր դեմքերի ձվաձև պատկերը, որը տեղ է գտել մեր ծննդյան ու մահվան թվականների միջև գտնվող գծիկում, և ինչը կարող է այդ գծիկից ավելի արժանահավատ և ակներև լինել: Իսկ դուք դեռ ատամներով պետք է հավերժությունից ձեր բաժինը պոկեք, ձեր առջև մութ անհայտն է, իսկ մենք նրա համը տեսել ենք, և առավելությունը մեր կողմն է:

Բայց իրենց անխուսափելի գծիկով, ավելի շուտ՝ մոռացության խազով, նրանք հազիվ չանգռել են հավերժության մարմինը, կծել են այն անատամ բերանով: Նրանց բաժին է ընկել լոկ քարե սալի երկարակեցությունը, իսկ հավերժությունը լրիվ հանդերձանքով ու սառը աչքերով ծանրումեծ և խորթացած աղմկել-անցել է կողքով, ինչպես մենք անցանք աղմուկով՝ հոգնած ուղեղի ծայրով արձանագրելով խաչերն ու գերեզմանոցի հյուսածո ցանկապատը:

Կողքով անցանք, բայց ես որոշ ժամանակ հետո վերադարձա:

Մենք տեղավորվեցինք գնդակոծությունից չտուժած, կյանքի թարմ հետքերով տներում, կյանք, որը մի-երկու օր առաջ այստեղ անցնում էր տազնապալի սպասումով:

Տունը դատարկ էր, շուրջբոլորը ցաքուցրիվ թափված էին մահախուճապ տնեցիների իրերը: Ընտրում էին ամենաանհրաժեշտը, ինչը դեռ կարող է պետք գալ ու ծառայել. բայց այստեղ ըստ երևույթին ջարդ են արել մերոնք, նրանք, ովքեր մեզնից շուտ են այստեղ եղել: Պատերազմի ոչ մի պատմություն չի անցել հոգեցունց խաղալիքների և պատռված շորով, մեծ-մեծ, հարցական աչքերով աղջնակի և նրա ձեռքի միոտանի տիկնիկի կողքով: Բայց դա եղել է, չէ՞ որ պատերազմը ոչ միայն անսահման իշխանության, այլև անճաշակության նշան է, ճիշտ է, առանց աղջնակի. ամենուրեք թափված էին մանկական խաղալիքներ: Վերջերս այստեղ մարդիկ են ապրել, քայլել են, խոսել, կերել, շնչել, մի խոսքով՝ արել են այն ամենը, ինչ պատշաճ է մարդկանց: Նրանք նաև մտածել են: Ամենայն հնամոլության, սովորական ապրելակերպից զատ նրանք զգում էին, նրանց մեջ հոգևոր կյանք կար, որը, ձեզ ասեմ, աներևակա-

յելի սահմոկեցուցիչ, լարծուն, նողկալի, անամոթ, անպարկեշտ բան է: Բայց մարդը, որն իր բնույթով կենդանի է, դատապարտված է նաև այդ կշռալիցին, հոգու այդ կեղտոտ աշխատանքին՝ հոգեկան կյանքին՝ փոխանակ ստանալու մարմնական գոյության անքմահաճ ուրախությունները, հետևելու մարմնականին, նրա բնական կանչերին,– ի հեճուկս և բացի հոգուց:

Տունը դատարկ է: Բնակիչները գնացել են, եկել են ուրիշները, բայց տունն այնուհանդերձ մեռած է:

Անքուն գիշերից հետո մեծ մասն ընկավ քնելու, անկանոն խոմփոց է լսվում: Քիչ մնաց ես էլ ննջեի, բայց աչքս կաչելուն պես ձվաձև նկարները, խաչերը, մետաղյա ցանկապատերը ելան իմ դեմ:

Ես գնացի գերեզմանոց, որտեղ մեռյալները քարե սալերի տակ խանդով պահում են իրենց գաղտնիքները:

Արևն արդեն ծագել էր, այն վառվում էր լեռների գլխին: Իսկ իմ գլուխը լցված էր երերուն մտքերի մութով, որը փչել-բերել էր գիշերային երթը, գանգիս մեջ մի հոգնած բան էր շարժվում՝ ասես բոթելով նրա պատերը: Բայց ես բլուրը բարձրացա, ինձ վրա փչեց վաղորդյան թարմ զեփյուռը, և գլուխս սկսեց պայծառանալ:

Գերեզմանոցը խառն էր. այստեղ հուղարկավորված էին աբխազներ, վրացիներ, հայեր, ռուսներ, հրեաներ, հույներ... Ես դժվարությամբ էի տարբերակում տապանաքարերի մակագրությունները: Բարձրաձայնված անունները կարծես թե ավելի իրական էին դարձնում դրանց տակ պառկածների և կյանքը, և մահը. լուսանկարներից ինձ նայող դեմքերը հնչյունային կապվածություն ունեին, որը միակն էր տվյալ դեմքի համար, այն ոչ պակաս խոսուն էր, քան աչքերը: Ազգանուններից մեկը ես ոչ մի կերպ չէի կարողանում կարդալ. կիսաջնջած էր, տիրոջ անունը չէր հասկացվում: Դեռևս ոչ ծեր, փափախով տղամարդն ինձ էր նայում գրեթե նույն սպասումով, որով նա մի ժամանակ նայել էր լուսանկարչական սարքի օբյեկտիվին: Հավանաբար, նա այն ժամանակ համոզված էր, որ ծանր սարքի՝ իր վրա ուղղված անաչառ աչքը, որի շուրջը ոտ ու ձեռք էր ընկել խաբեբա լուսանկարիչը, կպատկերի և հավերժության համար կպահպանի իր բեղերը և աչքերի թախիծը: Բայց հիմա ինչ էր սպասում ինձնից, ինչո՞ւ էր այդպես անթարթ նայում: Ես նրա անունը

չգիտեի, ուստի և նա չէր կարող ավելի մոտ լինել ինձ: Կային լոկ դեմքը, աչքերը, փափախը, բեղերը, իսկ ահա անունը, որի հնչյուններում մենք ավելի շատ ենք, քան ոսկորներում և մսի մեջ, որոնցից բաղկացած ենք,– գուցե մենք ծնվում ենք նույն այդ միակ անվան համար, որով մեզ կոչում են,– անունը ծուլվում էր քարի սևության հետ, այն համր էր: Բեղավորը փորձում էր ծակել-անցնել գրանիտե համրությունը և բախելով ինձ իմացնել, և դա նրան հաջողվեց. որքան երկար էի ես նրան նայում, այնքան ծանոթ ու հարազատ էր նա դառնում: Ես այնպե՛ս էի խղճում նրան: Նա ինձնից շատ ավելի վաղ էր անցել այն ուղին, որը ես էի անցնելու: Որոշ բան նա արդեն գիտեր, բայց իր հեռվից ոչ մի նշան չէր անում, ակնարկ անգամ չկար նրա աչքերում. դրանք նայում էին տխուր և միաժամանակ սառը, դրանք պահանջում էին, որ ես ընկալեի, տեղը տեղին բացատրեմ, թե ինչ աղմկալից ու այրող բան է պատահել նրան այդպես շուտ, մի շնչով: Երևի մահը, որտեղ նա վերջնականապես ընկել-մնացել է, լրիվ ծանծրալի բան է, մինչդեռ կյանքը կարգին բան է, և ով, եթե ոչ ողջը կարող է մեկնել այն:

Ես ի՞նչ կարող էի ասել համառ բեղավորին: Այդ ամենը բանի տեղ մի դիր, բարեկամս, և շարունակիր քայքայվել, ինչը դու հաջողությամբ անում ես վերջին կես դարից ավելի: Ես քեզ ոչնչով չեմ կարող օգնել, կյանքը քեզնից քիչ եմ հասկանում: Քեզ գուցե և ավելի հարմար է. դու ինձնից երկար ես գետինը տրորել – քո աչքերում այդպիսի անելանելի ու թախծոտ բան կա, և այդ գարշելի արարածի հետ, որն այդպես հիմարացրել է քեզ, բավական երկար ժամանակի ծանոթ ես. աչքերի թախիժը վաստակում են ինչպես կնճիռը. դրա համար ժամանակ է պետք: Դու կարծեմ ասում էիր, որ կյանքը շատ կարճ է ու արագահոս: Այս հարցում ոչինչ չես կարող անել, եղբայրս, ինչ վիճակված էր, այն էլ կատարվել է: Քեզ դագաղով տարել են պատրաստակամ և գոհունակ ուսերը: Էլ ի՞նչ պետք է անեին: Աչքից հեռու տարան, դու արդեն ոչ մեկին հարկավոր չէիր, խանգարում էիր ամենքին՝ հարազատներիդ, հարևաններիդ, ծանոթներիդ, նույնիսկ նրանց, ովքեր քեզ չգիտեին, բայց պատահականորեն լսել էին քո մահը և անհարմար զգացել, վշտացել, ասես դու ինչ-որ անպարկեշտ, ամոթալի բան ես արել, ասենք՝ տոռել ես ի լուր ամենքի: Բոլորի համար մեծ անհարմարություն ես ստեղծել,

եղբայրս, բոլորն անհամբեր էին, որպեսզի հնարավորինս շուտ մոռանային քեզ: Հիմա դու ուզում ես, որ ես քեզ հիշեմ, դու թափով հոգիս ես ներխուժում, դու իմ մեջ տեղ ես փնտրում, որպեսզի էլի որոշ ժամանակ շարունակես քո գոյությունը. չե՞ որ քանի դեռ ես քո մասին մտածեմ, համարիր, որ դու շարունակում ես ապրել: Դու ուզում ես, որ ես քեզ մեջքիս դրած տանեմ ինձ հասանելիք ժամանակի ընթացքում, ասես առանց քեզ քիչ բեռ կա: Ես քեզ ճանաչեցի՝ քեզ չի հուզում, թե ինչ է կյանքը, միայն թե դու ապրես ցանկացած ձևով, ցանկացած տեսքով՝ միայն թե երկարաձգես քո հիշատակը գոնե ամենակարճ ակնթարթով: Իր ոսկրոտ ձեռքերով հանգուցյալը բռնում էր ինձ: Նա լկտիաբար կաշում էր ինձ՝ միայն թե ես գերեզմանատնից հեռանալիս նրան հետս տանեմ խորը թաքցրած իմ հիշողության մեջ, և գուցե, սրտումս:

Ես հեռացա, և ոչ մենակ. տարա նրան, և ճանապարհին երևակայում էի, թե նա ինչ էր մտածում, ինչ էր ուզում, ինչով էր ապրում: Ես փորձում էի նա դառնալ. աղքատիկ տվյալներով՝ բեղեր, փափախ, վշտահար աչքեր, մի քանի կնճիռ և կյանքի անհագ ծարավ,– ես կառուցում էի նրա ճակատագրի շենքը: Այն չէր կարող ճշգրիտ համընկնել նրա իսկական կյանքի հետ, բայց դա կարևոր չէր: Նա կար, և դա հավաստում էր տապանաքարը, իսկ ես փորձում էի հնարավոր հագուստներից մեկը, որով, այլ հանգամանքների բերումով, նա կարող էր կյանքն ապրել: Այդ կյանքի ուղին, որը մերթ անպաճույճ ուղիղ էր, մերթ խրթին ու գալարուն, լաբիրինթոսային, ես էի հորինում, ինչին համապատասխան փոխվում էր իմ հերոսի զգեստավորումը: Ես հետաքրքրված էի հետևելու, թե ինչպես կածանի աննշան տեղաշարժը երբեմն հանգեցնում էր ճանապարհորդի լիակատար փոփոխությանը թե՛ արտաքինապես, թե՛ ներքնապես: Ասենք, նա մեծ ճանապարհի ավագակ է, կործանել է շատ հոգիներ և ի վերջո ընկել է արյունոտ վրիժառուի ձեռքով կամ էլ թե չէ օրենքի պահապանի գնդակն է նրան տապալել: Այդ դեպքում մի ինչ-որ քարե կոշտ բան էր ի հայտ գալիս նրա կերպարում, իսկ աչքերի ակնհայտ թախիժը ես վերագրում էի կամ ուշ ապաշխարությանը կամ չօգտագործվող ներքին պայքարի ակամա նշանին, որը զղջման հետ քիչ ընդհանրություն ուներ, քանզի չէր գիտակցում իր մեղքերը, նրա մեջ այլ ուժ էր խոսում. ցավում էր նրա ոչ թե հոգին, այլ մի ինչ-որ

այլ բան, ավելի շուտ կյանքի կարճատևության ամփոսանքը:

Կամ էլ թե չէ նա ծանծրալի, գորշ ճակատագրով, աչքի չընկնող մի մարդ էր՝ ծնվել էր, կարծես թե ապրել և իսկապես մահացել: Նրանից ինչ էր կախված: Նա մի այնպիսի կատաղի հոսանքի մեջ էր հայտնվել, որ ուժը բավականացրել էր ձեռքը լոկ մի քանի անգամ թափահարելու համար. բայց դրանից նրան տանող հոսանքն ամենևին չփոխվեց: Եվ այնուհանդերձ նա կարողացավ այդ ամբողջ անհասանելի եռյակը՝ ծնունդը, կյանքը, մահը, դարձնել այնքան սովորական, հասարակ, և ոչ միայն կողմնակի հայացքով. և իր ներսում էր նա նույնքան ծանծրալի. նա կյանքն ապրում էր իբրև պարտավորություն, առանց ուրախության: Եվ նա մահացավ նույնքան աննկատ, ինչպես ապրում էր:

Կամ էլ նա մի մարդ էր, ով լիուլի ըմպել էր կյանքի դառնությունը, կորցրել էր մերձավորներին, բարեկամներին: Ամեն բան նրան դժվարությամբ էր տրվում, ամբողջ կյանքում հետևում էր անհաջողությունը: Դրան գումարվում էին առողջական խնդիրները և մոտալուտ մահվան նախազգացումը: Բայց նա հասցրեց կին առնել և ժառանգ լույս աշխարհի բերել: Դա մթության մեջ եղած միակ լուսավոր կետն էր, որը շրջապատեց և լցրեց նրա էությունը: Նա մեռնում էր այն գիտակցությամբ, որ ինչ-որ բան իրեն այնուամենայնիվ հաջողվել է, նրա սերմը ծիլ է տվել, մի կաթիլ լույս իրենից էլ կմնա. ամուր բռնելով մահվան մահճում իր շուրջը ձեռուտ ընկած կնոջ զգեստի քղանցքը՝ նվնդվում էր և թուփն մեկ փսիինքը սրբում նրա որդու կեղտոտ թևքով, որդի, որի դիմագծերում նա հույսով ու անբացատրելի, մինչև ոսկորը թափանցող սարսափով ճանաչում էր ինքն իրեն:

Իմ ինչին է պետք նա: Նա վաղուց աճյուն է, ոսկորները գտնվում են հողի սև ընդերքում, իսկ ես դեռևս ողջ եմ և սև, ծանր կոշիկներով փոշին եմ դոփում: Մի քանի թուփից մերոնց մոտ կլինեմ, մի բան կուտեմ, ավելի շուտ՝ հացով խտացրած կաթ, որից սիրտս արդեն խառնում է, բայց շոգեխաշած մսի պահածոյից, որքան ուզում ես աջիկա ավելացրու, սիրտս ավելի է խառնում, հետո կընկնեմ-կքնեմ:

Բայց առայժմ ես անընդհատ այդ անծանոթ բեղավորի մասին եմ մտածում: Ինչ-որ բանով կապված եմ նրա հետ, բայց թե ինչով՝ չեմ կարողանում հասկանալ: Նա ասես ավելորդ է ու պատահաբար է իմ ճանա-

պարհին ընկել, և այնուհանդերձ ամուր բռնել է ինձ: Կարծես շնչում է ականջիս. «Ես օտար չեմ քեզ...»: Եվ շնչում է ոչ թե միայն նա, այլ բոլոր գերեզմանները: Ամեն մի տապանաքարի տակից տարբեր ձայներով հանգուցյալները շնչում են. «Մենք քեզ օտար չենք...», ամբողջ գերեզմանատունը՝ «Մենք քեզ օտար չենք...»:

Ես պառկել էի այդ գերեզմաններից յուրաքանչյուրում. և այս մինչեղափոխական գերեզմանում, որի գլխավերևում քարե մի անդուր խաչ է դրված, և այն շքեղ տեղը, որտեղ մարմարե զանգվածեղ տապանաքար կա և միջին տարիքի մի տղամարդու մարմարե կիսանդրի. նա արդեն ճաղատ է, խոշորադեմ, կրկնակզակով: Եվ այն համեստ գերեզմանում եմ եղել. երկաթե ցանկապատ կա, գրանիտե սալ՝ ցմահ տվյալներով... Պառկել եմ ամեն մեկի մեջ. հող ու մոխիր են դարձել, ամենքից մոռացվել են, նրանք ճանաչել են ինձ, սիրել են. քանզի և նրանք, ովքեր ինձ գիտեին և սիրում էին, նույնպես վաղուց հող են դարձել...

Ապրելու ժամանակ մենք միմյանց կողքով ենք անցնում: Իմ մասին ես միշտ էլ քիչ եմ մտածել, ավելի շատ ուրիշների մասին եմ մտածել, նրանց կյանքով ապրել. ոչ թե կարեկցելու իմաստով,– ես այդպիսի մարդասեր չեմ,– այլ երևակայությամբ: Ես պատկերացրել եմ ուրիշի հոգին, և այն միշտ խորխորատ է, խորխորատ, լոկ որի մեջ ընկնելով մենք կարող ենք միավորվել՝ հաղթահարելով մեր միայնությունը»:

Մադինայի մասին նա ավելի ու ավելի հաճախ է մտածում: Եվ հարցերը՝ ինչ է սերը, ինչպե՞ս տարբերենք իսկական սերը կեղծից, կարելի՞ է արդյոք սիրահարվել ոչ թե անմիջապես, այլ ժամանակի ընթացքում, ավելի ու ավելի բոցավառվելով մյուս էակով, որը նախկինում լիովին օտար է եղել,– տեղացին նրա վրա: Կիրքը, նույնիսկ ոչ թե կիրքը, այլ ավելի շուտ ամեն բան ծանրութեթև անելու, չափելու, զինված աչքով ուսումնասիրելու, դիակը մաս-մաս անելու և կախարդելու միջոցով դարձյալ հավաքելու սովորությունը, որը Բեսլանը կոչում էր անվանում, մի խոսքով, գիտական մոտեցումն այստեղ էլ հանգիստ չէր տալիս նրան, սրտի ձայնը խլացնում էր ամեն տեսակի կասկածներով, նախնական պայմանների և վերջնական արդյունքի իբր տարբերությամբ:

Բայց ամեն բան վկայում էր, որ սերը հանկարծահաս հիվանդություն

է և ոչ մի ինքնաներշնչումով այն չես պատվաստի քո մեջ. մի քիչ նման է այն բանին, ինչ եղավ սկզբում իր և Նաթելայի միջև, իսկ հետո ամեն բան զառիվայրով ցած ընկավ և ի վերջո հողմացրիվ եղավ: Բայց Մադինայի դեպքն այլ է. թե՛ ինքն իրեն խաբում է: Եթե Մադինան իր սիրուհին դառնա, ժամանակի ընթացքում նա չի՞ սառչի նրա հանդեպ ճիշտ այնպես, ինչպես սառեց Նաթելայի հանդեպ:

Օրեցօր նա ավելի ու ավելի շատ էր մտածում Մադինայի մասին...

«**Ի**մ օրագիրը հազիվ թե որևէ մեկին հետաքրքրի, չասած այն, որ կհասնի՞ արդյոք որևէ մեկին: Կհասնի թե ոչ՝ ինձ առանձնապես չի հուզում: Մտածված կամ արտահայտված և լսելի դարձած միտքն այնքան էլ կարևոր չէ, ավելի ճիշտ, այնքան անխուսափելի չէ, որքան գրվածը: Գրելուց հետո ես ազատ եմ. սա առավել ընդհանուր ձևակերպումն է իմ զգացածի: Դա կարելի է նաև պարտք կոչել,– ամեն ոք, կատարելով իր պարտքը, հանգստանում է. ես էլ:

Իմ օրագիրն այդպիսի պարտքի իրագործում է: Այնտեղ պատերազմ, արյուն ու կեղտ չկա, չնայած ես կարծես թե ակննատես եմ: Աչքով տեսնում եմ, թե շուրջս ինչ է կատարվում, բայց չեմ դուրս գալիս, ավելի ճիշտ՝ դուրս չեմ սողում իմ հարսնյակից, ոտնձգություն չեմ կատարում այն բանի հանդեպ, ինչը հեռու է իմ հայացքից, իմ աչքերի ընդգրկումից: Ուրիշների շուրթերից լսում եմ իրականության մասնիկներ, երևակայում եմ, թե ինչպես է եղել իրականում, բայց չեմ կարող երաշխավորել արժանահավատությունը: Մենք շարժվում ենք, լեռ բարձրանում, կիրճ իջնում, գետն ենք անցնում, և այս ամենի նպատակը Սուխումն այնտեղ ամուր նստած վրացիներից հետ խլելն է, հետո նաև՝ նրանց գրաված Աբխազիան. սա ես հաստատ գիտեմ, և ավելին իմանալ չեմ էլ ուզում:

Բ.Ն.-ի խոսքով՝ ես անսահմանորեն փոքր մեծություն եմ, մեխանիզմի աննկատելի և աննշան մի մաս, որն իր չափերով ու հզորությամբ բազմակի գերազանցում է ինձ: Բայց այն մի մաս է, որը մութ անկյունից դիտում է ամենքին և ամեն ինչ, ոչինչ բաց չի թողնում, էլ չասած՝ հիշում: Ինչ միտք ունի ինքն իրեն հիշողությամբ ծանրաբեռնելը:

Ես մի քանի մարտի եմ մասնակցել, բայց դրանք նկարագրել չեմ ու-

զում: Կարող եմ լոկ պատմել, թե ինչ զգացողություն եմ ունեցել, թե ինչպես սկզբում սարսափելի է, ձեռք ու ոտքդ ընդարմանում են, թվում է՝ էլ երբեք տեղից չես շարժվի, իսկ հետո միանգամից անզգա ես դառնում և անում այն, ինչ հարկավոր է. կրակում ես, սպանում ես, վազում՝ եթե վազել է պետք, եթե պետք է՝ գլուխդ պահում ես և ամբողջ ժամանակ անեծք փսխում, ավելի լավ է՝ հնարավորինս բարձրաձայն, քո ամբողջ ճաքած ձայնով՝ նրա մեջ խորը պահելով այդպիսի բախտից դուրս ժայթքելու պատրաստ վիրավորանքդ.... Իսկ ահա իրական, ավելի ճիշտ՝ իրատեսական պատկերն այն ամենի, ինչ տեղի է ունենում, տալ չես կարողանում:

Ամեն մի նկարագրության պակասում է մի ինչ-որ գլխավոր էական բան. նկարվածի հետևում ֆոն է պետք, բայց մյուս՝ ոչ մեր աշխարհին բնորոշ չափումների հետևում ուրիշ բան է ելնում: Այ, եթե հնարավոր լիներ փոխանցել այդ ուրիշ բանը, նրա շնչառությունը... Այդժամ ամեն մի գրականություն շունչը կփչեր: Մինչդեռ գրողները,– ոչ նրանք, ով սոսկ պատմություն է պատմում, լարվում են փոխանցել այդ ուրիշ բանը, և գորշ նյութի սարեր են ոչնչացնում. իսկ նյարդ ու ժամանակ՝ որքան. անչափ շատ նյարդ և անչափ շատ ժամանակ: Քանի որ գրականությունը դեռևս շարունակվում է և գրող եղբայրության պակաս չի զգացվում՝ ի տարբերություն ընթերցողի, որը վաղուց է հավատը կորցրել, որ գրականությունն ի վիճակի է ծամել և նրա բերանը դնել այդ ուրիշ բանը,– ապա այս ամենն ապացուցում է, որ ուրիշ բանն այդպես էլ հնարավոր չի եղել որսալ բառով և տեքստ խցկել, եթե նույնիսկ այդ տեքստը երիցս նոբելյան լինի:

Եթե ամեն ոք կամրջի վրա է մեռնում, երբ նա վերահասու է լինում *ուրիշ բանին* կամ գտնվում է վերահասու լինելու նախադռանը, ապա գրականությանը ևս կպատուհասի նույն բախտը»:

Այն ժամանակ նրանք ինչ կարող էին խոսել Մ.-ի հետ: Ադգուր Ա.-ն չի՛ չափազանցրել արդյոք՝ իրենց զրույցին այդքան բարձր գնահատական տալով: Հավանաբար, նա հաջորդ առավոտ է գրել և դեռևս գտնվել է երեկվա տպավորության տակ, իրենց ամբողջ զրույցը տեսել իբրև անսովոր բովանդակությամբ և իմաստով լեցուն մի բան: Բայց այդ դեպքում ինչո՞ւ

է այդպիսի խնամքով ջնջել ամեն ինչ և թողել լոկ իր ցնծագին, նույնիսկ ճոռոմ գնահատականը: Եվ երբ է ջնջել. նույն առավոտ, թե՛ մի քանի օր անց՝ ամբողջը վերընթերցելուց և խորհելուց հետո: Ինչից է հանկարծ վախեցել կամ չի ցանկացել ուրիշի սեփականությունը դարձնել: Հանելուկ է: Գուցե այն ամենը, ինչ նրանք միմյանց ասում էին կրքի պողպաման պահին, և այն էլ այդպիսի ռոմանտիկ երիզվածքով,– պատերազմը, գիշերը, աստղերը, գետը...– առավոտյան նրան զառանցանք է թվացել՝ զուրկ և բովանդակությունից, և իմաստից: Այսինքն՝ դա ընդամենը մի յուրօրինակ ջարդվածք էր, ինչը հատկապես հաճախ է պատահում գրողներին, ովքեր դեպքից դեպք գիշերն են աշխատում: Ոգեշնչված ճոճացնում են հորթի բերկրանքով և անսահման ինքնապաշտությամբ, բայց հենց որ կարդաս օրվա անողոր լույսով, գրածդ կթվա գրամոլի զառանցանք, և կամաչես, ամոթահար դեմքդ կվառվի կրակի պես: Համանման մի բան է պատահել նրանց այն գիշեր. նրանք տրվել են գիշերվա խաբեությանը և իբրև բարձրագույն ճշմարտություն են արտաբերել այն ամենը, ինչ գիշերն իրենց շշնջացել է:

Բայց իր գնահատականը նա, այնուամենայնիվ, պահպանել է: Ուրեմն, դա զառանցանք չէր, այլ ինքնաբացահայտում մինչև այն աստիճան, ինչը որ թղթին էլ չես վստահի. այն պետք է մնա ասվածի մարզում, գրված լինել չի կարող և հարկավոր էլ չէ, որ լինի: Ի վերջո, գրող մարդը բացառություն է, գուցեև հոգու խեղում, իսկ խոսողն ամենուր է, հենց նա էլ իսկապես ապրում է, նա ներկա է: Եվ միշտ չէ, որ մարդիկ միմյանց խելացի խոսքեր են ասում, ավելի հաճախ՝ հակառակը, բայց նրանց համար իմաստալից են, դրանք կրում են նրանց անհատականության, նրանց ճակատագրի կնիքը, նրանք ապրում են նրանով, թե ինչ և ինչպես են ասում: Վերջինս նույնիսկ ավելի կարևոր է: Ընդհանրապես, բառերն արտաբերվում են ոչ թե այն պատճառով, որ իմաստը փոխանցեն: Երբ դա տեղի է ունենում, մարդիկ անտարբեր են լինում միմյանց հանդեպ, շահագրգռություն ունեն սոսկ բառերի հանդեպ: Հարկավոր է զգացմունքը փոխանցել. դրա համար էլ մարդը խոսում է: Կարևորն այն չէ, թե ինչ է ասվել, այլ այն, թե ինչպես է ասվել, ինչ ծայնով, ինչ նպատակով:

Բեսլանը չհամբերեց և Մանչա Սաթբենիչին փոխանցեց նրա անցյալին

վերաբերող իր կասկածը: Նա այնքան դաժան եղավ,– երևի խմված թթու գինու պատճառով, որով ծերունին հյուրասիրում էր նրան՝ պարծենալով զարմիկների ուշադրությամբ ու հոգատարությամբ: Ուղղակի հարցրեց. «Ձեր ձեռքերն արյունոտ չե՞ն, Մանչա Սաթեկիչ»: Անսպասելի հարցից ծերունին ցնցվեց: Նա սառը, նույնիսկ սքողված չարությամբ նայեց Բեսլանին, բայց իսկույն տիրապետեց իրեն, անճոռնի ժպտաց և կամաց արտաբերեց, կարելի է ասել՝ սեղմած ատամների արանքից փնթփնթաց. «Ոչ, երիտասարդ... Դուք դեռ չեք հասկացել, թե այն ժամանակ ինչ էր կատարվում: Մարդիկ պարտադրված էին ընտրություն կատարել՝ բարիք, թե՛ չարիք,– և ընտրելով՝ նրանք օգնում էին արդարության կայացմանը: Հավատացնում եմ Ձեզ, մեղավորներից ոչ ոք պատժից չխուսափեց: Անմեղ մարդ չկար, բոլորը մեղավոր էին...»– «Եվ Դուք»– «Մեկն ավելի քիչ էր մեղավոր, մյուսն՝ ավելի շատ. ես ավելի քիչ, քան Դուք կարծում եք...»:

Տարօրինակ բաներ եք ասում, Միխայիլ Ստեպանովիչ: Վերծանեք:

Բեսլանն զգում էր, որ շատ է խմել, բայց չէր կարողանում կանգ առնել: Պատերազմից հետո նա վաղուց այսքան չէր խմել: Գլխով մի բավական անարգ միտք անցավ՝ ծերուկը մի բան լցրած չլինի՞ գինու մեջ,– աչքերս ասես մառախլապատ լինեին,– բայց արագորեն վանեց այն՝ ամաչելով իր անմիտ կասկածամտությունից:

–Դա բացատրել դժվար է, բայց հնարավոր է: Կյանքը սահմանին էր հասել՝ անդունդի եզրը, ինչպես մի ժամանակ ասել է բանաստեղծը: Ամենքն ուզում էին ողջ մնալ, բայց ի՞նչ գնով: Մարդու որդուն մեծ փորձություն բաժին ընկավ. ամբողջ հասակով ծառացավ հետևյալ հարցը՝ ի՞նչն է առավել արժեքավոր կյանքը թե՛ խիղճը: Եվ կյանքը, և խիղճը մեզ Աստված է տվել, իսկ ես Աստծուն հավատում եմ, չնայած երբեք չեմ խոստովանել: Հասկանում եք, այն ժամանակ չէր կարելի Աստծուն հավատալ, և ես հրամանով չէի հավատում: Այսինքն՝ խոսքով չէի հավատում, բայց հոգով հավատում էի, և վերջ, ինչ անում էի, նրա հետ էի չափում, նրա խորհուրդն էի հարցնում, համաձայնությունը և օրհնությունը: Այսպիսով, Ա՛ կյանքը, Ա՛ խիղճը մեզ Աստված է տվել, և մենք ենք ընտրելու, թե որն է գլխավորը: Նա է ասել՝ մարդն ինչ շահ կունենա, եթե ձեռք բերի ամբողջ աշխարհը, բայց կորցնի հոգին: Իսկ հոգին կարելի է չկորցնել՝ լոկ խղճով ապրելու դեպքում: Նա ասել է, բայց մենք չենք լսում: Երևի մեր մարմինը շոշափելիք,

հոտոտելիք ունի, այն շնչում ու ապրում է, այն մերն է՝ այնքան հարազատ, և մենք չենք կարողանում մեզ նրանից զատել: Իսկ խիղճը ձեռքով չես բռնի, ինչպես և հոգին, և մարդը գերադասում է մարմինը, այսինքն՝ կյանքը, ավելի ճիշտ՝ իր մարմնի պստիկ կյանքը, որն այնքան կարճատև է, ծիծաղելիորեն սահմանափակ, իսկ հոգին կործանում է: Իր հիմարության, վախկոտության, անհավատության երեսից նա հավերժությունը փոխանակում է այսրոպեականի, անցողիկի, վաղանցուկի հետ: Չէ՞ որ սա խելքից վեր ու անհասկանալի է: Ստալինը նախախնամության գործիքն էր, ժանտախտը, որն Աստված մարդկանց էր ուղարկել, որպեսզի հերթական անգամ փորձության ենթարկի նրանց: Ովքեր որ դիմացել են փորձությանը, զբոսնում են դրախտային թավուտում, նրանք երջանիկ են, նրանք հավերժության ծոցում են, բայց նրանք, իմ կարծիքով, այնքան էլ շատ չեն, մեծամասնությունը տանջվում է դժոխքում, նույնիսկ ոչ քավարանում, և նրանց մահն է սպասում, հավերժական մահը...

- Իսկ Ձեր կարծիքով, Ստալինը որտեղ է գտնվում:

- Դա բարդ հարց է, երիտասարդ: Ես այդ մասին մտածել եմ, բայց աստվածաբանության իմ գիտելիքն ակնհայտորեն քիչ է պատասխանելու համար: Առողջ բանականությունն ասում է, որ եթե նա բարձրագույն ուժերի գործիքն է եղել, ապա ամենայն մեղք հանվում է նրանից, եթե ոչ, ապա... Բայց կարող է այնպես էլ լինել, որ Ստալինն Աստծո գործիքն է եղել ոչ թե անմիջականորեն, այլ իր ազատ ընտրությամբ, ինչպես գործիք է կյանքի ամեն մի փորձություն: Այդ դեպքում նա էլ է դժոխքում այրվելու: Եվ հետո, դժվար է հավատալ, որ Աստված կարող է դավադրության դիմել մահկանացուի հետ, որպեսզի փորձության ենթարկի ուրիշ մահկանացուների: Մենք ամենքս փորձություն ենք մեկս մեկի համար:

- Ես և Դոն էլ:

- Այո, երևակայեք, մենք էլ: Ես ծեր եմ ու զառամյալ և մի ոտքս արդեն գերեզմանում է, բայց իզուր չէ, որ մենք հանդիպեցինք: Չգիտեմ, թե Դուք ինչ կքաղեք ինձ հետ հանդիպելուց, դա ցույց կտա Ձեր հետագա կյանքը, ես այդ բանն արդեն չեմ իմանա, բայց ինձ համար այդ հանդիպումը շատ բան է նշանակում: Ես ամբողջ կյանքումս տարել եմ այդ բեռը, և դա ծանր բան էր, հավատացնում եմ: Բայց ես տարա, և այժմ ես կարող եմ...

- Մեռնե՛լ:

- Դուք կռահեցիք, երիտասարդ, մեռնել: Մեռնելը հեշտ է, երբ գոնե մեկ հոգի քո մասին ճշմարտությունը գիտե. այն երկուսը, որոնք ինձ դեմքով ճանաչում էին, արդեն մահացել են, իսկ փաստաթղթերում ես կեղծանունով էի ներկայացված:

- Բայց չէ որ Աստված էլ գիտե, մի՞թե դա բավական չէ:

- Աստված... Նա անհասկանալի է, իսկ ես դեռ ողջ եմ և իմ մեջ մարդն է խոսում, նույնքան թույլ ու մահկանացու, որքան և Դուք, և ես մարդուն եմ դիմում:

- Դուք ուզում եք, որ Նրա առջև ես մի բարի խոնք ասեմ Ձեր մասին:

Մանչա Սաթբենիչը տհաճությամբ կնճռոտվեց. իբր, ինչո՞ւ եք այդպես լկտիորեն պարզեցնում, վայր բերում ամեն բան, և Բեսլանը կրկին ամաչեց: Պարզվեց, որ ծերունի այնքան էլ պարզունակի մեկը չէ, ինչպես կարծում էր: Բայց, մյուս կողմից, «Պրավդայում» ԽՍՀՄ-ի կործանման պատճառը որոնե՞լը. չէ որ դրա համար ծալը պակաս պետք է եղած լինի:

- Ոչ ոքի խոսքը, ոչ մեկի երաշխավորությունն այնտեղ չեն օգնի, հո կուսակցություն չեն ընդունում,– ծերունին իր կատակի վրա ժպտաց: Բայց Բեսլանը դրան չարձագանքեց. կատակը լավերից չէր: Ծերուկը դեմքից վերացրեց ժպիտը՝ հասկանալով, որ կատակը բանի պետք չէր:– Ձեր բարեխոսությունն ինձ հարկավոր չէ, ինքս էլ կարող եմ հարկ եղածն ասել: Բայց ինձ, ինչպես և բոլոր մնացածներին, և Ձեզ էլ երբևէ, հարկավոր չի լինի որևէ բան ասել: Ինչպես դուք արդարացիորեն նկատեցիք, այնտեղ՝ վերևում, մեր մասին ամեն բան հայտնի է, հայտնի են մեր ամենանվիրական մտքերն ու ցանկությունները, էլ չասած մեր գործերը, այնտեղ ոչ մի դատաստան չեն սարքում և ոչ մի բան կշեռքով չեն կշռում: Հենց որ մեր հոգին լքի մեր մարմինը, երբ արդեն ամեն բան կշռած, չափած ու որոշումը ընդունած կլինի, և այդ որոշումը ենթակա չէ քննարկման կամ գանգատարկման, ոչ ես, ոչ Դուք որևէ բան ուղղել արդեն չենք կարողանա:

Եվ ինչո՞ւ է սա անընդհատ ինձ էլ հետը նշում, մտածեց Բեսլանը, կարծես թե բարեկամաբար, բայց հետին մտքով: Ուզում է ասել, որ ես և ինքը նոյնն ենք, ինձ իրեն է հավասարեցնում. մենք անբաժանելի ենք, ահա թե ինչ է նա ուզում ասել: Նա ուզում է ասել, որ ինձ էլ է նույն բանն սպասում՝ կործանում. էլ ի՞նչ է նրա կյանքը, եթե ոչ կործանում: Եվ ահա նա կանգնել է այդ ավերակների վրա և բարբառում է. Աստծուց է խոսք բացել, խղճից:

Իսկ երբ ամուր ձեռքով մատնագիր էր բստրում, իհարկե, Աստծուն չէր հիշում, նրան անկյուն էր կանգնեցրել, այն էլ դեմքով դեպի պատը: Իսկ հիմա մահվան շեմին հանկարծ հիշել է, որ ուզում է իր մեղքերի համար թողություն հայցել:

Բեսլանն այս ամենը մտածեց, և երեկոյի ընթացքում երրորդ անգամ ամոթ զգաց: Ամեն ինչի մեղավորը գինին է, ասում էր նա՝ ինքն էլ չհասկանալով և վախով մտածելով, թե մի՞թե նա այդքան շատ է փոխվել:

- Եվ այնուհանդերձ, ամեն բան այնքան հարթ չէ, ինչպես Դուք մատուցեցիք, հարգելի Միխայիլ Ստեպանովիչ: Ինչ կապ ունի արդարությունը, և ինչպե՞ս կարող էին Ա՛ սրիկաները, Ա՛ անպիտանները, Ա՛ բռնացողները, Ա՛ մարդասպանները պարկեշտ մարդկանց հետ, միասնաբար, եղբայրական միությամբ նպաստել այդ նույն արդարության հաղթանակին:

- Դժոխքի դարպասին գրված է՝ «Ամեն մեկին իրենը»:

Հետո երկար վիճաբանություն եղավ, նույնիսկ խմված գինու չափով ծայները բարձրացան, ծերունին համարյա արտասվեց, Բեսլանը նրան նույնիսկ վերջին պատերազմի համար մեղադրեց. «Ձեր նմանները նախապատրաստեցին այն, իսկ հետո լուռ թաքնվեցին»: «Ես չկարողացա քաղաքից դուրս գալ», - իր հերթին նվաստացած արդարանում էր Մանչա Սաթբեկիչը: Բեսլանը չգիտեր, որ վրացական օկուպացման ժամանակ ծերուկը Սուխումում էր:

Բեսլանը նողկում էր ծերուկից:

Դա լիաբուռն կյանքի ժամանակ էր, քանի որ կյանքը մագից էր կախված, ամեն մի սխալ քայլ, տաքարյուն վիճակում ասված ամեն մի բառ կարող էին կործանարար լինել: Բոլորի գլխին կախված էր ամենակարող, զգոն և աննինջ իշխանությունը, և այն թաքուն գիտակցությունը, որ իրեն՝ խղճով ոչնչությանը, նույնպես բաժին է ընկել այդ հզորության մի մասնիկը և մի քանի մարդու կյանքն իրենից է կախված, Մանչա Սաթբեկիչի սիրտը լցնում էր կայացած մարդու սուր զգացումով: Նա կարող էր շատ խմել և չհարբել, գլուխը սառն էր մնում, կառչուն աչքերը որսում էին զրուցակցի դեմքի նվազագույն փոփոխությունը, ականջներն ամրագրում էին խոսողի ծայնի բոլոր նրբերանգները, և նա անսխալ, մի ինչ-որ գազանային հոտառությամբ որոշում էր, թե նա երբ է ստում և երբ է ճիշտն ասում իր սրտագին հիմարության երեսից:

Եվ ահա այն գինին բացել էր նրա լեզուն: Տգեղ ժպիտը, նվաստ ինքնաարդարացումը, նրա այն տեսությունը, թե մատնության ու դավաճանության միջոցով հնարավոր է հասնել արդարության հաղթանակին, – այս ամենը Բեսլանի մեջ նողկանք էր ծնում:

Ինչպես չեմ այս բոլորը նախկինում նկատել, ինքն իրեն հարցնում էր նա և պատասխան չէր գտնում: Ստացվում էլ, որ ծերունյն իր խղճուկ տեսքով պարզապես նրանց մատի շուրջն է պտտել, և ինքը նրա հերթական զոհն է դարձել: Կեցցես, ծեր տռանի մեկը, դու դեռ լավ վիճակում ես, ջահել խլնքոտները քեզ չեն հասնի:

Մաչո. այդպիսի զայրացած, գրգռված վիճակում ես նրան չէի տեսել: Ճիշտ է, լսել էի, որ տարին մեկ-երկու անգամ նրա զայրույթն ավերից ելնում է, տարածվում քլթքլթացող հրաբխի նման, և բերանից զառանցանքն է հորդում, որը քո կամքից անկախ լսում ես: Լինելով հանգիստ և զգուշավոր մարդ, որը սովորաբար իր ստվերից էլ է խուսափում, նա հանկարծ ամբողջովին բողոք էր դառնում՝ մարդկանցից, ճակատագրից, Աստծուց. «... Ես չեմ կարող ոչ մի տեղ զանգահարել հեռախոսն ինձ հասանելի չէ իսկ դուք այստեղ դեռ ու դեն եք քայլում և ասես թե ոչինչ չի պատահել ասֆալտ եք չափում ձեր ինքնավստահ ոտքերով մոռանալով որ այդ ոտքերը ժամանակի ընթացքում պառկելու են մութ հողում մահվամբ կրծոտած և ոչ ոք չի տեսնի որ դրանք այդքան սպիտակ ու փխրուն են հողը դրանք ծածկել է հավերժական մութով ոչ ոք երբեք դրանք չի փորի-հանի և չի ասի որ այսինչի ու այնինչի ոսկորներն են որ նա իզուր չի այդքան տարի ասֆալտի վրայով քայլել իզուր չի կերել խմել զուգավորվել և արտաթորել է և երբեմն մտածել սիրել տառապել և ոչ ոք այնժամ անմիջապես չի սիրի ձեզ չի խղճա և արտասվի ձեր հետևից – դուք այդ ամենը մոռացել եք այդ ամենը հոգս է ցնդել ձեր ծակ գլուխներից ձեր խելքը դուրս է հոսել ձեր հոգու հետ ուստի ձեզ էլ կմոռանան – դուք թքած ունեք իմ տառապանքի վրա իմ ցավի վրա դուք ամենքդ միայն ձեզնով եք զբաղված և էլի լավագույն դեպքում երկու-երեք մարդկանցով կնոջով հորով մորով երեխաներով իսկ մնացած բոլորի վրա թքած ունենաք ուրիշների հետ գործ չունեք բայց նրանք օտար չեն նրանք էլ են մարդ նրանք էլ սիրտ ունեն և ես էլ սիրտ ունեմ ահա տեսեք այն բաբախում է ես լսում եմ նրա ձայնը տեսեք

թե ինչպես է կործքս բարձրանում-իջնում սա իմ սիրտն է ես սիրտ ունեմ – դուք գիտեք դա իսկ ահա Աստված չկա նա եղել է բայց հետո վախկոտաբար լքել է աշխարհը տեսնելով յուրայինների արածը նա մեզ մենակ է թողել և թաքնվել է ամպերի հետևում մի ինչ-որ տեղ երբեմն սարսափով մեզ է նայում վերևից տաք արցունք է թափում մեր ճակատագրի վրա բայց ոչնչի չի խառնվում նա դրա ուժը չունի նա շատ ծեր է և հիվանդ նա մեզնով է հիվանդ նա մահվան է սպասում որպեսզի ազատվի իրենից ու մեզնից իսկ մենք չենք թողնում որ նա հանգիստ մեռնի մենք կանչում ու գոռում ենք հեռախոսով ենք խոսում չնայած ոչ մի տեղ հնարավոր չէ զանգահարել – դուք փորձել եք որևէ տեղ զանգահարել ես փորձել եմ բայց չի ստացվել չկա այդպիսի երկրի այդպիսի քաղաք և այդպիսի համար ինձ այդպես ասացին եթե չեք հավատում մոտենանք այն պատուհանին որտեղ նստած է ներկված գեղեցիկ եզնաչյա աղջիկը և կոպիտ առանց ձևականության ձեզ ասի որ այդպիսի երկրի այդպիսի քաղաքի այդպիսի համար չկա նա ինձ այդպես ասաց հինգ րոպե առաջ և կորեք սատանայի ծոցը և այս վերջինը նա չասաց բայց համոզված եմ որ մտածեց ես նրան ծանձրացրի ես գրեթե ամեն օր եմ գալիս և նա ամենայն հավանականությամբ ինձ խելագար է համարում բայց ես խելագար չեմ ես պարզապես այդ տեսքն ունեմ և այդպիսի վարք ունեմ իմ թղթապանակում փաստաթղթեր կան որոնք հաստատում են որ իմ խելքը տեղն է ահա տեսեք թե որքան ունեմ շատ են նույնիսկ իմ ծանոթ հնոցապանը հաճույքով է այդ թուղթը տվել ճիշտ է նա կնիք չուներ բայց տեսեք թե նա որքան սրտանց ու գեղեցիկ է ստորագրել եթե չեք հավատում տեսեք այստեղ են նրա անձնագրի տվյալները հասցեն գրանցումը և ընտանեկան դրությունը նա ամուսնացած է եղել հետո կինը փախել է նրանից և նա նրան ծեծել է սիրուց այստեղ նշված է նրա ծննդյան ամսաթիվը ճիշտ է մահվան ամսաթիվը չկա բայց դա առանց բացառության բոլոր անձնագրերի անձը հաստատող բոլոր թղթե տեղեկանքների թերությունն է չնայած խոստանում են որ շուտով նոր ավելի կատարյալ անձնագիր կմտցնեն և այնտեղ նշված կլինի թե երբ է մահացել նրա տերը և ես ողջունում եմ այդ որոշումը ժամանակն է կարգ ու կանոն հաստատել այս ոլորտում բայց չէ որ նախկինում չնայած անձնագրում չէր գրված բայց մոտավորապես գիտեին ով երբ կմեռնի – ես դրանք երկար ժամանակ հավաքում էի մտնում էի տարբեր հիմնարկներ և ատյաններ

բժշկական նույնպես առաջ ուր էլ գնայի ինձ իսկույն կնքած թուղթ էին տալիս որ իմ խելքը տեղն է խելքս գլխիցս ոչ մի տեղ չի գնացել և ես ոչ մի տեղ չեմ գնացել նրանից այլ ինչպես որ կամ ամբողջությամբ տեղավորվում եմ այնտեղ– և երբ այդ կինն ասաց ես հավատացի նրան – գուցե պետք չէր հավատալ բայց նա ինչու պետք է ինձ խաբեր և խցիկների այդ բոլոր մարդիկ մյուս ծայրի ինչ-որ մարդկանց հետ էին խոսում և ես նույնիսկ բառերն էի լսում – բարև ձեզ ինչպես եք առայժմ փող պետք չէ նախորդ ուղարկածից դեռ մնացել է դուք ինքներդ եկեք այստեղ այժմ այնքան էլ վտանգավոր չէ ավելի քիչ են կողոպտում ու սպանում իսկ ծովն անսովոր տաք է արևոտ օրեր են – ես քեզ կարոտում եմ Նաթելա ախր ես քեզ սիրել եմ և այժմ էլ սիրում եմ իսկ դու հանկարծակի մեկնեցիր առանց որևէ բան ասելու և չզգուշացրիր որ գուցե վերադառնաս բայց դու գիտես որ ես չեմ կարող քեզ մոտ գալ իմ ծերուկները դրան չեն դիմանա և ընդհանրապես ինչով ես ապրում այդտեղ և մի կարգին արև էլ չես տեսնում բայց մեզ մոտ տաք է շուտով ամառը կգա ծովը և ես – բայց ես չեմ հավատում որ նրանք ինչ-որ մեկի հետ են խոսում նրանք իրենք իրենց են խոսում և չեն թողնում որ ես դա ստուգեմ – հեռախոսով խոսող մարդն իրոք խոսում է ինչ-որ մի աներևույթ և հեռուն գտնվողի հետ թե ինքն իր հետ է խոսում – ինձ ասացին որ չկա այդպիսի երկիր այդպիսի քաղաք և այդպիսի համար – հապա երագումս ինչ եմ տեսել»:

Ուղղված լինելով շարժուն և անընդհատ փոփոխվող ամբոխին՝ բացառությամբ հազվագյուտ հետաքրքրասերների, որոնք լուռ կանգնած էին և լուռ նայում էին այդ գաճաճ մարդուն, Մաչոյի մենախոսությունն ուղեկցվում էր աննկարագրելի դիմաշարժությամբ և պարողի կրքոտ մարմնաշարժությամբ: Նրա ձեռքերն ամբողջ ժամանակ ասես թռչում էին, թվում էր, թե տերն ուզում է օդից բառեր քանդակել, նրանց շոշափելի ծավալային մարմնավորում տալ, որպեսզի թափանցեն և այրեն: Նաև ամենաբազմազան կեցվածքներն էր ընդունում՝ ծիծաղելի, անհեթեթ, կոթողային. նպատակը նույնն էր՝ փոխանցել իր հոգու շփոթը և լարվածությունը, որոնք չէր մարմնավորել խոսքով: Դրանց մեջ երբեմն, ձայնի համապատասխան հնչերանգի և բնութագրական արտահայտությունների աջակցությամբ, նկատվում են վաղուցվա և ավելի ուշ շրջանի, նույնիսկ երեկվա պատմական դեմքեր, որոնք շարժումով, դիմախաղով, դիրքով և հոգեցունց խոս-

քերի հավաքածուով նեցուկ էին կանգնում իրենց իշխանությանը՝ հիմարացնելով դյուրահավատ, տեսարան և սարսափ պաշտող հասարակությունը: Դժվար է ասել՝ նա դա դիտավորյալ է անում, թե՛ անգիտակցաբար: Սակայն ունկնդրին նա ծիծաղից թուլացնում է. նրանք կշկշում են, քրքջում և ստեպ-ստեպ ոգեշնչված բացականչում են ճանաչելի հարազատ անունները՝ Նապոլեոն, Լենին, Հիտլեր, Ստալին, Խրուշչով, Գորբաչով, Ելցին...

Նրանք իրենց կյանքը պարփակել են փակագծի կոշտ օղակապով, որի ներսում առաջին և վերջին տարեթվերն են: Դրանց միջև գտնվող գծիկում ոմանց հաջողվել է խցկել ժամանակի մի պատկառելի կտոր, այսպես կոչված երկար, հագեցած կյանքը: Պատկերացնում եմ, թե ինչ պատվով, երեսպաշտ աղմուկով, շինծու վշտով են ոմանց ճանապարհել և ինչ նախանձով:

Այստեղ մի որևէ գաղտնիք կար, թե՛ ամեն բան տեղի էր ունենում ճակատագիր կոչվող կենդանական բնագրի անգիտությամբ, և հերոսը, ոչինչ չմտածելով, բազմապատկում էր տարիները՝ վստահելով իր մարմնին. այն իմաստուն է, դուրս կհանի: Ինչպե՞ս դա հաշվես աղքատիկ տվյալներով, որոնք ունեի. իբր թե գլխավոր տարեթվերով, մի քանի ուշագրավ տողով, որոնք չէր խնայել կծծի հեղինակը:

Գլխավորներն ամեն ոք իր հետ գերեզման է տանում: Ավելի լավ կլիներ տապանաքարի վրա մի տարեթիվ նշվեր, այն, որին հանգուցյալը վճռական դեր էր տալիս իր ճակատագրում. իսկ այդպիսի կարևոր տարեթիվ ամեն մի ճակատագրում կա՝ և՛ ամենամեծում, և՛ ամենաաննշանում: Ես չեմ հասկանում, թե ինչ իմաստ ունի ծննդյան և մահվան տարեթվերը նշելը. հիմ է հարկավոր, ինչհի: Որպեսզի, եթե հանգուցյալի կյանքը կարճ է եղել, անցորդը երեսպաշտորեն մի արցունքի կաթիլ որթի, եթե երկար՝ որպեսզի իմացվի, թե ումից է պետք օրինամկ վերցնել: Կամ նշելու համար ժամանակի այն հատվածը, որը հանգուցյալն իբր պոկել է հավերժությունից, և իբր այն այժմ անձամբ իրեն է պատկանում, նա է լիիրավ տերը, ոչ ոքի չի հաջողվի յուրացնել այդ հատվածը, քանզի նա այն ամբողջովին իրենով է լցրել, և ոչ ոքի չի հաջողվի այնտեղ խցկվել: Այդ դեպքում հարկավոր էր պարզապես տարիքը նշել, ասենք «37», կամ «43», կամ «86»: Բայց ախր ոչ ոքի մտքով չի անցել, բոլորը մեկ մարդու նման դրվագում են ծննդյան

և մահվան տարեթվերը: Եթե ինձ մնա՝ ավելի լավ է մեկ տարեթիվ նշել. ինտրիգն ավելի մեծ կլինի, այդքան մերկապարանոց ու ծամծամված չի լինի: Ասենք, մեկի տապանաքարին փորագրված է՝ 1949, օգոստոսի 1, 16.41. սա այն տարին, օրը և ժամն է, երբ նա վերջապես համարձակություն ունեցավ դավաճանել՝ մատնագիր տալ ընկերոջ, հարևանի, սիրած կնոջ, հոր վրա... Բայց դա ոչ ոք արդեն չգիտե: Կարելի է ավելի կարճառոտ գրել՝ 16.41. թող բոլոր խաղաքարտերը չբացահայտվեն:

Բայց ի՞նչ կհամարձակվի հրապարակել իրեն վերաբերող ճշմարտությունը, միևնույնն է՝ կյանքի ընթացքում, թե՛ մահից հետո: Բոլորը կստեն, սրտխառնուք առաջացնելու չափ կյուղեն և կքաղցրացնեն իրենց միանգամայն անպետք կյանքը, և կտակների տարեթվերը, վստահեցնում եմ, բոլորն էլ կապված կլինեն կարևորության տեսակետից ծիծաղելի իրադարձությունների՝ ամուսնությունը կամ համբակ որդու ծնունդը կամ սրանց նման դատարկ բաների հետ: Ոմանք կամավոր կմոլորվեն. սեփական կյանքն իմանալը քչերին է տրված, մենք՝ կկոցելով աչքերս և փակելով ականջներս սլանում ենք նրա կողքով՝ երբեմն նույնիսկ ոչ մի անգամ չնայելով նրա աչքերին:

Կհաջողվի՞ արդյոք ինձ այն, ինչ ոմանց, դատելով կենսագրությամբ, հաջողվել է ոտքի վրա, առանց աչքը թարթելու, հեշտությամբ, երբեմն նույնիսկ որոշ նրբագեղությամբ. թե՛ դա խաբուսիկ թեթևություն է: Ուրիշի ապրած կյանքը միշտ ավելի հեշտ ու տանելի է թվում, քան քո սեփականը:

Օրը կավարտվի, գիշեր կլինի: Հետո արևը կծագի, նրա հետ կգա նոր օրը: Դարձյալ մութը կընկնի. ախր դրանք ոչինչ չեն բերի, սոսկ լույսի ու մութի ձանձրալի և տխմար հերթափոխ է: Եվ ես էլ ականա միացած եմ այդ շրջապատույթին, և դրա դեմ ոչինչ ի զորու չես անելու:

Ահա Մադինան. սևեռվել է գրքին, ամբողջովին տրվել տեքստին. շրջապատի մարդիկ, այդ թվում ես, նրա համար գոյություն չունենք: Ժամանակի տիպիկ սպանություն է. դու՝ անմարմինդ, իսպառ մոռանալով ինքդ քեզ, ինչ-որ տեղ ես թափառում, ինչ-որ անիմանալի սահմաններում: Ժամանակը ոչնչացնելը, հող ու մոխիր, փոշի դարձնելը մարդու անկատար երազանքն է, և գիրքը դրան հասնելու եղանակներից է: Շարքով դարսված են կաշվե և ոչ կաշվե կազմերով, բոլոր գույնի ու երանգի, տարբեր չափ ու կշռի զմուսված դիակիկները. մենք վերցնում ենք դրանք, թերթում ենք,

կարդում,- և անընդգրկելի պահեստներից ժլատորեն, փշուր-փշուր մեզ տրված ժամանակը պակասում է նույնքան, որքան դիակիկի մեջ անշար- ժացած ժամերն ու ռոպեները:

Բայց ժամանակ սպանելը նույնն է, ինչ քեզ սպանես: «Հոգիս դեպի դուրս է մղվում» հնամոդա արտահայտությունը, առանց պատճառի կարո- տը, որը երբեմն կրծում է նույնիսկ ամենաքարացած սրտերը այլ բան չեն, քան քլթթթթացող անհայտ հեռուն տանող ժամանակի հոսքից դուրս նետ- վելու մարդու ցանկության վկայություն: Ափ թռչես, վրայիդ կաթիլները թափ տաս... Իսկ հետո...

«**Ի** դեալական տարբերակով տեքստը պետք է հնարավորինս պարզ լինի, նույնիսկ պարզունակ՝ «ծնվել է, ապրել, մահացել՝ մնացածը մասնավոր բաներ են: Բայց քանի որ այս եռյակի երկրորդ անդամի հարցը ոչ միշտ է պարզորոշ՝ իսկապես ապրել է, թե միայն անմիտ ճպճպացնելով դողացող արարածի աչքերը, աշխարհին նա- յել,- ապա անհրաժեշտ կլինի ծավալուն տեքստ՝ «կյանքի ուղու և հոգե- կան որոնումների» նկարագրությամբ:

Իրականում ամեն ինչ ավելի պարզ է: Եթե ում մեկին թեկուզ մի ակն- թարթ շամփրել է իր գոյության մեծ գաղտնիքի զգացումը, և այնպես, որ նա քարացել է, մեծագույն սարսափն ու մեծագույն ուրախությունն ամբողջությամբ տիրել են նրան, ապա այդպիսինի մասին համարձակ կարելի է ասել, որ նա ապրել է. սոսկ մեկ անգամ, բայց դա էլ բավա- կան է:

Մարդը չափից ավելի շատ բառեր է հորինել, ինքը խեղդվում է դրանց մեջ, որոնք վզից կախված ծանրության նման դեպի հատակ են տանում: Բառ-անվանումների առատությունը մեզ հեռացնում է իրերի էություն- նից (իմ միտքը չէ, և որքան հիշում եմ՝ վաղուց է ասված): Մենք արդեն աշխարհը չենք տեսնում և լսում այնպիսին, ինչպիսին է նա իրակա- նում: Աշխարհը պատնեշվել է բառերի մարտական թիկնազորով: Ոս- կեդարը յուր էր գնում նվազագույն խոսքով, գուցե և առանց խոսքի: Իդեալական աշխարհն այն աշխարհն է, որտեղ բառեր պետք չեն, որ- տեղ բառերը վաղուց աղբակույտ են շարտվել և մոռացվել: Մարդու բո- լոր արարքներն ունեին պարզ, հստակ ուրվագծեր. խոսքի և արարքի

միջև տարբերություն չկար: Հետո անկում եղավ. իրեն արդարացնելու համար ամեն մի գործողություն սկսեց պատվել նոր բառերով: Ուտելով իմացության ծառից՝ մարդը լրացրեց նախկինում աղքատիկ իր բառապաշարը: Եվ այնժամ սկիզբ առավ գրականությունը»:

Այն երեկո ես հանկարծակի թթվեցի, թեպետ մոտակա հարյուր տարվա իմ ծրագրերի մեջ դա չէր մտնում. ամենաամոթալի կերպով զգացվեցի:

Ոչ, ես ոչ մի շարժումով չմատնեցի թուպեական հանկարծահաս թուլությունս, և շեշտելով մոտակա հարյուր տարին, երաշխավորում եմ, որ ինչ էլ պատահի ինձ կամ որևէ մերձավորի, եթե նույնիսկ ամբողջ աշխարհը հանկարծ կապը կտրի, իմ դեմքի և ոչ մի մկանը չի շարժվի, առավել ևս ոչ մի դավաճանական խոնավություն չի մշուշի իմ հայացքը:

(Շաբլոնի շքերթ ստացվեց. «դավաճանական խոնավություն», «թուպեական թուլություն», «ոչ մի մկան չի շարժվի»: Բայց ընթերցողը, հուսով եմ, կռահում է, թե ես ինչու եմ այդպես անքաղաքավարի, անդաստիարակ վարք դրսևորում: Եթե հոլիվուդյան դյուրամարս բան-մանով լցոնված ընթերցողս միանգամից գլխի չընկնի, թե ես այսպես կոպտորեն և անվայելուչ ուր եմ թեքում, ապա մեծահոգաբար կանեմ հետևյալ ակնարկը. չեմ ուզում աշխարհը զարդարել նոր բառերով և դրանով իսկ այն ավելի տանելի եմ դարձնում, քան կա: Իսկ աշխարհն ավելի տանելի դարձնելու համար հնարավոր չէ յուլա գնալ առանց նոր բառերի, որոնց հայտնագործությամբ մարդկությունն զբաղվում է մոլագարի հետևողականությամբ: Դրանցից պետք է ավելի ու ավելի շատ հորինել, ծանրաբեռնել տեքստը, ու մեկ էլ տեսար աշխարհը ներկայացավ ոչ թե իբրև ատամնաբաց, այլ փափկամազ մի գազան... ի դեպ, մի նման բան արդեն իսկ գրել է Ադգուր Ա.-ն):

Ես ծովափնյա սրճարանը մտա: Փողոցում անձրև էր թափվում, իսկ հոգումս անասելի տագնապն էր բույն դրել: Կարծում էի, թե եռման սուրճը կցրի իմ տաղտուկը: Նստեցի կիսախավար անկյունում, հետաքրքրասեր աչքից հեռու. ասենք, հետաքրքրասեր աչքերն էլ շատ չէին՝ կանգնակի մոտի աղջիկը և նրան կից սեղանին նստած եզնատիպ մեկը, հավանաբար՝ տերը: Նա, իհարկե դիտավորյալ, ծալել էր կուրտկայի եզրը՝ ցուցադրելով գոտկատեղին ցցված SS-ն. հետպատերազմյան սրճարանում, երեկոյան առանց դրա չէր լինի: Նստած էր ինքնավստահ, ինքնաբավ, հաշտ՝

ինքն իր և կյանքի հետ, ծխում ու սուրճ էր խմում: Ես քիչ մնաց նախանձեի նրան:

Աղջիկն սկզբում սիրալիր ժպտաց, բայց լսելով, որ միայն մի գավաթ սուրճ եմ ուզում, չկարողացավ սրտնեղությունը թաքցնել, թթվեց և փոխեց դեմքի արտահայտությունը:

Ես կում արեցի. տտիպ սուրճը հաճելիորեն այրեց բերանս, քիմքս:

Մի ինչ-որ անբնական բան կար կարծես թե հարևանություն անող, բայց միմյանցից այնքան հեռու մեր երեքիս շուրջը հաստատված լռության մեջ:

Աղջիկը լսում էր ցածր, իմ անկյունից հագիվ լսելի հնչող երաժշտություն: Նրա շուրթերն անլսելի կրկնում էին ծանոթ բառերը, գլուխը թեթևակի օրորվում էր իր նման հասարակ մեղեդու ուղեկցությամբ:

Եզնատիպ տղամարդը նստել էր նույն դիրքով՝ դեմքի ինքնավստահ և լպիրշ արտահայտության տակ թաքցնելով լարվածությունն ու իրադարձությունների ցանկացած շրջադարձին պատրաստ լինելը:

Կռվել է, թե՛ ոչ: Ինձ համար միևնույնն է, ասենք՝ հիմա չես էլ տարբերի: Ամեն մեկը, հենց որ նրան կպչես, արդարացի ցատումից շնչասպառ կլինի, թե ինչպես են համարձակվում որևէ բան ասել Հայրենիքի պաշտպանին, ով արյուն է թափել հանուն նրա ազատության: Իսկական տղաներից այդ բանը երբեք չես լսի: Կեղծ հերոսներից տեղ ու դադար չկա, և նրանք շատացել են:

Աղջիկը փոքր-ինչ բարձրացրեց ձայնը. նվագեց մյուս ձայնուղին, արդեն առանց բառերի. այն իր շեշտակի հնչողությամբ տարբերվում էր մյուսներից... Կամ ինձ այդպես թվաց, բայց ինչ նշանակություն ունի՝ Մոցարտն էր դա, թե ուրիշ՝ շատ ավելի պարզունակ մի բան:

Ես անշարժացած, աշխարհում ամեն բան մոռացած լսում էի: Եվ հանկարծ իմ մեջ ինչ-որ բան դողաց, ինչ-որ բան մեկ այլ բանի կպավ ու շարժվեց, կուրծքս սեղմվեց, կոկորդս կծկվեց: Մեղեդին մի հինգ րոպե հնչեց, ոչ ավելի, և այդ ամբողջ ընթացքում ես չշարժվեցի, սուրճը ձեռք չտվեցի: (Դա երաժշտություն էր, որը բերանացի չես ասի: Բայց բանաստեղծություններ կան, որոնք կարդալուց հետո մեռնել ես ուզում):

Ես չգիտեի, թե ուր պարտակվեմ, ես հանկարծակիի էի եկել...

Ինձ համար շոշափելիորեն բացահայտվեց աշխարհի և կյանքի անի-

մաստությունը: Եվ ես հասկացա, որ այս աշխարհի օրենքը լոկ ցափն է: Լացս գալիս էր իմ եղբայրների համար, որ խոնավ հողում են պանկած: Գիտեմ, որ նրանք չէին ների իմ ուշացած փոքրոգի արցունքը. նրանք գոհ են գնացել ոչ այն պատճառով, որ ողջ մնացածներն արտասուք թափեն: Բայց ցավը սեղմում էր սիրտս, և ես արտասվել էի ուզում:

Նրանք հեռացել են, և այլևս ոչ մի կերպ և երբեք հետդարձ չունեն: Նրանք արդեն չեն կարողանա իրենց շրջապատող տարածությունը լցնել իրենցով, իրենց մարմնով ու ծայնով, մտքով ու զգացմունքով, նրանց փոխարեն մենք էլ չենք կարող: Մենք ընդամենը կարող ենք նրանց չգրած մի քանի տողը լրացնել: Բայց նույնիսկ այդ տողերը հազիվ թե լինեն այն, ինչն իրենք մտորել էին, որով նրանք կուզենային իրենց ներկայացնել աշխարհին, նրա անտարբեր, անհաղորդ, խուլ ականջներին:

Մանչա Սաթբենիչը հիվանդացավ: Մի քանի օր շարունակ նա գրադարանում չէր. սովորական տեսարանին պակասում էին թերթերի հավաքածուների վրա խոնարհված ալեհեր գլուխը, ռունգներին նստած ակնոցը, փնթփնթոցը՝ երբ որևէ փաստ ծերունուն հունից հանում էր, և նա բարձրացնում էր գլուխը, հայացքով ընդգրկում նստածներին՝ ակնհայտորեն իր վրդովմունքին աջակցություն փնտրելով:

Սրահում սովորաբար նա և ես էինք նստած լինում, մեկ էլ Մադինան՝ իր «ղեկավարի» սեղանի մոտ: Սկզբնական շրջանում ես, աչքի պոչով տեսնելով ալեհեր գլխի վրդովված շարժումը, ակամա նրան էի նայում: Հետո ընտելացա և այլևս ուշադրություն չէի դարձնում. շատ հաճախ էր նա գլուխը հետ գցում, ասես վտանգի նախազգացումով քաշելով հրահանը:

Ես Մադինային հարցրի՝ որևէ տեղեկություն չ՞ունի արդյոք ծերուկից. աղջկա մոտ այդպես էի անվանում նրան, իմ խելքով կատակում էի՝ մտածելով, որ «ընդհանուր գաղտնիքը» կմերձեցնի մեզ. Մադինան ի պատասխան միշտ ժպտում էր, և սիրտս դրանից ջերմությամբ էր լցվում:

Պարզվեց, որ Մանչա Սաթբենիչը հիվանդանոց է ընկել: Աղգուր Ա.-ն այսպիսի սյուժետային քայլով հազիվ թե գոհ մնար, ավելին, հողմացրիվ կաներ այն չտեսնված սրտնեղությամբ, որում հայտնվում էր, երբ կեղծիք կամ խնդրի պարզունակացում էր տեսնում: Նաթելայի մայրը նույնպես հիվանդ էր, և ահա երկրորդ հիվանդն է հայտնվում. չափազանց չէ՞ արդ-

յոք տեքստային ոչ մեծ մակերեսի համար: Սյուժեի, ֆաբուլայի, ոճի որոշ հավասարակշռություն պահպանելու համար ես ստիպված եմ ողջ թողնել Մանչա Սաթբենիչին, և նրա հիվանդությունն էլ մի չնչին, ծիծաղելիորեն սովորական բան է լինելու, ասենք՝ ճողվածքի ճմլում, թուփք, իշիաս, կույրադիքի բորբոքում...

Չնայած մեր հուղարկավորությունը տպավորիչ պատկերման է արժանի: Հանգուցյալին ճանապարհի դնելու արխագների արարողությունը տեսնելու բան է: Ողջ մնացածներն ինչ չարչարանք են քաշում վերջապես երկար սպասված հանգիստը գտած մեռյալի հետ: Այն փոխանակ շուտափույթ, աչքից հեռու հողը դնելու, որի խորության մեջ դանդաղ կքայքայվի՝ տարրալուծվելով անդամ ատոմների, մենք վերջին հրաժեշտն ենք մոգոնել: Հարազատները երևի այլ կերպ չեն կարող վարվել՝ համոզված լինելով, որ այլևս երբեք նրան չեն հանդիպի այն սառն ու մութ վայրերում, ուր նա վաղաժամ և անդարձ գնացել է:

Սկզբում ես այդպես էլ մտահիղացել էի, որ ծերուկը պետք է մեռնի հանկարծառու հիվանդությունից, ինչպես ինքն էր համարում, և խորտակված տեսքով մի մարդու, ում անակնկալ դավաճանել են, և այն էլ ամենաանսպասելի կողմից: Իրականում նա մահացել էր, որովհետև իր միջի կյանքն ավարտվել էր. այն ծովահրեշի նման կծկվել ու փոքրացել էր, դարձել մանր գոյացություն, որը նրա մեջ նստել էր և ներսից ժանգի նման կերել էր նրան:

Բայց Նաթելայի մայրն էլ մահացավ իր ներսում նստած և ներսից իրեն լափող գոյացությունից, ուստի Մանչա Սաթբենիչին մենք այն աշխարհի կճանապարհենք, ասենք, սիրտը հանկարծակի կանգ առնելու պատճառով, երբ նա «Պրավդայում» կգտնի վերջնական և անվիճելի հավաստումը, և նրա գլուխը, որն այդքան փայլուն լուծել էր հանելուկը, կընկնի թերթի վրա: Կամ էլ լուծումից հետո նա կաթվածահար կլինի, գլուխը կընկնի թերթի վրա և ռունգներից արյուն կհոսի՝ արնոտելով վերջնականապես և անվիճելիորեն հավաստող բառերը: Բայց Մադինային չչփոթեցնելու համար մենք այդ ամենը կարող ենք կատարել փողոցում, տան, գրադարանի կամ ծովափի ճանապարհին, ուղիղ Պողոտայի վրա, ամենաաշխույժ ժամին, մարդկանց հրմշտոցի մեջ: Հետաքրքրասեր ամբոխն իսկույն կարեկցանքով կխմբվի ընկած ծերունու մոտ, – աշխույժ քայլում էր՝ աչքերն արևից կկոցելով, դեմքին ծերունական բավականության ժպիտն էր, և

հանկարծ թուլացավ, ասես ոտքերը կտրեցին, – և նրան այնպիսի ուշադրություն կցուցաբերի, որին նա երբևէ չէր արժանանում կյանքում: Կամ դեպքը կապատահի հազվադեպ անցորդներ ունեցող կողքի նեղլիկ փողոցում, և ծերուկին ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ անց կգտնեն, ինչը սրտացավ բացբերաններին առիթ կտա դատողություններ անել սիրելի, ոչնչի չպարտավորեցնող ստորադասական եղանակով. «Եթե...», «Եթե որ...», «Գեթ...», իսկ հետո ավարտել «երևի այդ էր վիճակված...»: Իսկ եթե մենք կամենանք ընդհանրապես ոչ ոքի, այդ թվում՝ զոհին չշփոթեցնել (եթե դա հնարավոր է), ապա այդ ամբողջ պարզ գործողությունը կանենք նրա տանը, հարազատ անկողնում, մուգ գիշերով: Այսինքն, Մանչա Սաթբեկիչին մենք ճանապարհ կդնենք ուշ գիշերով, երբ նա անխռով, առանց հոգեցունց երազների, ոչինչ չկանխագգալով, ոչնչից չտագնապելով հանգիստ քնած է իր հարազատ անկողնում, այսինքն՝ երազում:

Մի գեղեցիկ առավոտ, – քանզի գռեհկաբար փայլում էր արևը, գռեհկաբար ճովողում էին թռչնակներն ու թռչնիկները, և ընդհանրապես, էգ և արու կատուները, շները և այլ մանր-մունր կենդանիները հանդես էին բերում մինչմարդկային կենդանական աշխարհի գռեհիկ կենսուրախությունը, – ծերուկի օրգանիզմը, որը վաղուց էր կորցրել իր զգայնությունը մանրուքի, բայց դեռևս զգայուն էր իր միջի փոփոխությունների նկատմամբ, ազդանշան տվեց, որ աջ կողքի թեթևակի ծակոցի ձևով վրա է հասնում վերջը. ճիշտ՝ ինչպես Իվան Իլյիչի դեպքում: Տարիներով կուտակված անսարքությունները Մանչա Սաթբեկիչին դիակի էին վերածում:

Ես թաղման կգնամ և այնտեղ Մադինային կտեսնեմ: Գուցե նա միակն է, ով իսկապես խղճում է ծերուկին: Իսկ ես, քանի դեռ ծերունին չի մեռել, չգիտեմ՝ խղճամ նրան, թե ոչ: Մադինան գրեթե սուգ է անում. մուգ գայթակղիչ շրջագգեստը շեշտում է նրա մաշկի սպիտակությունը: Եթե նա գլխին գցեր նաև սև, բարակ, ուսերին փռվող շիֆոնե գլխաշորը՝ այն հավաքելով կգակի տակ և թեթևակի պահելով երկար, վառ կարմիր ներկած եղունգ ունեցող երկար, բարակ մատներով... Թանձր խավարով շրջանակված նրա դեմքը դառնում է նուրբ, ինքնամփոփ, վերերկրային: Ես առնում եմ նրա օձանելիքի թեթև բուրմունքը և երազում գլխովին ընկղմվել նրա զգլխիչ, նուրբ սպիտակության մեջ...

Մեր կանանց սուգը սազում է. նրանք դառնում են փոքր-ինչ հանելու-

կային, եթե կուզեք՝ անհասանելի, և անսովոր ցանկալի: Սուգը մահն է հիշեցնում, իսկ հեռու է արդյոք սիրուց մինչև մահ:

Բայց Մանչա Սաթբենիչն այնքան մոտ հարազատ չէ, որ շիֆոնե գլխաշորի արժանանա: Եվ հազիվ թե Մադինան երբևէ կրել է կամ որքան էլ մոտ բարեկամ մեռնի, կկրի շիֆոնե գլխաշորը. դրա համար նա չափազանց ժամանակակից է, իսկ շիֆոնե գլխաշորը, իբրև հատուկ խոր վշտի նշան, միայն տարեց կանայք են կրում:

Դագաղի մոտ կիսաշրջան կազմած կանայք ողբում են, նրանց հետևում դրված նստարաններին տեղավորվել են ավելի հեռու ազգականները: Դագաղի մեջ՝ գունատ և շշմած երեսով,– հանգուցյալների դեմքի արտահայտության մեջ միշտ մի որոշ շշմածություն կա նրանց պատուհասած հանկարծակի փոփոխության պատճառով,– պառկած է Մանչա Սաթբենիչը: Առանց այն էլ նիհար դեմքի գծերն ավելի են ներս ընկել ու ջնջվել: Քթի՝ լոկ ավելի շեշտակի դարձած կորությունը,– ննջեցյալների այս առանձնահատկությունը նույնպես նկատել եմ,– պահպանել է կենդանության ժամանակի հպարտ նստվածքը, եթե ավելի սիգապանձ չի դարձել:

Դագաղը դրված է նրա երեք սենյականոց խրուշչովկայի փոքրիկ հյուրասենյակում:

Կանայք սևազգեստ են, դեմքներին՝ պատշաճ վշտի արտահայտություն: Հենց որ եղերամայրը կամ եղերամայրերի խումբն է հայտնվում, սկսում են ողբալ՝ մեծ և անսփոփ վիշտ պատկերելով. միաժամանակ հետաքրքրասերի աչքերով հաճում են այցելուների կողմը՝ ով ով է, ինչ է հագել, ում հետ է եկել: Ընդմիջումներին շշուկով տպավորություն են փոխանակում սրան-նրան գնահատելով, գուշակելով, թե ազգակցական որ ճյուղով է սա կամ նա ներկայացել, երբեմն նույնիսկ իրար մեջ ծիծաղում են: Այստեղ պարտադիր մի կնճռապատ ու կորաքամակ զառամյալ պառավ է լինում, նրան, ինչպես կարգն է, կարելի է հանդիպել ցանկացած թաղման ծեսին: Ամենքից, նույնիսկ կյանքի օրոք հանգուցյալից մոռացված այս ազգականուհին այս դեպքում ճիշտ տեղում է հայտնվում:

Ընդհանրապես ես նկատել եմ, որ հուղարկավորության ժամանակ ծերունիներն անպատշաճորեն շատ են լինում: Արդեն դժվարությամբ են ոտքերը քարշ տալիս, բայց մի կերպ գալիս են ննջեցյալին ճանապարհելու: Մի անգամ ես երկու հենափայտով քայլող մի պառավի տեսա. հենց որ

մտավ բակ, որտեղ ծածկի տակ դրված էր հանգուցյալի բաց դագաղը, որը նման էր նավահանգիստը լքել պատրաստվող նավակի, սարսափելի մի այնպիսի սուգ ու շիվան դրեց, որը նրա կազմվածքի համեմատ ոչ թե անսպասելի էր, այլ անհնար: Նույնիսկ փայտերը մի կողմ գցեց, որպեսզի ձեռքերն ազատի երեսը չանգռելու համար: Եվ երբ ճանկռելով արյուն հոսեցրեց,– արյան առաջին իսկ նշանը բավական է, որպեսզի բոլոր ներկաներն ընդունեն ծիսակատարության անթերի կատարումը,– նրան ուղեկցող կանայք հպարտանալով, որ իրենց պատվիրակությունը բարձր գտնվեց, շնորհակալությամբ նրան տվեցին հենափայտերը: Հուլարկավորության ժամանակ պառաւններն առատ և անկեղծ արցունք են թափում՝ մասամբ ողբալով և իրենց շուտափույթ հեռացումը:

Ջառամյալ պառաւն իր լաց ու կոծով զարդարում է թաղման ծեսը՝ պահպանելով այտերն արնոտելով հոգեցունց ողբերգի աստիճանաբար անհետացող սովորությունը, որով վերջին հանգրվան են ուղեկցում ննջեցյալին: Նա ողբում է Մանչա Սաթբեկիչի անժամանակ մահը. իբր չհասցրեց անել այն ամենը, ինչ կարող էր և մտադրվել էր, բայց և քիչ բան չհասցրեց անել իր կարճատև ,– այս խոսքը վերաբերում է իննսունամյա ծերունուն,– կյանքում: Նա մեզնից գնաց այնտեղ, որտեղից չեն վերադառնում. այնտեղ նա կհանդիպի հարազատներին և մերձավորներին, նրանցից շատերը, ինչպես և Սաթբեյի որդի Մանչան այսօր, նրանից չարությամբ ու ատելությամբ լի այս աշխարհից ավելի վաղ հեռացան լավագույն աշխարհ, ուր միայն լույս է ու բարություն, ստի աշխարհից տեղափոխվեցին ճշմարտության աշխարհ:

Մադինան էլ է վշտացած կանգնել, բայց ոչ այնպես ցուցադրաբար, ինչպես դագաղի մոտ կանգնածները, և լուր է: Նրա լուրջությունն առանձնահատուկ է, և դրանից նա ավելի ցանկալի է դառնում, ես մղում եմ ունենում կանգնել նրա կողքին և նրա հետ լռել ամենայն երկրայինի անցավորության և սիրո կարճատևության մասին: Բայց արդյոք դա է նրա լուրջան իմաստը, ինչից եմ ես ենթադրում, որ Մադինան խոկում է ամենայն երկրայինի կարճատևության և սիրո անկայունության մասին: Ակնհայտ նշան չկա, որ սիրելի, վշտալի և սգավոր Մադինան հավերժական հարցերով է զբաղված, այլ ոչ թե պարզապես պահում է հուլարկավորության ծեսը: Բայց նրա լուրջությունն ու մտահոգությունն ինչ-որ իմաստ ունեն, չէ. ինչ

իմաստ:

Նման դեպքերում ես ինքս անպատշաճորեն քիչ եմ մտածում հանգուցյալի և իր անդրշիրիմյան ճակատագրի մասին: Շատ ավելի հետաքրքիր է դատապարտված և հետաքրքրասեր ամբոխով ննջեցյալին շրջապատած ողջերին դիտելը: Եվ Մանչա Սաթբենիչի թաղմանը ես մտածելու եմ Մադինայի մասին՝ գաղտնաբար հիանալով նրանով: Ես պետք է մտածեմ նրա տաք, փափուկ, կենդանի մարմնի, վստահաբար՝ նույնքան փափուկ, տաք, կենդանի հոգու մասին. մտածելու եմ անհասանելի հեռավորության կարոտով:

Հետո ննջեցյալին բակ կհանեն: Պատրաստակամ երիտասարդ ազգականներն ու հարևանները համերաշխորեն կբարձրացնեն դագաղը, կբարձրացնեն ուսերին և նեղ սանդղավանդակով, բազմաթիվ խորհրդատուների եռանդուն մասնակցությամբ, թե ուր և ինչպես պտտել դագաղը, որքան բարձրացնել, իջեցնել, որպեսզի բազրիքին չդիպչի կամ հանգուցյալը հանկարծ դուրս չընկնի, ներքև կիջեցնեն: Տան առջև ամբոխ է հավաքվել՝ վերջին պարտքը տալու Մանչա Սաթբենիչին: Նրանք, ովքեր արդեն տվել են՝ ողբացել են հանգուցյալի մահը, ծանձրությամբ հետվում կանգնած համբերատար սպասում են թաղումից հետո պարտադիր տեղի ունենալիք հյուրասիրությանը. պետք է, չէ՞, ծերունուն ճանապարհ դնել մի աման լոբիով և մի քանի բաժակ գինով: Հուղարկավորությունն սպասարկող անձինք, ովքեր անգիր գիտեն սովորությունները և ոչ ոքի չեն զիջում, նրբորեն, բայց հատու, եթե պետք է՝ հաստատակամ, քանզի նույն սովորության համաձայն ընդունված է հրաժարվել, նրանց սեղան նստել են հրավիրում: Մարդիկ ծուլորեն և ասես չուզենալով հետևում են սովորույթի սպասավորներին, որոնք խրատական հորդորում են. «Այլ կերպ չի կարելի, սիրելիներս, այդպես են վարվել մեր հայրերը, հանգուցյալն ինքն էլ սիրում էր: Հավատացեք, եթե դուք սահմանված քանակի բաժակները չպարպեք, նրա հոգին չի հանգստանա»: Այդ պատճառով ամբոխի մեջ հարբածներ են նկատվում, որոնք ամբողջ ուժով աշխատում են ուղիղ կանգնել անհնազանդ ոտքերի վրա և ուշադիր ձևանալ: Նրանց դա ինչ-որ չափով հաջողվում է, միայն թե դեմքերն են ժամանակ առ ժամանակ զկոտոցից աղավաղվում. կերվել է մեծ քանակությամբ կծու պղպեղով համեմված լոբի և թթու կաղամբ, որը սեղմ ժամկետի պատճառով շտապ-

շտապ է պատրաստվել և հազիվ էր հասցրել վարդագունել, և առատորեն խմվել է թթու գինի:

Դագաղը կոնեն սեղանին և ոչ մեծ հանրահավաք կկազմակերպեն: Նրա ամբողջ կյանքը Հայրենիքին է տրվել, նրա հիշատակը կմնա բոլոր նրան ճանաչողների սրտում, ճոռոմաբանելու են ելույթ ունեցողները: Հատկապես կնշեն ծերունու հայրենասիրությունը. կստեն, թե ինչ պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել և թե ինչպես այդ պաշտոններում գիշեր-ցերեկ մտածել է հարազատ ժողովրդի բարօրության մասին: Կասեն, թե նրա համար ինչ հարված եղավ վերջին պատերազմը, ինչպես նա, սկզբունքային նկատառումներով չլքեց Սուխումը, որքան տառապանք կրեց վրացիներից և հրաշքով միայն ողջ մնաց: Ամբոխը վրդովվում է և խղճում ծերունուն:

Համընդհանուր խղճահարության այս ալիքով ձայն է խնդրում չծրագրված մի շատախոս՝ խմածներից, խակի գույնի գալիֆե շալվարով և մինչև ծունկը հասնող ճմոթված կաշվե սապոգներով և բարբաջում, թե ինչպես մինչ օրս հայրենի գյուղում հիշում են Սաթբեյի որդի Մանչային, թե ինչպես պատերազմի ժամանակ հուզվում էին նրա ճակատագրով, իմանալով, որ նա մնացել է օկուպացված Սուխումում:

Չնայած տարիքին... չնայած արխազական չափանիշով նրան ոչ մի կերպ ծերունի չես համարի... նա ուժերի ծաղկման շրջանում գտնվող տղամարդ էր... բայց, գիտեք, հարազատ ժողովրդի բարօրության համար կատարած ծանր աշխատանքի տարիները... և ահա, չնայած ծանր աշխատանքի տարիներին... այսինքն...մի խոսքով, նա զբաղված էր թշնամուն ներսից փնասելով (նրա տարիքը և ներսից փնաս տալը): Քանի դեռ ողջ էր Սաթբեյի որդի Մանչան, համագյուղացիները հանգիստ էին քնում, նրանք գիտեին, որ քաղաքում մոտ մարդ կա, որին կարելի է դիմել ցերեկվա և գիշերվա ցանկացած ժամին, և նա կօգնի: Բարի ճանապարհ քեզ՝ Սաթբեյի որդի Մանչա, թող որ Բարձրյալը քեզ դրախտ տանի, կասի նա վերջում, կմոտենա դագաղին և կհամբուրի ննջեցյալի սառը ճակատը, հետո գեղջկական կոշտ մատով կմաքրի արցունքը, թափ կտա ձեռքը,– ամեն բան փուչ է,– և ճոճացնելով փոշոտ սապոգները, կգնա իր տեղը:

Պառավ ռուս հարևանուհին,– ընդհանրապես պատշաճ չէ, որ կինը ճառ ասի հանգուցյալի վրա, բայց սա հատուկ դեպք է,– ճառը համեմելով

անկեղծ արցունքներով, որոնք նա սրբում է ծնոտի տակ կապած, հասարակ գորշ գլխաշորի ծայրով, կընդգծի Միխայիլ Ստեպանովիչի շռայլ հոգին, մի մարդու, որը միշտ ուշադիր է եղել հասարակ մարդկանց կարիքների հանդեպ, կհիշի, թե ինչ կենսուրախ կատակներ էր անում Միշկան ամեն անգամ՝ նրան մենակ հանդիպելով սանդուղքի վրա: Եվ ով կարող էր մտածել, որ նա այսքան շուտ կգնա մեզանից: Թող հողը թեթև լինի քո վրա, մեր թառլան:

Ճառի զգայական տեղերն ընդմիջվում են անմխիթար ազգականուհիների բարձր հեծկլտոցով: Բոլորից ավելի ջանում է զառամյալ պառավը. «Որ ինձ... Որ ես...», և անուժ խփում է իր ճակատին: Երբ նա ճակատին խփելու համար բարձրացնում է ձեռքը, լայն թևքը մինչև արմունկը ցած է սահում և մերկացնում ձեռքը: Այն պատած է հաստ, կապույտ երակներով, ծածկված բազմաթիվ բաց շագանակագույն բծերով. հողատապոտ մատներով, ուռած հողերով դաստակն անբնական մեծ է թվում, ասես այլ ձեռքի է. այդ ձեռքն է նա սեղմում և ոչ մեծ բռունցք դարձնում և խփում իր ճակատին: Իսկ ազգական տղամարդիկ խոժոռ օրորում են գլուխները՝ գիտակցելով և՛ ընտանիքի, և՛ ամբողջ ժողովրդի համար անփոխարինելի կորստյան ամբողջ ծանրությունը:

Ես որոշեցի հիվանդատես գնալ: Նա պառկած էր քաղաքային հիվանդանոցի խղճուկ, խարխլված առաջին հարկում: Անցնելով ոչ մեծ ներքին բակը, որտեղ գույնզգույն քարերով շարված չորացած շատրվան կար՝ կենտրոնում մի գորշ միայնակ քարե թռչուն, ոչ այն է կռունկ, ոչ այն է ձկնկույլ,– հավանաբար նրա կտուցից էր ծորալու տառապանքն ամոքող բուժիչ ջուրը,– ես մտա բաժանմունք: Միջանցքում մռայլ կիսամութ էր, խոնավության և քլորակրի հոտ էր փչում: Յուրտն ու տաղտուկը մինչև ոսկորներս խոցեցին ինձ: Էլեկտրական տաքացուցչի շնորհիվ հիվանդասենյակը մի քիչ տաք էր. լիակատար կարմրության մատուցներում գտնվող հազիվ նկատելի պարուրակը մարմրում էր: Բայց այստեղ էլ էր մռայլություն տիրում. երբեմնի սպիտակ վարագույրով սքողված միակ պատուհանը բացվում էր դեպի խոշոր, անհարթ, գորշ քարով շարած հոժ պատը, և ցերեկային լույսը վերևից հետախույզի նման սենյակ էր թափանցում: Մանչա Սաթբենիչի հետ ևս մեկ հիվանդ կար՝ միջին տարիքի մարմնեղ,

ուռած փորով մի տղամարդ, որը քնած էր. լսվում էր նրա ծանր, ընդհատ շնչառությունը:

– Երիտասարդ, լարված աշխատանքի տարիներն իզուր չեն անցնում: Ահա և իմ ժամը եկավ. չէ՞ որ սա հավերժ չի կարող շարունակվել: Որոշակի տարիքից սկսած մեզնից յուրաքանչյուրն ապրում է մահվան մշտական սպասումով: Մի գեղեցիկ օր մեր ամենավատ կասկածներն իրականություն են դառնում, և մեզ համերաշխ տանում են գերեզմանոց... Կյանքը ոչիսկ է, մեծ ոչիսկ, իմ պատանի բարեկամ: Դուք՝ երիտասարդներդ, շտապում եք ապրել: Երբ մենք ենք շտապում, ժամանակը դանդաղ է անցնում, իսկ ծեր հասակում հակառակն է՝ մենք չենք շտապում, ուզում ենք կյանքը մեր մեջ դեռ պահել, բայց ժամանակը չհեծած արշավաձիու նման փախչում է ձեռքից...

Հիվանդը տնաբույս, մզված և ըստ էության... ճիշտ, ուստի էլ ավելի ճնշող վիճակում էր: Նիհարել էր, չնայած, որքան ինձ հայտնի է, կարծես ոչ մի լուրջ հիվանդություն չուներ. երևի ապրումներից էր: Եթե դատենք սթափ ուղեղով, այլ ոչ թե տանջվող մարմնի բնագրով, որի լիակատար տիրույթում նա գտնվում էր, ապա նրա ինչին էր պետք շարունակել տառապանքը, ավելի լավ չէր լինի պառկել և մի կարգին դիակի ձև ընդունել. հետաքրքրասիրությունը, թե ինչ կլինի վաղը,– մի՞թե այս ամենը կլինի, բայց առանց նրա. կամ արդյոք նրա անհրաժեշտությունը,– պահում է, ամուր պահում:

Մանչա Սաթբեկիչն ամբողջ կյանքում մի աննշան չինովնիկ է եղել ջրի, կամ գազի, կամ ապահովագրության մի աննշան գերատեսչությունում և մի կույտ անպետք թուղթ է գրոտել՝ ելից, մտից, դիմում, բացարկում, ավելի բարձր աստյան հասցեագրված խնդրագիր, ավելի ցածր աստյան ուղղված կարգադրություն, նիստերի արձանագրություն, արձանագրության, հրամանի, ազատման, խրախուսման քաղվածքներ, պարգևատրման, արձակուրդի հրամաններ... Ապրել է իր համար մի անկյունում, ստվերում, հազվադեպ, կարելի է ասել՝ երբեք լույս աշխարհի դուրս չի եկել: Սակայն դա նրա կյանքն էր: Նա ապրել է իր կյանքը, և այդ է նրա առավելությունը: Հողագնդի անվիճելի բնակչի անթերի իր կերպարով Մանչա Սաթբեկիչը չի՞ ներկայանում արդյոք իբրև մի իսկական գուրու: Մի գուրու, որն անճանաչելիորեն ապրել է ծովափնյա փոքրիկ քաղաքում, վիթխարի կայս-

րության ծայրամասում: Եվ ահա ճակատագիրն ինձ հանդիպեցրել է նրան, որպեսզի նրանից կյանքի արվեստը սովորեմ, իսկ հետո այդ ամենը պատկերեմ թղթի վրա, որպեսզի ապագա սերունդներն ըմպեն անհատնում իմաստության կենարար աղբյուրից:

Ծիծաղելի է: Բայց... չէ՞ որ ինքը ոչ մի թույլ չէր կասկածում, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում իր շուրջը և իր հետ, իրականում է տեղի ունենում, և տեղի է ունենում անխուսափելիորեն: Նա երբեք իրեն հարց չի տվել՝ գնամ այդ ուղիով, թե՞ թեքվի դեպի արահետ, չի փորձել կանխատեսել իր ապագան: Նա երբեք չի դուրս գալիս հարազատ տան մուտքի մոտ՝ չիմանալով, թե որ կողմ գնա: Գուցե սա է բարձրագույն իմաստությունը: Իսկ այն, որ նա այնքան էլ խելացի չէ, նույնիսկ ավելի շուտ հիմար է,– ապա իմաստությունն ու խելքը նույն բանը չեն, ինչը վաղուց է ասվել: Պարզապես հարկավոր է բավականաչափ երկար ապրել, որպեսզի քո մեջ այդ ամենն իսպառ այրվի: Ծուխը երբեմն կարող է և բարձրանալ ինչպես հոգնած, հանգած հրաբխից, բայց իսկական անշրջելի իմաստությունից քո գլխավերևի երկինքն անամպ է լինում, քանզի քո ներսը դատարկ է, այնտեղ այլևս երբեք ոչ մի բան չի ծնվի... Իմաստությունը ներսի անպտղությունն է, վակուումը. քո միջի բնական ուժերն սպառվել են, դու այլևս ի վիճակի չես արարելու, այլ լոկ արձանագրում ես քո գոյությունը:

Եվ այդժամ ես հասկացա՝ բայց չէ՞ որ հավերժության շեմին նստած այդ խեղճ,– վերջում քաղցրացնենք,– չորուկ ծերունին ընդամենն անպատշաճության, ես կասեի՝ նողկալիության աստիճանի խստասիրտ ու հաստակաշի մեկն է: Այլապես նա չէր ապրի մինչև այդ վիրավորական տարիքը, այլ վաղուց հանգչելիս կլիներ իր հարմարավետ գերեզմանում: Նա էլ է գիշերներ ունեցել, երբ հրեշավոր վախը սիրտն էր սեղմում, և նա չէր կարողանում աչք փակել, երբ շան հեռավոր հաչոցը, որը սովորական ցերեկը նկատելի չէր, լսվում էր իբրև վերջին դատաստանի շեփորի ձայն, և նա խցկում էր ականջները...

Մանչա Սաթեկնիչի խղճալի ճակատագրի հանդեպ իմ ամբողջ զուտ մարդկային (չէ՞ որ ես և նա, ինչ էլ չլինի, նույն ցեղին-տոհմին ենք պատկանում) հանդուրժողությամբ հանդերձ ես դրան հավատալ չեմ կարող: Գուցե միգապատ պատանության արշալույսին, երբ աշխարհի անհարագատ թարմ հոտը մշուշում էր ուղեղը և կատաղորեն զարկ տալիս սրտին,

նրան համանման մի բան է պատահել. հանկարծ անհասկանալի թախիծն իբրև մի կաթիլ թույն կաթել է նրա անհոգ օրվա մեջ, որը միտված էր աշխարհի և իր դյուրին համակեցությանը, – և անհոգությունն հօդս էր ցնդել: Բայց այդ փորձանքից նա շուտ ապաքինվեց՝ հենց որ արևածագն անցավ և վրա հասավ կյանքի լիաբուռն օրը:

Ծերուկը միշտ էլ լավ էր քնում, և դա իր մշուշոտ պատանության օրերից: Վատ քնից բողբոջ աշխատակիցների մոտ պարծենում էր՝ հենց որ մտնում է միայնակի իր անկողինը, իսկույն մինչև լույս ընկղմվում է անզարթնելի քնի մեջ: Եվ ոչ մի երազ չի տեսնում: Նա զարմացած և վերապահումով էր լսում նրանց, ովքեր, ինչպես իրեն էր թվում, խնամքով թաքցրած սարսափով, իբրև առօրեական և ամենքին հասկանալի մի բան պատմում էր իր գիշերային թափառումներից չգիտես՝ որտեղ և հանդիպումներից՝ վաղուց մահացած ազգականների և ծանոթների հետ:

Ծառայակիցները չէին հավատում և լուռ նախանձում էին իրեն, մտածում էր Մանչա Սաթբենիչը:

Եվ ազնիվ լրատու-վրիժառուի իր հեքիաթները, որոնց ես քիչ էր մնում խղճահարությունից դրդված հավատալի, պարզապես իմ միջոցով առանց արատավորվելու, ապագա թափանցելու փորձ էր: Դա նրան մասամբ հաջողվեց: Իր անցյալում նա ամուր էր կանգնած և չէր պատրաստվում դրանից հրաժարվել: Ես ապրել եմ և մինչև այժմ էլ ողջ եմ, – գրված էր նրա դեմքին: Նա թաքուն հաղթանակ էր տոնում՝ համարելով, որ իրեն հաջողվել է ճակատագրի քթից բռնած ման ածել, հաղթել նրան և ի հեճուկս նրա, չնայած ծնվել և ապրել էր այդպիսի մի սարսափելի ժամանակ, ապրել մինչև խոր ծերություն:

– Միակ բանը, որն ափսոսում եմ, չհասցրի մինչև վերջ բացահայտել ԽՍՀՄ-ի կործանման գաղտնիքը, չնայած մոտ էի...

Ես փորձեցի մխիթարել նրան, թե իբր դեռ կհասցնի գրադարանում նստել և թերթել կուսակցական սիրելի թերթերը:

Ես բարձի տակ փող դրեցի. ծերուկը չէր ուզում վերցնել և ուշադրության մասին ինչ-որ բան թոթովեց: Ես դուրս եկա: Այլևս այստեղ չեմ գա, և գրադարանի ճանապարհը նույնպես փակ է ինձ համար. եթե ողջերը չեն կարողանում, ապա գրքերն առավել ևս կյանք չեն սովորեցնի:

Ես թաքուն հույս ունեի, որ Մադինային կհանդիպեմ, չէ՞ որ նա պարտա-

վոր է երբեմն այցելել նրան, որպեսզի կատարի ազգականուհու պարտքը, ասենք, ծերունուն էլ խղճում է՝ իսկույն երևում է: Ճակատագիրն ինչո՞ւ չի դասավորի, որ ես և նա նույն ժամանակ հիվանդանոցում լինենք: Ասենք՝ ես գալիս եմ, իսկ նա նստած է ծերունու մոտ, կամ հակառակը՝ նա գալիս է, իսկ ես այնտեղ եմ: Մենք զարմացած և փոքր-ինչ շփոթված իրար ենք նայում և անհարմար դրությունից դուրս ենք գալիս՝ չափազանցված հոգատարություն ցուցաբերելով Մանչա Սաթբենիչի նկատմամբ և հարցակոխ անելով ինքնազգացողության վերաբերյալ. «Որտե՞ղ է ցավում, ինչպե՞ս է ցավում, գուցե մյուս կողքի՞ն պառկեք...»: Նա պատասխանում է անհարկի ընդարձակ մանրամասնելով, որոնք մենք ականջի հետև ենք գցում, չնայած մեծագույն ուշադրություն ենք ցուցաբերում, թե որ կողքն են սրսկել երեկ և որը՝ այսօր:

Հետո հրաժեշտ ենք տալիս՝ մաղթելով նրան առողջություն և ոգու ամրություն, դուրս են գալիս հիվանդասենյակից, հետո՝ անցնում անհայտ ծագման թռչնի շատրվանի մոտով, հետո՝ հեռանում ենք հիվանդանոցից և փողոցում հայտնվում: Եվ հետո մենք միասին կգնանք...

«**Բ**արձր և մարդու խելքին անհասանելի նյութի մասին խորամիտ դատողություն անողները և դյուրահավատ հանրությանն իբրև փակուղուց ելք (ուր անպատճառ տանում է ամեն մի «իմաստային» դատողություն) Աստծուն մատնանշողներն այդպես էլ ինչպես հարկն է չեն հասկացել մահվան ամբողջ հմայքը: Ամբողջը՝ առանց հոգու և հիշողության տեսքով մնացորդային մոխրի, տապանաքարի և մահախոսականի, գրքի... Չնայած վաղուց է ասված եղել, որ ավելի լավ է մարդ երբևէ չծնվեր:

Մարդու վախկոտ խորամանկությունն այստեղ էլ է ի հայտ գալիս իր ամբողջ մերկությամբ: Եթե մարդը չծնվի, ապա որտե՞ղ կլինի նա, ո՞րը կլինի նրա հասցեն, որտե՞ղ կարելի կլինի որոնել նրան: Հույսը, որ կարելի է նաև լինել՝ առանց ծնվելու, ծնունդ է տվել այս բանաձևին: Այլապես ինչպե՞ս կարող է լավ լինել մեկը, ով ընդհանրապես գոյություն չունի. թե՞ այստեղ բառերի թուլությունն է պատճառը: Քերծվածք թողնելու հարկ չկա, նույնիսկ ավելորդ է, և այս առիթով կաշվից դուրս գալն իզուր է:

Ես,– որ դեռևս ողջ եմ,– ճնշվում եմ, որ իմ աճյունը հողի մեջ շատ երկար է քայքայվելու, որ հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր տարիներ անց այն նյութը, որից ես հյուսված եմ իմ ներկա տեսքով,– միակ բանը, որը մեր մեջ իսկապես անմահ է,– մինչև աշխարհի վերջնական քայքայումը և անհետացումը, ինչը հաճախ իբրև անխախտ օրենք նշում էր Բ. Ն.-ն,– որ իմ հարազատ նյութը գուցե մեկ այլ կամ մի քանի մարմինների մաս դառնա:

Հետևողական շարունակությունը հանգեցնում է մի մտքի՝ իմ մարմինը բնավ էլ իմը չէ, ես այն վարձով եմ վերցրել հագուստի նման, որը կարող եմ հագնել-մաշել և դեն գցել, կարող եմ նաև մինչև ժամկետի ավարտը, քանի դեռ այն նոր ու թարմ է և իսկը իմ չափով, կնճռապատ ծալքեր էլ չունի, հանել վրայիցս, որպեսզի մեկ ուրիշը հագնեմ: Զգեստս կարող եմ երբ կամենամ՝ փոխել. սա է իմ անքակտելի իրավունքը, և մարդկային համակեցությունը պատճառ բռնելով պետք չէ հանուն Աստծո արգելել, որ այդ անեմ: Ներքին, երբևէ չասվող, ոչ մի սարքով չորսացվող զգացումս ինձ ասում է՝ ես եմ մարմնիս տերը, և սա է իմ միակ իսկական ազատությունը: Կուզենայի մտածել՝ կոտրելով անոթը, մենք թափթփում ենք նրա միջինը, և ես կկարողանամ անոթը կոտրելով իմ հոգին թափթփել, և այն անհետ կհոսի ավազի մեջ:

Գուցե հենց սա էլ կամ մեր իսկական միակ ազատությունը:

Կարծես թե ցանկալի է նույնիսկ ամենակարճ ժամանակով ոչ մի մատնահետք չթողնել՝ եթե նույնիսկ իրավացի է Բ.Ն.-ն, և ես վաղ թե ուշ, ինչպես և բոլոր մնացածները, ինչպես ամբողջ առկա աշխարհը, անհետ ջնջվելու եմ:

Բայց այլ կերպ էլ է հնարավոր. դա նույնպես Բ.Ն.-ն է ասել, որ աշխարհը (ինչ սարսափ) հավերժ է և երբեք ոչ մի տեղ չի կորչի, չի չքվի, ոչ մի անդունդ չի ընկնի, հող ու մոխիր չի դառնա: Գլուխ պտտեցնող և սոսկալի հեռանկար է. բացառված չէ, որ ես երբևէ ամբողջովին նորից հավաքված կլինեմ: Հավերժությունն այդ անելու համար խելք էլ ունի, ժամանակ էլ»:

Ես հրաժեշտ եմ տալիս Ադգուր Ա.-ին, և հրաժեշտ եմ տալիս ընդմիշտ. ես նրան ինձնից ազատում եմ: Եվ ինձ նրանից՝ նույնպես: Վրայիցս հանում

են գրեթե ինձ սերտաճած նրա մաշկը: Ննջեցյալներն ուզում են, որ իրենց հանգիստ թողնեն: Բայց ողջերը դա չեն հասկանում, ողջերի կարծիքով իրենք պարտավոր են հիշել հանգուցյալներին. իբր թե հիշատակը երկարացնում է մեռյալների կյանքը: Մինչդեռ հանգուցյալները սոսկ մի բան են ուզում՝ որպեսզի իրենց մեկընդմիջտ մոռանան:

Ես կարծում եմ, որ Ադգուր Ա.-ն ուզում էր պատերազմում իր հոգին գտնել, սակայն պարզվեց, որ պատերազմում չափազանց շատ կյանք կա, իսկ չափազանց շատ կյանքը վնասում է հոգուն, այն չի դիմանում:

Ես չկարողացա գրել-ավարտել նրա տողը. նկատի չունենալ պատմվածքները, որոնք ընդհանուր առմամբ ավարտվեցին, ես լույս ուղղեցի նրա մտահղացման համաձայն. – բայց դրա փոխարեն նա մտավ իմ սիրտը և նրա մեջ արմատ ձգեց, խորը սերտաճեց: Հիմա ինձ հեշտ չի լինի նրան այստեղից հեռացնել, չկա «հեռացնել» կոճակը, որը սեղմելով կարելի է սրտիցդ անհետ ջնջել մարդուն (ես երբեք չեմ կարող ջնջել Նաթելային, ով իր հետևից մղկտացող քաղցր դատարկություն է թողել):

Ո՞րն է պատճառը, որ Ադգուր Ա.-ի օրագիրն ընթերցելն այսպես ազդեց ինձ վրա: Ինչո՞ւ գլուխս մտքի այն միտքը, թե ես պետք է գոնե շարունակեմ նրա տեքստը: Ինչպե՞ս համակցեմ դեռևս շարունակվող իմ և արդեն ավարտված նրա կյանքերը:

Միակ կապը Մադինան էր: Բայց արդյոք նա նո՞յն Մ.-ն է, որը կա օրագրում: Ես այդպես էլ նրան չհարցրի Ադգուր Ա.-ի՝ իմ երբեմնի ընկերոջ, գրողի մասին, ով կամ զոհվել կամ էլ ինքնասպան է եղել 93-ի ամռանը Սուխումից ոչ հեռու, քաղաքի վրա մերոնց վերջին հարձակման ժամանակ, և ով իր օրագրում հիշատակում է ոմն Մ.-ի՝ պատերազմից առաջ իր ծանոթուհուն, իսկ պատերազմում՝ սիրած աղջկան, ինչը նա շինծու սառնությամբ փորձում է սքողել մի քանի անտարբեր տողերով, որոնք ժլատորեն փոխանցում են իրենց հանդիպումը Գումըսթայի մերձակա դիրքերում:

«Չհամարձակվեցի»-ն այնքան էլ ճշգրիտ չէ, ավելի ճիշտ՝ բոլորովին անստույգ է: Նախախնամությանն ապավինելու սկզբնական հրահանգը, որով ես սկսեցի Մ.-ի որոնումը, պահպանվում էր այս պատմության ամբողջ ընթացքում, ես ոչ մի անգամ չուզեցի խախտել դիպվածի վրա հույս դնելու՝ ինքս ինձ տված խոստումը. չհամարձակվեցի այդ անել: Բայց երբ Մադինային հանդիպեցի գրադարանում աշնանային մի անձրևոտ օր, երբ

Սուխումը թախծալիորեն գեղեցիկ է, և նրան ամբողջությամբ՝ Կելասուրից մինչև Գումըլաթա սարսռացնում է քամին, իսկ սև (փոքրատառ «ս») ծովն աղմուկով խփվում է գրանիտե ափին, երբ ծովափնյա փողոցն ամայի է և մի ինչ-որ ճմլող բան ճնշում է սիրտդ, և ուզում ես սուզվել այդ արհավիրքի, այդ քամու, այդ երեկոյի մեջ, և երբ ինքս ինձ ասացի՝ «նա է», նկատի ունեի ոչ թե Մ.-ին, այլ ուրիշ բան, ուրիշ կնոջ: Մ.-ին ճանաչելու ոչ մի հոսանք էլ չչամփրեց ինձ, բայց ես զգացի, որ հանդիպելու եմ մեկին, ում վաղուց եմ փնտրել՝ ինձ պակասող կեսին, որից մի ժամանակ բաժանվել էի կամ չար դիտավորության, կամ թյուրիմացության պատճառով՝ չգիտեմ, և հանկարծ իմ միջի դատարկությունը պռնկեպռունկ լցվեց, և կողոսկրս իր տեղն ընկավ: Այս ամենը պարզ ու հասարակ անուն ունի, բայց ես չեմ ուզում օգտագործել այդ բառը. այն գուցեև ոչ պատահականորեն հանգավորվում է ինձ համար ատելի «տեր» բառի հետ:

Հենց որ իմացա, որ նրա անունը «Մ»-ով է սկսվում, սկսեցի կասկածել առաջին զգացմունքիս և դարձյալ տեսա նախախնամության ձեռքը, որն այս անգամ Ադգուր Ա.-ի հետ էր կապված, ոչ թե իմ: Դիպվածն ինձ մոտեցնում էր ինձնից հրաժարվելուն, ինչն օրինաչափ էր, քանի որ ես հանդգնել էի շարունակել ինչ-որ մեկի չապրած կյանքը. լինելով իր մարմնում, ունենալ ևս մեկ հոգի՝ ուրիշի. և դա պատժի նման էր, քանզի իմ մեջ երկուսն էին պայքարում՝ Մադինան և Ադգուր Ա.-ն:

Բայց ես այնուհանդերձ ջանում էի շարունակել Ադգուր Ա.-ին, չնայած Մադինայի հանդեպ տաժած զգացմունքս աստիճանաբար սրտիցս դուրս էր մղում նրան: Ես ինչպե՞ս կարող էի շարունակել նրան, նույնիսկ թղթի վրա, նրան տեղ չտալով իմ սրտում: Դա մեռելածին տեքստ կլիներ: Ինձ կարող էր փրկել միայն մի բան՝ եթե պարզվեր, որ Մադինան Մ.-ն է: Բայց ես նրա հետ չէի կարող խոսք բացել Ադգուր Ա.-ից, դա կխախտեր ճակատագրի հետ իմ բռնած խաղի բոլոր կանոնները, դա անագնիվ բան կլիներ: Եվ այդ պատճառով ես կրկին ապավինեցի դիպվածին, դիպված, որն ավելի նման կլիներ հրաշքի:

Նրանք երեքով՝ Մորուքը, Մաչոն և Բեսլանը, կանգնած էին «Հակոբի մոտ» սրճարանի վաճառասեղանի առաջ: Ոչ հեռու, իրիկնադեմի երերուն կիսամութի մեջ տեսանելի է «Ամրայի»՝ ծովը մտած ուրվապատկերը: Աշնան

անձրև է մաղում, փոքր-ինչ ցուրտ է, մշտական հաճախորդները վաղուց գնացել են:

Նրանք գրուցում են, ուշադիր լսում մեկմեկու, չեն ընդհատում, երբեմն հավանությամբ գլխով են անում:

- Դուք չեք հավատա, բայց միջքաղաքային հեռախոսակայանում ինձ ասացին, որ չկան այդպիսի քաղաք, այդպիսի երկիր և այդպիսի համար, – նա բացում է թղթապանակը, հանում երկրների, քաղաքների և հեռախոսահամարների անվանումներով գրոտած մի քանի թուղթ, ցույց տալիս Բեսլանին և Մորուքին: Նրանք նայում են թղթերին, մտքերի մեջ ընկնում, բայց ոչինչ չեն ասում:

- Ահա և դուք համոզվեցիք, որ ես ոչ մի անհնար բան չեմ ուզում, միայն թե միացնեն, իսկ հետո ես գիտեմ, թե ինչ կասեմ, ճառ էլ եմ պատրաստել, տեսեք. – Նա հանում է թղթի մի այլ խուրձ և ցույց տալիս նրանց:– Ես չեմ կարողանում որևէ տեղ զանգահարել. ամեն գիշեր երազումս տարբեր երկրներ, քաղաքներ ու համարներ եմ տեսնում. առավոտյան ես դրանք գրում եմ ճիշտ, բառ առ բառ, տառ առ տառ, թիվ առ թիվ իմ խելքն ի տարբերություն որոշ մարդկանց իմ գլխում է և հիշողությունս էլ լավ է ձեզնից որևէ մեկը հիշում է ֆուտբոլի աշխարհի առաջնության բոլոր մասնակիցներին իսկ ես հիշում եմ այնպես որ խնամքով գրելով – դուք տեսաք թե ինչ ընթեռնելի ձեռագիր ունեմ ինչպես են մի անկյան տակ թեքվել բոլոր տառերը ինձ հետ վիճում էին չէին հավատում բայց ծանոթ հնոցապանը վերցրեց ու չափեց բոլոր տառերը որ ես գրել էի նրա թելադրությամբ և ոչ թե միայն գրել էի այլ առավելագույն արագությամբ և զարմացավ նրա աչքերը ճակատը թռան դրանից հետո նա ինձ հարգում է նույնիսկ տեղեկանք տվեց որ ես նորմալ եմ– և ահա ես միջքաղաքային եմ գալիս որպեսզի պարտքս կատարեմ – չէ որ այդ երկրները քաղաքները համարները երազիս գալիս են ոչ թե հենց այնպես և անպայման պետք է զանգահարեմ և ասեմ իսկ թե ինչ ասեմ ես ունեմ ես ձեզ ցույց եմ տվել – իսկ այնտեղ պատուհանի մոտ նստել է այդ անկիրթ տխմարը բացի Աբխազիայից Ռուսաստանից և Վրաստանից ոչ մի երկրի անուն չի լսել և լկտիորեն հայտարարում է որ չկան այդպիսի երկիր քաղաք և համար համարն իրոք շատ երկար է այդպիսի համար ես ծնվածս օրից չեմ տեսել հետո ինչ նրանց մոտ ուրիշ է նրանք առաջ են անցել ոչ թե մեզ նման – բայց երբեք չեմ հավատա

որ այդպիսի երկիր և քաղաք չկան կան պարզապես չեն ուզում որ ես նրանց հետ կապ հաստատեմ և նրանք էլ են համառ ինձնից ծեռք չեն քաշում ընտրել են ես մեղավոր չեմ որ ամեն գիշեր ինձ ազդանշան են ուղարկում որպեսզի կապ հաստատեմ բայց չէ որ ես ինձ համար չեմ ջանք թափում գիտեմ այնպիսի բան կասեն ինձ որ դրանից հետո բոլորը լավ կզգան բոլորը կսիրեն իրար իսկ ինձ չեն թողնում– և ես սկսում եմ մտածել որ ոչ մեկը ոչ մեկի հետ հեռախոսով չի խոսում այդ ամենը խաբեություն է դավադրություն և մարդիկ խցիկներում ձևացնում են թե խոսում են և այդ պատճառով ինձ չեն թողնում որպեսզի ես խաբեությունը չբացահայտեմ – իսկ խցիկներում ինչ ասես որ չեն խոսում այն ամենը ինչ չեն համարձակվում մարդկանց ներկայությամբ ասել երեսին նրանք ասում են խոսափողում ես անցնելիս լսում եմ հատուկենտ բառեր տարբեր մարդկանց գրույցից իրենց սրտի հետ – Նաթելա արի ինձ մոտ ես ուզում եմ գրկել քեզ և կրծքիս սեղմել դու այնքան հեռու ես և ես այնպես միայնակ եմ միթե դու ընդմիջո ես գնացել քեզ կորցնելուց հետո միայն հասկացա թե դու ինչ նշանակություն ունեիր իմ կյանքում իսկ Մադինան նա այդպես ես ինքնաներշնչմամբ գլուխս մտցրի որ պետք է շարունակեմ մեռած մարդու կյանքը – միթե դա հնարավոր է – մեռյալը մեռյալ է նրան չես կարող հարություն տալ և հայտնի չէ ուզում են նրանք հարություն առնել թե ոչ ես կասկածում եմ որ չեն ուզում – նա միայն Մ.-ին էր սիրում ես նրա մասին իր գրածից ավելի բան չգիտեմ և ես կարծեցի թե այդ Մադինան է նա և մարտնչել է և վիրավորվել մի խոսքով նման է նրա նկարագրածին չնայած նրա վերքի մասին ոչինչ չի ասված երևի դա հետո է պատահել և ես որոշեցի սիրել նրան դեռ չիմանալով նույն Մ.-ն է որի մասին գրում է ընկերս նա սոսկ մի հնարավորություն էր վերջապես մոտ լինելու Ադգուր Ա.-ին իսկ գուցե ես ուզում էի միայն իմ մեղքը նրա առաջ հարթել և այդ ժամանակ ես սառեցի քո հանդեպ իմ բանականությունը հաղթեց սրտիս չէ որ ես գիտական մարդ եմ իսկ հիմա ես կարոտում եմ քեզ քո բույրը քո կրծքերը քո հետույքը քո ձայնը և քո աչքերի խորությունը և թախիծը կողոսկրը ոչ մի տեղ չի դրվել այլ վերքի խոռոչն է մնացել Նաթելա արի ինձ մոտ և ցրիր իմ վիշտը ոչ դու սառը չես դու սիրտ ունես իսկ դա ամենագլխավորն է ես միայն հիմա եմ սկսում դա հասկանալ ընկերս ինձ օգնեց նա սիրտ ուներ բայց խորն էր պահում և միայն մի ծայրն էր ցույց տալիս իր գրածով և դա նրա գլխա-

վոր սխալն էր դրա համար էլ մենք նրա հետ իսկական բարեկամ չդարձանք նա աշխարհին նայում էր կիսափակ աչքերը կկոցած մինչդեռ պետք է լայն բացած նայել ասենք պատերազմն էլ է մեղավոր նա սովորեցրեց թաքնվել կյանքից որովհետև ես ինձ համար չեմ վախենում ես մահից չեմ վախենում ես վախենում էի իմ միջի մարդու համար վախենում էի ապրել մինչև մահ և ճանապարհին կորցնել իմ միջի մարդուն և ես սկսեցի ուսումնասիրել ուրիշների կյանքը ոչ թե այն թե ինչ էին մտածում այլ ինչ էին արել և արեցին հետո գցում-բռնում էի թե դա ինձ կհարմարվի թե ոչ և ոչ մի ուրիշի կյանք չհարմարվեց ոչ մեկի ճակատագիրը ես չուզեցի և չէի կարող կրկնել ընկերոջս ճակատագիրը նույնպես և Մանչա Սաթբենկիչը չես հավատա բայց ինչ-որ հարցում ինձ օգնեց բայց ամենից շատ ինձ դու օգնեցիր չնայած նրան որ դու կյանքին մոռալ ես նայում դու ապրում էիր և քո մեջ տրոփում էր կենդանի սիրտը իմանալով այն ամենը ինչ սպասում է մարդուն ես չկարողացա մինչ օրս պահպանել կենդանի սիրտս և ես մտածեցի հորս և մորս մասին ես կգնամ նրանց մոտ և երկար կմնամ և պետք չէ որ մի ինչ-որ վիթխարի բան տեղի ունենա մենք ողջ ենք և ընտրություն ունենք սա արդեմ մեծ բան է ես սխալ օգտագործեցի իմ ընտրությունը ես ուզում էի գուցե խաբելով ինքս ինձ բայց ես ուզում էի – չէ որ ես քեզ նեղացնում էի և այն էլ ինչպես էի նեղացնում ես քեզ հետ երբեք լուրջ չէի խոսում քո մոր մասին ես միշտ ընդհանուր խոսքերով խուսափում էի քո հարցերից ես չէի փորձում քեզ օգնել ես գտնում էի որ արդեն ամեն ինչ ասված է ոչ մի նոր բան չես ավելացնի և դու պետք է դրա հետ հաշտվես մոռանաս մորդ չէ որ մենք ամենքս երբևէ կմեռնենք և դրա մեջ ոչ մի նոր բան չկա իսկ դու գտնում էիր ես իմ պարզամտության ավելի ճիշտ հիմարության ավելի ճիշտ անսրտության պատճառով դու քեզ այնպես էիր պահում կարծես միայն քո մայրն է մահացել և քեզ ընդամենը ծերություն է կտակել այլ ոչ թե մի բան որը քեզ կօգներ ապրել բայց ծերությունը ևս ինչպես ես էի կարծում բոլորի բաժինն է և ինչ իմանար կա վաղորդք և նույնիսկ ոչ վաղորդք այլ ընդհանրապես այդ առիթով տառապել իսկ դու տեսնում էի տառապում էիր և ես գտնում էի որ դու այնպես չես ապրում քո խելքով ու սրտով սխալ ես ապրում ես քեզ չէի հասկանում ես հարկավոր բառերը չէի գտնում որպեսզի քեզ մխիթարեմ ես նույնիսկ համարում էի որ մխիթարությունը խաբեության պես բան է և դու իրավացի էիր երբ ասում

էիր որ ես քեզ չեմ սիրում ավելի ճիշտ լրիվ իրավացի չէիր բայց ես ինձ այնպես էի պահում ասես քեզ չէի սիրում իսկ ես քեզ սիրում էի բայց ինչ-որ մի պահից ես խլացա քո հանդեպ ես ուզեցի ուրիշի կյանքով հետո ուրիշների կյանքով ի մի բերել կամ սփռել իմ կյանքն ավելի շուտ սփռել որովհետև ես առաջվա պես չէի կարող ապրել ինչ-որ բան էր ինձ պակասում իսկ դու կողքս էիր և քեզ կորցնել ես չէի վախենում չնայած երբեմն մտածում էի որ դա իմ հնարավոր ապագան է բայց ոչ մի բան չէի ձեռնարկում թող ամեն ինչ ճակատագիրը որոշի ասում էի ես իսկ դա սխալ էր ոչ մի ճակատագիր չկա այլ կա մարդը և նա ամեն օր ընտրություն պետք է անի և այդ ընտրությունից է կախված նրա ճակատագիրը բայց ես մտածում էի և խոստովանում եմ հաճելի էր այդպես մտածել թաքնվել աշխարհը կառավարող բանաձևերի հետևում ես մտածում էի որ մենք ամենքս նյութի և ատոմների շարժման ստրուկներն ենք և ոչինչ չենք կարող փոխել կյանքի ընթացքում գործադրած մեր բոլոր ճիգերը մի ակնթարթում արժեզրկում է մահը և շարժումը նյութի վատ որակն է մարդն ընդօրինակելով այդ վատ հատկանիշը նույնպես մշտական շարժման մեջ է գտնվում և ամեն մի շարժումն ինձ համար ատելի դարձավ – ում է այն հարկավոր եթե ամեն ինչ կանխորոշված է և այդժամ իմ սիրտը հանդարտվեց բայց դա սկսվեց պատերազմից շատ առաջ իսկ պատերազմն էլ ավելի հաստատեց աշխարհի հանդեպ իմ վերաբերմունքը և ես կառչեցի Ադգուր Ա.-ին և Մ.-ին իբրև հնարավորություն տիրապետել սեփական կյանքս բայց ամեն ինչ իզուր էր և այժմ ես մենակ եմ բայց ես ունակ եմ կրկին սիրելու և ես քեզ սիրում եմ Նաթելա և միշտ կսիրեմ դու ասում ես ամուսնացիր երեխաներ դաստիարակիր միշտ նրանց հետ եղիր քանի դեռ չես մեռել նրանց մի թողնիր սովորեցրու նրանց այն ամեն լավը որ ինքդ գիտես կյանք սովորեցրու նրանց ավելի լավ բան չկա – գուցե դու իրավացի ես ես դեռ այդ չգիտեմ ես առայժմ սարսափում եմ ուրիշին կյանք տալ չէ որ ինձ չհաջողվեց կյանք տալ Ադգուր Ա.-ին չնայած սա փոքր-ինչ այլ բան է քան քո ասածը բայց ես քեզ հավատում եմ Նաթելա – մի ժամանակ դու հարցրիր օգնություն պետք է ինձ թե ոչ այն օրն էր դա երբ դու գլուխդ կորցրիր իսկ նախկինում դու միշտ զգոն էիր դու ուզում էիր առանց զգացմունքի մարդ դառնալ դու համարյա այդպիսին դարձար քանզի հազվադեպ էիր քեզ թույլ տալիս խոսել դրանց մասին առավել ևս դրսևորել դրանք – բայց այդ օրը քեզ ինչ-որ բան

էր պատահել հավանաբար քո մեջ երկար ժամանակ կուտակվում էր և վերջապես հորդեց խոսքերի հեղեղը դու թափեցիր ինձ վրա դու նաև ասացիր որ երբեմն դու այնպես ես ինձ նայում ես սարսափում եմ այնքան իմացություն կա քո աչքերում – որտեղից ունես դա պատերազմից առաջ դու այդպես չէիր նայում ինձ կամ ես չէի նկատում ինչ կարող էի ասել պատերազմը կապ չունի բայց դու ուզում էիր մտածել որ պատերազմն ամեն բան փոխեց – և այն ինչ ես հիմա կպատմեմ քեզ շատ բան կբացատրի քեզ չնայած դու գուցե այն անվանես ինքնաարդարացում բայց դա ճիշտ չէ ես նախկինում ոչ մեկին դա չեմ պատմել նույնիսկ Ադգուր Ա.-ին ես նրան միայն ակնարկ եմ արել մարտի վեցն իմ կյանքի նշանակալի օր անվանել բայց ինձ հետ կատարված հոգեկան հեղաշրջման մանրամասները ես չբացահայտեցի ես հարմար բառ էլ չէի գտնի քեզ համար հագիվ թե կարողանամ բացատրել այդ պատճառով ավելի լավ է հակիրճ պատմեմ թե ինչ հետևանքներ եղան այդ հետևանքներն այս կերպ են հնչում – մարտի վեցից հետո ինձ համար միևնույնն էր ոչ թե լրիվ միևնույնն էր այդ բանը և երևի հնարավոր չէ նույնիսկ ինքնասպանները դրան չեն հասնում գուցե նրանց ավելի քան որևէ մեկի համար միևնույնը չէ ուստի ինքնասպան են լինում բայց ինձ համար ուրիշ կերպ էր միևնույնը ես գիտեի որ երբեք չեմ մեռնի իսկ այդ գիտակցումով ապրել պարզապես հնարավոր չէ ամեն ինչ արագորեն ձանձրացնում է իրական անմահությունը մարդու համար կլինեի ամենաձանր և անտանելի փորձությունը վրա հասած անմահությունն ապշեցրեց սպանեց ինձ մարտի վեցին նույն կարգի իրական բան էր արմատն այն բանի որ մեզանից ամեն մեկն իրեն աղոտ անմահ է զգում ճոճանակի տատանումը հավատի և անհավատության միջև սա է մարդու կյանքի էությունը և հենքը բայց այդ զգացումն իմ գիտակցության մակերևույթ դուրս եկավ և համոզմունք դարձավ – սկզբում ես երկար ժամանակ ընտելանում էի այն բանին որ դեպի անհայտություն իմ անմահ ընթացքի այդ զգացողությունը ծագում է հենց որ դու գիտակցում – զգում ես քո անմահությունը – ես բոլոր ապրածների ապրողների և նրանց ովքեր ապրելու են այսինքն դու կդառնաս կամ եղել ես ամեն հանդիպողի համար խեղճուկրակ անճոռնի թափառաշրջիկ որից մի վերստ հեռու է փչում մեզի ու կղկղանքի հոտը – այստեղից անողոք եզրակացություն պետք է անել պետք է բոլորին անխտիր սիրել և սիրել նրանց ինչպես ինքդ քեզ ոչ ավե-

լի ոչ պակաս սա հենց ակնարկն ու էությունն է մեծ պատվիրանի քանզի ոչ մի «ես» չկա այն մարդիկ են հորինել – բայց այդ իմացությունը ես սրտումս խորը թաքցրի այն չմեծացրի դրանից «կենսական փիլիսոփայություն» չբխեցրի այն ինձ ոչ մի ուրախություն չտվեց և չհանգեցրեց կամ էկզիստենցիալիստական սովը ես ենթարկվեցի նրան ինչպես բնության օրենքին ինչպես ենթարկվում էի ձգողականության օրենքին ես ամենքի նման էի ապրում որովհետև հասկացա որ այն գիտելիքը ոչինչ չի տալիս երկրային կյանքին այն երկրային կյանքին հարկավոր չէ եթե նույնիսկ հաղթանակ տանի և մարդիկ ամենուր պետք է ապրեն նույնքան հիմարաբար և անիմաստ ինչպես մինչ այդ էին ապրում միակ բանը – ես մեկընդմիջտ ազատվեցի բոլոր տեսակի վախերից ուստի պատերազմի ժամանակ խելագարության սահմանին հասած անվախի համարում ունեի ես երբեք ոչ ոքից և ոչնչից չեմ վախենում դրա համար էլ քո վախն իմ ծիծաղն էր հարուցում ես անտարբեր էի դրա հանդեպ և երբեք միսիթարության խոսք չէի գտնում գուցե եթե հարկ համարեի քեզ միսիթարել կգտնեի – Ադգուր Ա.-ն ուզում էր ազատվել բնազդներից և իր կենդանական մարմնական սկզբից որպեսզի միայն ոգին մնար ես գրեթե հասել էի դրան ես ապրում էի մի աշխարհում որտեղ նույն ինքը «հույս» բառն արդեն հավերժորեն ընկած էր իբրև ոչ ոքի պետք չեկող դիակ ինձ համար ամեն ինչ պարզ էր ես չէի հասկանում թե ինչու են մարդիկ ամեն ինչ բարդացնում և եթե ես երբեմն «մարդ» էի լինում ապա մոռացկոտության պատճառով այսպես կոչված սիրտս այսինքն նույն բնազդը հեռանում էր սառը բանականության հսկողությունից բայց դա ավելի վաղ էր – երբ մարդն ինքն իր հետ մենակ է մնում տարբեր բաներ է ասում, և ես այդ ամենն այնքան էլ լսել չէի ուզում, բայց, ինչ արած, ականջը լսում է, սիրտը՝ հիշում...

– Իսկ ես միշտ լսում եմ մորս նախազգուշացնող ծայրը: Ամեն գիշեր նա երազում ինձ մոտ է գալիս, բայց ոչինչ չի ասում, այլ նստում է իմ մահճակալի մոտ – նա գորշ շրջագգեստով է, որով պառկած էր դագաղում, նա խնդրել էր, որ իրեն հենց այդ զգեստով հուղարկավորեն, որը մի ժամանակ հայրս էր նվիրել,– և տխուր ինձ է նայում, բայց ոչինչ չի ասում, նույնիսկ չի կշտամբում, որ ես իրեն չեմ լսել և շարունակում եմ նարդի խաղալ: Ես ախր առանձնապես ոչ մի բան չեմ տարվում, դրա համար չէր ինձ կշտամբում՝ իմ տարվելու և պարտքերի համար, չնայած դրանք, հատ-

կապես երիտասարդ հասակում, եղել են, բայց այնքան աննշան, որ ես արագորեն տեղը հանում էի, և մայրս ստիպված չէր լինում շատ աշխատել, որպեսզի պարտքերս տա: Ասենք, ես նրան չէի էլ ասում, որ տարվել եմ, նա երկար ժամանակ չգիտեր, որ ես խաղում եմ: Բայց դա թաքցնելու բան չէ, հարևանուհիներից մեկն ասել էր մորս: Ես միշտ զգույշ էի և կարողանում էի ժամանակին կանգ առնել, փողն ինձ չի հետաքրքրում, բայց հենց այնպես խաղալն էլ հետաքրքիր չէ. երբ հակառակորդի համար միևնույնն է ինքը կհաղթի, թե կպարտվի, նա ամբողջ ուժով չի խաղում, դիսկի չի դիմում, և խաղը գորշ է ստացվում: Բայց ամենակարևորը, այդպիսի խաղով ես չեմ կարողանա իմանալ, թե ինձ վերուստ ինչ է տրված: Չէ՞ որ փողը բոլորիս համար փորձություն է, իսկ փողով խաղալը՝ ամենամեծ փորձությունը, մարդ մնալու ունակության ստուգում այնպիսի մեծ փորձությամբ, ինչպիսին փողն է: Սովորական խաղի ժամանակ բախտը բերում է թե ոչ՝ առանձնապես նշանակություն չունի, եթե դուք ձեր հակառակորդի հետ կյանքի և մահու պայքարի եք ելել: Բայց պատահում է նաև, որ մարդն անհայտ, անհասկանալի ընտրությամբ ուզում է գերազանցել այս մեկին, եթե նույնիսկ մյուս բոլորին առանց բացառության տանուլ է տալիս, և այդ ժամանակ ավելի կատաղի մարտ է ծավալվում, քան վիթխարի գումար խաղարկելիս: Այս առիթով ոչ ոք չի մտածում, իր կյանքին չի վերագրում, իսկ երբ խաղագումար է դրված, դու արդեն ամեն մի անգամ զառը զցում ես հատուկ տրամադրվածությամբ, դու արդեն Աստծուն աղերսում ես օգնել քեզ, և երբ այն դուրս չի գալիս, ինչ դու էիր մինչ այդ ուզում, դու հասկանում ես, որ երկինքը քեզ չի լսել, իսկ եթե լսել է, ապա չի կամեցել օգնել: Եվ սա ավելի վատ է. երբ չեն լսում, հույս կա, որ գոռալով կլսեցնես, իսկ երբ չեն ուզում լսել, ամեն մի հույս մեռնում է: Ինչհի, ինչ մեղք ես գործել, ինչ վատ բան ես արել, որ չես արժանացել մի այդպիսի հասարակ ցանկության իրագործման. որպեսզի զառը հերթական անգամ զցելիս դու-շեշ լինի, այլ ոչ թե այդ ոջլոտ, ծաղրական դու-եկը, ինչպես իրականում ստացվում է: Չէ՞ ու չէ, զառն իր ուզած դիրքն է ընդունում, իսկ ես արդեն ոչ թե Աստծուն եմ խնդրում, այլ զառին. նա Աստծուն է փոխարինել: Դիպվածն է կառավարում աշխարհը. այս մտքին ես իմ սեփական խելքով եմ հանգել: Այդ հետո եմ գրեթե կարդացել Էյնշտեյնի այն խոսքը, թե Աստված զառ չի զցում: Այո, չի զցում, բայց մենք ենք խաղում, նա մեզ խաղալ է

սովորեցրել: Ես երբեք փողի իշխանությանը չեմ տրվել, ինձ հաջողվել է ժամանակին կանգ առնել, համենայն դեպս, մինչև վերջերս ինձ այդպես էր թվում: Բայց ահա ես տեսնում եմ, իսկ շուկայում դա հնարավոր չէ չտեսնել,– առաջ ես ուրիշ բանով էի զբաղվում, նույնիսկ մի ժամանակ լավ փող ունեի, բայց պատերազմն ամբողջը քող ու փուչ արեց,– և ես տեսնում եմ, որ այսօր փողն ամեն ինչ է դարձել, և հանուն փողի շատ բանի են պատրաստ, նշանակություն չունի, թե ինչ գումար է, նույնիսկ մանրի համար կարող են մեծ չարագործություն անել: Ես հիշեցի այն, ինչն ինձ համար մինչև օրս արժանիք էի համարում՝ փոքր գումարով խաղալը, և ինքս ինձ հարցրի՝ արդյոք դա արժանիք է: Չէ որ երկնքի զիջողամտությունը, հաջողության արդարացի բաժանումը, իմ պատկերացմամբ, նշանակում է նաև գուցե ոչ շատ, բայց փող շահել, և այդ դեպքում իմ զգացած ուրախությունը մի՞թե շատ ավելի է փոքր խոշոր շահում ունենալուց: Հավանաբար՝ ոչ: Ավելին, իմ ուրախությունն ասես ոգեշնչում է ստացել ճակատագրիս հետ ունեցած վեճիս պատճառով: Մի՞թե բավական չէ մեկ հաստատումը, որ երկինքը բարեհաճ է քո հանդեպ, և հերթական շահումից հետո արի ու ընդմիշտ թող խաղը: Բայց ես շարունակում եմ խաղալ: Ուրեմն՝ ես ինձ մոլեգնեցնում եմ՝ շահախնդրությունս և ի ծնե մոլեգնությունս սքողելով բարձրագույն բառերով: Իբր թե ես ուզում եմ երկնքին համոզել, որ ինձ էլ է ինչ-որ բան հասնում, ուզում եմ պարզել՝ ինչո՞ւ են ինձ անընդհատ մերժում իմ բաժինն ինձ տալ: Պարզվեց, որ այդ բոլոր տարիներին երկինքն ասում էր՝ սա քոնը չէ, հույսդ կտրիր,– իսկ ես չէի լսում, չէի ուզում լսել: Ոչ թե նա չէր լսում ինձ, այլ ես չէի լսում նրան: Միշտ այդպես է՝ ուզում ենք, որ մեզ լսեն, իսկ ինքներս մոռնով խցել ենք ականջներս:

- Ահա դուք ասում եք զանգահարել կամ ցանկությամբ պետք եղած միավորը գցել մինչդեռ պետք է զանգել ոչ թե օտար քաղաք այլ օտար սիրտ և այդժամ դուրս կգա այն թիվը որը ձեզ կերջանկացնի չնայած մենք և դուք չենք հավատում երջանկությանը նախ ես ինքս երբեք չեմ հավատացել հնարովի բան եմ համարել բայց այժմ հասկանում եմ որ ես մի ժամանակ երջանիկ եմ եղել բայց չեմ հասկացել և չեմ գնահատել դա իսկ հետ դառնալ այլևս հնարավոր չէ Նաթելան ընդմիշտ է հեռացել նա պետք է գնար նա ասաց որ անցյալին վերադարձ չկա չխաբենք ինքներս մեզ ինձ մնում է քեզ հիշել և ես քեզ շնորհակալ եմ ես գիտեմ ես մի ժամանակ սիր-

ված եմ եղել իսկ դա կյանքում մի բան արժե և մայրս ինձ սիրում էր չնայած մենակ է թողել ոչինչ չասելով թե որքան սարսափելի ու միաժամանակ լավն է կյանքը նա չփորձեց ինձնից թաքցնել իր տառապանքը համենայն դեպս նա այնուամենայնիվ ինձ սիրում էր և նրա վերջին խոսքն էր ես քեզ մենակ եմ թողնում աղջիկս և դա ասվեց իմ ապագայի հանդեպ տագնապով և ուրիշ ոչինչ չասաց և ես երկար ժամանակ նրանից նեղացած էի բայց հիմար էի – Նաթելան միշտ ամեն բան ճիշտ էր անում նա վախենում էր ծերությունից և դա էլ է ճիշտ այլապես կյանքն իսկական չի լինի եթե դու ոչնչից չես վախենում եթե դու մորդ մոռացել ես մոռացել ես մեռնելու ժամանակ նրա քաշած ցավը սրա հետ հաշտվելն անհնար է հենց որ դու հաշտվես դու կմեռնես որպես մարդ ահա այսպես տառապելով կարելի է մարդ մնալ – իսկ ես գեղեցիկ հրաժեշտ տվեցի Ադգուր Ա.-ին ասելով որ ննջեցյալներն ուզում են որ իրենց մոռանան այդ պահին ինքս մոռանալով որ քանի դեռ ողջերը պատկանում են ողջերի ցեղին հանգուցյալներն առանց այդ էլ նրանց մեջ կապրեն և նույնիսկ մտածում էի այդպես գեղեցիկ ու հաստակաշի ավարտել այս ամբողջ պատմությունը – ես մատս կտանեմ նրա հարթ փայլատ փորի փոքր-ինչ անհարթ սպիի վրայով և Մադինան ամոթխած շուռ կտա երեսը և մի կողմ կնայի ծախ ձեռքը դնելով գլխի տակ իսկ աջով գրկում է ինձ ես նայում եմ սպիին որը քիչ բարձր է պորտից և կիսաշրջանաձև իջնում է ներքև նրա ամենաքաղցր ազդրամեջը և կհարցնեմ ճանաչում էր արդյոք նա Ադգուր Ա. անունով մեկին և նա կասի որ չի ճանաչել և մանր ձեռագրով գրոտած թղթերը որոնք փորձ էին շարունակելու Ադգուր Ա.-ին նրա կարճ և կամավոր ընդհատված կյանքը այժմ ես գիտեմ նրանք այդպես էլ չգրված կմնան սեղանի դարակում մինչև որ մի օր մեծ մաքրություն անելիս Մադինան դրանք չայրի այլ անպետք թղթերի հետ – ես ուզում էի նրան ընդմիշտ հրաժեշտ տալ աներկիմաստ ակնարկելով որ ես գրելը չեմ շարունակելու և սա կլինեի իմ պատմության բարոյախոսությունը գրելու ավելորդությունը և հանդիպման անհնարինությունը – նրան մոռանալ է պետք որովհետև իմ կյանքի բեռանը գումարվեց նրա կյանքի բեռը և ինձ հեշտ չէր լինի անհնար կլինեի միանգամից երկու կյանք տանել և ընդհանրապես մարդուն մի կյանքն էլ է շատ էլ չասած երկուսը իմ սիրտը չհերիքեց երկուսին Նաթելային և Մադինային բայց ես արդեն չէի ուզում որ Մադինան այն Մ.-ն լինեի և այդ պատճառով

իմ և Ադգուր Ա.-ի բարեկամությունը չկայացավ իմ մեղքով ես այլ կերպ էի ապրում այլ աշխարհում աշխարհը և կյանքը աներկյամաստ առանց անպետք հորինովի ենթադրությունների բացատրող փայլուն բանաձևերով և այդ բանաձևերի մեջ իմ «ես»-ը հուսալիորեն նշագծված էր այն բաղկացած էր գրեթե հավերժական և գրեթե անոչնչանալի ատոմներից դրանք կարելի էր չափել կշռել նույնիսկ տեսնել իսկ Ադգուր Ա.-ն ապրում էր այլ աշխարհում որին մշտապես սպառնում էին կործանումն ու քայքայումը ոչինչ հուսալի չկար ամեն բան հեղհեղուկ էր մշուշապատ և խաբուսիկ երկու այդքան տարբեր աշխարհ միակցելը հնարավոր չեղավ նույնիսկ այն բանից հետո երբ ես սեփական աչքովս համոզվեցի թե որքան փխրուն է մարդը ինչպես է նրան փշրում ու ջարդում մետաղը – բայց նա նաև անսովոր ուժեղ է ես շատ անգամ համոզվեցի որ նրան հնարավոր չէ հաղթել նրան կարելի է սպանել բայց հնարավոր չէ հաղթել թող որ սա ինչ-որ մեկն արդեն ասած լինի դա ինձ չի շփոթեցնում ես սովորել եմ հանրահայտ ճշմարտություններ ասելու խիզախությունը իմ դեպքում դա դժվար չէր չէ որ ես ընդամենը բացահայտում էի այն ինչը բնությունն ի սկզբանե ուներ իր մեջ մի խոսքով ես գրագող էի տիեզերքի հետ նույն նյութից ածանցված իմ բանականությունը թափանցում էր կառուցվածքներ որոնցից ինքս էի բաղկացած դա որոշ իմաստով սեփական պոչը կծող օձի նման է – բայց և Ադգուր Ա.-ն նույն ուղղությամբ էր ընթանում միայն թե չհասցրեց տեղ հասնել գուցե և հասցրեց և նրա վերջին շարժումը հնազանդություն էր նշանակում – այո-այո խոնարհություն ավելի լավ բառ չեմ գտնի և տվյալ դեպքում ահա թե ինչ էր հնազանդությունը Ադգուր Ա.-ն հաշտվել էր կյանքի հետ այն հարցում որ ինքը մարդ է և որպեսզի համոզվի որ ինքը մարդ է նա որոշեց իրեն ապացուցել որ մահկանացու է դա նրան հաջողվեց մահվան միջոցով միայն մահվան շնորհիվ մենք կարող ենք մարդ լինել մահն է մեզ մարդ դարձնում մարդ լինելու այլ եղանակ մենք չունենք նա համակերպվեց այն մտքին որ ինքը մարդ է այսինքն կրկնվելու և վերարտադրվելու հատկություն ունի և այստեղ կարծես թե հակասություն կա համենայն դեպս թվաբանության մեջ անհուսորեն լուված ամեն մի տիրացու «երկու անգամ երկու հավասար է չորսի» անվիճելի ձևակերպմամբ և պատկերացում չունենալով բարձրագույն մաթեմատիկայի մասին և չկասկածելով անգամ երկնագույն աչքով վերամբարձորեն և դպրոցական ու-

սուցչի խստությամբ խրատական կասի որ ամեն բան այդքան էլ հարթ չէ ինչպես երգվում է և հաղթականորեն ցույց կտա իմաստային անհամապատասխանության այստեղ և այստեղ գտնվող խորաբաց փոսերը բայց մենք մեռելածին չորսիրտ ու մանրախնդիր մարդուն մեր գրպանը կդնենք և նրա քիթը կտորոենք քանզի անհատ Ադգուր Ա.-ն մահկանացու է չնայած իրականում նա մահկանացու չէ բայց կարծում է թե մահկանացու է ներենք նրա այդ մռայլությունը առկա է կրկին միանգամայն թույլատրելի անհատական մոլորությունը մի խոսքով նա չուզեց իր ձեռագիրն ունենալ ավելորդ և անկարևոր աշխատանք համարեց – և իսկույն մի ոստյուն դեպի այնտեղ, որ մեռելածին չորսիրտն ու մանրախնդիրը երազում անգամ չի տեսել. գիտակցելով իր անհատական մահկանացու լինելը այն բանին զուգընթաց, որ դու նույն խմորից ես, ինչ որ մյուսները, դու անմահություն ես ձեռք բերում: Բարեկամներ, գուցե մշուշոտ եմ արտահայտվում, բայց ես չգտա ուրիշ բառեր ուրիշ՝ ոչ մշուշոտ հերթականությամբ: Կարծում եմ՝ միտք չունի դրանք որոնել, կարևորը զգացումն է, իսկ այն ոչ միշտ, ավելի ճիշտ՝ միշտ էլ հաղորդելն անհնար է, իսկ արտահայտելու դեպքում արդեն իսկ սուտ է: Ես և Ադգուր Ա.-ն պատերազմում չէինք կարող հանդիպել, ես Արևելյան ռազմաճակատում էի, իսկ նա՝ Գումրսթայի: Նա զոհվեց: Ուզում եմ հավատալ, որ նրա մահն արագ է վրա հասել: Համենայն դեպս, ինչ որ ինձ հայտնի է, վկայում է, որ այդպես էլ եղել է. երբ գնդակը գլխին է կաչում, մահը վայրկենաբար է վրա հասնում: Քեզ անջատել են՝ ինչպես լույսն են անջատում, և մութը գալիս է բոլոր կողմերից – այսպես է պատկերացվում, չնայած ինձ թվում է, որ ավելի կարևոր է շրջակա աշխարհի ընկղմումը մութի մեջ. մի ակնթարթում ամեն ինչ անհետանում է. գուցե դա ոչ թե իմ մահն է, այլ աշխարհինը: Չլուծված խնդրի մթությունից դուրս է լողում անսահմանությունը – դատողությունը տանում է դեպի անապացույց, բայց թույլ սրտին այնքան ցանկալի մխիթարության անընդգրկելի հեռուն: Խաղաղ կյանքում ես ոչ ոքի միանգամից մեռնել չեմ ցանկանում, համենայն դեպս չեմ հավատում, որ այն լավագույնն է, քանզի չի գիտակցվում և անցավ է (որքանի՞վ է դա ճիշտ, ի՞նչ գիտե, թե գիտակցությունն ու ցավն այդ շեմին ինչպես են դրսևորվում և ի՞նչ արագություն ունեն), և իզուր չէ, որ Կեսարն այդպիսի մահ էր երազում: Իսկ ահա պատերազմում պետք է արագ մեռնել, միանգամից, որպեսզի ընկերների համար բեռ չդառնաս:

Նա սպանվեց գլխին կպած գնդակով: Գիտե՞ք, թե ինչ հզորություն ունի ինքնաձիգի գնդակը. դա պետք է քո կաշվի վրա զգաս: Ես ձեռքից վիրավորվեցի. ինքներդ եք տեսնում, որ ձախ ձեռքս լիովին ճիշտ դիրք չունի, – և ես հարվածից հոլի նման տեղում պտտվեցի և մի քանի մետր հետ շարտվեցի: Իսկ այս դեպքում դիպուկահարի գնդակ էր, որը և՛ ավելի խոշոր է, և՛ հզոր: Գնդակները գեղեցիկ են, երբ ավիդ մեջ են՝ լցված դրանց մեջ թաքնված մահվան հասուն ծանրությամբ: Վայելչագեղ լինելով՝ դրանք հարուցում են հրթիռի մինչթռիչքային լարվածության զգացում, հրթիռ, որը մեկ-երկու րոպեից պետք է երկինք սլանա: Եվ դրանցից մեկը, պատրաստված լինելով մի ինչ-որ ռազմական գործարանում և գուցեև տարիներ շարունակ ծուլորեն դադար առնելով, մի օր ինչ-որ մեկի ձեռքով փամփշտանոց է ուղարկվում և սպանում իմ ընկերոջը: Ասենք, նա իմ ընկերը չէր, մենք պարզապես չհասցրինք ընկերություն անել կամ տարբեր, անհամատեղելի շաղախից էինք: Չնայած ես, նրա տետրի շնորհիվ, ինչպես նաև իմ անբացատրելի ցանկությամբ տեսնում եմ, որ մեր հոգիները սերտ հարազատություն ունեին, մեր արմատային համակարգերը հին Ժամանակ միահյուսվել, սերտաճել էին: Բայց ճյուղերը, դեպի լույս միտվող ձգտմամբ... խեղճիս զոռ չտամ, կարճ ասեմ. մենք այդպես էլ չընկերացանք, չսիրեցինք իրար: Ադգուր Ա.-ն ունի մթության, խավարի իր տեսությունը: Նա ասում էր. «Բայց չէ՞ որ այնտեղ համատարած մթություն է, խավար: Երևակայության բացակայությունը, – մարդը չէր կարող պատկերացնել հո՞ծ մթությունը, ոչինչը, – ծնեց անմահության գաղափարը»: Եվ ահա խավարից, ուր նա հեռացավ, ես անընդհատ լսում եմ նրա ծայնը: Ես չեմ հասկանում, թե նա ինչ է խոսում, բայց խղճում եմ նրան, ավելի շուտ՝ չեմ խղճում. նա ինքն ընտրեց իր մահը, և իմ խղճահարությունը ծիծաղելի է և ավելորդ: Բայց ես ցավ եմ ապրում. դուք չգիտե՞ք, թե ինչու...

Նա որոշեց քայլել ծովափով «Պինգվինի», «Նարթայի», «Հակոբի մոտ»-ի կողքով... Գորշ կապարագույն ծովը կես ուժով, բայց այդ ամայի լռության մեջ բավականաչափ աղմուկով ավիին էր խփվում: Ճայերը, կողերը քամուն դեմ անելով, սավառնում էին դոնդողի նման հույլ ալիքների վերևում: Սառն անձրևը թափվում էր անաղմուկ, բարակ շիթերով:

Բեսլանն այս ամենի մեջ մի ինչ-որ ծանոթ, նույնիսկ հարազատ բան էր

տեսնում, կարծես իր հետ էր պատահել. գուցե երագում, գուցե հեռավոր անցած կյանքում, բայց հաստատ պատահել էր: Ճիշտ այսպես նա քայլում էր ծովափով՝ շամփրվելով սառը քամուց և ողողվելով բարակաշիթ անձրևով: Եվ այն ժամանակ էլ նույն հոտն էր առնում՝ ծովի, ձկան, խավար ջրապտույտի... Որտեղի՞ց և ո՞ր էր նա գնում, ո՞ր էր շտապում. չէր հիշում: Բայց հիշում էր, որ հարազատ տան հարմարավետությունն ու ջերմությունը չէին նրան հրապուրում: Ավելի շուտ շտապում էր հետ չմնալ անձրևից ու քամուց, քայլել-անցնել դրանց շամփրող հրապարակը, և հասնել ոչ մի տեղ, որտեղ քեզ իբր սպասում են, այլ այսպես՝ միշտ, անձրևի տակ և քամու դեմ: Մեկը մյուսի կողքով:

Կիսակառույց նավահանգստում թափված էին հսկայական գերաններ, անտառի մեռյալ հիշատակը, բեռնելու պատրաստ ընկած էր նավամատույցում:

«Հակոբի մոտ» սրճարանն ամայի է, հզոր կիպարիսների տակի սեղանները որբի նման են: Տերևների մեջ խոշոր կաթիլ դառնալով, անձրևը շրմփում է դրանց վրա և փշուր-փշուր լինում: Կաթիլային աշխարհը վերածվում է մանր բեկորների: Կառանատեղին պատրաստված է բարակ, նեղ, տեղ-տեղ փտած ու այդ պատճառով կոտրտած տախտակներով, կմախքածև հենասյուները ծով են մտնում:

Ընդհատ, շառաչող քամուց քշվելով նա հասավ կառանատեղիի վերջին: Կելասուրը, Սինոպը, Տուրքազան, սրանց վրա հակված անտառապատ բլուրները տեսանելի են անձրևի առաջացրած ապակու միջով. անձրևը թափվում է այս ամենի և Բեսլանի միջև ինչպես հեռավոր սիրելի ամի:

Վերադարձը ձգձգվեց, և ցուրտը նրա հոգին մտավ, ջերմությունը քայլ առ քայլ սկսեց լքել նրան, անընդհատ, անկանգ հեռանալ:

Սեփական սիրտը երկու մասի՝ ողջ ու մեռածի բաժանել նրան չհաջողվեց:

Պետք էր հանգույց կապել և շարունակել ապրել: Ինչո՞ւ շարունակել, ո՞ր, և որտե՞ղ է վերջանում այն: Գուցե երբեք չի՞ վերջանում, և անձրևը ճիշտ այսպես տեղալու է՝ բաժանելով հեռավոր, սիրելի ամից:

II

ադգուր ա.-ի տետրից

վեպից դուրս մնացած գլուխներ

ստոգբրեգի մահը

Ալխասը, առավոտյան ցուլը բերելով, նրան անվանեց «Այն ափից»: Գումարտակի խելքի տոպրակ զինվորներից մեկն իսկույն մականունը փոխեց սկանդինավյան ձևով՝ Ստոգբրեգ⁵: Ալխասը սովորաբար բարձրից էր նայում ամեն տեսակի ակնոցավոր խելոքներին, բայց անունը նրան դուր եկավ, և նա ասաց. «Ինչ արած, թող Ստոգբրեգ լինի»:

Նա այդ անունը կատակով դրեց, իմանալով, որ միևնույնն է, ոչ ոք չի հավատա: Բայց ոչ ոքի առանձնապես չէր հուզում ցուլի բնակության վայրը՝ Էշերայի ափն է, որտեղ մենք էինք պաշտպանություն բռնել, թե՛ Աչադարայի, որը գրավել էին վրացիները: Նոր անվան շնորհիվ ցուլն ասես տեղացի չլիներ, այլ հեռավոր հյուսիսային գրանցում ունենար, ուստի նրա ծագման հանդեպ մեր ամբողջ անտարբերությամբ հանդերձ կարծես թե մի քիչ նվազեցնում էր մեր մեղքը՝ եթե մեր ափից լիներ:

Ալխասը մի պատմություն էր պատմում. տեսնեմ մի վիթխարի ցուլ է գետն անցնում: Սկզբում կարծեցի, թե տանկ է, բայց շատ անաղմուկ էր շարժվում, և ես մտածեցի՝ գուցե ռուսները վրացիներին ինչ-որ նոր զենք են հրամցրել, այն էլ երկփողանի. իսկ հետո տեսա, որ ցուլ է և այն կողմում լավ չի զգում:

Ալխասը ճիպոտով էր քշում ցուլը, և վերջինս անմոռնչ առաջ էր գնում: Քայլում էր ծուլորեն, դատապարտվածի պես, ինչպես բոլոր ամորձատաժ վարող եզները: Բավական էր, որ Ալխասը վեր բարձրացներ ճիպոտը, եզն աչքի ծայրով տեսնելով ահեղ առկայծումը, չուզենալով արագացնում էր քայլը, ճիշտ այնքան, որպեսզի Ալխասը չուզենար դադել նրա մեջքը:

Ցուլը փոքր-ինչ շփոթում էր դաշտային աշխատանքը և նախկին տիրոջ բնավորությունն իսկական ճանապարհորդության նշանակության հետ. այն՝ նշանակությունը, ներկայիս տիրոջն ավելի անհամբեր էր դարձնում, բայց հոգնությունը, թե գեղջկական հիշողությունն Ալխասին հեռու էին պահում շեշտակի, վճռական շարժումներից:

5. Ստոգբրեգ – ռուս. С того берега-ի կրճատ ձևը (ծ.թ.)

Յուլը կապեցին դպրոցի առջևի ծառից: Ծառը մեծ էր, ճյուղերը՝ երկինք մխրճած, բայց ցուլն էլ ի զարմանս բոլորի լայնությամբ և թափով հաջողությամբ մրցակցում էր նրա հետ: Դպրոցում մենք էինք ապրում՝ մեր գումարտակը, խայտաբղետ և հագուստով, և վարքագծով, և սպառազինությամբ: Ընդամենը մեկ ամիս է, որ պատերազմ է, և այն դեռևս չի հղկել ու կոկել մեր կերպարը: Մեզնից ամենատարօրինակն, անշուշտ, Ալխասն էր: Նա այսպես է հանդերձավորված. բարձր, ծնկներին հասնող փափուկ ներբանով կաշվե սապոգներ, գլխին՝ սև, փնթի կապած բաշլուղ, փղոսկրե փամփշտակալով չերքեզկա: Ալխասը բարուրված է,– այլ կերպ չես ասի,– գնդացրի ժապավենի մի քանի շերտով. դրանք օձի նման փաթաթվել են նրա իրանին: Եվ Ալխասի հպարտությունը՝ գնդացիրը, նրա երկար և ուրախալի հոգացողության առարկան է. նա նուրբ է վարվում այդ զենքի հետ՝ ինչպես մայրը՝ երեխաների:

Նրանք՝ գնդացիրն ու Ալխասը, համարյա նույն հասակն ունեն, մենք նրանց երկվորյակ եղբայր ենք կոչում:

Ստոգբրեզի ճակատագիրն առանձին տարածայնություն չէր հարուցում. պետք է մորթել, ավելի լավ է՝ շուտափույթ, հանկարծ տները կհայտնվի: Ամեն ինչից երևում է, որ ցուլն այս կողմերից է, կամ արխազի է, կամ հայի:

Ալխասն իր վարկածի նոր մանրամասներ ներկայացրեց. իբր այն ափին ցուլի տեր մեգրելը հոգեցունց ծայնով հետ էր կանչում իր հարազատ գոմը, բայց ինքը չէր համարձակվում նրա հետևից ջուրը մտնել: Յուլն, իբր, ականջն էլ չի շարժել, և ուղիղ Ալխասի մոտ է եկել: Ալխասը նույնիսկ ասել է անունը, որով անմխիթար մեգրելը կանչում էր նրան՝ Զգուրի: Մենք կանչեցինք «Զգուրի, Զգուրի»– բայց ցուլն այդպես էլ ականջը չշարժեց:

Ալխասն ասաց, որ Ստոգբրեզը դեռ ուշքի չի եկել. պետք է հարմարվի. լողալով, նավի նման, անցել է Գումըսթան, և ականջներում անընդհատ հնչում է անվճռական տիրոջ ծայնը, իսկ կողերը հաստ, աշխատանքային կաշվի միջով դեռ շարունակում են զգալ նրա քնքուշ, կոշտուկավոր ձեռքերը: Յուլի ներսը վառվում է: Գումըսթայի սառը ջուրը և ռազմաճակատի գծի հանդուգն ճեղքումը նրա ճակատագիրը սոսկ ավելի պարզ ու անշրջելի դարձրին, բայց ոչ մի աստիճան չսառեցրին: Ասենք՝ հին անունը նրա համար ատելի է, իսկ նորին դեռ չի ընտելացել:

Ալխասի այդ ասածից հետո մենք նրան և Ստոգբրեգին այլ աչքերով տեսանք, իսկ եթե ոչ, ապա աղոտ շարժում դեպի նրանց կերպարների մեղմումը մեր սրտերում այնուամենայնիվ տեղի ունեցավ, սա հաստատ է: Յուլն այժմ այնքան էլ վիթխարի ու հզոր չէր թվում, նա ծեր, հոգնած ցուլ էր, որ իր կյանքի ընթացքում շատ արտեր է վարել: Այրող արևի տակ և տիրոջ գոչյունի ներքո համաչափ քաշել է գութանը՝ քայլելով ակոսի՝ երկրի մարմնի վրայի կտրտված, սև վերքի միջով: Ալխասը նույնպես մեր աչքի առջև փափկեց, համարյա պլաստիլին դարձավ. փամփուշտի նման լցված գիշատիչ հայացքը, մարմինը՝ կոշտուկավոր ձեռքերին և աշխատանքային մաշկին վերաբերող սրտառուչ բառերից հետո,– ավելի պակաս կոշտ ու անզիջում թվացին, քան մինչ այդ: Նույնիսկ գնդացիրը նահանջեց դեպի ստվերը, աննկատ դարձավ:

Բայց մեզ հանկարծակի տիրած թուլամորթությունը երկար չտևեց: «Դե, ի՞նչ եք նմնվում»,– որոտաց Ալխասն ու մեզ միանգամից դուրս բերեց քաղցր մոռացությունից:

Պարզ դարձավ, որ Ալխասը մեզ խայթում էր: Մեզ թվում էր, թե նա այժմ վիրավորանքից կարտասվի, որ մենք այդքան նրբազգաց ենք: «Կույրեր– գոռում էր Ալխասը:– Թշնամին բռնաբարում է ձեր կանանց ու քույրերին, սպանում է եղբայրներին, իսկ դուք անասուն եք խղճում»:

Ժամանակն էր գործի անցնել: Ոմանք առաջարկում էին ցուլն սպանել գլխին գնդակ արձակելով, բայց մեծ մասը ցանկացավ անել այնպես, ինչպես կարգն է՝ գետնի վրա և դանակով:

Ես մոռացա հիշատակել դաշույնը, որն արծաթե պատյանով կախված էր Ալխասի գոտկատեղին: Գնդացրի ժապավենների կողքին այն միայնակ և զուսպ– հպարտ էր դիտվում: Եվ այսպես, Ալխասը հանեց դաշույնը և մոտեցավ ցուլին: Բայց ցուլը...

Մի խոսքով, հետո մի քանի պնդակազմ տղաներ փորձեցին գետնին տապալել նրան, բայց ուր..., որտեղից: Կենդանի մսի կույտը, նախազգալով կործանումը, մոլեգնել էր մեր շփոթահար ձեռքերում: Մենք նման էինք այն անմիտներին, ովքեր մտադրվելով կանգնեցնել նավի հզոր ընթացքը, կայմն էին բռնել:

Մահառաջի պարզությամբ և արագ ըմբռնմամբ Ստոգբրեգը միմյան-

ցից հեռացրեց ոտքերը և ամբողջ ուժով հողը խրեց: Մեր ճնշումից նա ընդամենը մի փոքր ճոճվում էր, ճոճվում՝ անվտանգ սահմանում և պահպանում ճկուն կայունությունը:

Նրա հսկայական մսագնդում այնքան անզուսպ հզորություն և կյանքի կույր ծարավ կար, որ ես մի պահ ապշեցի: Ինձ թվաց, թե մենք ինչ-որ մի վատ, անթույլատրելի բան ենք անում: Եվ ցույն իր վայրենի վախով, որն ալիք առ ալիք վազում էր նրա մեջքով, ուզում էր մեզ ասել այդ բանը, բայց մենք չէինք հասկանում:

Միտքը հազիվ էր առկայծել, դեռ չէր հասցրել տիրել: Յուլի տաք մարմինը և նրա տխմար համառությունն իմ մեջ ոչ պակաս համառություն էին հարուցում, ցանկություն՝ ճնշել նրա կյանքի հույժ բացահայտ, անպատշաճ ձգտումը:

Ստոգբրեգը բառաչում էր իր լեզվով. և նրա հոտն էլ կենդանական էր՝ թանձր, տոխի և շատ կենդանի: Նա ճիգով, ասես չուզենալով էր բառաչում, հազիվիհազ, բառաչում էր՝ ինչպես կարող է բառաչել իր ամբողջ հույսը կորցրած, բայց սովորույթի ուժով, այժմ արդեն լոկ իր համար իր սրտաճմլիկ ձայնն արձակող էակը: Իմ ափերն զգում էին նրա տաք և փափուկ մարմինը, և ես ականա հետ էի քաշում ձեռքերս. հպումը տհաճ էր և ասես այրում էր:

Ստոգբրեգը միզեց մեր ոտքերի տակ: Շեշտակի հոտով փրփրուն դեղին հեղուկը, հարելով փոշին, ներծծվում էր հողի մեջ:

Մեզ սկսեցին ծաղրուծանակի ենթարկել. տեղն է ձեզ, փինաչիներ, տեղին էլ ձեզ վրա միզեց ցույլ:

Ինչ-որ մեկը քաշեց ինքնաձիգի փակաղակը և շուրջներս վազվզելով սկսեց բղավել, որ մենք հետ գնանք և նրան ճանապարհ տանք:

Բայց այդ ամենը չէր կարող մեզ հանդարտեցնել. լարածի նման մենք շարունակում էինք պայքարել ցուլի դեմ: Վերջապես մենք նրան գետնին տապալեցինք. նա շարունակ ցնցվում էր, փորձում վեր կենալ, լեզուն հանած բառաչում էր, բայց իզուր. նրա բախտը վճռված էր:

Ալխասի ձեռքում պսպղաց սուր դաշույնը, և արյունը կլկլաց ցուլի կուկորդում՝ մինչ այդ մի պահ մերկացնելով սպիտակաթույր կոճիկը: Հետո արյունը գոլորշի արձակող լճակով հոսեց Ստոգբրեգի տակ...

Շուտով տղաները ցուլը քերթեցին: Նրանից մնաց լոկ մի բլուր մշակված թարմ միս. դեռ որոշ ժամանակ բլուրը շնչում էր. այն մերթընդմերթ դողդողում էր կյանքի աստիճանաբար թուլացող արծազանքից:

Իսկ Ստոգբրեգի խոշորաչվի ու տարակուսած գլուխն ընկած էր ծառի տակ...

մինաշնը

Ճանապարհին Բեսլանը հիշեց այն ամենը, ինչ լսել էր Մինաշչի մասին, կամ ինքն էր վկա եղել:

Մինաշչի որդին անհետ կորել էր դեռևս այն՝ մեծ պատերազմում: Մայրը համապատասխան նամակ էր ստացել, բայց չէր հավատացել, չնայած ստիպել էր Մախյալին, որը դեռ փոքր տղա էր, վերջերս էր սկսել փոստատար աշխատել, երեք անգամ կարդալ նամակը: Չէ՞ որ նամակում ասվում էր, որ նրա որդին ընդամենն անհետ կորել է, այսինքն՝ անհայտ է նրա գտնվելու վայրը, բայց բառ անգամ չկար, որ նա կամ լազարեթում է վերքերից մահացել կամ էլ հերոսաբար զոհվել ռազմի դաշտում: Եվ նա սպասում էր որդուն: Այդ օրից ավելի քան հիսուն տարի էր անցել, բայց նրա հույսը չէր պակասում, տարիների հետ այն միայն աճում ու ամրանում էր:

Երևի այդ երկար սպասումը մարդու համար իզուր չի անցնում, առավել ևս, որ սպասում ես նրան, ով շատ տարիներ առաջ երազի նման հավել է, ում ոսկորները վաղուց կերել է հողը: Գուցե այս ամենն էր պատճառը, որ Մինաշչը մի փոքր տարօրինակություն ուներ:

Այսպես, եթե որևէ մեկը նրան ասեր, որ դարձյալ պատերազմ է պայթել, և բոլոր տղամարդկանց տանելու են, նա աշխատում էր ամեն կերպ սիրաշահել ուրախալի լուրը բերող հյուրին. իսկույն սեղան էր գցում, հանում էր իր նշանավոր ճաճան⁶ շրջագգեստի ծայրով սրբելով կողքի փոշին հյուրի առջև էր դնում սպասումից հալումաշ եղած թունդ օղու շիշը:

Ով գիտե, միգուցե Մինաշչը հույս ուներ, որ, ինչպես կրակը կրակով են հանգցնում, այնպես էլ մյուս պատերազմը կվերադարձնի իր որդուն, որին առաջինն էր տարել:

Մինաշչն ապրում էր գյուղից հեռու, և շատ քչերն էին անհարկի նրա տուն մտնում: Նրանք հիմնականում փայտահատներ էին, անտառապահներ, որսորդներ: Ճիշտ է, ամեն ամիս իր հնամաշ հեծանվով գալիս էր

6. Ճաճա – տնական օղի (ծ.թ.)

Մախյալ փոստատարը, թռչակն էր բերում: Միայն նա էլ պատմում էր պանակին, թե այս անգամ մտքներին ինչ են դրել տղամարդիկ:

Բայց Մախյալն էլ առանձնապես չէր խորանում, ըստ էության բան չէր ասում, ակնարկներով էր խոսում՝ իբր, շուտով արական ամբողջ ցեղը սրի կքաշվի, բայց թե երբ՝ չէր ճշտում: Պառավի ձեռքը տալով յուզոտ, ճմռած ռուբլիները, նա դատարկում էր իրեն հասանելիք մի բաժակ ճաճան, հետո նստում էր հեծանիվն ու մեկնում:

Մախյալը Մինաշին վերջինն էր այցելում՝ արդեն գյուղում շրջելուց և ում որ հասնում է թռչակը բաժանելուց հետո. և ամենուր նրան հերթապահ բաժակն էր սպասում: Երբ խմածին գումարվում էր Մինաշի ամենաթունդ ճաճան, Մախյալն իսկույն հարբում էր: Դարպասից դուրս կգար, մի քանի մետր կքշեր, բայց հանկարծ կիջներ հեծանվից և կողքով կքայլեր՝ բարկացած փնթփնթալով. «Այ թե կամակորն է...»:

Մինաշչը չէր հասկանում՝ ճաճան է կամակոր, թե հեծանիվն է չարաճճիություն անում, և հոգու խորքում ուրախանում էր, որ Մախյալը դարձյալ ստիպված է ոտքով գնալ, որովհետև նա այս անգամ էլ նրան չտվեց խոստացած «կարմիրները», շրջանցեց:

«Կարմիրների» պատմությունը հետևյալն էր:

Սովորաբար Մախյալը նրան յուզոտ ու քրքրված ռուբլիանոցներ էր տալիս, իսկ Մինաշչը խնդրում էր «կարմիրները», որոնց վրա պատկերված էր ճաղատ Լենինը: Մախյալը խոստանում էր, բայց ոչ մի անգամ խոստումը չկատարեց: Երբ ճաճան արձակում էր նրա լեզուն, նա հարազատ հեծանվով էր երդվում, որ մյուս անգամ անպատճառ նրան կհանձնի ճաղատալու թղթադրամները: Բայց հաջորդ անգամ նույնպես յուզոտ ռուբլիներն էր առաջարկում:

Այդ պատճառով Մինաշչը չէր հավատում Մախյալի դատարկաբանությանը, թե իբր շուտով պատերազմ է լինելու, չնայած նրանից հետո մի քանի օր անցկացնում էր մոտեցող աղետի ահեղ քայլքի սպասումով: Հաճախ էր մայրամուտն արնագույն-կարմիր լինում, ինչպես այն պատերազմի նախօրյակին, բայց առավոտյան ոչինչ չէր կատարվում, ամեն ինչ սովորական ընթացքով էր գնում:

Թռչակն ստանալու հաջորդ օրը Մինաշչն ուղևորվում էր տնից մի քանի կիլոմետր հեռու գտնվող խանութ: Գնում էր հաճելի հոտով օճառ, եր-

բեմն, ճիշտ է՝ հազվադեպ, սիրտ էր անում տղամարդու օժանելիք առնել:

Հաստիկ վաճառողուհին, տեսնելով Մինաշչին, ունքերն էր կիտում: Մինաշչը ճիշտ որ անտանելի էր: Նա հարցեր էր տալիս բոլոր ապրանքների մասին՝ որն ինչ արժե, ինչի համար է նախատեսված, որտեղից է բերված, խնդրում էր թույլ տալ, որ մատով շոշափի: Ծանրամարմին, դանդաղաշարժ վաճառողուհին լուռ կատարում էր նրա բոլոր խնդրանքները: Իսկ Մինաշչն անվրդով նայում էր ապրանքները, շոյում, շուռումուռ տալիս, երբեմն նաև հոտոտում:

Բավարարելով իր ծերունական հետաքրքրասիրությունը՝ նա օճառ էր առնում և վճարում աղտոտ, շատ բան տեսած ուրբով: Հետո հաշվում էր մանրը և փնթփնթալով «Այս ինչ գներ են», դուրս էր գալիս խանութից՝ հենվելով փայտին, որը երբեմն-երբեմն կարճացնում էր՝ ավելորդ մասը կտրելով գրչահատով,– փայտը տարեցտարի երկարում էր:

Հաղթանակի օրն էին նշում: Բեսլանի դասարանի պիոներջոկատավարն արտակարգ աշխույժ և նախաձեռնող մի պատիկ աղջիկ էր: Հենց նա էլ մտածեց ամենքից մոռացված Մինաշչին շնորհավորել տոնի առթիվ: Մանավանդ այդ ժամանակ արդեն գիրք էր լույս տեսել: «Մեծ պատերազմի առանց բացառության բոլոր մասնակիցները» ինքնավստահ ասվում էր առաջաբանում:

Հերթական 1962-րդ հատորն էր:

Կարմիր խշխշան փողկապներով, տանելով սև կաշեպատ և մեծ ոսկե տառերով կազմի վրա գրված մեծադիր գիրքը, նրանք կեսօրին ներկայացան Մինաշչին: Զոկատավարուհին, շրթների թանձր շերտը շրթունքին, բարձր կրունկների շնորհիվ փոքր-ինչ նրանցից հասակով լինելով, առջևից էր քայլում պիոներջոկատավարի իր ամուր քայլքով:

Երկնքից կուրացուցիչ լույսով գահավիժում էր արևը...

Երբ ջոկատավարն ավարտեց ճառը. «Հայրենիքի Փառապանծ Որդին...», «Հետ Մղեց Դաժան Թշնամուն...», «Ում Անունը ԵՎ Ում Սխրանքը Երբեք Չեն Մոռացվի...»,– գիրքը դրեցին Մինաշչի առաջ: 1993-րդ էջում, որտեղ հիշատակվում էին մարտի վեցի կեսօրին զոհվածները և անհետ կորածները, մանր, հազվի նշմարելի տառերով գրված էր նրա որդու մասին:

Մինաշչը դողացող մատներով շոշափեց այդ կարճառոտ, խակ ֆրագը՝ ասես հուսալով զգալ, թե ողջ է արդյոք նա, թե մեռած:

Սակայն թուղթը լռում էր: Ասես անտանելի ցրտից կույզ եկած տառերը միայնակ ու կորսված սփռված էին թերթի լայն սպիտակության վրա:

Բեսլանի վերնաշապկի օսլայած օձիքը կոշտ սեղմում էր կզակը. տղայի փոքրիկ սիրտը սեղմվեց՝ զգալով պառավ կնոջ ցավը: Գուցեն զգալը շատ բարձրագույն ասվեց. նա լոկ աչքի պոչով նրան տեսավ և իսկույն վախեցած փախցրեց հայացքը. ախր շատ մեծ էր այդ ցավը:

Այժմ Բեսլանը և Ջոնը՝ անհոգ մի դանդալուշ իրենց գումարտակից, գնում էին պառավի մոտ:

Երբ նրանք թողեցին առաջին պաշտպանական բնագիծը,– այլ ելք չկար, և հետ քաշվեցին դեպի երկրորդը, քսանից ավելի տուն հայտնվեց վրացիների ձեռքում: Համընդհանուր իրարանցման պահին պառավին ոչ ոք չհիշեց, իսկ մոտիկ հարևան, որը կհոգար նրա հոգսը, չկար:

Եթե նա վրացիների ձեռքն ընկներ, նրանք կշեփորեին, որ աբխազները խուճապահար փախչում են՝ թողնելով իրենց ծերերին:

Մթության մեջ նրանք տեսան Մինաշչի ակուսաքյան: Կողքը՝ փոքրիկ ամաճուրթայում աղոտ լույս էր վառվում:

Մինաշչն անկյունում ամաններն էր հավաքում: Պատից կախված էր նավթի լամպը. հոսանքն արդեն անջատել էին, և այն հազիվ էր լուսավորում շինությունը:

– Ո՞վ է,– վախով հարցրեց Մինաշչը:

– Մի վախենա, մերոնցից ենք,– պատասխանեց Բեսլանը:

Մինաշչը պահարանից հեռացավ և մոտեցավ Բեսլանին: Որոշ ժամանակ նրան էր նայում, ուսումնասիրում էր:

Նա ավելի է փոքրացել, մտածեց Բեսլանը:

– Քեզ չճանաչեցի, նան, ղմ թողը կլինես:

– Կադըրի:

– Ա՛-ա, Թարսխանի թոռն ես, ասում ես: Նրան այդպես ես էի կոչում՝ մահից մոռացվածս, նան: Տա՛ Աստված այնքան ապրես, նան, մինչև որ նա այն աշխարհից վերադառնա...

- Այստեղ մնալը վտանգավոր է, Մինաչ, պատրաստվիր...
- Ինչ է պատահել, նան, ինչո՞ւ ես պետք է իմ տնից գնամ:
- Պատերազմ է...

Մինաչն անվստահ Բեալանին նայեց:

- Դիհդա⁷, ինչ եմ լսում: Ուրեմն ստախոս Մախյալը չէր ստում: Վերջին օրերին էլ կրակոցներ էին լսվում, ինքնաթիռներն էլ ցածր էին թռչում, քիչ մնաց բակի տանձենու կատարին կաշեին: Իսկ ինչ թնդյուն էին արձակում, Աստված փրկի: Սիրտս մարեց, դա լավ նշան չի, բայց որ պատերազմ է՝ մտքովս չէր անցնում...

- Անհրաժեշտ բաները հավաքիր ու գնանք:

Մինաչը մտածմունքի մեջ ընկավ՝ չիմանալով ինչ անել: Հետո որոշեց ու ասաց.

- Նան, ես էսօր-էգուց կմեռնեմ, միտք ունի՞ ինձ հետ գլուխ դնել... Գուցե ես մնամ...

- Տես, պարզվում է՝ պառավը խելքը թոցրել է,– զարմացավ Ջոնը:

Մինաչը նրա ասածը չհասկացավ, բայց տոնից կռահեց, որ տղան դժգոհ է, և ասես իբրև արդարացում ավելացրեց.

- Դուք հանուն ինձ չարչարվեցիք, նան, թող ձեր արածը ձեզ բարիք բերի:

- Մինաչ, թույլ առ թույլ թշնամին այստեղ կլինի, հետո ի՞նչ ես անելու:

- Ինչ էլ պատահի, նան, ես ավելի լավ է տանը մնամ:

Նրանք սկսեցին համոզել պառավին, բայց Մինաչը ոչ մի կերպ չհամաձայնեց՝ «ո՛չ» և «ո՛չ»:

- Ինչ է գլուխ տանում. ես նրան գիրկս կառնեմ ու թևիս տակ կդնեմ, ծալտուն չի հասցնի հանել,– Ջոնը համբերությունը կորցնում էր:

Տեսնելով, որ գործը վատ ընթացք է ստանում, Մինաչը սկզբում՝ ցածրաձայն, իսկ հետո ավելի ու ավելի բարձր սկսեց ողբալ.

- Դժբախտ է քո մայրը, նան: Մի ձայն լսելիս իսկույն դուրս էի վազում՝ դու չե՞ս արդյոք: Գիշերը քուն չունեի, պառկում էի՝ լրիվ լսողություն դարձած: Օջախի կրակը վառվում էր, մամալիգայի կաթսան կախված էր: Առանձին դույլով ջուրն էր եռում. վերադարձիդ ճանապարհից հոգնած կլինես, և տաք ջուրը կլվանա քո հոգնությունը, բոլոր մեղքերդ կլվանա: Օճառի

7. Դիհդա (աբխ.) – զարմանքի, սարսափի բացակասություն

փրփուրի միջից դուրս կգաս սպիտակ, մաքուր, նան... Իսկ հիմա քեզ դատարկ տունը կդիմավորի, նան...

Մինաշչն այդ ամենն ասում էր Բեսլանին նայելով, ասես նրան դիմելով, և նա վատ զգաց:

Հանկարծ Մինաշչը տունը փոխեց և արդեն չարությամբ խոսեց.

-Դուք, դուք՝ տղամարդիկ եք ամեն ինչի մեղավորը: Քիչ է այն, ինչ որ իմ գլխին եք բերել, հիմա էլ զինված եք եկել, մտածել եք, որ այնտեղ մի պառավ կա, մենք արագ նրա թևերը կոլորենք: Վստահ եք ձեր ուժին, հա՛: Իսկ ես ձեզ այնպես կանհիծեմ, որ երբևէ ոչ մի քայլ չեք կարողանա զցել...

Բայց ինչ էլ ասեր, նրան թողնել չէր կարելի...

Կեսգիշերն անց էր: Աշնանային երկինքը մաքուր է, նույնիսկ տեսանելի են աստղիկները, որոնք առատորեն սփռվել են Ծիր Կաթինի երկայնքով: Հեռավոր փամփուշտները լույս արձակելով, անձայն կետ-գծով վեր են միտվում: Ուժաթափ լինելով կամ սահմանագծին հասնելով՝ նրանք մեկը մյուսի հետևից հանգչում են:

Մինաշչը լուռ էր: Ջոնը գրեթե ամբողջ ճանապարհը տանում էր նրան: Պառավը կրծքին սեղմած ձեռքով մի փոքր փաթեթ էր բռնել:

Բեսլանն զգում էր, որ խոցելի է դարձել, ասես նրա վրայից հանել էին գրահը, որը նախկինում հազել էր: Այն ամենը, ինչին նա ձգտում էր պատերազմի սկզբից, - իսկ նա ընդամենն ուզում էր սառը, անզգա քար լինել, սրտում թույլ չտալ ոչ մի ջերմ, փափկացնող բան, - հիմա հորդեց նրա վրա:

Բեսլանը վաղուց արդեն գտնվում էր վախից անդին, - ինքն այդպես էր մտածում: Վախը միշտ այնտեղ է, որտեղ հույս կա, իսկ եթե չկա, - քո հայացքն ապագային չի ուղղված, այն քեզ իր ուժով չի բռնել, - ապա վախն անհետ է վերանում՝ ինչպես ստվերը մայրամուտից հետո...

Բայց հիմա նա այլ բան էր զգում, և դրա մեղավորը հույսն էր, որով երկար տարիներ ապրել էր Մինաշչը: Մահվան հետքին, որը նրա հոգում բացել էր պատերազմը, գումարվեց կյանքի լուսավոր հետքը:

Ամեն բան կյանք էր՝ և՛ այն, որ հիմա նա գիշերով քայլում էր՝ զգուշությամբ ականջ դնելով ամեն մի խշռոցի, և՛ վերահաս անհայտությունը, և՛ նրա համար նախատեսված գնդակը, որը գուցե արդեն փողի մեջ է գտնվում, - ամեն ինչ կյանք էր...

Բեսլանը գիտեր, որ թակարդն է ընկել, բայց չէր դիմադրում: Այսուհետև նա ավելի մեծ բեռ է տանելու. երբ գետնին տապալվի, իրենից հոսող արյունը պետք է տաք լինի, և լոկ այդ ժամանակ երկինքը կհավատա, որ նա իրոք եղել է...

Մինչև նրանք ավարտեն իրենց ճանապարհը, Մինաշչի մեջ կմեռնի մեծ հույսը, որը նա կրել էր ջախելության, հասունության, ծերության միջով, մարդկանց մեջ իր ցավով միայնակ ապրած տարիների միջով: Բայց բարակ թելը չի կտրվի, Բեսլանն այն շարունակելու է տանել, նրանից հետո էլ՝ ինչ-որ մեկը...

Առավոտյան փախստականներով լի մի մեքենա էր Տկուարչալ մեկնում, Մինաշչին դրանով ուղարկեցին: Բաժանման պահին նա բացեց փաթեթն ու հանեց քաթանե մի տոպրակ.

- Գուցե պետք գա, նան...

Վերադառնալով իրենց տեղը՝ նրանք արձակեցին տոպրակը. այն լիքն էր գործածությունից դուրս եկած հին, յուղոտած ռուբլիանոցներով:

Բայց դա չէր կարող Բեսլանին ոչ շփոթեցնել, ոչ խաբել: Նա հիշում էր երկնքում հանգչող գնդակները, որոնք ուժ չունեին հաղթահարել իրենց համար սահմանված բնագիծը...

Երրորդ օրը Տկուարչալից լուր ստացվեց, որ Մինաշչը մահացել է:

շուտով աշուն է

Ես մեռած պառկած եմ անխնա կիզիչ արևի տակ, Սուխումից դեպի հյուսիս գտնվող լեռան լանջին: Այսպես չհուղարկավորված երկար եմ պառկելու: Պատերազմի հոգնած անդորրը, երբ սկսում են դիակները փոխանակել, դեռ հեռու է. հարձակումը նոր է սկսվել, ուժասպառ չի եղել, Սուխումը դեռ գրավված չէ և մարտերը թեժ են:

Գնդակն իսկույն սպանեց ինձ. ես սկսեցի ընկղմվել ականակույր մութի ու գիշերվա մեջ: Այդ անկման ճանապարհին հոգիս հանկարծ մղկտաց, քիչ մնաց լաց լինեք. բայց արցունքի փոքրոգի արտահոսքը կարճ տևեց՝ ես մահացա:

Սրտնեղեցի, որ ցավ չզգացի: Ցավը կյանքի թանձրուկն է. դու ողջ ես՝ քանի դեռ ցավ ես զգում: Իմ դեպքում որսի սպասող գազանի նման վրա ընկավ ու ճմռեց անթափանց խավարը, և մեծ, բազմագույն ցավը կողքովս լողաց: Մի խոսքով, երջանիկ մահ էր: Քեզ միանգամից հանգցրել են, չկա ոչ մի մթնշաղային ձգձգված բարդություն: Բայց ես՝ մեռյալս, կանչում եմ իմ մեռած բերանի ամբողջ համր ուժով. «Չհավատաք, որ երջանիկ մահ է լինում: Այն հորինել են վախկոտները և քարացած սրտերը: Երջանիկ մահվանից դառը բան չկա»:

Ամռան ամբողջ երկար օրը մենք արևի հետևից էինք քայլում: Այն մերթ թաքնվում էր բարձր-բարձր ծառերի հաստ բների հետևում, մերթ, դուրս լողալով ճյուղերի արանքից, կուրացնում էր ճառագայթների շիթերի փայլով, մերթ իսպառ անհետանում էր՝ թաքնվելով հոծ տերևների կամ բլուրների հետևում: Անտառը լարված հետևում էր անաղմուկ և զգուշությամբ առաջ շարժվող մարդկանց ոչ մեծ խմբին, դժգոհ շշուռնով շարժման ընթացքում վախվորած կտրվում էր, որպեսզի վերսկսվի հետևի շարքերում:

Մենք քայլում ու քայլում էինք. արևն արդեն ուղղաձիգ դիրքում էր, բայց անտառը ոչ մի կերպ չէր վերջանում: Առատ լույսից այն ասես նոսրացել էր, շոգից վիատվել, և այժմ լոկ քնատ զրույցն էր մեր հետևից քարշ գալիս:

Մենք հոգնել ու թրջվել էինք, ուսերիս բեռը կոացրել էր մեզ: Ոչ ոք չգիտեր, թե դեռ ինչքան ենք քայլելու: Ուղեկցողը՝ թխամաշկ, ժպտերես մի հույն, միայն իրեն հայտնի արահետով մարդկանց օժազալար շղթան առաջնորդում էր անբարյացակամ անտառի միջով, և սքողված դժգոհությունն աճում էր մեր մեջ: Հազվադեպ դադարների ժամանակ շատերն անվստահ ու խեթ էին նայում նրան: Փրկում էր հրամանատարը, որին բոհության և մտավոր ոլորտում եզան դանդաղկոտություն ցուցաբերելու համար չար լեզուները Դագանակ անունն էին կացրել: Նա լուրջամբ և համառորեն հետ չէր մնում ճարպիկ ուղեկցողից, և մենք, ասես հմայված լինելով նրանց համերաշխ քայլով, գնում ու գնում էինք նրանց հետևից:

Անտառում աղջամուղջ իջավ: Ծառերի կատարները դեռ լուսավոր էին, բայց ներքևում մութն աստիճանաբար թանձրանում էր, շուրջը եղած ամեն ինչ թաղվում էր նրա մեջ: Երկինքը հանգում էր, խավարի մեջ էր ընկղմվում նաև անտառը: Նա սկսեց լցվել թավ հնչյուններով, խորհրդավոր ծայներով, տարատեսակ արարածների հոգսաշատ եռուզեռով: Զառիվայրով երկար իջնելուց հետո հասանք գետին և թեթևացած շունչ քաշեցինք... Հասցրինք տեսնել արևմուտք հոսող լույսի վերջին փշուրները: Արևն այժմ իրոք վիթխարի կարմիր փուչիկի պես տրտմագին կախվել էր ծովի վրա, կամ գուցեև մայր էր մտել:

Ջրի սառնությունը լվաց և տարավ մեր հոգնածությունը, հանդիպակաց ափ էինք դուրս գալիս պարզ ու թեթև. դարձյալ վճռականությամբ լցվեցինք:

Երբ գետը սառը, հոսող սահման գծեց մեր միջև, ես հետ նայեցի: Մշուշի սպիտակավուն կղզյակներով մութ անտառը թեքությամբ բարձրանում էր երկինք, ձուլվում նրան: Նա ննջում էր, սուզվում քնի ջրապտույտը՝ մոռանալով մեզ, ինձ: Ես տրտմեցի. չնայած մեկ օր եմ եղել անտառում բայց նա ինձ թաքցրեց իր անհուն հիշողության հեռավոր մի անկյունում, իսկ կիաջողվի՞ արդյոք մեկ անգամ էլ նրա միջով քայլել, որպեսզի ինձ հիշի սկզբում մաշկով, իսկ հետո՝ ներքինով. հայտնի չէ:

Երկնքի հորձանուտից ավագության կարգով դուրս էին լողում աստղերը. սկզբում մեծ վառ, հետո քիչ հեռու բույլերով՝ մանրերը. երկինքը պղպջում էր աստղերով:

Գետի սառն աղմուկը լցնում էր գիշերը, բայց երբեմն թռչնի սոսկալի

ճիշդ քնից վեր էր թռցնում, և մարմինդ դող էր ընկնում: Շունչդ պահած սպասում ես,– ինչպես գնդակը կսպասեիր,– թե երբ է նորից հնչելու վայրենի ճիշդ. բայց լռություն է, անդունդը դարձյալ կլանել է անհնազանդ ծայնը:

Կարճատև խառնիխուռն մարտից հետո մենք գրավեցինք բարձունքը: Վրացիները ցիրուցան նահանջեցին դեպի մեկուկես կիլոմետր արևելք գտնվող գյուղը:

Պարզվեց, որ վերջին շաբաթվա ընթացքում մեզ տանջող երեք հաուբիցները ջորու պես անպտուղ են, բազմաթիվ դատարկ պարկուճներ են թափված շուրջբոլորը: Թշնամու աչքը վախեցնելու, նաև զվարճանալու համար մենք դատարկ փողաբերաններն ուղղեցինք դեպի գյուղ, կրակի պատրաստության եռուզեռ սարքեցինք: Հրամանատարը, որ մնացածից զատ կաղում էր հումորի զգացումից, ուզում էր քրթմնջալ. իբր, հիմար գործ է, բայց չարգելեց՝ թող անուղեղ ջահելությունը չարաճճիություն անի:

Այդպիսի լուրջ սպառնալիքի դեմ հանդիման գյուղը կուչ եկավ, ամեն տեսակ շարժում դադարեց, փողոցներում մի ստվեր անգամ չէր երևում, ահ ու սարսափ էր տիրում ամենուր: Նույնիսկ քամին, որ դրանից քիչ առաջ ազատ-արձակ սուրում էր ծակոծուկերում, բակերում ու այգիներում, հանկարծ անհետ կորավ:

Գյուղացիներն սկսեցին գյուղը լքել սկզբում վախվխելով, մեկ-մեկ, իսկ հետո՝ աղմուկով ու բոլորը միասին: Ամբոխը վախով էր լցված, ամեն բոպե խուճապի կայծեր էին բոցկլտում:

Հեռավոր պայթյուններից և ծուկորեն արձակված հատ-հատ կրակոցներից բացի շրջակայքի լռությունը ոչ մի ձայն չէր խախտում: Միայն լարելով լսողությունը՝ կարելի էր ունկնդրել, թե ինչպես է արևով զրնգում օրը: Կարծես թե պատերազմ չկար, այն հեռացավ հիշողության աղոտ հատված, դեպի նրա ափսոսալի ու դաժան վրիպումը:

Գիշերվա տեղատարափից հետո հաստատված տապը փոխարինվեց զովությամբ, և մենք հասկացանք, որ ամառն ավարտվելու վրա է: Մի քանի արևոտ օրից հետո կրկին շոգ է սպասվում, բայց այն լոկ ամռան կատաղի տապի բարակ ստվերը կլինի՝ սա զգոն, հազիվ խամրել սկսող և

դրանից էլ իմաստնացած տապն է: Լույսն այնքան շատ չէ, շրջակա աշխարհը չի սուզվում կուրացնող ցուրծի մեջ, տաք մշուշը չի թողնում, որ այն երազի նմանվի, ամեն բան հստակ է: Աբխազական աշնանն աշխարհն ակնհայտ է, և մենք մեզ ավելի իսկական ենք զգում, քան երբևէ:

Աշխարհի կսկծալի բազմազունության մեջ զգացվում է դեղին մահվան հորդումը...

Հեռվում անտարբեր փռվել էր ծովը: Նրա վիթխարի մարմնի մեջ անհետանում է ցավը, ալեբախության սահմանից անդին այն չի զգացվում, հուշիկ հեռանում է դեպի մութ խորությունը, ինչպես ջրի մեջ գնդակն ու ժաթափ է լինում, կորցնում սպանիչ ավյունը: Ծովը զովություն էր շնչում և թարմացնում մեր տոթակեզ բարձունքը: Նրա փայլուն մակերևույթն ավարտվում էր երերուն աղեղով, որից հետո երկնքի պատն էր...

Ես զգում եմ, որ մի տևական ու լուսավոր լար անցյալի խավարից ձգվում է իմ նախնիների մարմինների ու հոգիների միջով: Այն առաջին սերմի մեջ, որով իմ բրդոտ նախահայրը բեղմնավորեց իր կնոջ ընդերքը, ես արդեն իսկ կայի, ինչպես և կայի ցնծագին դիմակայության, քաղցր ուժասպառության հետագա բոլոր գիշերներին: Անթիվ անգամ իմ տոհմի տղամարդիկ տաք հոսքով ինձ ժայթքում էին կանացի որովայնի մթության մեջ: Նրանք վաղուց մահացել են, զգեստավորվել այս հողով, նրա մարմնով: Շուտով ես էլ այս հողը կհագնեմ...

Ես գրկում եմ ինքնաձիգը, որի նպատակասլաց սև իրանը և արճճե հոգին ինձ համար ձգողական քաղցր ուժ են ունեցել: Ասենք, իսկական սիրով ես միայն այս զենքը հասցրի սիրել: Ինձ չէր խաբում ինքնաձիգի առօրեական ձևական սառնությունը, ես գիտեի, թե իրականում որքան կրքոտ կարող է նա լինել:

Այդ զենքն ինչպես էի ես երազում պատերազմի առաջին օրերին: Ինչ նախանձով էի նախանձում նրանց, ովքեր արդեն ունեին այն. նրանք շատ չէին, մեծ մասը, ինչպես և ես, կարոտից վառվող աչքերով դեսուդեն էր նետվում Էշերայի և Գուդոթայի միջև: Իմ խռով վազվզոցի միակ նպատակն ինքնաձիգ ճարելն էր: Արդեն պատերազմի տասը օրն էր լրացել, իսկ ես անինքնաձիգ-անօգուտ հալումաշ էի լինում Էշերայի փոշոտ ճանապարհներին, Գուդոթայի հանգստյան տների սիգարետից ծխոտած

ու հեռուստացույցի առջև «Նովոստիի» և «Վեստիի» ամենօրյա աղմկոտ հավաքույթներին, երբ անվրդով հաղորդավարի ամեն մի բառը գլխապետույտ թափով իսկույն բեռնավորվում էր հազարավոր մանրամասներով՝ սկսած պատերազմի անհապաղ դադարեցումից և ագրեսորին պատժի ենթարկելուց մինչև մեզ հայրենիքից վտարելը. լուրիկային որբի ճաշերից նույն հանգստյան տներում, ուր տեղավորել էին մեզ՝ Սովետների փախածներին...

Բայց ես շուտով կարողացա ինքնաձիգ ճարել։ Պատերազմի առաջին իսկ օրերից խոհեմաբար շտաբում տեղավորված ազգականս իմ համառ խնդրանքից հետո խոստացավ դիմել մի չեչենի. սա երկու հարյուր դոլար ուզեց։ Ես կարողացա հարյուր ճարել. գլխի էի ընկնում, որ «չեչենը» խորամանկ ազգականիս հորինածն է, ինքնաձիգն իրենն է... Բայց դա ինձ չէր հուզում։ Ազգականս դառնացավ, որ ես անհրաժեշտ գումարը չճարեցի և սկսեց ինձ տարհամոզել այդ մտքից՝ խոստանալով շտաբում անվտանգ տեղ գտնել։ Ես անհողորդ էի և նրա վրա ճնշում էի գործադրում իբրև ազգական։ Շտաբականը տատանվում էր, հարյուր «հավերժ կանաչի» թարմ շրշուները դյուֆում էր նրան։ Բայց ազգակցությունը գերազանցեց շահը, և նա ասաց, որ կջանա կոտրել «չեչենի» համառությունը։ Եվ կոտրեց... մնացած հարյուր դոլարը պարտք գրելով։ Բայց մինչ այդ ինձնից խոսք վերցրեց, որ իմ հարազատներից ոչ մեկը չի իմանա այս բանը. եթե ինձ մի բան պատահեր, նրան չէին մեղադրի, որ «օգնել է տղայամիտ ջախելի անմտությանը»։

Խենթանալու չափ սպիտակամաշկ Սարիան «կրծկալ» կարեց, սեփական ձեռքով հագցրեց ինձ. ես նրա հոտն էի առնում ու երանության մեջ ընկնում։ Նա կատակում էր, ես էլ էի կատակում, և մենք իրար աչքի չէինք նայում...

Ես «կրծկալը» լցրի փամփշտակալներով, և դրանք կիպ և ծանր հարազատի նման կպան կրծքիս։

Ես գլխիս կանաչ ժապավեն կապեցի և երկար ժամանակ հայելու դիմաց կանգնած չէի դադարում ինձնով հիանալ։

Ոչ, ես անմիջապես Գումըսթա չվազեցի։ Երկարատև ու անհագ ծարավիս հանկարծակի հագեցումը թուլացրեց ինձ, և ես երկու օր ցնդածի պես, չհավատալով իմ երջանկությանը, ինքնաձիգը գրկած քարշ էի գալիս

Գուդոյութայում՝ մինչև որ սևազգեստ կանանցից մեկը սառը ջուր լցրեց գլխիս. «Անգործ թափառելու փոխարեն կո՛իվ գնայիր»:

Ես միանգամից սթափվեցի և առաջավոր գիծ ուղևորվեցի:

Արդեն երկու օր է, ինչ իմ գլխավերևում արևը ծագում ու մայր է մտնում. դաժանորեն այրում է, և ես սկսել եմ նեխել, հող եմ դառնում: Երբ իմ դիակը գտնեն և փոխեն, ինձնից միայն կմախքս կմնա: Ճանճերի պարսը պտտվում է գլխիս, ավելի շատ դեմքիս վրայով են քայլում: Որդերը լուռ ու մունջ, համառորեն ու հիմնավորապես են անում իրենց գործը՝ կտոր-կտոր ուտում են ինձ: Երբեմն ինձ թվում է, որ որդերը միայն իմ միսը չէ, որ ուտում են: Նրանք խնամքով ու անշտապ են գործում, ասես հավերժության չափ ժամանակ ունեն և մարմինս էլ անընդգրկելի մեծ է, և նրանց վարքագծում մի պատվախնդիր-որոնողական բան է նկատվում. ասիւր նրանք իմ հոգին են փնտրում: «Այն այստեղ մի տեղ է՝ լորձունքի և հյութի մեջ, անոթների լաբիրինթոսներում և թունելներում, մարմնի կիրճերում և բլուրների վրա... այն մեզնից չի փախչի»:

Եվ նրանք փնտրում ու փնտրում են. սրտի նուրբ փորոքներում, կողերի ու ողների արանքում՝ քանի դեռ կմախքն աղեղնաձև չի միացել դրանց վրա, լյարդի առաձգական նյութի մեջ, լայնատարած թոքերում, ուղեղի սպիտակաթույր դաշտերում, աղահամ երիկամներում, կողքի ընկած քիմքի վերևի մասում, հոդերի խաթարված միացման տեղերում, ականջի խեցու խրթին ուղիներում, պորտի վարդագույն ձագարում, համառորեն աճող եղունգների տակ, ամորձու խորշոմապատ պարկերում, ուր գտնվում են ամուր, հասուն ձվերը...

Չէ՞ որ մարդու ամենաքաղցր բանը հոգին է...

Առավոտ հրետակոծություն սկսվեց: Հողը ցնցվեց՝ ինչպես չիեծած ձիու մեջքը: Վրացիները որոշել էին կտրել սարի գագաթը՝ միաժամանակ մեզ թաղելով այդ խյուսի մեջ: «Սու»-երի արծաթափայլ մարմինները շամփրեցին մեր գլխավերևի երկինքը՝ կետ-գծիկով նուրսեր արձակելով: Ուղղաթիռներ էլ հայտնվեցին: Մենք հուսահատ, անշարժ պառկել ենք և սպասում ենք, թե գնդացրի կրակահերթն արճիճով կոփի-կանցնի մեր մեջքերի վրայով՝ թողնելով մահացու անցքերի հետքեր:

Հետո դեպի բարձունք սողացին տանկերը: Եվ այնժամ մարտը թեժացավ: Ես զգում էի ուրախությունն այն մարդու, որը հսկայական տաք ալիքով տարվում է դեպի մոռացություն:

Բայց դա երկար չտևեց. ինչ-որ մի բան ուժգին խփեց սրտիս, և ես մահացա:

Իմ առաջին հանդիպումները մահվան հետ զարմանալի էին նրանով, թե որքան անմոռույն են մահն ընդունում ննջեցյալները: Քաղաքավարի ու լուռ պառկել են՝ համակված այնկողմնային մտքերով, մինչդեռ, թվում է, մի փոքր ճիգ՝ և նրանք, կոտրելով իրենց կաշկանդող սառույցը, վեր կկենան հուրախություն և ի սոսկում շրջապատի մարդկանց: Ես այն ժամանակ չէի կռահում, թե որքան ուժեղ է մահը, ինչպես է մարդուն աքցանի մեջ առնում: Հիմա ես երկրագնդի, ինչ երկրագունդ, տիեզերքի ամբողջ ուժն էլ ունենայի, չէի կարողանա գոնե մատս շարժել:

Շուրջըլորը ծուխ ու փոշի էր, ճիչ ու թնդյուն. լարված դռնալով բարձունք էին մագլցում տանկերը:

Եթե ես մի քիչ ավելի կռանայի, գնդակն ափսոսանքով կողքովս կանցներ, և ես ողջ կմնայի...

Աչք, ականջ, ձեռք, ոտք – ահա այն ամենը, ինչից դու բաղկացած ես, գումարած ուղեղը, որը սովորության ուժով շարունակում է կառավարել այս պարզ մեխանիզմը: Իսկ հոգիդ՝ իր քնքշացնող, թուլացնող ներգործությամբ երկրորդական է, այն հարկավոր չէ: Հենց որ քո մեջ կենդանի, կարոտաբաղձ մի բան շարժվի՝ վերջ, դու դիակ ես: Կատաղի արագությամբ դեպի քեզ է թռչում մի կտոր մետաղ, բայց դու ևս նույն մետաղն ես, միայն թե առաջինի համեմատ ավելի փափուկ ու զիջող: Արճճի ոգի արթնացնող երամային թռիչքի դեմ հանդիման են դուրս գալիս մեր փխրուն, աննվաճ ոգով առաջ մղվող մարմինները, և անխուսափելի բախման ցավը մեզ կյանք է վերադարձնում. մեր հաշմված, բզիկ-բզիկ եղած մարմինները կրկին լցվում են մահվան անջնջելի հինավուրց վախով: Իսկ մինչ այդ նույնիսկ հուսո իրավունք չունենք, հույսը զինվորի համար ուժից վեր բեռ է, իսկ ես առաջին իսկ օրից նրան հրաժեշտ տվեցի ինչպես մինչքրիեղեղային մեռյալ մի զգացում:

Գոնե որևէ մեկն ինձ թաղեր: Խորը փորել պետք չէ, միևնույնն է, հողը ոնց որ քար լինի. սակրավորի բահով երեսը կքերեն՝ և գերեզմանը պատրաստ է: Միայն թե մարմինը ծածկվի. լավ չէ, երբ դիակն ահա այսպես բաց երկինքի տակ է. մահվան այդպիսի մերկությունը տեսարանը փչացնում է:

Ես նմանապես ուզում եմ, որ իմ մարմինը թաքնված լինի հողի խորը, մութ զովության մեջ: Գետամերձ բլուրը մեր տոհմական գերեզմանոցն է. այն աշխարհի մեկնած իմ նախնիներին ջանասեր հարևանները և անսփոփ ազգականներն այդ բարձունքն էին տանում. հենց այնտեղ էլ դուռ է փորված դեպի երկրի խորքը:

Ինչը կարող է ավելի ցանկալի լինել, քան հարազատ ոսկորների մեջ պառկելը, աստիճանաբար հող դառնալն ու հողին խառնվելը: Բայց ես շատ եմ հեռու բաղձալի բլրից, և այստեղի արևն ու որդերն էլ խիստ դաժան են: Բլուրն անտարբեր կընդունի մի կույտ սպիտակ ոսկոր, և դրանք միայնակ ու օտարածին կպառկեն հողում՝ շրջապատված չլինելով աճյունների խաղաղ հիշատակով:

Ամեն բան պարզ էր, ոչ մի երկիմաստություն, երկդիմություն չկար: Ու միևնույն ժամանակ պատերազմի ամեն օրվա հետ հազար գիշերից ավելի մթություն էր հաստատվում իմ մեջ, ամեն բան ծածկել էր հանկարծահաս խավարը:

Բայց ես գիտեի, որ լույս կա. լույսը պատերազմի ավարտն էր ու խաղաղությունը. և շատ կուզենայի ինձ տանել-հասցնել այնտեղ: Իսկ որ իմ գիշերում կորսված հոգին առանց այն էլ անվթար ու նուրբ դուրս կլողա՝ հավատում էի: Միայն թե կենդանի միս ու ոսկորից կազմված իմ մարմինը տեղ հասցնեմ, նրա հետ հոգիս էլ մի կերպ կհասնի:

Թող որ ես ցավից ավելի շուտ մեռած լինեի, քան մահից: Եվ մահը կդուփեր իմ չապրած տարիների և չկրած տառապանքի ամբողջ թանձրաշերտով ամուր փակված դռան մոտ...

միաչքանի երկինքը

– Չասես, թե ճակատագիր չկա: Կա, ինչպէս կարող է չլինել,– հանկարծ ասաց Ասլանը:

Մենք քարշ ենք գալիս Էշերայի փոշոտ ճանապարհով, անհամար կուզիկ բլուրների կողքով: Վերջին ուժով ենք քայլում. պատճառը շոգն է, որից պատրաստ է հալել երկինքը, երկու անքուն գիշերը, ծանրացած ինքնաձիգները:

Մեր ամենադաժան թշնամին երկինք ծեփված արևն է: Թշնամու գնդակից դեռ հնարավոր է փրկվել, իսկ նրա կիզիչ աչքից՝ ոչ. շիկացած ածխակտորի նման մի ակնթարթում կայրի մարմինդ:

Ես և Ասլանը մեծ մասամբ լուռ ենք, միայն վտանգավոր տեղերում մի քանի բառ ենք փոխանակում: Իսկ մեր ճանապարհին նման տեղերը քիչ չեն: Չար աչքից բլուրներով ու անտառներով ծածկված ճանապարհը երբեմն մերկանում է: Եվ քանի դեռ մյուս ափից քեզ գնդակ չի կպել, պետք է անցնես վտանգավոր հատվածը, այլապես գնդակի բաժին կդառնաս. այդ ձևով շատերին ենք կորցրել:

- Խելոք ես խոսում, ղվ է սովորեցրել,– խայթեցի ես:
- Մի ծիծաղիր, մի բան կպատմեմ՝ ախ կքաշես:
- Ինչ արած, սկսիր, մանկությունից հեքիաթ եմ սիրում:
- Սա հեքիաթ չէ, այլ ամենաիսկական եղելություն...

Ճամփեզրին, վիթխարի կաղնու տակ մենք նետվեցինք խոտի մեջ: Հանեցինք ծանր, սև սապոգները, քրտինքից խոնավացած վերնաշապիկները, զով ստվերում շունչներս տեղը բերեցինք:

Մենք իրար հետ կյանքից ու մահից չենք խոսում, շրջանցում ենք այդ թեման, իբր չենք հավատում, որ այն իրականում կա, հորինված չէ: Երբ կյանքն ու մահն այնքան մոտիկ են, որ ամենափոքր անհաջող քայլից կարող են միաձուլվել, և դու սեղմված ես նրանց նեղլիկ արանքում, ակամա սկսում ես լեզուդ քեզ պահել: Իսկ հույսը մենք խորը պահել ենք մեր սրտերում, այն թաքնված է օտար աչքից, և նրա ծանրությունը միայնակ ենք տանում:

Ասլանը պատրաստվում էր խախտել այդ չգրված օրենքը, որը մենք պահել էինք մինչ օրս:

Սուխումի վրա կախվել էր սև, խիտ ամպը, երևի ինչ-որ բան էր այրվում: Որոշ ժամանակ անց հենց այնպես, անշարժ կախված էր՝ ճզմելով քաղաքը, հետո կամաց-կամաց սկսեց բարձրանալ՝ ընդլայնվելով և նուսրանալով:

- Մենք այդ ժամանակ Վերին կամրջի մոտ էինք, - սկսեց Ասլանը: - Բնակվում էինք մի լքված տան մեջ. հայ տանտերերը, երբ այս ամենն սկսվել էր, մեկնել էին՝ թողնելով իրենց բարիքը, այնպես որ ուտել-խմելու պակասություն չէինք զգում: Երբեք այդքան մուրաբա չեմ կերել, մինչև հիմա սիրտս խառնում է... Վրացիները հաուբիցներով գնդակոծում են մեր դիրքերը, գլուխ բարձրացնել չեն թողնում: Բայց ոչ մի արկ նույնիսկ պատահաբար մեր կողմը չի գալիս. դրանք պայթում են ավելի բարձր՝ բլրի լանջին կամ գազաթին, իսկ մենք բլրի ստորոտում ենք: Երբեմն տաք, ծխացող ուժաթափ բեկորներն են մեր կողմը թռչում, ոչ ավելի...

Մեջքիս վրա պառկած՝ ես զգում էի, որ հողի սառնությունը դանդաղ, բայց հաստատապես մեջս է թափանցում, արյունս սառչում է: Հողը ձգում էր՝ ճզմելով իմ տակի չոր, ջարդվող խոտը: Նրա գրկախառնությունը բարեկամական էր և ամուր. թվում էր, թե քիչ անց ես կսուզվեմ նրա մեջ՝ ինչպես ջուրն են ընկղմվում, և անհետ կկորչեմ: Կճզմվեմ նրա ստվարաշերտով, և հավերժ կմարի լույսը...

- Այդ գիշեր ես ժամը մեկից երեքը պահակության էի կանգնել: Ցանկապատի մոտ մի մեկուսի տեղ ընտրեցի և նստեցի՝ աչքս չկտրելով գետից ու այն ափից: Աչքս կաչում է, սկսում եմ քուն մտնել, բայց սարսափելի տեսիլքներ են երևում, և, ցնցվելով, ես իսկույն ուշքի եմ գալիս և զուշությամբ շուրջս տնտղում... Ժամի չափ ես նստած եմ եղել՝ կռվելով քնի դեմ: Եվ հանկարծ կողքս մի ձայն է հնչում: Մինչ օրս չգիտեմ՝ դա իրական էր, թե հերթական երազիս մի հատվածը: Բայց ինչ էլ լիներ՝ ինչ-որ մեկն ականջիս շշնջաց. «Վեր կաց և գնա»: Այնպես էր ասվել, ասես խոսողը միաժամանակ խնդրում ու պնդում էր, գրեթե հրամայում: Ես կիսաքուն վիճակում, ոչ մի բան կարգին չգիտակցելով, վեր կացա և գնացի: Չէի հասցրել երկու քայլ անել, երբ ուժեղագույն որոտը ցնցեց հողը. կողքս արկ ընկավ: Այն տեղում, ուր ես մի քանի վայրկյան առաջ նստած էի, մի հսկա-

յական ծագարափոս էր առաջացել, հողը տակնուվրա էր արած, նրանից գոլորշի էր ելնում:

- Հագիվ թե դու գիշերը կարողանայիր այդ ամենը տեսնել, – չհամբերեցի ես:

- Մի՞թե ես չասացի, որ լիալուսին էր:

- Կարծեմ՝ չէ...

- Դա կարևոր էլ չէ, շարունակությունը լսիր... Ես մի քանի քայլ արեցի, բայց արդեն հասցրի անցնել բակում գտնվող տանձենու հետևը, դա էլ ինձ փրկեց: Առավոտյան մենք տեսանք ծառի բնի մեջ խրված բռնցքաչափ մի բեկոր, որը դեպի իմ մեջքն էր թռչում...

Սուխումի երկնքի ամպը սևից գորշ դարձավ...

Երկինքն իր վիթխարի աննինջ աչքով մեզ էր նայում: Երբ նա ահա այսպես համր է նայում, իրեն զգալ է տալիս մի բան, որը մինչև ծնվելս հավերժության որովայնում իմ մեջ էր սերմանվել, և համոզում է, որ ես և երկինքը մի ժամանակ միասնական էինք, լոկ հետո ենք բաժանվել. նա՝ վերև, ես՝ ներքև:

Ես դեպի երկինք բարձրացրի ձեռքս՝ մեծ մատս. ցուցամատս, որով այժմ սեղմում են ձգանը, որպեսզի կրակեն. միջամատս, անանուն մատս և ճկույթս, որոնցով քաշում են ինքնաձիգի փակաղակը. և ափս, որով վառողն են չափում: Մեր ազգակցությունը, մեր անբաժան միությունը, մեր մշտնջենական կարոտն իրար հանդեպ նույնքան հին են, որքան աշխարհը. այն ծագել է ինձ հետ:

Ես նայում եմ ձեռքիս, և ինձ թվում է, որ հպվում եմ հինավուրց, նախասկզբնական ճշմարտությանը: Մաշկիս միջով կապտում են գաղտնի ուղիներով հյուսված միջներակներս. նրանք այն ճշմարտության հետ տանում են իմ արյունը:

Չոած մատներով իմ ափը պարզված էր դեպի խուլ երկինք. «Ահա ես...»:

- Պատերազմում ամեն բան էլ լինում է, բայց իմ դեպքը շատերին է զարմացրել: Նախ և առաջ՝ ձայնը, երկրորդ՝ այն, որ պայթյունի պահին ես արդեն ծառի հետևն էի: Դրանից՝ ձայնից և պայթյունից անցել է մի քանի վայրկյան, և եթե ես մի պահ շտապեի կամ մի պահ ուշանայի, ինձնից դարման կմնար...

- Բայց դե լեզվիդ էլ այսքան չէիր տա...

Մի ինչ-որ տխմար սնահավատության երեսից ուզում էի ամեն բան կատակի տալ: Ասլանը փորձում էր անուն տալ նրան, ինչը մեզ անտեսանելի է, և դա իմ սրտովը չէր, դժվարացնում էր մեր առանց այն էլ դժվար դրությունը:

- Կատամկ ես անում, իսկ ես մինչև հիմա չեմ կարողանում ուշքի գալ:

- Վախենում ես:

- Բանը վախը չէ. այն դեպքի մասին ես շատ եմ մտածել: Ինչն էր ստիպել, որ Կելասուրում ինչ-որ մեկը հաուբիցը գործի գցեր ճիշտ այն թույլին: Իսկ ծայրը: Ո՞ւմն էր այն, կամ եղել էր արդյոք: Ինչո՞ւ արևն ընկավ հենց այն պահին, երբ ես ծառի հետևն էի անցել... Պատասխան չգտա: Միայն հասկացա, որ ոչինչ հենց այնպես չի պատահում:

- Ինչպե՞ս թե:

- Հենց այդպես: Եթե այնտեղ՝ վերևում ամեն բան կանխորոշված է, և մենք մահից չենք խուսափի, ինչպես երբևէ չխուսափեցինք ծննդից, ապա տանտերը տանձենին հենց այնպես՝ իր կամքով չի տնկել: Ինքն էլ չիմանալով, նա սահմանված կարգն էր կատարել, կարճ ասած՝ գործիք է եղել: Իսկ մնացածները. ով որ տունն է կառուցել, ում հետ որ ես այդ օրը խոսել եմ, ով որ ինձ այդ գիշեր հերթապահ է նշանակել՝ այն օրը, երբ ես ծնվել եմ...

- Իսկ նա՞, ով որ քո ջարդը տվել է ձմեռային կեսօրին,– շարունակեցի ես:– Աստղը, որ այն գիշեր առաջինն է երկնքում հայտնվել: Իսկ քո տատի զարմուհու թոռնուհու կոշիկները, որոնք աղբանոց են նետվել. յոթ տարի, յոթ ամիս և յոթ օր առաջ քո տեսած երանգը. իսկ այն շնթկը, որը հաուբիցով կրակողի մորն էր հաչելով վախեցրել, երբ նրանով հոյի էր...

- Իսկ մացա՞ռը, որը լուվել էր պապի ցուցամատի և միջամատի արանքում, երբ նա ծառն էր կտրում:– Ես ուրախացա, որ Ասլանը խաղին միացավ. այժմ նա առաջվա պես հասկանալի ու հարազատ էր:– Իսկ գնդամկը, որը պատերազմում պոկեց հորս ականջները քաշող ուսուցչի ճկույթը. իսկ ժայռից պոկված և անդունդ գահավիժող քարը...

- Իսկ քո կյանքի առաջին կի՞նը, որի հետ պառկած փուստ տվեցիր: Իսկ թռչնամկը, որը քո վրայով թռչելիս ծրտեց գլխիդ, խուրմայի ճյուղը, որը քո ծանրությունից կոտրվեց, փիղը, որը մեռավ հեռավոր Աֆրիկայում, երբ դու զուգարանում փորկապից տանջվում էիր, երկնքից պոկված

ամստղը, կառափնարանը, որից ցած կգլորվի քո գլուխը... Ստացվում է, որ աշխարհին ստեղծվելուն պես սկսել է քո մասին մտածել:

Ասլանը ժպտաց:

- Ես դա չասացի: Ես նկատի ունեի, որ բոլորիս ճակատագիրը՝ թե՛ ողջերի, թե՛ մեռածների, թե՛ դեռ չծնվածների, այնպես է միահյուսված, որ այսօրվա իմ հոգոցը վաղը կարող է փոթորիկ հարուցել, իմ մատի շարժումը հազար տարի անց կավարտվի ամպրոպով կամ չտեսնված ծյունով կամ ինչ-որ մեկի մահով, կամ...

- Կամ ճանճը կուղղի դեպի սարդոստայն... Այս ամենը դատարկ բան է, խոսք է միայն: Գոյություն ունի միայն այն, ինչ ասքն է տեսնում, մնացածը մտացածին բան է: Մարդը զնդանված է իր մարմնում, դրսից լոկ դատարկություն ու համրություն է: Մի շտապիր, շուտով մեզնից բոլորիցս էլ որդեր դուրս կգան...

Ասլանը լուռ մի կողմ էր նայում: Հետո այդպես էլ իմ կողմը չըջվելով ցածրաձայն ասաց.

- Իմ կարծիքով, միայն ասքի տեսածով ու հավատացածով չէ, որ աշխարհը կանգուն է:

Սուխումի երկնքի ամպն այժմ երկարել ու սպիտակ սյան նման կանգնել էր քաղաքի վերևում:

Ծառերի սաղարթները շոգից թառամել ու կնճռոտվել էին, դրանց միջից, ծերունու ոսկորների նման երևում էին ճյուղերը:

Ներքին կամրջի մոտ միանգամից երկու պայթյուն հնչեց:

- Մերոնց գործը վատ է,– ասաց Ասլանը:

Գնալու ժամանակն էր: Մենք չուզենալով վեր կացանք, շալակեցինք հանդերձանքը, զենքը և շարժվեցինք:

Մեզ դաժանորեն հետապնդող արևն արդեն չի տարածվում երկնքով մեկ, այլ հեզորեն տեղավորվում է կրակի փուչիկի մեջ, որը դանդաղ, քիչ-քիչ վարդագունելով ու մեծանալով, դեպի մայրամուտ է գլորվում...

Վայրը, որին մոտեցանք, վտանգավոր էր, այն ափից դիտվում էր՝ ասես ափի մեջ լիներ: Զառիթափը մի կողով իջնում էր դեպի Գումըսթա, մյուսով՝ շեշտակի վեր բարձրանում: Ճանապարհին ընկած էին զառիթափից պոկված քարեր. ոչ թուփ կար, ոչ ծառ, պատսպարվելու հնար չկար:

Հեշտ չէր վճռել, որ անցնելու ենք մեր դիմացը փռված մի քանի մետրը: Կարելի էր գնալ արահետով, որը ճանապարհից ճյուղավորվում էր փոքր-ինչ այն կողմում: Ճիշտ է, այդ դեպքում մեր ճանապարհը կերկարեր, բայց մենք կշրջանցեինք այդ չարաբաստիկ տեղը:

Մենք վազքով՝ որքան որ հնարավորություն էին տալիս հոգնությունը և ուսերիս բեռը, միասին առաջ շարժվեցինք. միասին, այլապես դիպուկահարն այն ափից, ձեռքից փախցնելով մեկին, մյուսին չէր խնայի:

Քիչ էր մնացել մինչև ճամփեզրին խիտ բուսած ծառերը, իսկ դրանից հետո արդեն անվտանգ էր: Հանկարծ աչքի պոչով ես տեսա, որ Ասլանն ընկավ:– «Սայթաքեց, ոչինչ, վեր կկենա»,– վճռեցի ես և առանց կանգ առնելու վազեցի մինչև առաջին ծառը և թաքնվեցի նրա բնի հետևում:

Այդ ժամանակ կրակոցն արդեն հնչել էր, և ես այն լսել էի, բայց դեռ չէի հավատում, հեռացնում էի այդ ակնթարթը:

Ես ետ նայեցի: Ասլանը, հենվելով աջ ձեռքին, փորձում էր վեր կենալ, բայց բեռը չէր թողնում, գետնին էր կքում:

Երկրորդ գնդակը նրան պառկեցրեց սպիտակավուն փոշու մեջ:

Ես նետվեցի դեպի նա: Մոտ վազեցի: Եվս մեկ գնդակ փոշի բարձրացրեց իմ ոտքերի մոտ, դրան հաջորդեց կրակոցը: Ես ընկա Ասլանի կողքին:

Նա մեռնում էր:

– Որ քեզ...– հազիվ լսելի արտասանեց նա. երևի, դիպուկահարին նկատի ուներ:

– Մի վախենա, ես հիմա, ես հիմա,– ես նրան գրկեցի, որ միասին սողանք դեպի ծառերը:

Բայց նա չէր ենթարկվում, ձեռքիցս դուրս էր պրծնում. հետո անշարժացավ:

Ես շուտ տվեցի նրան և փակեցի աչքերը: Նա ծանր էր, բայց ոչ այնքան, ինչպիսին հետո կդառնա:

Հանկարծ Ասլանի մարմինը ցնցվեց. դիպուկահարն ինձ նկատել էր և կրակեց, բայց Ասլանը փրկեց:

Ես գրկեցի նրան՝ մնալով կողքը պառկած: Ընկերոջս մարմինը, որը մեռած էլ էր ինձ պաշտպանում, աստիճանաբար սառչում էր:

Այդպես մենք գրկախառնված պառկել էինք՝ ողջը և մեռածը, միաչքանի երկնքի տակ...

հաբըջի պաշտպանությունը

Անհայտ մնաց, թե «Երկու բանակ թեժ կռիվ էին տալիս, իսկ Հաբըջն իր համար վար էր անում» վարկաբեկիչ առածի առթիվ նույն ինքը Հաբըջը որպես իր արդարացում որևէ բան ասել է, թե ոչ: Գուցե ավելորդ է համարել, իսկ գուցե փորձել է, բայց անհաջող, որ հիշելու բան էլ չէր: Բայց և պատերազմով զբաղված մարդկանց ինչպե՞ս բացատրես այդ կարևոր պահին վար անելու քո թեթևամիտ տենչը: Գուցեն կմկմաս, թե իբր հիմա իսկը ժամանակն է, հողը երկար է սպասել, իսկ պատերազմը կհասցնենք, ոչ մի տեղ չի փախչի: Նրան պարզապես չէին հասկանա. մանկան թոթովանք կհամարեին, այլ ոչ թե տղամարդու խոսք:

Կարելի է ասել՝ Հաբըջը դեռ հեշտ պրծավ. նա պսակազերծվեց լոկ կծու, բայց հարատևող խոսքով, այլ ոչ թե ավելի կտրուկ եղանակով:

Ինչպես էլ եղած լինի, ահա արդեն մի քանի դար է, ինչ նա գութանի հետևից լուռ քայլում է, իսկ քիչ այն կողմ նույն կերպ կռիվն է աղմկում:

Եվ հենց առաջին օրն այդ աղմուկը համբերությունից հանել էր նրան, երբ նա՝ անբեղ մի տղեկ, նոր էր մաճ բռնել: Պետք է ասել, որ գութանը նրան կտակել էր ծեր, ամբողջովին հողոտ հայրը. թվում էր, թե նրա վրա ուր որ է խոտ կբուսնի: Ճիշտ է, հայրը նույնպես կռիվ գործերի հանդեպ անուշադրության մեղքն ուներ: Բայց հաշվի առնելով, որ նա առաջացած տարիքում էր, զարմանալի է, թե ինչ հաջողությամբ ու երկար ժամանակ էր զբաղված այդ պարսավելի գործով: Եթե այլ կերպ եղած լիներ, ամենայն հավանականությամբ մի ավելի մարտական բան կկտակեր որդուն: (Պատահական հրացանը հայրը ոչ մի անգամ չհիշեց. իբր, թող շարունակի ժանգոտել, այլ ասաց. «Ահա քեզ գութան»):

Հայրը մեղանչում էր, բայց առածի մեջ լուվելու պատվին չարժանացավ: Երևի գիտեր գաղտնաբար անել, մարդկանց աչքից հեռու: Կամ էլ նրա ժամանակ հերկ անելն ու քիչ այն կողմը կռիվ տալն այնքան սովորական բան էին, որ քչերն էին դրանց ուշադրություն դարձնում: Ինչ անենք, որ պատերազմ է, մի սրան տեսե՞ք՝ հերկ է անում: Հերկողները դեռևս չեն

վերացել, զինվորների կողմը չեն անցել: Ինչ ասել կուզի՝ վճռական անհոգությամբ իրենց փխրուն մարմինը և հոգին դիպվածին վստահող մարտնչողների օրինակը դող առաջացնելու չափ վարակիչ էր, և շատերը, ակոսը մինչև վերջ չհերկած, արտի կենտրոնում թողնում էին գութանն ու գոհունակ եզները և գլխապատառ վազում մարտի:

Պատանի Հաբըջն իր՝ դեռևս թույլ ամբողջ ուժով թափահարեց ճիպոտը, և եզներն անշտապ քաշեցին գութանը: Եվ այնժամ նա մարտի տաղտկալի աղմուկի միջից լսեց մի ծայն, որն իր երբևէ լսածներից ամենաքաղցրահնչյունն էր՝ թե ինչպես հնազանդորեն հազիվ ընկալելի հառաչանքով պառկում էր հերկած հողը՝ շնչելով ընդերքի տաքությամբ:

Հաբըջը շշմեց. նույնիսկ կանգ առավ, ինչով զարմացրեց եզներին, որոնք իրենց մեծ-մեծ աչքերի սպիտակուցները պլշեցին դեպի նա: Իսկ երբ ուշքի գալով գոռաց նրանց վրա, եզները չուզենալով առաջ շարժվեցին, նա դարձյալ լսեց այն ծայնը, որն իսկույն փորձեց խլացնել կռվի փութաջան գվվոցը: Բայց և՛ այն ժամանակ, և՛ հետագայում, և՛ երկար տարիներ հետո Հաբըջը միայն այն ծայնն էր լսում, և ոչ մի ուրիշը կամ աղմուկը չէին կարողանում վերանայել այն...

Եվ ահա Հաբըջն արդեն երիտասարդ չէ. ժամանակն իր խոր կնճիռներով անցել է նրա դեմքի վրայով: Նա օջախի մոտ կարոտով նստած է և ականաականջ է դնում քիչ հեռվից եկող կռվի ծայնը: Չնայած նա իր սրտում պահել էր սիրելի ծայնը, բայց հերկից հետո անցած ժամանակի ընթացքում նրա ականջները դատարկվեցին, և նա հետ սովորելով, սկսեց մարտադաշտի աղմուկը լսել: Այնպիսի սոսկալի եղանակ էր, որ սատկած կատվին անգամ դուրս չես գցի, իսկ նրանց՝ այդ գարշելիների հեջ պետքը չէ՝ զարմանքով ու թաքուն հիացմունքով մտածում էր Հաբըջը և մեկ-մեկ հայացքը գցում էր պատին կախված մոռացված հրացանի կողմը:

Ձանձրալի, անհերկ ծմռանը նա երբեմն մտածում էր գնալ և հետաքրքրությունից դրդված նայել այս անդադրում տղամարդկանց, որոնք համառորեն կռիվ էին տալիս այդ ամբողջ ժամանակ, բայց հիշում էր այն ծայնը, որը մեկ-երկու ամսից նրան էր սպասում, և զսպում էր իր անմիտ, մաճկալին անարժան մղումը:

Բայց ինչ կոչնակ էր հնչում այն ղողանջում, որն այժմ հասնում էր նրա

ականջին. Կարծես այն ձայնը լիներ. թե՛ Հաբըջը մոռացել է, և նրա հոգում այն հագիվ է լսվում:

Գուցե իրոք պատից իջեցնի հրացանը, մաքրի, փայլեցնի և...

Սակայն Հաբըջին թողնենք օջախի մոտ միայնակ նստած, կրակի ցոլքերը վշտահար դեմքին: Եթե հանկարծ նա վճռի մարտական ուղի ընտրել, մենք, միևնույնն է, կիմանանք նոր, նրա վարկը տեղը բերող առաժից: Իսկ հնում նա ներկայացված է իբրև պատերազմի խրոխտ շաջունի հանդեպ խուլ մի էակ: Բայց մենք հո գիտենք, որ Հաբըջը հմայված է այլ՝ ոչ թե խլացուցիչ բարձր, այլ հավերժության հեզ և զիլ ձայնով:

ՍԵՎՈՒՅԱՆ ԱՅՎԱՐԱԿ

Արխավիայի Հանրապետության
հայկական գրական միավորում

Արխագահայ գրողների
«ՍԵՎՈՒՅԱՆ ԱՅՎԱՐԱՅ»
միավորումը հիմնադրվել է
1954 թվականին՝ Արշավիր
Զիդարյանի, Անդրանիկ

Բահարյանի, Հակոբ Գուրունյանի, Իշխան Ռահանյանի, Վազգեն
Կանսուզյանի ջանքերով: Միավորման հիմնադրման առաջին
օրվանից հայ հեղինակներին սատարել են արխագ գրականության
հիմնադիր Դրմիտ Գուլիան և բանաստեղծ-ակադեմիկոս Բագրատ
Շինկուբան:



Արխագիայի Հանրապետության
հայկական գրական-
լուսավորական «ՀԱՄՇԵՆ»
պարբերաթերթի անդրանիկ
համարը լույս է տեսել 1991

թվականի հոկտեմբերի 15-ին: Թերթի հիմնադիրն է Արտավազդ
Սարեցյանը: Արխագահայ հատվածի գրական-մշակութային կյանքում
նկատելի երևույթ է «Համշեն» թերթի գրադարան» մատենաշարի
հիմնադրումը: Լույս է տեսել ավելի քան 20 հատոր գիրք, այդ թվում՝
պետպատվերով «Գրական Համշեն» ավմանախը 2012 թվականին:

E-mail: abk-hamshen@yandex.ru

НАЧКЕБИА ДАУР КАПИТОНОВИЧ

берег ночи

роман

перевод К. Яланузяна

ответственный редактор А. Сарецян

Издательство «Союз писателей Армении»

Ереван 2013

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ